

ՄԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



ԵՐԵՎԱՆ
2021

93(=919.81)(569.1)^{7th} 52 ✓

**NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY**

**ISSUES OF SYRIAN-ARMENIANS.
HISTORY AND MODERNITY**

**MATERIALS OF REPUBLICAN CONFERENCE
(June 26, 2017)**

**YEREVAN – 2021
* * ***

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ**

**ПРОБЛЕМЫ СИРИЙСКИХ АРМЯН.
ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ**

**МАТЕРИАЛЫ РЕСПУБЛИКАНСКОЙ КОНФЕРЕНЦИИ
(26 июня, 2017 г.)**

ЕРЕВАН – 2021

11
A109072



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԿԱՂԵՍԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՐԻԱԶԱՅԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
(26 հունիսի, 2017 թ.) ՆՅՈՒԹԵՐ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԿԵԱՆ
ՄԱՏԵՆԱԾԱՐ.

212



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

212

ԵՐԵՎԱՆ – 2021

ՆՎԻՐՎՈՒՄ Է 2011թ. -ԻՑ ՍԻՐԻԱՅՈՒՄ
ԸՆԹԱՅՈՂ ՊԱՏԵՐԱԶՍԻՆ ԶՈՂ ԳԼԱՑԱԾ ՀԱՅ
ԵՎ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԱՐԱԲ ԺՈՂՈՎՐԴԻ
ԶԱՎԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

**ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՍԲ**

Գլխավոր խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյան
Խմբագրական խորհուրդ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյան
պ.գ.թ. Անի Ճիշենկճյան
պ.գ.թ. Քնարիկ Ավազյան
բ.գ.թ. Արծվի Բախչիկյան
պ.գ.թ. Կարեն Մկրտչյան

U 550 Սիրիահայերի հիմնահարցեր պատմություն և արդիականություն, Հանրապետական գիտաժողովի (26 հունիսի, 2017 թ.) նյութեր. – Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2021, 234 էջ:

Ժողովածուն ընդգրկում է 2017 թ. հունիսի 26-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում սիրիահայերի պատմության ու արդիականության հիմնահարցերին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերը:

Հատորը նախատեսվում է հայոց, մասնավորապես՝ սփյուռքի պատմության հարցերով հետաքրքրվող, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների համար:

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2021:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԵՐԱՊՐԱԾ
ՄԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՆՊԱՍՏԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԱՆԳԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

բ.գ.դ.

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
ատաջատար գիտաշխատող
<vsvaz333@yahoo.com>

Գիտակցական կյանքիս գերնպատակն է եղել փրկել ու վերականգնել Հայոց ցեղասպանության հետևանքով մեր զավթված Երկրի՝ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայության պատմական հիշողության և բանավոր մշակույթի բանահյուսական ու բարբառային նշխարները¹: Վերականգնել, բայց ինչպե՞ս: Ահա այդ էր հարցերի հարցը, երբ այդ տարածքներում այլևս հայեր չէն ապրում:

Ավելի քան 60 տարիների ընթացքում իմ գրառած, ձայնագրած ու տեսագրած, ուսումնասիրած և հրատարակած ժողովրդական բանավոր ավանդության նյութերը (շուրջ 10 հազար միավոր) ամփոփված են իմ շուրջ երեք տասնյակ մեծ ու փոքր գիտական աշխատությունների մեջ²: Այդ հատորներում տեղ են

¹ Մվազյան Վ., Մուսա լեռ, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 16, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1984: Նույնի, Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994:

² Մվազյան Վ., Մեծ Եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995: Նույնի, Մեծ Եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, 1999, 2005 (հայ., ռուս., անգլ., թուրք. Ստամբուլ): Նույնի, Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պայքարական հիշողությունը. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003-2005 (հայ., անգլ., իր., գերմ., ռուս..

գտել ոչ միայն մեր բնօրրանի՝ Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից (Վան, Էրզրում, Մուշ, Սասուն, Տիգրանակերտ, Բիթլիս և այլն) հայության զաղթը, որոնք ճանապարհին անթաղ թողնելով իրենց հարազատների դիակները, ոտքով անցել են Արաքս գետը և հասել Արևելյան Հայաստան, ծվարել Սբ. Էջմիածնի վանքի սյուտերի տակ, այլև՝ նրանց մղած հերոսական ինքնապաշտպանական գոյամարտերի դրվագները: Ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի և ազգագրագետ Եր. Լալայանի ջանքերով ու դեկավարությամբ ստեղծված գիտարշավի նվիրյալ մասնակիցների կողմից գրի են առնվել զաղթականների պատմած հազարավոր տարաբնույթ նյութեր, որոնք և, հետագայում վերծանելով, ամփոփվել են «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական բազմահատորյակի մի շարք հատորներում³:

Արևմտյան Հայաստանից զաղթած հայերը, բնակություն հաստատելով Հայրենիքում, շարունակել են իրենց կեցությունը՝ սերունդների ապագան կապելով Մայր Հայաստանի փոքրիկ տարածքի հետ, իսկ մնացորդացը սփռվել է աշխարհի տարբեր երկրներ: Հետագայում նրանց որոշ մասը Թուրքիայից, Հունաստանից, Ֆրանսիայից, Սիբիրիայից, Լիբանանից, Իրաքից, Եգիպտոսից, Բալկանյան երկրներից և ԱՄՆ-ից պարբերաբար ներգաղթել են Խորհրդային Հայաստան և բնակություն հաստատել իրենց երբեմնի բնօրրանների հիշատակները խորհրդանշող

թուրք.՝ Ստամբուլ): Նույնի, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապորոհների վկայություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 2011, 2013 (հայ., անգլ., թուրք.՝ Ստամբուլ):

³ Արցախ-Ուտիք, «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. 6, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973: Տարոն-Տուրուբերս, «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. 12, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984: Վան-Վասպուրական, «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. 15, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998:

Երևանի մերձակա նորակառույց թաղամասերում և Հայաստանի տարբեր շրջաններում:

Կիլիկիայի հայության բանավոր ավանդության նշխարների վերականգնման ակունքներն անթելված են իմ մանկական հիշողությունների մեջ: Այդ 1947 թ. էր, երբ Եգիպտոսի Ալեքսանդրիայի նավահանգստում խարիսխ զցեց խորհրդային «Պոբեդա» շոգենավը, այդ ժամանակ ես ընդամենը 13 տարեկան էի, երբ Եգիպտոսից ներգաղթեցինք Մայր Հայաստան: Մեր շոգենավը կանգ առավ Բեյրութի նավահանգստում, որպեսզի համալրվի նոր հայրենադարձներով: Նրանց մեջ էին նաև բազմաթիվ սիրիա-լիբանանցիներ: Հիշում եմ հորս՝ եգիպտահայ գրող, հասարական գործիչ, «Ներգաղթը» թատերգության հեղինակ Գառնիկ Սվազյանին. իմ ձեռքից բռնած՝ շրջում էինք նավի վրա: Տեսանք արտասովոր հանդերձանքով՝ նրանց կանայք զույնզույն տարազներ հագած, ճակատներին ոսկե դրամներով զարդարված էին: Հայրս բացատրեց, որ նրանք Մեծ եղեռնի տարիներին ապաստան էին գտել արաբ անապատականների մոտ, մոռացել էին իրենց լեզուն, հեռացել էին իրենց դավանանքից, խոսում էին անհասկանալի բարբառով, նրանց դեմքերը դաջված էին կապույտ թանաքով, բայց այժմ գնում էին Հայրենիք՝ Հայաստան, որպեսզի իրենց գավակները հայեցի ուսուկրթություն ստանան և հայ դառնան:

Այդ դրվագը տպավորվել էր իմ հիշողության մեջ: Եվ երբ 1955 թ. սկսել եմ իմ՝ ժողովրդագետի, բանահավաքչական գործունեությունը, հետևողականորեն որոնել-գտել եմ Կիլիկիայի հայության բնիկներին, ինչպես Հայաստանի տարբեր շրջաններում, նույնպես և սփյուռքի զանազան գաղթօջախներում: Նրանք տակավին հիշողության մեջ կրում էին իրենց բնօրրանի (Ջեյթուն, Հաճըն, Այնթապ, Մարաշ, Քեսապ, Մուսա Լեռան, Բեյլան,

Աղանա, Մերսին, Տարսոն, Սիս և այլն) և այլ տեղավայրերի բանավոր ավանյները (հեքիաթներ, տալուսնույթ գրույցներ ու երգեր, առած-ասացվածքներ, օրհնանք-մաղթանքներ, անեծքներ, հանելուկներ, աղոթքներ և այլն), որոնք ոչ միայն իրենց բնիկ բարբառներով էին հաղորդում, այլ՝ երբեմն նաև թուրքալեզու: Այնպես որ, և՛ իմ «Մուսա Լեռ», և՛ «Կիլիկիա» պատմաբանագիտական ստվար հատորներն իրենց գիտական ուսումնասիրություններով և սկզբնաղբյուրային հարուստ նյութերով գաղափար են տալիս Կիլիկիայի և շրջակայքի 50 տեղավայրերի հայության երբեմնի ժողովրդական կենցաղի, վարք ու բարքի, սովորույթների, մտորումների և ակնկալիքների մասին: Այդ նյութերի շնորհիվ փրկվել ու վերականգնվել են ոչ միայն նրանց պատմական հիշողությունը՝ տերգորյան տեղահանության հուշվկայություններով ու պատմական ժողովրդական երգերով, այլև՝ բանավոր ավանդությունը բանահյուսական բազմախազար տարաբնույթ նյութերով և Կիլիկիայի տարբեր տեղավայրերի ինքնատիպ բարբառներն իրենց հնչյունային յուրահատկություններով ու նրբերանգներով: Այնպես որ, անհետ կորստից փրկվել են ոչ միայն Կիլիկիայի հայության ժողովրդական բանահյուսության նշխարներն ու պատմական հիշողության վկայությունները, այլև նրանց տարբեր տեղավայրերի ինքնատիպ բարբառներն ու խոսվածքները: Եվ այդ բոլորը հնարավոր է դարձել շնորհիվ 10 հազարի հասնող իմ արժանավոր բանասացների՝ Սիրիա-Լիբանանում ապաստանած հայերի, որոնք, հայրենադարձվելով, բնակություն էին հաստատել Հայրենիքում:

Բացի այդ, 1958 թ. Հայաստանի Գիտությունների Ակադեմիա էր այցելել հալեպահայ հայտնի ակնաբույժ, գրող, հասարակական գործիչ, Հայաստանի ակնաբուժարաններին մեծապես օժանդակած բարեգործ դոկտոր Ռուպեր Ճեպեճյանը (1909, Այն-

թասյ): Նա անցյալում իր գրառած ժողովրդական սնահավատությունների մասին նյութերը բերել էր նվիրելու Գիտությունների Ակադեմիայի Հայ ժողովրդական բանահյուսության արխիվին: Նա նաև հապճեպ պատմել էր ինձ արաբացած հայերի մասին: Այդ նյութի ձեռագիրը հետմահու նրա այրին՝ տիկին Լուիզ Ճեպեճյանը, ուղարկել էր ինձ, որը տեղ է գտել Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների վկայությունների մասին իմ գրքում⁴:

Զեռագրում դոկտոր Ռ. Ճեպեճյանը վերհիշել է հայկական արքայական Բագրատունիներից սերված Բակկարա արաբ ցեղախմբի մասին. *«1975 թ. հունիսի 17-ին, ուրբաթ կեսօրե ետք, արաբ հայտնի գրող, թարգմանիչ Նիզար Խալիլիին մեր տունը առաջնորդեց Բակկարա (Բագգարա) ցեղախմբի մեծավորներեն՝ շեյխ Աբդուլբերիմ Իսա Սուլեյմանը, որուն կրնկերակցեր իր եղբոր որդին՝ Ալի Սուֆի, որ երկու ճաշարաններ կը բանեցնէ Հալեպի մեջ՝ «Ֆուրսեն» և «Խայյամ»: Մեր հրավերին վրա փութաց նաև Տիար Պերճ Մապպադյան, և բոլորիս միջև տեղի ունեցավ հետաքրքրական զրույց:*

Շեյխ Աբդուլբերիմ արաբ անապատականի տարազով բարձրահասակ մարդ մըն էր՝ ազնվական ցեղապետի մը բոլոր շարժումներով ու վերաբերմունքով: Հայտնվեցավ, որ ան փեսան է մեծ ցեղապետ Ասադ էլ Բեշիրին, որ ներկայիս ընտանիքով Դեր Զոր կրնակի:

Հասիքեում ապրող շեյխ Աբդուլբերիմ խոսակցությունը բացավ, հաստատելով որ բակկարաները (Այաշեր ցեղախումբ) հարազատ ու զտարյուն հայեր են Բագրատունյաց արքայազուն

⁴ Մվազյան Վ., Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, Վկայություն (այսուհետև՝ Վկ.) 381, էջ 562:

շատավիղեն սերած: Անոնք հարավ գաղթած են թագավորության անկումեն վերջ: Սույն հաստատումը բակկարաներուն մոտ համառորեն փոխանցված է սերունդե սերունդ: Շեյխը մեծ հորմեն լսած է, որ իրենք հայեր են, իսկ պապուկը իր կարգին իմացած է իր նախնիներեն: Բակկարաներ իրենք զիրենց կնկատեն «մաքուր Հայկազյան», քանի որ, ըստ շեյխին, դարերե ի վեր կապրին տոհմիկ սովորություններով՝ մերժելով ցեղախումբեն դուրս ամուսնություններ կնքել, հետևաբար՝ աղավաղված չեն «մնացյալներու նման»:

Մեր կողմե եղած հարցումներուն պատասխանելով շեյխ Աբդուլքերիմ չկրցավ որևէ դրական երևույթներ տալ հայ մշակույթի ու ավանդություններու մնացած հարցերը փառտող: Բակկարաներ մինչև վերջերս բոլորովին անգրագետ էին. ոչ մեկ ձեռագիր կգտնվին իրենց մոտ՝ ըլլա հայերեն, ըլլա արաբերեն: Ոչ մեկ վիճագրություն, ըստ շեյխին, չկա խմորի վրա խաչ հանելու մասին, կամ՝ քրիստոնեութենե մնացած այլ սովորույթներ, պատմվածքներ, բանահյուսություն կամ՝ էթնոլոգիական տարբեր տվյալներ: Անուններու մեջ հաճախակի են Էլիաս, Մուսա և այլն: Ցեղախմբի մեջ կան բազմաթիվ խարտյաշ-կապուտայա անհատներ (կիլիկյան խառնուրդ). բազմազավակ են, պատվախնդիր ու պարտության չեն դիմանար:

«Մենք հատկապես մոտիկ կզգանք հայերուն», - կըսե շեյխը, - «Երբ հայ մը տեսնանք, արյունը կքաշե: Տարագրության օրերուն Բակկարա ցեղը շատ մը հայեր փրկեց, շատեր որդեգրվեցան: Հետագային՝ հայ աղջիկներ ամուսնության ետ տրվեցան հայերուն:

...Շեյխ Աբդուլքերիմի հայրը թշնամի էր հայոց դահիճ չեչևներուն. զիրար կջարդեին: Չեչևներ փչացան, հազիվ 250 հոգի

կհաշվվին ներկայիս, կըսե շեյխ Աբդուլքերիմ. «Աստված վրեժը լուծեց», - կավելացնե մեր հյուրը:

Բակկարաներ Սուրիո մեջ կը հաշվվին մոտ 100.000: Անոնց զանգվածը կապրին Ջեբել Աբդուլ-Ազիզ, Հասիքեի մուհաֆազան, Ջեզիրե: Ասոնք կկոչվին Բակկարադ էլ Ջեբել: Ցեղակիցներ կան նաև Թել-Աբիդ, Ջըսըր Շուղուր, Դեր էլ Ջոր, Հալեպ (Պսապ էլ Ներսապ և այլ թաղեր): Իրաքի մեջ՝ Օրինշարում, 20,000 շունչ Բակկարա կա: Մեծավասամբ թրքախոս բակկարաներ կգտնվին նաև Թուրքիա՝ Ուրֆն, Դիարբեքիր, Անտիոք, մոտավորապես 90.000 շունչ: Ցեղակիցներ կան նաև ցրված Լիբանան, Եգիպտոս ու՝ մինչև Սուդան:

Շեյխ Աբդուլքերիմ գլխավորն է Ջեբել Աբդուլ Ազիզ զանգվածին: Շեյխին գյուղն է Խազնեն՝ լեռնաշղթային հյուսիսային կողմը, Թել-Թամարեն՝ 30 կիլոմետր: Ընդհանրապես զինք կարելի է գտնել Հասիքեի 180 բնակարանը: Ան կապրի նաև Ռաս ուլ Այն, Թել-Թամար»⁵:

2005 թ., երբ հրավիրված էի Բեյրութ գիտաժողովում զեկուցելու, այցելեցի նաև Հալեպ, որտեղ Հայկական Սահակյան ազգային վարժարանի տնօրեն Ժիրայր Րեխյանը (ծնվ. 1949 թ., Հալեպ) պատմել է Դեյր էզ Ջորի անապատում հայկական կենդանի գերեզմանոցների՝ Մարկադե, Շեդդադիե և այլ կարևոր տեղանունների արաբական ծագումնաբանության մասին՝ հիմնված արաբ անապատականների հաղորդած վկայությունների վրա. «2005-ի գարնանը, աշիրաթապետերուն հետ, երբ Միրիայեն այցելեցինք Երևան, ապրիլի առաջին մի քանի օրերու ընթացքին էր: Ի միջի այլոց, «Արմենիա» հեռուստակայանի մեջ ալ ունեցանք հարցազրույցներ, որոնցմե մեկը Դեր Ջորի շրջա-

⁵ Նույն տեղում, Վկ. 381, էջ 562:

նեն Բակկարա (Բազգարա) Աշիրաթի պետ՝ շեյխ Նաուաֆ Բադեպ էլ Բաշիրի հետ էր, և ես արաբերենն թարգմանում էի հայերեն: Հարցազրույցի ընթացքին շեյխը տվավ հետևյալ հետաքրքրական հաստատումը Շեդդադիե և Մարկադե երկու վայրերու անուններուն շուրջ:

Շատերուն ծանոթ է «Շեդդադիե» անունը: Աս այն շրջանն է, որ Դեր Ջորեն բավական հեռու է, ուր կգտնվին Հայոց մեծ եղեռնի օրերուն հոն բերված և այրելով սպանված հազարավոր հայ տարագիրներու հրկիզման քարայրները: Այդ վայրը իր անունը ստացած է այս ահավոր եղելություններեն, որովհետև Շեդդադիե արաբերեն լեզվով կնշանակե՝ հոն, ուր ծանրակշիռ, ահավոր դեպքեր պատահեցան:

Նույնպես՝ ծանոթ է Մարկադեն, որ բլրակ մըն է, ուր այսօր ուխտի կերթան բոլոր հայերը, ինչպես՝ Դեր Ջոր: Հոն փոքր հիշատակարան մատուռ մըն ալ կա գոհերու հիշատակյին, և բլրակի որ մասեն որ հողը քիչ մը, նույնիսկ՝ մակերեսային պեղվի, մինչև օրս մեր նահատակներու գանգ ու ոսկորներ կհայտնաբերվին: Այդ վայրի անունը ևս արաբները դրած են այդ օրերուն, որ կնշանակե՝ հոն, ուր կուտակված դիակները կհանգչին⁶:

Հայ վերապրողներից բացի, պատմական այդ փաստերի մասին վկայություններ են հաղորդել նաև Սիրիայի արաբ անապատականները:

Ներկայումս Սիրիայի խորհրդարանի պատգամավոր, պատմական գիտությունների թեկնածու, դամասկոսաբնակ Նորա Արիայանը փաստագրական կարևոր արժեք ներկայացնող հարցազրույցներ է ունեցել Սիրիայի արաբ բեդվին անապատա-

⁶ Նույն տեղում, Վկ. 382, էջ 563:

կանների հետ և տեսագրել: 1999 թ. արաբերենով գրանցված այդ տեսաերիզը նա ուղարկել էր ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի արխիվին: Այդ տեսագրության մեջ ներկայացված են արաբ անապատականներ 119-ամյա Ալ Գըհըմի (ծնվ. 1880 թ., Ռաքքա), Բաշիր էլ Սաադիի (ծնվ. 1901 թ., Ռաքքա), արաբ կին անապատական Բաթրայի (ծնվ. 1906 թ., Դեյր է-Զոր), Հաբ Ալիի (ծնվ. 1905 թ., Ռաս ուլ Այն), Աբդուլ Ղաֆուրի (ծնվ. 1915 թ., Ռաս ուլ Այն) վկայությունները Հայոց ցեղասպանությունից մազապուրծ, տառապյալ հայերի մասին:

Այդ հինգ վկայությունները ես թարգմանել եմ տվել արաբերենից հայերեն և, վերծանելով, նույնպես ամփոփել եմ իմ ականատես վերապրողների վկայությունների սովորի հատորի մեջ՝ ի շարս 700 այլ վկայությունների: Ստորև մեջբերում ենք ժողովրդական այդ ուշագրավ նյութերը:

Միրիազի արաբ անապատական, Հայոց ցեղասպանության ականատես վկա Ալ Գըհըմը (ծնվ. 1880 թ., Ռաքքա) վկայել է. *«Ես արդեն 119 տարեկան եմ: Ծնվել եմ Ռաքքայում: Ես լավ եմ հիշում խեղճ արքորական հայերի տառապանքները: Նրանք բռնի վտարված էին իրենց հայրենական տներից և քայլելով, անոթի, ծարավ հասել էին մինչև մեր սիրիական անապատները՝ Եփրատ գետի ափը: Թուրք մագործները խաբել էին այդ հայերին, թե նրանք շուտով պիտի վերադառնան իրենց տները, քայց նրանց տարան Ռաքքայի պարիսպի ետևը և սպանեցին: Նրանցից միայն յոթ հայ ընտանիք փրկվեց, որոնց մեր արաբները՝ օգնել էին փախչել և ապաստան տվել իրենց վրաններում»*:

Արաբ անապատական Բաշիր էլ Սաադի (ծնվ. 1901 թ., Ռաքքա) ևս վկայել է. *«1915 թ. ևս 14 տարեկան էի, Եփրատի*

ափին Ռաքքայում հովիվ էի և մերոնց անասուններն էի արածացնում: Այդ ժամանակ ես տեսնում էի մարդկանց խմբեր, որոնք հոգնած և ուժասպառ, ցնցոտիներով ու կիսամերկ գալյա էին մեր կողմերը: Հետո իմացա, որ թուրքական կառավարությունը նրանց տեղահանել է իրենց հայրենիքից և բշել դեպի մեր սիրիական անապատները: Այդ հայ տարագիրները թուրք ժանդարմների հսկողության տակ քայլել են երկար ժամանակ առանց իմանալու, թե ու՞ր են գնում: Այդ հայերը ճամփին անթաղ էին թողել իրենց հարազատներին, որոնք չէին կարողացել քայլել, շատերին էլ թուրքերը սպանել էին:

Ես իմ հորեղբոր զավակների հետ մեր ուղտերով գնում էինք անապատ և, տեսնելով նրանց խղճալի վիճակը, ոմանց օգնում էինք. մեր ուղտերը կթելով՝ այդ սոված ու ծարավ հայերին կաթ էինք խմեցնում ջրի փոխարեն: Նրանք այնքան հյուծված և ուժասպառ էին, որ կանգնած վիճակում գետին էին փովում և ոչխարների պես մեռնում էին»⁸:

Իսկ Հաբ Ալին (ծնվ. 1905 թ., Ռաս ուլ Այն) իր վկայության մեջ նշել է, թե ինչպես ինքը փրկել է տառապյալ հայերի, նաև հիշատակել է մի շարք արաբ ցեղախմբերի, որոնք ևս մարդկայնորեն օգնել են հայ արքորականներին. «Ես 1915 թ. մոտ տաս տարեկան էի և լավ եմ հիշում տառապած արքորական հայերին: Նրանք հոգնած, ուժասպառ, կիսամերկ ու արյունլվա եկան հասան Ռաս ուլ Այն: Ես նրանց մի քանիսին տարա, թաքցրեցի մի մեծ փոսի մեջ, և նրանք փրկվեցին իրենց հետապնդող թուրք ոստիկաններից:

Սիրիական մի շարք աշիրաթներ ևս օգնեցին այդ հայերին: Այդ բարի արաբներից էին Շանմարը, Բակկարյան, Ուբադան,

⁸ Նույն տեղում, Վկ. 303, էջ 517:

Աջուբեն, Հարփը, Ալ Մուհամեդը, Ալ Հասանը, Ալ Ռուտուան, ժարբան, Զուրեյդը, որոնք նույնպես շատ հայ կիների և մանուկների թաքցրեցին իրենց ընտանիքներում և փրկեցին մահից:

Հեծյալ թուրք ժանդարմներն ու զինվորները, հայ արքայականների ետևից գալով, նրանց ստիպում էին առանց դադարի քայլել: Չեչենները, քրդերը և նույնիսկ թուրք զինվորները հարձակվում էին նրանց վրա դանակներով, կացիներով հարվածում էին, իսկ արաբները երբեք հայերին մատտ վ անգամ չեն դիպած»:

Նույն Ռասս ուլ Այն անապատում ապրող Աբդուլ Ղաֆուրը (ծնվ. 1915 թ., Ռասս ուլ Այն) ևս վկայել է. «Իրենց պատմական հայրենիքից բռնի կերպով տեղահանված հայերը, ծայր աստիճան ուժասպառ հասնելով Ռասս ուլ Այն, կամա, թե՛ ակամա իրենց կյանքը փրկելու համար ծառայեցին արաբների տներում: Նրանց կանայք գեղեցիկ աչքեր ունեին և շատ աշխատասեր էին: Այդ կանայք ստիպված ամուսնացան մեր անապատական շեյխերի և կամ գյուղապետերի հետ: Անոնց մեծ մասը կրոնափոխ եղավ, իսկ ոմանք ոչ: Բացասական հետևանքները հայտնվեցին ժամանակի ընթացքում՝ կամաց-կամաց նրանց հոգեբանության մեջ ստեղծելով տխուր ապրումներ և հոգեկան տանջանք: Հետագայում նրանք փորձեցին փնտրել և գտնել իրենց ողջ մնացած հարազատներին, կապ պահպանել նրանց հետ, միաժամանակ, որպես պարկեշտ կանայք՝ ընդունելով իրենց նոր կյանքը, ընտանիքը և զավակները:

Մի հայ աղջիկ, որի հորն ու մորը սպանել էին թուրքերը, արքայի ճամփաները քայլել էր իր երկու փոքր եղբայրների հետ: Հոգնած ու սպառված, եղբայրները ճամփին մահացել էին, իսկ

» Նույն տեղում, Վկ. 304, էջ 517:

ինքը միայնակ հասել էր Ռուս ուլ Այն և հուսահատ ամուսնացել Շամսա աշիրաթի շեյխի հետ: Նա ծնել է ինձ՝ դառնալով իմ ու իմ քույր, եղբայրների հոգատար և սիրելի մայրը»¹⁰:

Վերհիշելով հայ արքորականների ողբերգական վիճակը՝ արաբ կին անապատական Բաթրան (ծնվ. 1906 թ., Դեյր էզ Ջոր) միաժամանակ բնութագրել է հայ տառապյալ կանանց. «Ես 93 տարեկան արաբ անապատական կին մըն եմ: 1915 թ. ինը տարեկան էի և լավ կհիշեմ, թե ինչպես հայ արքորականների կարավաններն իրար ետևից ուժասպառ հասնում էին Դեր Ջոր: Նրանք տանջված էին, սոված, ծարավ, ցնցոտիների մեջ ու ոտաբոբիկ: Նրանք եկան և հավաքվեցին Դեր Ջորի կամուրջի մոտ: Մենք տեսնում էինք, թե ինչպես թուրք ժանդարմներն ու չեչենները նրանցից շատերին սպանում էին: Ողջ մնացած կանայք ստիպված ամուսնացան մեր արաբ անապատական շեյխերի և գյուղապետերի հետ: Նրանք դարձան ընտանիքի լավ մայրեր: Նրանց մեծ մասը հավատափոխ եղավ, իսկ ոմանք՝ ոչ: Մենք հիացած էինք հայ կանանց զեղեցկությամբ: Նրանք սրանչելի աչքեր ունեին: Բացի այդ, նրանք հավասարակշռված էին, հնազանդ ու պատվավոր: Նրանք երբեք չմուրացին:

Թուրքերը հայերին ցրեցին սիրիական անապատները, իսկ արաբները, մեղքանալով նրանց, հավաքեցին»¹¹:

2001 թ., երբ միջազգային գիտաժողովում զեկուցելու հանգամանքով այցելել էի Լոս Անջելես, տեղի «Արաբատ» տարեցնե-րի տանը հանդիպել եմ Սիրիայում ծնված, ասեղնագործելու քացառիկ շնորհքներով օժտված արվեստագիտուհի Ռոնյա Թերզյանին (ծնվ. 1920 թ., Հալեպ): Նա իր հոր աշխատանքի բե-

¹⁰ Նույն տեղում, Վկ. 305, էջ 517:

¹¹ Նույն տեղում, Վկ. 304, էջ 517-518:

109029
բումով մի քանի տարի ընտանիքով բնակվել է Դեյր էզ Ջորում և վերհիշում էր սրտաճմլիկ դրվագներ հայ աքսորականների կյանքից, հայ աղջիկների և կանանց առևանգման, բռնությամբ թուրքի կին դառնալու, թուրք երեխա ծնելու և նույնիսկ իրենց ձեռքով նորածնին խեղդամահ անելով իրենց վրեժը լուծելու մասին: Նա պատմել է հուշեր «Դեր Ջորից». «1928-ին հորս նշանակեցին Դեր Ջոր աշխատանքի, և մենք ընտանիքով փոխադրվեցինք այնտեղ:

Դեր Ջորում մենք հանդիպեցինք Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված ակնատես վկաների, որոնցմե շատերն իրենց մայրենի լեզուն արդեն մոռցել էին կամ բռնի հավատափոխ իսլամ էին դարձած, բայց տակավին ինքզինքնին հայ կզգային և հոգիով հայորեն կապրեին: Անոնցմե ամեն մեկը վշտի ծով էր. իր ցավերը պատմելով՝ չէր ավարտեր:

Ադ հայ կիները կպատմեին, թե ինչպե՛ս իրենց աքսոր հանած էին, ինչպե՛ս տառապած էին ճամփաներուն վրա: Անոնք իրենց հարազատներուն նահատակվիլը տեսած էին, անթոթություն, հիվանդություն, կողոպուտ, անպատվություն տեսած էին: Կպատմեին, թե ինչպե՛ս Դեր Ջոր հասած էին ճամփաներու վրա ձգած իրենց անչափահաս քույրերն ու եղբայրները, Դեր Ջորեն ալ անդին՝ մինչև Շեղդադիե գացած էին: Կպատմեին ու կուլային, իրենց ճակատագիրը կանիծեին: Մայրս և ես արցունքով կունկնդրեինք:

Գոհարը գեղեցկուհի մըն էր, Ադաբազարցի ընտանիքի մը աղջիկ: Տարագրության ճամփուն վրա իր բժիշկ նշանածը չէ բաժնված իրմե, բայց հագիվ քաղաքեն քանի մը ժամ հեռացած անոր իր աչքերուն առջև հոշոտած էին:

Խաթունը Կոնիացի էր: Օնողքին տխուր մահը ճակատագրին վերագրելով՝ հաշտված էր անոր հետ, բայց չէր կրնար մոռ-



նալ իր վեց տարեկան եղբայրը, որ ճամփան ձգած էր: Ան, սղի արցունք թափելով, կպատմեր. «Ալ քալելու կարողություն չէր մնացած վրաս: Եղբայրս՝ անոթութենե ուժասպառ, չէր կրնար քալել: Քանի մը օր շալկեցի զինք, բայց ոտքերս ուռած էին՝ չէի կրնար ծանրություն տանել: Եղբորս անոթության հնոցներն ականջս կխլացնեին: Քայլերս սկսան դանդաղիլ: Մտրակը իջավ ոտքերուս՝ գետին տապալեցա: Եղբայրս ինկավ կոնակես: Ալ վերցնելու կարողություն չունեի: Ուռած ոտքերես սկսավ արյուն հոսիլ: Չգեցի զինք ու հեռացա հեծկլտալով...»:

Արաքսին Թեքերդաղցի էր: Ան կպատմեր. «Մայրս Բուրսայէն Թեքերդաղ հարս եկած էր: Հայրս եղեռնեն տարի մը առաջ մեռած էր: Արամ քեռիս եկավ մեզ Բուրսա տանելու, որպէսզի մյուս քեռիներուս և մորաքույրներուս հետ ըլլայինք հոն, ուր պիտի քշեին մեզ: Երեք օր ետք տարագրվեցանք: Քեռիս, մայրս, ես և եղբայրս էինք: Մեզ ոտքով բերին Հալեպ, հետո ալ՝ Դեր Չորի ճամփան: Քեռիս կարելի եղածին չափ օգտակար կըլլար մեզի և ուրիշներուն. փոքր զավակ ունեցողներուն կօզներ՝ մեկերկու պզտիկ շալկելով, ծեր մարդու մը ձեռքէն բեռը կկրեր, ուրիշի մը քաջալերական խոսք մը կըսէր: Մոտեցանք Մեսքենեին: Տեղ չհասած՝ սարսափելի տեսարանի մը հանդիպեցանք: Փոքր քարայրի մը մեջ երիտասարդուհի մը պատին խաչված էր՝ մորե մերկ, փարթամ մազերը ուսերուն թափած: Մոսկումով կնայեինք, երբ մայրս ըսավ. «Տե՛ս, նոր մեռած է, մարմինը տակավին չէ ուռած»:

Մեզմե շաբաթ մը առաջ նույն տեղէն անցնող կարավանը շատ զոհ տված էր Մեսքենեի մեջ: Մեր խումբն ալ տասը զոհ տվավ: Իմ տասնչորս տարեկան եղբայրս հիվանդացած էր ճամփուն, դժվար կքայլեր. հոն մեռավ: Չորս օր ետքը մեզ տարին Ռաքթա: Հոն տասը օր մնացինք վրաններու տակ: Քեռիս գեղե-

ցիկ դեմքով, շեկ մորուքով երիտասարդ մըն էր, բարձրահասակ և թիկնեղ: Բոլորին ուշադրությունը կգրավեր իր գեղեցկությամբ և հասկապես իր բարի ու ծառայասեր հոգիով: Գիշեր մը երկու միլիսներ եկան կեցան մեր վրանին առջև: Քեռիս գունատեցավ: Մայրս ու ես սկսանք դողալ: Միլիսներեն մեկը ըսավ. «Դու յո ել, գլավու յ, քեզ Ահմեդ Չավուշը կուզես»:

Քեռիս ընկերացավ անոնց: Քիչ ետքը լսեցինք մտրակի ձայնը և քեռիիս օգնության կանչերը: Բայց ո՞վ կրնար մոտենալ Ահմեդ Չավուշի վրանին, ո՞վ կրնար համարձակությունը ունենալ գիշերով վրանեն դուրս ելլելու: Գիշերային լռության մեջ կլսեինք մտրակի շայտունը և քեռիիս կանչը. «Օգնություն՛ն, օգնություն՛ն»: Մայրս ուզեց երթալ աղաչել դահիճներուն, որ չծեծեն, չսպանեն քեռիիս: Վրանակիցները արգելք եղան. «Ո՞ր կերթաս, քու յրս, քեզ ալ կչարչարեն»:

Մայրս կուլար, մագերը կփետտեր, կգալարվեր գետինը: Հետո մարեցավ: Ժամերով լսվեցավ մտրակի հարվածներուն ձայնը: Քեռիիս ձայնը հետզհետե կնվաղեր: Ես կուլայի քեռիիս և մորս համար: Վրանակիցները ջուր թափեցին մորս երեսին: Ան կբանար աչքերը «Արա՛մ, եղբա՛յրս» կըսեր ու կփակեր աչքերը: Քեռիիս ձայնը դադրեցավ մտրակին ձայներուն վրա: Չէի գիտեր ի՞նչ եղած էր: Առավոտյան վախով գետը գացի՝ պզտիկ թիթեղով մը ջուր բերելու: Քեռիիս մերկ մարմինը տեսա աղբանոցին մեջ: Մտրակի հարվածներեն կապույտցած էր, տեղ-տեղ պատռոտված մարմինեն հոսած արյունը սառած էր, բայց ես լույսերուն մեջը տեսա զինք՝ ժպիտը դեմքին, կարծես մեռած չէր: Չորս օր ետք մայրս ալ մեռավ»:

Հայկանուշին պատմությունն ալ ցնցող էր. «Սեբաստիայեն մորաբրոջս ընտանիքին հետ ելանք արքոր: Մենք հինգ հոգի էինք, երկու քույր, եղբայր, հայր և մայր: Ամենամեծ զավակը ես

էի՝ տասնչորս տարեկան: Դեր Զորի ճամփին հայրս մեռավ թիֆ-
յուսէն: Մենք անտէր մնացինք: Կայանե-կայան գոհեր տալով՝
կքաշքշվեինք՝ սպասելով օրհասական վայրկյանին: Գիշեր մը
գաղթակայանի մը կիսափուլ ախտոյին մեջ էինք: Հանկարծ լայ-
տերներ բռնած քանի մը հոգի ներս խուժեցին, մեր վրայի ծած-
կոցները մեկ կողմ շարտեցին և ուշի ուշով դիտեցին մեր դեմքե-
րը: Հետո մորաքրոջս աղջկան՝ Մարալին, ձեռքէն բռնեցին ու
քաշեցին: Մարալն ու մորաքույրս սկսան ճչալ: Մարալը մորը
վզին փաթթվեցավ: Երկուքը միասին կուլային: Մայրը աղաչեց
ոստիկաններուն, որ թող տան աղջիկը: Անոնք մորը թներուն
մեջէն քաշեցին աղջիկը և հրացանի կոթով ուժեղ հարված մը
տվին մորաքույրիս գլխուն: Խեղճ կիներ փոփեցավ գետին՝ գլուխը
արյունոտված: Մարալին տարին: Խեղճ մորաքույրս իզուր
մրոտած էր իր տասնհինգ տարեկան Մարալին երեսը, ցնցոտի-
ներ հագցուցած էր անոր, գլխուն սև լաչակ կապած, ամբողջ
ճամփու ընթացքին կորաքամակ քալել տված էր՝ իբրև ծեր կին:
Ահավասիկ՝ կտարվեր Մարալը: Մարալը հաջորդ օրը վերա-
դարձավ տրտում-տխուր: Փաթթվեցավ մորը վզին ու լացա՛վ,
լացա՛վ զինվոր գացած հորը համար, անչափահաս եղբայրնե-
րուն և քույրերուն համար, որոնք ճամփան անթաղ մնացած էին,
լացա՛վ մորը ստացած վերքին և իր պատվին համար: Հաջորդ
օրը Մարալը գետը գնաց ջուր բերելու պատրվակով ու չվերա-
դարձավ... Մորաքույրս իր վերջին զավակին կորուստին չդիմա-
ցավ: Մեր ճամփա ելլալէն մեկ օր անցած՝ ինկավ անապատին
մեջ: Ափ մը հող չկրցանք վրան նետել: Մեզ խուժբով գետեզեր-
քէն դեպի Շեղդաղիէ կտանեին: Հեռուէն տեսանք կույտե մը
բարձրացող ծուխը: Երբ մտեցանք, երկու փոքրիկ ձեռքեր սև-

սանք, որոնք դեռ չէին այրված: Անապատի մեջ անտեր մնացած հայ երեխաներին հավաքել, այրու մ էին...»:¹²

Ռոնյա Թերզյանը պատմել է նաև արաբ անապատականների մոտ ապաստան գտած պատանի Բարունակ իրականում Փառնակ Շիշիկյանի (1902 թ., Ջեյթուն) գծագրած քարտեզի մասին, որտեղ մեկ առ մեկ նշված էր արաբ ցեղախմբերի մոտ ապաստան գտած արաբացած հայ որբերի ու հարեմներում պարփակված հայ կանանց գտնվելու վայրերը, նրանց հին և նոր անունները: Այդ քարտեզի շնորհիվ 1918 թ. զինադադարից հետո որբահավաքները հայտնաբերել և փրկել են նրանց. «Հայոց ցեղասպանության օրերին, զեյթունցի ծնողների զավակ 13-ամյա Բարունակ Շիշիկյանի աչքերի առաջ թուրքերը սպանում են նրա հորն ու մորը: Միայնակ մնացած թափառական տղային գտնում են Միրիայի արաբ անապատականները, կերակրում և խնամում են նրան և իրենց աշիրաթի (ցեղախումբ) անդամ դարձնում, որտեղ Բարունակը ուղտեր է արածացնում:

Այդ ընթացքում անապատական բեդվիների շորեր հագած ուշիվ և հեռատես պատանին, շրջակա անապատում սփռված արաբ գյուղերի քարտեզն է կազմում, նշելով այդ գյուղերում ապրող բոլոր հայ որբ աղջիկների ու տղաների նոր արաբական և նախկին հայկական անունները:

1918 թ. զինադադարից հետո, մեծաթիվ որբախույզ հայեր, արձագանքելով ՀԲԸՄ նախագահ Պողոս Նուբար փաշայի «Մեկ հայ որբ՝ մեկ կարմիր ոսկեդրամ» կոչին, գնում են անապատներ տարբեր աշիրաթների մոտ, հայ որբերին որոնելու: Այստեղ է, որ իրենց օգնության է հասնում Բարունակ Շիշիկյանի գծագրած քարտեզը և նրա կազմած հայ որբերի ու որբուհիների անունները:

¹² Նույն տեղում, Վկ. 348, էջ 543-544:

րի ցուցակը, որոնց շնորհիվ հայտնաբերվում և փրկվում են բազմաթիվ հայ որբեր և վերադարձվում հայության գիրկը:

Ավելի ուշ, Բարունակ Շիշիկյանը Սիրիայի կառավարությունից հողատարածք է խնդրում և հիմնադրում է Թելբրակ գյուղավանդ, որտեղ հավաքում, միմյանց հետ ամուսնացնում ու տնավորում է այդ հայ որբ աղջիկներին ու տղաներին¹³:

Ի դեպ, ավելացնեմ նաև, որ 1947 թ. Բարունակ Շիշիկյանն իր բազմանդամ ընտանիքով թելբրակցիների հետ մեր նույն «Պոբեդա» շոգենավով ներգաղթել է Հայաստան: Հայրենիքում նրանց երեխաները հայկական դպրոց են հաճախել, շատերը ստացել են բարձրագույն կրթություն և դարձել Հայաստանին օգտակար քաղաքացիներ:

Իսկ Բարունակ Շիշիկյանն իր բազմանդամ ընտանիքով բնակություն է հաստատել Մեհմանդար (ներկայիս Արարատի մարզի Հովտաշատ) գյուղում. նրան այդ գյուղում «մուլա» էին անվանում իր հմայող և բուժող կարողությունների համար: Նա մինչև կյանքի վերջ մնաց արաբ անապատականի իր հանդերձանքով՝ ի նշան արաբ ժողովրդի հանդեպ տալիս խորին երախտագիտության: Այդ պատկառելի անձնավորությանը 1969 թ. ես հանդիպել եմ Հովտաշատ գյուղի իր տնամերձում¹⁴: Երախտագետ համագյուղացիները 1974 թ. Հովտաշատի գերեզմանատանը կանգնեցրել են նվիրյալ մեծ հայասերի հուշարձանը:

2008 թ. ապրիլի 24-ին Լոս Անջելեսի Մոնթբերլո թաղամասում կառուցված Հայոց ցեղասպանության հուշակոթողի մոտ հանդիպել եմ Սիրիայից գաղթած Մարտիրոս Աշըկյանին (ծնվ.

¹³ Մվազյան Վ. Ամերիկահայ համայնքի բանավոր ավանդությունը ժամանակի հոլովություն (տպագրության ընթացքում):

¹⁴ Մվազյան Վ., Հայոց ցեղասպանություն..., էջ 759-760:

1927 թ., Հալեպ), որը պատմել է Դեյր էզ Ջորի անապատի Շեդ-դադիեի վիթխարի քարանձավում 40 հազար հայ արքորականների ողջակիզման մասին. «Ես՝ Մարտիրոս Աշըկյանս, ծնված եմ 1927-ին Հալեպի Ջեյթունխան բեմփին մեջ, երբ առաջին գաղթականության ժամանակ Հայոց ցեղասպանությունեն ողջ մնացածները ոտքով քալելով հասել էին Հալեպ և բնակություն հաստատել այնտեղ:

1948-ին ես աշխատում էի «Միրիլն Փեթրոյում բոմփանիին» մեջ. Փալմիրայի մոտ՝ Դալլաս անապատում փեթրոյի հոր կփորեհնք:

Ադ բեմփին մեջ աշխատած աստեննիս, ան տեղի արաբ պահակը կուզար ջուր տանելու: Ես և զեյթունցի Նորաշխարհյան Գառնիկը, որը Երջանիկին տղան էր, միշտ կտեսնայինք հոնտեղանքը պզտիկ աղջիկներ՝ արաբի հագուստներով, բայց՝ կապույտ աչքերով, դեղին մազերով: Անոնք կուզային կնայեին, թե ինչպես ենք մենք աշխատում:

Օր մը ադ արաբ պահակը ադ աղջիկներուն ըսավ արաբերենով. - Մի՛ աւննա՛ք, մոտեցե՛ք, ասոնք ձեր բեռններն են:

Մենք անոնց հարցրեցինք. - Ձեր մայրերը ո՞ւր են:

Հաջորդ օրը անոնք բերին իրենց մորը: Նիհար գեղեցիկ դեմքով, մազերը՝ դեղին, աչքերը՝ կապույտ, հազիվ 40 տարեկան կին մը: Մենք արաբերենով հարցուցինք. - Դուն հայ ըլլալդ ինչպե՛ս կհիշես:

- Միայն կհիշեմ՝ խբրզին (արաբ.) «հոց» (հաց - Ջեյթունի բարբառ) կըսեինք, ըլմայր (արաբ.)՝ «ճէօր» (ջուր - Ջեյթունի բարբառ) կըսեինք:

Մենք իր խոսած հայերեն բարբառեն հասկցանք, որ զեյթունցի է: Հարցուցինք. - Ո՞ւր կապրեիք:

- Մենք Ջեյթունի մեջ Ծովք ունեինք՝ ձոր էր, մեջը ջուր կար:

- Մնողքիդ անունը կհիշե՞ս:

- Դովլաթյան էր:

Մենք հաստատ գիտցանք, որ ան հայ է և զեյթունցի:

Հետո մեզ տարին Դաքքայի աջ կողմը դեպի Թըրքմորի ճամփան, Դալլաա անունով դաշտ մը կար հոն, հոն ալ հոր փորեցինք: Հետո մեզ տարին Ջեզիրէի կողմը:

1950-ին հոն անգլիացիները քեմփ շինեցին, մեզ ալ հոն փոխադրեցին, դեպի Խաբուր գետի արևելյան կողմը 45-50 մայլ Իրաքի սահմանին մոտ՝ Ջեբել Սինջար չհասած: Ան Իրաքի մեջ է, մաս մըն ալ Սուրիոյ մեջ է: Մեր քեմփին անունը «Հունահուէզիէ» էր: Ամեն օր կերթայինք հոն փերթոլի հոր փորելու: Անգլիական «Էս Բի Սի ընկերությունը» մեզի լանջ՝ ուտելիք ճաշ կրէրեր: Մենք կուտեինք, կըշտանայինք, մնացածը հովիվ բեղվիներուն կկանչեինք, որ ուտեն: Անոնք արաբ գնչուներ էին. Ջաբբուրի կըսեին ադ ցեղախմբին: Մենք իրենց լեզվով իրենց կկանչեինք. «Եաուէլ հենհեն հո՛ հո՛ (Եկէ՛ք հոս)»:

Օր մը արաբ հովիվ մը եկավ, սկսավ ուտել մեր ձգած կերակուրը: Մենք ըսինք.

- Ո՞ր են քո ոչխարները:

- Հոս, շատ մոտ են, - ըսավ, - Ուարա Նուգրըթ էլ Արման (Հայոց Քարանձավը - արաբ.) ետևի կողմն են ոչխարներս:

Մենք հետաքրքրվեցինք, ըսինք. - Մեզի ցույց տուր ադ տեղը:

Ես ու ընկերս արաբին հետ գացինք, մոտավորապէս մեկ մայլի չափ հեռու էր մեր աշխատած տեղից, Ջրսըր Շեդդադիէ, Խաբուր գետին վրա, դեպի Իրաք տանող կամուրջին մոտ՝ Չիբիսի կըսեին, քանի որ ժամանակին գերմանացիները փորել էին, որ փերթոլ հանեն, բայց երբ Երկրորդ համաշխարհային պատերազմին Գերմանիան պարտվեց, անոնք, կիսատ ձգած, գնացել էին: Մենք շարունակեցինք անոնց կիսատ ձգած գործը:

Մենք երկու հոգով, ձեռքի լամպով, գացինք, տեսանք, որ քարայր է, մութ է: Ես հետս տոպրակ մը առած էի:

Արաբը ըսավ. «Մենք միշտ կմտնանք աս քարայրը, ոսկի սպարանջան, ոսկի ակոսներ, ուրիշ զարդեր կգտնանք, դուրս կելլանք»:

Ուրեմն, մենք գացինք 50-60 մետր ավելի ներս, 10-15 մետր տրամագծով փոս մըն էր: Մեկ կողմը քարայր էր. դեպի Խաբուր գետի կողմը քարայրը կշարունակվեր:

Արաբը մեզ ըսավ. «Մոտ 40 հազար հայ Դեր Ջորեն հրաշքով փրկվածները, 70-80 մայլ քալեցնելով, չարչարելով, անսպասի տաք ավազներուն վրա առանց ջուրի, հասցրել են մինչև հոս: Դեր Ջորեն վերջը 50-60 մայլ դեպի հյուսիս-արևելք անսպաս է, ջուր չկա, ցանքս չկա: Ադ տեղերեն ադ խեղճերուն ոտքով քալեցնելով, ոսկրացած մարմիններով ադ հայերուն բերել են Ջրսըր Շեդդադիե քարանձավին մեջ, որին մի կողմը քարայր կսկսվի, Խաբուր գետին քովը, դեպի հարավ-արևմտյան կողմը քարայրին ելքը Խաբուր գետին կմիանա ադ փոսին ծայրը»:

Ադ փոսը 7-8 մայլ երկարությամբ քարայր մըն էր: Ադ փոսին մեջ լցրել են ողջ-ողջ հայերուն: Ադ մեզի ուղեկցող բեդվինը ըսավ. «Ես հիմա 65 տարեկան եմ և լավ կհիշեմ իմ աչքերով տեսածս, թե ինչպես թուրք զաբթիները մացառներ, ծառի ճյուղեր բերին, լցրեցին, կրակի տվին, «արբային էլֆ նաֆար» (40 հազար մարդ - արաբ.)»:

Մենք մեր ձեռքի լույսով և տոպրակով ներս մտանք: Մոտավորապես 200 ֆիթ ներս գացինք: Մեր ոտքերուն տակ դոքի-ձեռքի ոսկորներ, գանգեր էին: Սկսանք ոսկորները հավաքել տոպրակին մեջ: Մեր թորչին լույսը պակսեցավ, չկրցանք ավելի առաջ երթալ և թոթալի կորսնվեցանք խորդուբորդ, մութ, հազիվ խարխալելով, իյնալ-էլալով, վերջապես լույսի նշույլ մը երևաց:

Ուրախացանք, որ Աստված պգտիկ լույս մը ցուցուց և ան մեզի առաջնորդեց դեպի լույս աշխարհ: Ես «Հայր մեր» մը ըսի, խոշոր խաչ մը գծեցի քարայրին առաջը: Տոպրակով ոսկորը տարի անկողնիս տակը պահեցի: Ես ան ոսկորներով տոպրակը պետք է եկեղեցիին տայի: Բայց ան ժամանակ ջահել էի, չգիտեի՝ ինչ ընել, տարի, մեռած քրոջս գերեզմանին մեջ թաղեցի:

Վերջը, երբ Հալեպ գացի, պատմեցի Զեյթունխանի մեր շրջապատի մարդոց: Բոլորը լսեցին, մեկ մարդ մը ըսավ. «Ես ադ փոսի մեջի քարայրեն դուրս փախած եմ, դիակներուն տակեն դուրս ելած եմ, քանի որ անձրև եկած ջուրերը ադ փոսին մեջ լցվել էին և գնում Խաբուր գետը կթափվեին: Գաղթականության տառապանքեն վերջը հազիվ մենք, որ չոր-ոսկոր դարձած, անչափահաս պգտիկներ էինք, որ հազիվ անոթի-ծարավ քալելով ողջ էինք մնացած, թուրքերը մեզ լեցուցին ադ քարայրին մեջ ու կրակի տվին»¹⁵:

Երբ 2005 թ. այցելել էի Դեյր էզ Զորի անապատ իմ ուխտը կատարելու և տեղի Սբ. Նահատակաց եկեղեցական համալիրի գրադարանին նվիրելու Հայոց ցեղասպանության մասին իմ շարք գրքերը, այնտեղ հանդիպել եմ նավթարդյունաբերող Մութաֆյան ընտանիքի զավակ Հակոբ Մութաֆյանին (ծնվ. 1980 թ., Դեյր էզ Զոր), որը պատմել է Հայոց ցեղասպանությունից հետո արաբացած սերունդների հայկական ինքնության պահպանման և Հայաստանում հաստատվելու նրանց պատրաստակամության մասին. «Իմ պապայիս պապան՝ Հակոբը: Հայոց ցեղասպանության օրերուն իր ծնողներուն հետ տեղահանված է Ուրֆայի Կարմունջ գյուղեն: Անոնք անոթի-ծարավ, արևահար և ուժասպառ, ոտքով հասած են մինչև Դեյր Զոր: Հոն թուրքերը սկսած են

¹⁵ Նույն տեղում, էջ 759-760:

հայերուն կացիւններով գլուխները կտրել և Եփրատ գետը նետել: Կպատմեն, որ Եփրատ գետին ջուրը կարմրած էր հայերուն ար-
յունով: Ջարդէն հրաշքով ողջ մնացած է իմ մեծ պապաս՝ Հակո-
բը: Արաբ անապատական մը անոր առած, տարած է, որ իր ոչ-
խարները արածացնի:

Տարիներ ետքը Հակոբը ամուսնացած է իրեն պես որբ հայ
աղջիկի մը հետ, և ունեցած են երեք տղա և երկու աղջիկ: Ի պա-
տիվ իրենց պապային, Հակոբի երեք տղաներն իրենց երեք անդ-
րանիկ տղաներուն անունները Հակոբ դրած են: Այնպես որ իմ
անունս ալ իմ մեծ պապայի անունով՝ Հակոբ է:

Մեր Մուրաֆյաններուն գերդաստանը հիմա ալ Դեր Ջոր
կապրի և հայտնի է իր բարեկեցիկ դիրքով: Եթե հաշվես՝ մեծ-
պգտիկ 25 հոգի կըլլանք: [Ի դեպ, նավթարդյունաբերող Մու-
թաֆյանների ընտանիքը ևս իսլամիւտ ահաբեկիչների թիրախ է
դարձել, իսկ Հակոբն իր եղբոր հետ, որոնք սովորում էին Երևա-
նի բժշկական համալսարանում, ողջ մնացին անվտանգ Հայաս-
տանում]:

Դեր Ջորի մեջ 10-15 հայ կամ՝ կիսահայ ընտանիքներ կան:
Հայերը լավ հարաբերություններու մեջ են տեղի արաբներուն
հետ: Անոնք շատ բարի և հյուրընկալ մարդիկ են: Արաբ անա-
պատական աշիրաթապետներ հաճախ մեզի հյուր կուգան:
Անոնք միշտ կհիշեն և կպատմեն հայ արքայականներուն մա-
սին իրենց մեծերեն լսածները, թե ինչպես թուրք ոստիկանները
հայ տառապյալներուն խումբերով բերած են մինչև Դեր Ջոր և
ոչնչացուցած, անոնց մարմիններն ալ Եփրատ գետը նետած են:

Անոր համար հիմնկվա Դեր Ջոր քաղաքին ճիշտ կենտրոնը
հայերը 1991-ին հիմնեցին Ս. Նահատակաց եկեղեցի-հուշահա-
մալիքը՝ նվիրված մեկ ու կես միլիոն անմեղ հայ նահատակնե-
րու հիշատակին: [Դէյր էզ Ջորի Ս. Նահատակաց եկեղեցու հո-

յակերտ հուշահամալիրը ևս իսլամիստ ահաբեկիչների կողմից ումբակոծվել և ավերվել է]:

Մեր Դեր Ջորեն մոտ երկու ժամ օթոյով հեռու Մարկադե բլուրը կա: Ըստ արաբ անապատական ցեղապետերու վկայությոյան, այդ անունը հենց արաբները դրած են՝ հայերուն ջարդվելը տեսնալով: «Մարկադա» արաբերեն «ոաքքադա» բառն է և կնշանակե անհաշիվ դիզված դիակներ: Կըսեն, թե այդ բլուրը հայերուն դիակներէն գոյացած է: Մինչև հիմա, եթե այդ բլուրին հողը քիչ մը ձեռքով փորես, մեջէն մեր նահատակներուն ոսկորները դուրս կուգան: Ադ տեղը 1996-ին Ս. Հարություն մատուռը կառուցված է մեր նահատակներուն աճյուններուն վրա, որոնք ցուցադրված են մատուռին ամեն անկյունները՝ ապակիներուն տակ: [Ավելացնեն, որ Մարկադեի հայկական մատուռ-հուշակոթողը ևս ումբակոծվել և ավերվել է իսլամիստ ահաբեկիչների կողմից]:

Ավելի հեռուն Շեղդադիե ըսված խոշոր քարայրը կա: Անոր անունն ալ նորէն արաբ անապատականներու վկայությամբ արաբերէն «շեդդա» բառն է, որը կնշանակե՝ ահռելի մեծ ողբերգական իրադարձոյան վայր: Մեծահասակ արաբ անապատականները կպատմեն, որ թուրք ոստիկանները հայ արտորականներուն բերած, լեցուցած են ադ խոշոր քարայրին մեջը, մուտքը գոցած են և կրակի են տված: Հոն միայն հայերուն մոխրացած ոսկորները մնացած են...

Ով որ կուգա Դեր Ջոր, առանց ադ տեղերը տեսնալու ետ չերթար: Բայց հիմա աս վերջին տարիներուն Շեղդադիեի մոտերը պետրով հայտնաբերված է, անոր համար՝ Մուրիո կառավարութիւնը արգելած է ադտեղ երթալը: Բայց ադ երկու տեղավայրերուն՝ Մարկադե և Շեղդադիե անունները հայերուն ջարդերը իրենց աչքերով տեսած անապատական արաբները դրած են:

Աղ ժամանակ շատ հայ աղջիկներ և տղաներ տարբեր ձևերով կրցած են ազատվիլ թուրքերուն ձեռքեն և մերկ ու սոված ապաստան գտած արաբ անապատական բեդվիիններուն քովը: Անոնք հայ աղջիկներուն շատերուն երեսները, ըստ իրենց սովորության, կապույտ մելանով դաջած են, բոլորին մուսուլմանացուցած են և տարիներով պահած են իրենց քով: Աղ հայերը մեծցած, իրենց մայրենի լեզուն կորսնցուցած, արաբացած են, բայց կան նաև որոնք դեռ կհիշեն, որ իրենց նախնիները հայ եղած են:

Խոսքս հաստատեմ օրինակով մը: Ասկէ մեկ-երկու տարի առաջ երկու արաբ երիտասարդներ՝ 20-22 տարեկան, եկան մեր դուռը զարկին: Ես դուռը բացի, տեսա երկու արաբ գյուղացի տղաներ էին: Իրենց վրա-գլուխեն հայտնի էր, որ Դեր Զորի գյուղերեն էին:

Անոնց ներս հրամցուցի: Եկան նստան, հուզված սկսան խոսիլ: Պարզվեց, որ մեկուն մեծ պապան հայ է եղած՝ և՛ հայերուն ջարդեն հազիվ ազատված, անունը՝ Կարապետ: Մյուսին՝ այլ մեծ մաման հայ է եղած՝ Մարիամ անունով: Չնայած աղ՝ տղոց անունները արաբական էին, բայց իրենք ըսին, որ մինչև հիմա իրենց մականունը, այսինքն՝ հավեյալ անունը, մեկին «Կարապետ», մյուսին՝ «Մարիամ» կըսեն եղեր իրենց ապրած գյուղերուն մեջը:

Աղ երկու տղաքը սկսան հարց ու փորձ ընել, թե իրենց լսածները ճիշտ են արդո՞ք, որ հայերը երկիր ունին Հայաստան անունով, որ թուրք-ազերիներուն ձեռքեն Ղարաբաղը ազատված է, նաև՝ Ղարաբաղի հաղթանակեն ետքը հոն երթալ, ապրելու իրավունք կա արդեն, և թե՛ հոն գացողներուն: Ղարաբաղի կառավարությունը հող, արտ կուտա, որ մշակեն, դրամ կուտա,

որ տուն շինեն իրենց համար: Ուրեմն իրենք որուն պետք է դիմեն, որ իրենք ալ Ղարաբաղ երթան և հոն հաստատվին:

Ես անոնց ճանապարհ ցույց տվի իմ խորհուրդներով, ըսի՝ մենք երեք եղբայրներով արդեն կտրվինք Հայաստանի մայրաքաղաք Երևանի տարբեր համալսարաններու մեջ: Եվ ըսի, որ իրենք պետք է դիմեն Հալեպի հայկական հյուպատոսին և ան կրնա կարգադրել իրենց գերծր...

Այնպես, որ սուրիական անապատներուն մեջ բազմահազար ձուլված, օտարացած. բայց իրենց ազգային ինքնությունը տակավին պահած բռնի հավատափոխված հայեր կան, որոնք բացահայտ չեն, բայց Հայաստանի և Ղարաբաղի մեջ անոնց վերաբնակեցումը կազմակերպելը, կկարծեմ, մեր հայրենական կառավարության սրբազան պարտականությունն է»¹⁶:

Հետևաբար, սիրիական անապատներում իրենց լեզուն կորցրած, իրենց անունները փոխած, նույնիսկ հավատափոխ եղած բազմաթիվ հայերի սերունդներ մինչև օրս գոյատևում են՝ հիշելով իրենց նախնիների ազգային ինքնությունը:

Այսպիսով, իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում ոչ միայն սույն հոդվածում հիշատակված Հայոց ցեղասպանությունից մազապուրծ սիրիահայ վերապրողներին, այլև այն բազմահազար հայրենադարձներին, որոնք իրենց հիշողության խորխորատներում անթեղած պահել, պահպանել ու ինձ են հաղորդել իրենց տեսածն ու լսածը՝ ողբերգական ու հերոսական պատմական իրադարձությունները, ինչպես նաև կլիկյան բնիկ բարբառներով բանահյուսական տարաբնույթ ստեղծագործությունները, որպեսզի իմ գրառած, գիտականորեն ուսումնասիրած և հրատարակած նյութերը փոխանցվեն հաջորդ սերունդներին՝

¹⁶ Նույն տեղում, էջ 564-565:

անհետ կորստից փրկելով հայ ժողովրդի արևմտահայ հատվածի պատմական հիշողությունն ու նրա բանավոր մշակույթի ինքնատիպ ու արժեքավոր նշխարները:

ВКЛАД ПЕРЕЖИВШИХ ГЕНОЦИД СИРИЙСКИХ АРМЯН В ВОССТАНОВЛЕНИИ ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ

Резюме

ВЕРЖИНЕ СВАЗЛЯН

д.ф.н.

Ведущий научный сотрудник

Института археологии и этнографии НАН РА

Для армян, переживших геноцид в 1915-1923 гг., Сирия (в частности, г. Алеппо) являлась «воротами спасения».

Многие из сирийских армян в 1946-1948 гг. репатрировались в Армению. Будучи уроженцами Западной Армении и провинций Киликии, они являлись носителями устных традиций, передавая из поколения в поколение созданные на местных диалектах исторической родины – колыбели, разножанровые произведения устного народного творчества, а также неопровержимые фактологические свидетельства исторической памяти.

Начиная с 1955 г. мною было собрано около 10.000 единиц народоведческих материалов (в том числе в виде аудио- и видеозаписей), которые в качестве первоисточников были включены в мои 29 книг, тем самым на основе новейшего метода количественного и качественного анализа мною были исследованы и спасены от бесследного исчезновения эти уникальные культурные ценности армянского народа.

**THE CONTRIBUTION OF THE SYRIAN-ARMENIANS,
SURVIVED FROM THE ARMENIAN GENOCIDE,
IN THE RESTORATION OF THE HISTORICAL MEMORY**
Summary

VERJINE SVAZLIAN

Doctor of Philological Sciences


Leading Researcher at the

Institute of Archaeology & Ethnography, NAS RA

In the years 1915-1923, Syria – Aleppo was “The Gate of Salvation” for the survivors of the Armenian Genocide.

Many of them, who repatriated to Armenia in 1946-1948, were from the various provinces of Western Armenia and Cilicia and were still bearing the samples of the diverse genres of oral tradition of the native dialects of their cradle and the irrefutable factual evidences of historical memory.

Starting from 1955, I have written down, audio- and video-recorded in Armenia and in the Diaspora about 10,000 units of popular materials from the Syrian-Armenians. These materials have been inserted as primary sources in my 29 books and have been, at the same time, subjected, by the newest quantitative and qualitative methods, to analysis saving from a total loss those unique values of the culture of the Armenian people.



Վ. Սվազյանի գրքերը



Ռոբեր Ճեպեճյան



Ժիրայր Ռեխյան



Ալ Գըհըմ



Բաշիր էլ Սաադի



Բաթրա



Ռոնյա Թերզյան



Բարունակ Ծիշիկյան



Մարտիրոս Աշըկյան



Հակոբ Մուրաֆյան

ՍՈՒՐԻՈՅ ՍԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՅԻՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆԻ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՆ ԿՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ
1950-1970 ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ

ՅԱԿՈՒՔ ՉՈՒԱՔԵԱՆ

պ.գ.դ.

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի
յառաջատար գիտաշխատող
<hagopcholakian@hotmail.com>

Սուրիոյ նորանկախ հանրապետության մէջ կրթության գործը բարեկարգելու եւ համակարգելու միտող միջոցները բաւական մտահոգիչ կը դառնան համայնքային ու միութենական դպրոցներուն համար, յատկապէս հայ իրականութեան համար, որովհետեւ անոնք բնականաբար կը բերէին հայկական դպրոցի կարգավիճակի անցանկալի փոփոխութիւններ եւ հայերէնի ու հայերէնաւանդ դասանիւթերու ուսուցման սահմանափակումներ: Հայ թեմական իշխանութիւններն ու հասարակական կազմակերպութիւնները ամբողջ այս շրջանին լրջագոյն աշխատանք տարին կրթութեան մէջ իրենց ունեցած իրաւասութիւնները պահպանելու եւ հայերէնի ուսուցման բաւարար պայմաններ ապահովելու համար: Մասնաւոր վարժարաններու վերաբերեալ 17 Մարտ 1952-ին հրատարակուած կառավարական թիւ 175 կանոնադրական հրամանագիրը, Կրթութեան նախարարութեան 11 Յուլիս 1959 թուակիր թիւ 993/7 շրջաբերականը, Սեպտեմբեր 1967-ի թիւ 127 օրէնք-հրամանագիրը այս քսանամեակին փաստօրէն կը դառնան իշխանութիւն-համայնքներ բանակցութիւններու հիմնական օղակները:

1.- Թիւ 175 կանոնադրական հրամանագիրը եւ հայկական դպրոցներու նոր կարգավիճակը նորանկախ երկրին մէջ

Նորանկախ երկրին մէջ հետզհետէ պարտաւորիչ կը դառնար կրթական արաբական ծրագիրը: Հայ ազգային եւ հոգեւոր իշխանութիւնները յստակ կերպով կը նկատէին, որ բոլորովին այլ նպայմաններ կը ստեղծուին հայութեան Սուրիա մնացած հատուածներուն համար: 1946-1947 թուականներու հայրենադարձութիւնը որքան ալ աղմկալից ըլլար Սուրիոյ հայութեան մեծ մասը պիտի շարունակէր մնալ այդ հողին վրայ: Մեծագոյն խնդիրը կրթականն էր:

1945-1946 տարեշրջանի 124 դպրոցներու փոխարէն 1951-1952 տարեշրջանին մնացած էին միայն 77 դպրոց՝ 45 հայ առաքելական, 14 հայ աւետարանական, 16 հայ կաթողիկէ, 2 արաբական:

¹⁷ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարան, Խառն նամակներու թղթածրար. «Սուրիահայ դպրոցներու ցուցակ»: Ըստ երեսօթին՝ Սուրիոյ բոլոր հայկական դպրոցներու վերաբերեալ սերտոգութեան մը արդիւնքն է: Ցանկին մէջ վարժարանները (վ.) կը յիշատակուին ըստ վայրի, անունի (ան.), յարանուանական պատկանելիութեան (յրնւթ.), աշակերտներու թիւին (աշ.), ենթակայութեան եւ ՀԲԸՄ-է նպաստընկալ կարգավիճակին (ենթ.նպաստ): Յարանուանական պատկանելիութեան տակ կը յիշուին առաքելական (առաք.), աւետարանական (բող.), կաթողիկէ (կաթ.) եւ լատին յարանուանութիւնները, կան նաեւ միջ-յարանուանական առաքելական-աւետարանական (առաք-բող.), հայ կաթողիկէ-լատին Յիսուսեան (կաթ-Յիս.) վարժարաններ: Ենթակայութեան մէջ կը յիշուին՝ Հայկաի առաջնորդարանը (Առաջն.), Դամասկոսի առաջնորդարանը (Դ.ի առաջն.), Բարեգործականը իբրեւ նպաստատու (բարգծ.), Յիսուսեան միաբանութիւնը (ճիգուիթ), Դաշնակցութիւնը (դաշնակցթ.), Հայ կաթողիկէ առաջնորդարանը (Հ. կաթ. առաջն.), հայ աւետարանական առաջնորդարանը (բող.), Հոգեւոր եղբայրութիւնը (աղանդատր) եւ լատին համայնքը Հռոմ-Պաղեստին: Բարեգործականը կը նպաստէ ազգային, ազգային նպաստընկալ եւ աւետարանական դպրոցներու մեծ ցանցի մը:

Վայր-թաղ	Անուն	Յրևութ.	ԱՁ.	Ենթ. նպաստ
Հալեպ, Մէլտան	Ք. Ե. ազգ. ձեմա- րան	Առաք.	300	Առաջն.
-. , Ճիտէյտէ	Ազգ. Հայկազե. վներ	-. .	791	-. .
-. , Մէլտան	Սահակեան վ.	-. .	470	Առաջն. բարգձ.
-. , Սուլէյմանի .	Կիլպէնկեան վ.	-. .	175	Առաջն.
-. , Մէլտան	Զաւարեան վ.	-. .	530	-. .
-. , Տաուուսիէ	Վարդանեան վ.	-. .	284	Առաջն. բարգձ.
-. , Մէլտան	Ազգ. Մեսրո- պեան վ.	-. .	398	Առաջն.
-. , Գերմանիկ	Գերմանիկեան վ.	-. .	180	Առաջն. բարգձ.
-. , Շէյխ Մագ- սուտ	Արմէնեան վ. (Սեղրաք Մեսրո- պեան)	-. .	90	Առաջն. բարգձ.
-. , Սոգազ Ար- պային	Կրթասիրաց վ.	-. .	483	Առաջն. բարգձ.
-. , Շապուրա	Ուս.սիրաց. վ.	Առաք- բող.	451	Առաջն. բարգձ.
-. , Սեպիլ	Արամեան վ.	Առաք.	95	Առաջն. բարգձ.
-. , Ազիզիէ	Էմմանուէլ վ.	Բող:	184	Առաջն. բարգձ.
-. , Սուլէյմանիէ	Բեթէլ վ.	-. .	457	Առաջն. բարգձ.
-. , Տաուուսիէ	Էմմանուէլ վ. . .	-. .	75	Առաջն. բարգձ.
-. , Շէյխ Մագսուտ	Բեթէլ վ. :	-. .	40	Առաջն. բարգձ.
-. , Հարթըս - Սիս	Կիլիկեան վ.	Առաք.	572	բարգձ.
-. , Մէլտան	Կիլիկեան վ.	-. .	480	-. .

-.- , Աճուրդուք	Արմենեան վ.	-.-	177	-.-
-.- , Թիլէ	Անարատ Յոու- թեան վ.	Կաթ.	365	Հ. կաթ. առաջն.
-.- , Ազիզիէ Ճե- պէլ	-.-	-.-	100	-.-
-.- , Սուլեյմանիէ	-.-	-.-	100	-.-
-.- , Թիլէ	Մխիթարեան վ.	-.-	209	-.-
-.- , Սոզազ Ար- պային	Ս. Գր. Լուսաւո՛- րիչ վ.	-.-	146	-.-
-.- , Գերմանիկ	Յովսէփեան վ.	-.-	160	-.-
-.- , Շէյխ Մագ- սուտ	Հոհիփսիմեանց վ.	-.-	-	-.-
-.- , Մէյտան	Վարդանանց վ.	Կաթ- Յիւ.	447	Ճզուիթներ
Դամասկոս	Միացեալ վ.	Առաք.	172	Դաշնակցք.
-.-	Թարգմանչաց վ.	-.-	266	Առաջն. բարգձ.
-.-	Բարգէնեան վ.	-.-	45	Առաջն. բարգձ.
-.-	Սահակեան վ.	-.-	107	Առաջն. բարգձ.
-.-	Հայ աւետ. վ.	Բող.	102	Բող. բարգձ.
-.- , Պապ Թումա	Անարատ Յոու- թեան վ.	Կաթ.	185	Հ. կաթ. առաջն.
Հումս	Ազգ. Սահակեան վ.	Առաք.	63	Դ.ի առաջն.
-.-	Հայ աւետ. վ.	Բող.	19	Բող. բարգձ.
Լաթաքիա	Սրբ. Յակոբեանց վ.	Առաք.	138	Առաջն.
Քեսապ	Ազգ. նպաստորնկալ վ.	-.-	30	Բարգձ.
-.-	Ուսումն. Միացեալ վ.	-.-	140	Առաջն.
-.-	Հայ աւետ. վ.	Բող.	62	Բող. եկեղեցի
-.-	Հայ կաթողիկէ վ.	Կաթ.	-	Հ. կաթ.

				առաջն.
Գարատուրան	Մեսրոպյան վ.	Առաք.	25	Բարգձ.
-. -	Ազգ. վ.	-. -	32	Առաջն.
-. -	Հայ աւետ. վ.	Բող.	15	Հ. բող. եկեղեցի
-. -	Հայ կաթողիկէ վ.	Կաթ.	9	Հ. կաթ. առաջն.
Էքիզօլուք	Հայ աւետ. վ.	Բող.	10	Հ. բող. եկեղեցի
Քեօրքինէ	Հայ աւետ. վ.	-. -	24	-. -
Պաղճաղագ	Հայ աւետ. վ.	-. -	7	-. -
Թարթուս	Նուպարեան վ.	Առաք.	28	Առաջն. բարգձ.
Ազէզ	Սահակեան վ.	Առաք.	126	Առաջն. բարգձ.
-. -	Հայ աւետ. վ.	Բող.	45	Հ. բող. եկեղեցի
Աֆրին	Արամեան վ.	Առաք.	31	Առաջն. բարգձ.
Եագուպիէ	Վերածնունդ վ.	-. -	104	Առաջն. բարգձ.
Ճարսայրուս	Մեսրոպեան վ.	-. -	61	Առաջն.
-. -	Վարդանեան վ.	-. -	113	Բարգձ.
-. -	Յովսէփեան վ.	Կաթ.	42	Հ. կաթ. առաջն.
Արաք Փունար	Խրիմեան վ.	Առաք.	84	Առաջն.
-. -	Նալպանտեան նպաստ. վ. (Նուպարեան վ.)	-. -	40	Բարգձ.
Ռազգա	Նուպարեան վ.	-. -	85	Առաջն. բարգձ.
Տէր Զօր	Ազգ. վ.	-. -	30	Առաջն. բարգձ.
Թէլ Ապիստ	Խորենեան վ.	-. -	94	Առաջն. բարգձ.

Գամիշլի	Ազգ. վ.	-.-	1181	Առաջն. բարգձ.
-.-	Ս. Յովսեփեանց վ.	Կարթ.	210	Չ. կարթ. առաջն.
Հասիչե	Ազգ. վ.	Առաք.	107	Առաջն.
-.-	Հայ կաթողիկե վ.	Կարթ.	-	Չ. կարթ. առաջն.
Տրրպեսիե	Ազգ. Կիլիկեան վ.	Առաք.	79	Առաջն.
-.-	Կիլիկեան նպաստունկալ վ.	-.-	102	Բարգձ.
-.-	Հայ Կաթողիկե վ.	Կարթ.	82	Չ. Կարթ. Առաջն.
Ամուտա	Ազգ. վ.	Առաք.	24	Առաջն.
Տպպանա	Նպաստունկալ վ.	-.-	-	Բարգձ.
Տերիթ	Մեսրոպեան վ.	-.-	85	Առաջն. բարգձ.
Հելիթոյ	Նպաստունկալ վ.	-.-	-	Առաջն. բարգձ.
-.-	Չ. Կաթողիկե վ.	Կարթ.	-	Չ. կարթ. առաջն.
Ռասուլ Այն	Ազգ. Մեսրոպեան վ.	Առաք.	56	Առաջն. բարգձ.
Այն Արուս	Ազգ. Նուպարեան վ.	-.-	29	Առաջն. բարգձ.
Մլուքսարա	Նպաստունկալ վ.	-.-	-	Բարգձ.
Հալեպ, Նեյեալ	Կենաց վրժ.	Բող.	170	աղանդաւոր
-.-, Սուլէյմանիե	Պալեան Ռամ վրժ.	լատին	2116	Հռոմ-Պաղեստին

45 դպրոց հայ առաքելական, 14 դպրոց հայ աւետարանական, 16 հայ կաթողիկե, 2 աղանդաւոր, ընդհանուր թիւ 77 դպրոց:

Սուրիոյ դպրոցները ունէին երկու պատկանելիութիւն պետական և մասնաւոր: Մասնաւոր դպրոցները, մեծամասնու-

թին կազմելով, ունեին չափազանց խայտաբղետ ուղղուածութիւն՝ իսլամական եւ քրիստոնեական տարբեր դաւանանքներու, ազգային փոքրամասնութիւններու, օտար առաքելութիւններու, տարաբնոյթ միութիւններու եւ անհատներու: Նորանկախ երկրին համար այսքան բազմազանութիւնը համակարգելը ծանր գործ էր, մանաւանդ որ երկրին մէջ քաղաքական-գաղափարական հակադիր ուժեր կային, ոմանք ծայրայեղ իսլամիստական, որոնց կողմէ մասնաւոր դպրոցներու ուղղուած կարգադրութիւնները չափազանց մտահոգիչ կրնային ըլլալ յատկապէս քրիստոնեայ փոքրամասնութիւններուն համար:

Քրիստոնեայ համայնքներու մասնաւոր դպրոցներուն վրայ կատարուած ճնշումները սկզբնապէս կը կատարուէին տարբեր նահանգներու կրթական քննիչներու կողմէ: Բերիոյ թեմի առաջնորդարանը միջոտ կապեր ունի վիճակներուն հետ ու անմիջապէս հակազդելու տրամադրութիւն՝ այս հարցին մէջ քրիստոնեայ այլ համայնքներու համամտութիւնն ու զօրակցութիւնը ապահովելով: Այս իմաստով բաւական խօսուն է Բերիոյ թեմի Քաղաքական ժողովի 14 Նոյեմբեր 1950-ի ատենագրութիւնը¹⁸: Ժողովի նախագահ առաջնորդ Զարեհ սրբազան կը յայտնէ Ճեզիրէի կրթական քննիչ Էօմեր Գրգլարի նամակի բովանդակութիւնը, որ կը պահանջէր անմիջապէս կիրարկութեան դնել Սուրիական սահմանադրութեան 28-րդ յօդուածը, այսինքն մեր վարժարաններուն մէջ բացի հայերէնէն եւ կրօնի դասէն «բոլոր նիւթերը աւանդենք արաբերէն լեզուով»: Նման սեղմումներ կ'առաջարկուէին նաեւ քրիստոնեայ միւս համայնքներու մասնաւոր դպրոցներուն: Քրիստոնեայ երեսփոխանները փոխել կու

¹⁸ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարան, Քաղաքական ժողովի ատենագրութիւն, տոմար 60, ԼՁ. կիստ, 14 Նոյեմբեր 1950, էջ 139-142:

տան քննիչը: Ի հեճուկս այս կարգադրութեան՝ նոր քննիչը «կը խնդրէ անմիջապէս պատասխանել նախկին կրթական քննիչ պր. Գրգլարի նամակին եւ գործադրութեան դնել սահմանադրութեան ծանօթ յօդուածը»: Ճեզիրէի առաջնորդական փոխանորդ Տաճատ հայր սուրբը կը յայտնէ, թէ «կրթական քննիչը դժուարութիւններ կը յարուցանէ մեր վարժարաններուն շուրջ»:

Չարեհ սրբազան կը յայտնէ նաեւ, որ՝ «Մենք անմիջապէս տեսակցութիւն ունեցանք երեսփոխան պ. Լաթիֆ Ղանիմիէին հետ, ինչպէս նաեւ Հինտիէ Գերապայծառին եւ Սօսէնիէտ Բզիտոր Տէթթէլին հետ: Բոլորն ալ այն կարծիքէն եղան ինչ որ մենք էինք, այսինքն կարելի չէ գործադրութեան դնել սահմանադրութեան ծրագիրը եւ յետոյ պէտք է ամուր կենալ մեր համայնքային իրաւունքներուն վրայ: ...Այս խորհրդակցութիւններու ընթացքին որոշուեցաւ, որ վաղն իսկ համայնքներու հոգեւոր պետերը խորհրդակցութիւն մը ունենանք յոյն կաթողիկոսներու արքեպիսկոպոսարանին մէջ եւ ի հարկին պատգամաւորութիւն մը դրկենք Դամասկոս՝ այս խնդիրներու բարւոք կարգադրութեան համար»:

Կը յայտնուի նաեւ, որ Բերիոյ թեմի Ուսումնական խորհուրդը, ընդառաջելով պետական կրթական ծրագիրներուն, արդէն պարտադիր դարձուցած է արաբերէն պատմութիւն, աշխարհագրութիւն եւ թուաբանութիւն դասանիւթերը:

Ժողովը կ'արձանագրէ, թէ՝ «Ձանազան աղբիւրներէ կ'իմանանք, որ պետական քննիչները, մասնաւորաբար շրջաններու մէջ, կը ջանան նեղել համայնքային դպրոցներու վարչութիւնները, որպէսզի մենք հարկադրուինք փակելու մեր վարժարանները: Այս մասին մէկէ աւելի վկայութիւններ կան»: Օրինակ կը տրուի Հասիչէի հայ կաթողիկ վարժարանը, որ չնչին խնդրով մը, տնօրէն վարդապետին օտարահպատակ ըլլալուն պատճառով,

մէկ սմիս փակ մնաց, եւ շատ մեծ դժուարութեամբ արտօնուեցաւ բացումը: Դժբախտաբար սակայն այնպիսի համաձայնութեամբ մը, որ նախընթաց կը ստեղծէ համայնքներու իրաւունքներու ոտնակոխումին մէջ. «Համաձայնուած է որ վարժարանին տնօրէնը նշանակուի Մէարիֆին (պետական կրթական գերատեսչութիւն) կողմէ: Մինչեւ յարմար թեկնածուի մը գտնուիլը նշանակուած է մահմետական մը»: Կ'ըսուի նաեւ, որ կրթական գործը դժբախտաբար յանձնուած է «Ախուան էլ Միւսլիմին»-ներու (Իսլամ Եղբայրներ կուսակցութիւն), որոնց ուղղութիւնը ծանօթ է բոլորին»:

Ժողովը զեկուցումները լսելէ ու կարծիքներու լայն փոխանակութիւն ունենալէ ետք միաձայնութեամբ կու գայ հետեւեալ եզրակացութիւններուն.

1.- Մասնակցիլ հոգեւոր պետերու վաղուան ժողովին:

2.- Համաձայն ըլլալ Դամասկոս պատուիրակութիւն մը դրկելու խնդրին:

3.- Այդ պատուիրակութեան պէտք է մաս կազմէ նաեւ սրբագա՛ն հայրը:

4.- Դամասկոսի մէջ կրթական նախարարին, ինչպէս նաեւ ուր որ անկ է, բացատրել մեր դպրոցներու կացութիւնը, մեր տղոց արաբերէնին մէջ տկար ըլլալը. պատրաստականութիւն յայտնել հետզհետէ հասնելու պահանջուած բարձրութեան եւ սուոր համար խնդրել գէթ հինգ տարուայ ժամանակամիջոց:

5.- Ժողովը միաձայնութեամբ գտաւ, որ մենք ինքնաբերաբայ պէտք չէ մեր իրաւունքները զիջինք, պէտք է տէր կանգնինք համայնքային մեր իրաւունքներուն՝ շեշտելով մեր համայնքին օրինապահ ըլլալը¹⁹:

¹⁹ Նայելը:

Այս հանդիպումներն ու բանակցութիւնները կը յաջողին ձգձգում մը բերել մասնաւոր դպրոցներու կարգավիճակին մէջ:

Բաւական մտահոգիչ կը դառնայ մասնաւոր վարժարաններու վերաբերեալ 17 Մարտ 1952 թուին հրատարակուած կառավարական թիւ 175 կանոնադրական հրամանագիրը, ըստ որուն՝ յառաջիկայ տարեշրջանէն սկսեալ գործելու իրաւունքէ պիտի զրկուէին Բագմաթի դպրոցներ: Հրամանագիրի հրատարակութենէն ետք ահագանգի կ'ենթարկուին Սուրիոյ քրիստոնէայ համայնքները, ասոնց կարգին նաեւ հայ երեք յարանուանութիւններն ու համայնքային, միութենական, միսիոնարական, միաբանական եւ անհատական դպրոցական բոլոր շրջանակները:

Բերիոյ թեմի Քաղաքական ժողովը յանձնախումբ մը կը յառաջացնէ նոր հրամանագիրին տրամադրութիւնները քննելու եւ կէցուածք առաջադրելու համար:

Քննութեան առարկայ դարձած կէտերէն կարելոր են հետեւեալները.

1.- Ամենէն կարելոր յօդուածներէն մէկը կը ճշդեր, որ երկրին մէջ կը գործեն «պետական» եւ «ոչ-պետական» վարժարաններ: Ոչ-պետական բոլոր դպրոցները կը նկատուին անձնական վարժարաններ՝ յատուկ արտօնութեամբ տրուած մասնաւոր անձերու:

Յանձնախումբը հետեւեալ առարկութիւնը կ'ընէ. «Նկատի ունենալով որ նոր կանոնադրութիւնը կը ձգտի վերջ տալ համայնքներու յատուկ վարժարաններու գոյութեան, վարժարաններու արտօնագիրը կապելով պատահական անձերու, որոնք կրնան ձգել իրենց պաշտօնը կամ մեկնիլ քաղաքէն, այս ձեւով ստեղծելով դժուարութիւններ, Յանձնախումբը կը յայտնէ, որ վարժարանները պետք է ըլլան թեմական առաջնորդի անու-

նին, որ իր կարգին փոխանորդներ կը նշանակէ զանազան վարժարաններու, իբրեւ տնօրէն: Յանձնախումբը կ'առաջադրէ ռեւէ գնով չկորսնցնել համայնքներու յատուկ մեր իրաւունքները ենթարկուելով օրէնքի այս տրամադրութեան եւ նկատել վարժարանները ազգային հարստութիւն»²⁰:

2.- Հրամանագիրին 10-րդ յօդուածը կը ճշդէր, որ քուր դասերը պարտադրաբար արաբերէնով պիտի աւանդուին: Վարժարանները կրնան աւանդել մէկ օտար կենդանի լեզու, պայմանաւ որ դասերուն ընդհանուր թիւը շաբաթական չորսէն աւելի չըլլայ:

Յանձնախումբը կը գտնէ, որ «Հայերէնը չի կրնար օտար լեզու համարուիլ, նկատի ունենալով որ ան սուրիացի քաղաքացիական իրաւունք ունեցող համայնքի մը մէկ լեզուն է: Պարտադիր դասերէն դուրս համայնքներու յատուկ վարժարանները ազատ են դասաւանդելու իրենց համայնքային ըմբոստմներուն համաձայն, որովհետեւ ինչպէս ըսուեցաւ, այդ համայնքները բաղկացուցիչ տարրերն են սուրիացի ժողովուրդին: Այս տրամադրութեամբ, մասնաւոր շեշտ պէտք է դնել հայերէն լեզուին վրայ»:

3.- Հրամանագիրին 37-րդ յօդուածը կ'արգիլէր երկսեռ կրթութիւնը: Յանձնախումբը կը գտնէ, որ ասիկա անյադրահարելի դժուարութիւններու առջեւ կը դնէ մեր կրթական գործը:

Քաղաքական ժողովը կը վաւերացնէ Յանձնախումբին դիտողութիւնները եւ կը խնդրէ՝ 'առաջնորդէն' (Զարեհ Սրբազան), որ անմիջապէս մեկնի Դամասկոս, նոր բանակցութիւններու մէջ մտնէ կրօնապետներուն եւ կառավարութեան

Վ. տոմար 62, Գ. նիստ, 8 Մայիս 1952, էջ 11:

հետ տեր կանգնելու համար մեր համայնքային իրաւունքներուն եւ մեր ազգային կրթութեան պահանջներուն²¹:

Բերիոյ թեմի առաջնորդը Մուրիոյ քրիստոնէայ միւս կրօնապետներուն հետ խորհրդակցութիւններ կ'ունենայ. բանակցութիւններ կը կատարուին երկրի վարչապետին, նախագահին, կրթութեան նախարարին հետ, ու բարեփոխութիւններու լուրջ տրամադրութիւններ կը ստեղծուին: Կը ճշդուին թիւ 175 հրամանագիրին վերաբերող բոլոր առարկութիւնները, ապա կը կազմուի տարբեր համայնքներ ներկայացնող չորս հոգինոց յանձնախումբ մը՝ Մելեթիոս, Պուրոս Մուտավար, Ապպուտ եւ Զարեհ եպիսկոպոսներէ: Յանձնախումբը աշխատանքային նիստեր կ'ունենայ Կրթութեան նախարարութեան դիւանապետին հետ. մէկիկ-մէկիկ կը ճշդուին անհրաժեշտ փոփոխութիւնները: Առաջնորդը Հալէպ վերադառնալէ ետք, Քաղաքական ժողովի Ե. նիստին, 11 Յունիս 1952, մանրամասնօրէն կը զեկուցէ ներկայացնելով այն բոլոր փոփոխութիւնները, որ կը կատարուին թիւ 175 հրամանագիրին մէջ: Ան կը հաւաստիացնէ, որ այդ փաստաթուղթին մէջ 4 Յունիս 1952-ին կատարուած փոփոխութիւններով «Հայոց լեզուն օտար լեզու չի նկատուիր, երկսեռ կրթութիւնը կ'արսօնուի, առաջնորդարաններու արտօնատերի հանգամանքը եւ նոր վարժարաններ բնալու իրաւունքը կ'իւրացուին, քննիչներու իրաւասութիւնները կը սահմանափակուին, դասերու բաժանումը եւ դասապահերու թիւի ճշդումը ազատ կը կացուցուին, օրուան առաջնորդները կը նկատուին վերին պատասխանատու՝ գոյու-

²¹ Նոյնը, տումար 62, Գ. նիստ, 8 Մայիս 1952, էջ 12:

թին ունեցող վարժարաններու կրթական եւ դաստիարակչական գործունեութեան»²²:

12 Յունիս 1952-ին Քաղաքական ժողովի Զ. խառն նիստին (ներկայ են ազգային եւ միութենական վարժարաններու հոգաբարձութեանց դիւանները, տնօրէնները, արտօնատէրերը, Գաւառական ժողովի դիւանը եւ Ուսումնական խորհուրդի ներկայացուցիչները՝ 40 հոգի) Սրբազան հայրը կը հաղորդէ, որ հետեւեալ բարեփոխութիւնները մտած են հրամանագիրին մէջ.

ա.- Առաջնորդարանները իրաւունք պիտի ունենան նոր վարժարաններ բանալու, նորոգելու մինչ այդ գոյութիւն ունեցող վարժարաններու իրենց արտօնագիրները եւ հակակշռելու անոնց կրթական եւ դաստիարակչական գործունեութիւնը:

բ.- Հայ լեզուն օտար լեզու պիտի չնկատուի, ինչպէս նաեւ օտար լեզու պիտի չնկատուին քրիստոնեայ համայնքներու այն հին լեզուները, որոնցմով կ'աւանդուին կրօնական գիտութիւնները²³:

գ.- Պետական քննիչները իրաւունք պիտի չունենան մանրամասն կերպով հետաքրքրուելու մեր դպրոցներու պիւտճեական եւ հաշուական գործերով:

դ.- Համայնքները ազատ պիտի ըլլան երկսեռ վարժարաններ պահելու, երբ այդ համայնքի ղեկավարութիւնը որեւէ անպատեհութիւն չի գտներ երկսեռ ուսուցման դրութեան մէջ:

²² Նոյնը, Ե. նիստ, 11 Յունիս 1952, էջ 22-24:

²³ Նկատի ունի Մուրիոյ ոչ-հայ քրիստոնեայ փոքրամասնութիւնները՝ արամեացիներ, ասորիներ, քաղղեացիներ, յոյներ եւ այլն: Իսլամի ծիսական լեզուն արաբերէնն է, հետեւաբար թուրքմէները, քիւրտերը, չերքեզները եւ այլք չէին կրնար օգտուիլ այսպիսի իրաւունքէ մը: Անոնք արդէն մասնաւոր վարժարաններ չունին:

ե.- Ազատ պիտի ըլլան ճշդելու իրենց դասապահերը:

զ.- Ուսուցիչներու վկայականներու գնահատութիւնը պիտի ընեն թեմական առաջնորդարանները եւ այլն²⁴:

Սրբազանին երկար բացատրութիւնները լսելէ ետք հարց կը ծագի, թէ մեր միութենական եւ անհատ ազգայիներու անունով գոյութիւն ունեցող դպրոցները պէ՞տք է պահել իրենց անջատ վիճակին մէջ, թէ պէտք է միացնել բոլորը եւ ենթարկել համայնքին հովանաւորութեան: Բաւական երկար վիճաբանութենէ եւ խորհրդակցելէ ետք, միութենական եւ անհատ դպրոցներու ներկայացուցիչները համայնքին ենթարկուիլը գտած են իրենց համար աւելի օգտակար եւ ստորագրած են իրենց հաւատարմագիրները՝ խոստանալով որ վաղն եւեթ պիտի լեցնեն ծխական դպրոցներու տեսչութեանց նման իրենց ներկայացուած հարցարանները, պիտի տան լիազօրութիւն առաջնորդ հօր, որ բոլոր հայ դպրոցներուն անունով արտօնագիր ստանայ: Միութենական եւ անհատական վարժարաններ կը նկատուէին Հալէպի Զաւարեան, Կրթասիրաց, Ուսումնասիրաց, Քաղաքի եւ Մէլտանի Կիլիկեան, Արմէնեան վարժարանները²⁵: Կարգ մը միութենական դպրոցներ՝ Կիլիկեան, Կրթասիրաց, եւ Արմէնեան, ետ կ'առնեն որոշումը եւ կ'արտօնուին գործելու իբրեւ միութենական վարժարաններ²⁶: Յետագային միութենական վարժարաններու ցանց կ'ունենայ ՀԲԸՄ-ը:

²⁴ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարան, Քաղաքական ժողովի աստեղագրութիւն, տոմար 62, Զ. խառն նիստ, 12 Յունիս 1952, էջ 29-30:

²⁵ Նոյնը, էջ 29-35: Տես նաեւ **Չոլսրեան Յ.**, Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի, 1927-2007, Հալէպ, 2007, էջ 236-237:

²⁶ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարան, Քաղաքական ժողովի աստեղագրութիւն, տոմար 62, Է. նիստ, 27 Յունիս, 1952, էջ 37-39:

Այսպիսով, քրիստոնեայ բոլոր համայնքներու բողոքներուն շնորհիւ կարելի կ'ըլլայ որոշ փոփոխութեան ենթարկել պետական հրամանագիրը, որով Սուրիոյ ժողովուրդին մաս կազմող համայնքները կրնային իրենց համայնքային դպրոցները ունենալ, ատոնց կարգին նաեւ հայ առաքելական, հայ աւետարանական եւ հայ կաթողիկէ համայնքները: Կարգ մը միութենական, անհատական, հայրենակցական դպրոցներ մտան յարանուանական դպրոցներու ցանցին մէջ:

Այդ հրամանագիրով Սուրիոյ տարածքին մէջ գոցուեցան օտար բոլոր միսիոնարական դպրոցները՝ Յիսուսեան, Ֆրանչիսկեան, Լազարիստ, Նազարին եւ այլն: Միսիթարեան եւ Անարատ յղութեան քերզ վարժարանները մտան հայ կաթողիկէ համայնքի դպրոցներու ցանցին մէջ: Յիսուսեան քանի մը վարժարաններ նկատուեցան լատին համայնքի²⁷ սեփականութիւն: Լատին դպրոցները ելան միաբանական հսկողութենէն ու դրուեցան տեղական լատին համայնքներու հսկողութեան տակ:

Ըստ այս հրամանագիրի տրամադրութիւններուն՝ հայ դպրոցներու դասացոյցը պէտք է ունենար շաբաթական 17 պահ արաքերէն լեզուով դասանիւթեր, 17 պահ՝ հայերէնով եւ 4 պահ ալ օտար լեզուով՝ ֆրանսերէն կամ անգլերէն: Չետեալքար հայկական դպրոցները կարգ մը ուսուցիչներ դուրս դնելու եւ անոնց փոխարէն արաբագետ ուսուցիչներ հայթայթելու պարտաւորութեան մէջ կը գտնուին: Օրինակ, Ազգային Սահակեան վարժարանի հոգաբարձութիւնը իր 16 Յուլիս 1952-ի նիստին մտահոգութիւն կը յայտնէ, որ ասկէ ետք դասարանի դաստիարակ ուսուցիչներէն ոմանք հարկադրաբար պիտի նշանակուին արա-

²⁷ Լատին համայնքները չշփոթել արեւելեան միւս կաթողիկէ համայնքներուն հետ՝ յոյն կաթողիկէ, ասորի կաթողիկէ, հայ կաթողիկէ եւ այլն: Լատին համայնքները բազմազգ են ու լատինաձէս:

բերելով դաս տուող ուսուցիչներ է կ'աւելցնէ. «Հայ լեզուով տրուած դասերու պահերը նուազած են, որուն հետեւանքով նուազած պէտք է ըլլայ նաեւ հայ պաշտօնեայի թիւը... Այս կարգադրութեամբ նախակրթարանի մեր ութ դասարաններուն²⁸ համար միայն վեց դաստիարակներ կը մնան եւ ուրեմն զալ տարի հարկադրուած՝ մեր երկու դասարանները պիտի յսնձնուին արաբերէն լեզուով աւանդող պաշտօնեաներու, այո՛ իսկ պատճառով որոշուեցաւ հետամուտ ըլլալ գտնելու համար հայախօս պաշտօնեաներ, որոնք կարենան գոնէ մանուկներուն հետ հայերէն խօսիլ»²⁹:

Մասնաւոր վարժարանները պէտք է ամեն ինչի հաշուետու ըլլային Մարիֆին: Դպրոցական բոլոր տեսակի տոմարական ու դիւանական թղթակցութիւնները պէտք է ըլլային արաբերէնով: Ուսուցիչներու ընդունման ու արձակման պայմանները օրէնքով սահմանուած էին, նոյնպէս դասապահերու քանակը, նիշի ու գնահատումի դրութիւնը, ուսուցչական ժողովներու դրուածքը, վիճակացոյցը եւ այլն:

Սուրիահայ դպրոցները ծրագրային այս հիմնական փոփոխութիւններուն պատրաստ չէին բազմաթիւ կողմերով: Ամենէն մեծ դժուարութիւնը արաբական կրթութեամբ ու համապատասխան վկայականի տէր հայ ուսուցիչներու սակաւութիւնն էր: Հարցը պիտի լուծուէր միայն ժամանակի ընթացքին:

²⁸ Նախակրթարանը վեցամեայ էր: «Դասարան» բառով հոս նկատի ունի նոյն կարգի բաժանումները: Շատ աշակերտութիւն ունեցող դպրոցները կարգերը կը բաժնէին բաժանումներու: Իւրաքանչիւր բաժանում դրուած կ'ըլլար ուսուցիչի մը հսկողութեան տակ: Դաստիարակը դասարանի մը պատասխանատու ուսուցիչն է:

²⁹ **Չոլպեան Յ.**, Ութսունամեակ Հալէպի Ազգային Մահակեան վարժարանի, 1927-2007, էջ 237:

Այս տարեշրջանին Մաարիֆի քննիչները եւ հրամանագիրները աւելի մեծ սեղմումներ կ'իրագործեն հայկական դպրոցներուն մէջ: Քննիչներու յաճախակի ներկայութիւնը եւ հետապնդումները դպրոցի տնօրէնները կը մղեն աչալրջօրէն հետեւելու սրուած հրահանգներուն: Այսպէս՝ Բերէլ վարժարանի ուսուցչակսն կազմի 22 Դեկտեմբեր 1952-ի նիստին տնօրէնը կը գեկուցէ, թէ կրթական քննիչը այցելած էր դպրոց եւ պահանջած հետեւեալները.

սւ.- Ուսուցչական կազմի ինքնութեան թուղթերու եւ վկայականներու մէկ օրինակը կամ նկարը:

բ.- Ամբողջ դասացուցակը արաբերէնով պէտք է գրուի:

գ.- Դասարաններու մէջ արաբերէն օրակարգ կախել:

դ.- Բոլոր յայտարարութիւնները արաբերէնով ալ պէտք է գրուին, որով դասատուներէն կը պահանջուի որեւէ ծանուցում չդնել առանց տնօրէնին հաւանութեան:

19 Յունուար 1953-ի նիստին կը յայտարարուի, որ պէտք է լրացուին հետեւեալ պայմանները.

- Նիշի եւ ներկայութեան տետրակներուն մէջ աշակերտի անունը արաբերէն գրուելու է:

- Երբ կրթական քննիչը գայ եւ հարցումներ ուղղէ, պատշաճ կերպով արաբերէն պատասխանել եւ մանաւանդ գաղտնապահ ըլլալ:

18 Մայիս 1953-ի նիստին տնօրէնը կը գեկուցէ, որ Հալէպի հայ վարժարաններու տնօրէններու ժողովին կ'որոշուի, որ արաբերէն դասերուն արժէքը ըլլայ հաւասար հայերէնի եւ անգլերէնի:

Ի դէպ, ուսուցչական ժողովներուն այս տարեշրջանէն սկսեալ արաբերէնի դասատուներու (արաբներու) ներկայութիւնը պայման կը դառնայ: Հետեւաբար ժողովները կը սկսին վարել

նաեւ արաբերէնով: Անոնց մեկնումէն վերջ հայ ուսուցիչները կը շարունակեն ժողովը³⁰:

Ուսումնական խորհուրդի թիւ 389 եւ 19 Յունուար 1954 թուակիր շրջաբերականը պետական քննիչներու եւ վարժարաններու տնօրէնութեանց միջեւ պատահական տարակարծութիւններու առաջքն առնելու համար կը յանձնարարէ դժուարութեանց պարագաներու մէջ հարցը փոխանցել սրբազան հօր ըսելով քննիչին, թէ «Դպրոցին ընդհանուր տնօրէնը Սրբազան հայրն է, ան է դասացուցակը մեզի դրկողը եւ ան է, որ կրնայ ձեզ լսելով որոշ փոփոխութիւններ կատարել»:

Ամեն հրապարակային յայտարարութիւն պէտք է անցնէր պետական քննիչներու բովէն ու վաւերացում ստանար: Հոգաբարձութիւնը նկատելով, որ ատիկա բազմաթիւ դժուարութեանց հետ նաեւ այլ անպատեհութիւններ կրնայ ունենալ կ'որոշէ հանդէսներուն հոգաբարձութեան նիւթաբարոյական տեղեկագրութիւն չկարդալ³¹:

Նախակրթարանի պաշտօնական վկայականը կը նկատուէր սերթիֆիքան, որուն կ'արժանանար աշակերտը յետ պետական քննութեան: Հայկական վարժարանները մեծ դժուարութեամբ կը պատրաստէին իրենց աշակերտները այդ քննութեան: Անկէ անկախ՝ ունէին նախակրթարանի հայկական վկայականի տուչութիւն, որ կը կատարուէր սմավերջի հանդէսին: Կառավարութիւնը արգելք կ'ըլլայ վկայականները հրապարակով բաժնելու դրութեան: Դպրոցները ատիկա կը կատարեն առանձին կարգադրութեամբ: Այսպէս՝ Ազգային Սահակեան վարժարանի հո-

³⁰ Չոլաքեան Յ., Տարեգրութիւն Հայ Աւետարանական Բեթել վարժարանի, 1923-2013, Պէյրուս, 2016, էջ 249-252:

³¹ Չոլաքեան Յ., Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի, 1927-2007, էջ 244:

գաբարձութիւնը կ'որոշէ. «Նախակրթարանի հանդէսին մէջ աւարտական դասարանի վկայականները տալ հանդէսէն ետք, երեկոյեան ժամը 6-ին, դպրոցին մէջ, ի ներկայութեան վկայական ստացող աշակերտներու ծնողներուն եւ ուսուցչական կազմին»³²:

17 Մարտ 1952-ի թիւ 175 կանոնդրական հրամանագիրը քրիստոնէայ համայնքներուն մէջ լուրջ մտահոգութիւններ կը ստեղծէր, որովհետեւ աստիկա հիմնովին փոփոխութիւն կ'ենթադրէր ֆրանսական եւ անգլիական թեքումով վարժարաններուն մէջ, նոյնպէս եւ հայկական: Աստիկա պատճառ կը հանդիսանայ, որ միջնակարգ ու երկրորդական կրթութեան համար մեծ թիւով աշակերտներ արտասահման անցնին, գլխաւորաբար Լիբանան: Հայերը ստուար թիւերով ներկայութիւն կը սկսին ըլլալ արտասահմանի մեր գիշերօթիկի բաժին ունեցող դպրոցներուն եւ դպրեվանքերուն մէջ, ինչպէս Այնճարի Հայ աւետարանական վարժարանը, Կիպրոսի Մելքոնեան կրթական հաստատութիւնը, Վենետիկի Սուրատ Ռաֆայէլեան վարժարանը, Չմմառի, Անթիլիասի, Ս. Ղազարի եւ Վիեննայի դպրեվանքերը: Այս հոսքը շարունակուեցաւ մինչեւ 1970 թուականը, հանդերձ ընտանեօք արտագաղթի կողքին: Այս աշակերտութեան համար Սուրիոյ վերադառնալը անարդիւն պիտի ըլլար, որովհետեւ պետութիւնը պիտի չճանչնար արտասահմանեան որեւէ միջնակարգ եւ երկրորդական վարժարանի վկայական: 1953-ին Սուրիոյ միակ միջնակարգ-երկրորդական ազգային վարժարանը՝ Քարէն Եփփէ, կը սկսէր կիրառել սուրիական պետական ծրագիրը եւ աստիճանաբար հրաժարիլ ֆրանսական ծրագիրէն՝

³² Նոյնը, էջ 244-245:

հայերենը պահելով Կրթութեան նախարարութեան առաջադրած սահմաններուն մէջ:

2.- ՀԲԸՄ-ի դպրոցական ցանցին կազմաւորումը.- Թիւ 157 հրամանագիրին ստեղծած պայմաններուն տակ առաքելական համայնքին դպրոցները ընտրութիւն պէտք է կատարէին, մտնել ազգային վարժարաններու, իմա՝ Բերիոյ եւ Դամասկոսի թեմերու հովանաւորութեան տակ, թէ պահել միութենական վարժարանի իրենց իրաւովիճակը: Բացայայտ էր, որ Բերիոյ եւ Դամասկոսի ազգային հաստատութիւնները հետզհետէ կ'իյնային կուսակցութիւններու ազդեցութեան տակ, ու ազգային վարժարաններու ցանցին մէջ մտնել՝ կը նշանակէր ամբողջապէս կորսնցնել գաղափարական-կուսակցական ճակատի ենթահող հանդիսացող կրթական ու մշակութային յենակետերը: Կարգ մը միութենական վարժարաններու համար առիկա արդէն ցանկալի կը դառնար, իսկ ուրիշներու համար՝ ծանր վերապահութիւններ ունեցող քայլ: Ճիշդ առողջ համար ալ Հալէպի Կիլիկեան եւ Կրթասիրաց վարժարանները նախընտրեցին մնալ անկախ ու հետեւաբար կրթական նախարարութեան կողմէ արտօնուեցան այդպիսին մնալ, այսինքն՝ իբրեւ միութենական դպրոցներ: Միւս կողմէ Դամասկոսի թեմի վարժարաններէն Միացեալն ու Զաւարեանը չմտան Դամասկոսի թեմի դպրոցական ցանցին մէջ, ու զործեցին իբրեւ միութենական վարժարաններ՝ ներքին կարգով կապուած ըլլալով Բերիոյ թեմի առաջնորդարանին: Անլոյծ կը մնար ՀԲԸՄ-ի նպաստընկալ ազգային վարժարաններուն վիճակը: Անոնք, Առաջնորդարանի անունով արտօնուած ըլլալով հանդերձ, տակաւին կը շարունակէին մնալ Միութեան տեղական մասնաճիւղերու հսկողութեան տակ: Նպաստընկալ վարժարաններ կային Բերիոյ եւ Դամասկոսի թեմերու տարբեր բնակավայրերու մէջ: 1950-ական թուականներուն Բերիոյ թեմի

Ազգային իշխանութեան համար հանդուրժելի չէր այս պարագան եւ ատկէ՝ ՀԲԸՄ-ի հետ հակամարտութեան նոր ակիբի մը ծագումը:

Քաղաքական ժողովի Ը. նիստին, 1 Յուլիս 1952, որ յատկացուած էր ամերիկահայ բարերարներ Արշակ Տիգրանեանին եւ Լէյլա Գարակեօգեանին Հալէպի կրթական կեանքին մասին զեկուցում տալուն, հրաւիրուած են նաեւ ՀԲԸՄ-ի Կրթական յանձնախումբի ատենապետ Ճորճ Չամիչ եւ ատենադպիր Ասատուր Պետեան, ինչպէս նաեւ Գաւառական ու Քաղաքական ժողովներէն, Ուսումնական խորհուրդէն ու Քարէն Եփփէ ազգ. ճեմարանի ինսամակալութիւնէն ներկայացուցիչներ: Ժողովի հրաւիրեալներուն մէջ չկան միութենական դպրոցներու ներկայացուցիչները: ՀԲԸՄ-ի մասին խօսք բացուելով՝ Քաղաքական ժողովէն Օննիկ Մելիքսեթեան կը յայտնէ, թէ՝ «պայքար գոյութիւն չունի ՀԲԸ Միութեան դէմ, այլ գոյութիւն ունին վերապահութիւններ: Վերապահութիւններ, որոնք կը բխին բարեգործական այդ մեծ միութեան Լիբանանի եւ Սուրիոյ կրթական ղեկավարութեան գործելու եղանակներէն: ՀԲԸ Միութեան Կրթական յանձնախումբերուն կողմէ պայման կ'առաջարկուի Նպաստընկալ վարժարաններու հոգաբարձութեանց կամ ուսուցչական կազմերուն մէջ միութեան կողմէ նշանակուած մարդիկ տեղաւորելու երեւոյթ, որ աննախընթաց է նոյնիսկ օտար բարեսիրական հաստատութիւններու մօտ: Ինչ որ շատ աւելի անպատեհութիւններու դուռ կը բանայ եւ Ազգ. իշխանութիւնը կը մատնէ դժուարութիւններու՝ ատիկա ա՛յն քաջալերանքն է, զոր Բարեգործականը կ'ընծայէ շրջաններու մէջ գոյութիւն ունեցող ազգային վարժարաններու հակադրուած *անհատական* կամ *միութենական* վարժարաններուն՝ նիւթապէս օժանդակելով անոնց: Ծիծաղելի է, օրինակ, որ Տըրպեսիէի նման գիւղի մը մէջ, ուր

գոյութիւն ունի արդէն Ազգային վարժարան մը, Բարեգործականը կը փութայ նպաստել երկրորդ վարժարանի մը բացումին: Ջարմանալի է, դարձեալ, որ Գամիշլիի նման կեդրոնի մը մէջ, ուր հինէն ի վեր գոյութիւն ունի Ազգային վարժարան մը, Բարեգործականը տրամադրութիւն յայտնէ օժանդակելու երկրորդ վարժարանի մը բացումին, երբ գոյութիւն ունեցող ազգային վարժարանը կրնայ լիովին գոհացում տալ տեղական կրթական պահանջներուն եւ կը կարօտի նիւթական աջակցութեան:

«Պր. Մելիքսեթեան յայտնեց նաեւ, որ Բարեգործականի կողմէ ներկայացուած կարգ մը ուսուցիչներ շրջաններու մէջ անհատաբար կը գտնուին համայնավարական գաղափարներու ծառայած ըլլալու ամբաստանութեան տակ եւ յիշեց Ռազգայի պարագան»:

Այս վերապահութիւններուն դէմ, Բարեգործականի ներկայացուցիչները յայտնեցին, թէ իրենք երկու-երեք տարիէ ի վեր հրաւիրուած են իրենց պաշտօններուն, եւ թէ պատրաստ են անխտրական ոգիով օժանդակելու իրենց դիմող վարժարաններուն, առանց որեւէ պայման առաջարկելու³³:

Բարեգործականը, անկախ միութենական եւ անհատական դպրոցներու նկատմամբ Ազգային իշխանութիւններու անունով վարուող քաղաքականութենէն՝ ինք եւս վերապահութիւններ կրնար ունենալ հետզհետէ կուսակցականացուող Ազգային իշխանութիւններուն նկատմամբ: Իրեն ուղղուած մեղադրանքները աւելի սուր կերպով կ'երեւէին արդէն ազգային վարժարաններու շրջանակին մէջ: Ապահովաբար այդ ալ պատճառ կը հանդիսանայ, որ ինք եւս բոլորէն անկախ՝ 1954-ին, Հալեպի մէջ

³³ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարան, Քաղաքական ժողովի ատենագրութիւն, տոմար 62, Ը. նիստ, 1 Յուլիս 1952, էջ 41-43:

հիմնէ իր սեփական վարժարանը՝ Լազար Նաճարեան վարժարանը ու շարունակէ հովանաւորել շրջաններու նպաստընկալ վարժարանները՝ Միութեան Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովին միջոցով, Հալէպ:

Միւս կողմէ՝ միեւնոյն բնակավայրին մէջ երկու ազգային վարժարանները հետզհետէ կը կորսնցնէին աշակերտութեան թիւ ու չէին կրնար բաւարարել Կրթութեան նախարարութեան պահանջները: 5 Ապրիլ 1956 թուակիր պաշտօնագիրով Կրթութեան տնօրէնութիւնը կ'առաջարկէ միացնել Ճարասպիտուսի Ազգային Մետրոպէան եւ Նպաստընկալ ազգային Վարդանեան վարժարանները, որոնք արձանագրուած են Առաջնորդարանի անունով: Կրթական քննիչները նկատած են, որ երկու դպրոցներուն ալ աշակերտութիւնը նուազած է. հոգաբարձուներն ալ ստիպուած են չնչին թոշակով ուսուցիչներ վարձել, ինչ որ պատճառ եղած է կրթական մակարդակի անկումին: Ուսումնական խորհուրդը Կրթութեան նախարարութեան այս քայլը կը նկատէ «սկզբնաւորութիւն մը Մէարիֆի կրթական քաղաքականութեան հանդէպ համայնքային վարժարաններուն եւ առաջադէպին նկատի ունենալով այս պարագան հարցը քննել իր ամբողջութեանը մէջ»: Բանակցութիւններ կ'ըլլան Բարեգործականի Շրջանակային յանձնաժողովին հետ: Ըստ բերանացի վկայութեան մը՝ «Կեդրոնը համաձայն չէ իրենց հետ եւ կ'ուզէ իր վարժարանները ունենալ կեդրոնի եւ շրջաններու մէջ»³⁴: Բայց Հալէպի Կրթութեան տնօրէնութիւնը կը շարունակէ հարցը հետապնդել. 8 Փետրուար 1958 թուակիր պաշտօնագիրով մը, նոյն պատճառաբանութեամբ, կը պահանջէ որոշել, թէ ո՞ր անունը պիտի մնայ: Բերիոյ թեմի առաջնորդ Ղետնդ արք. Զեպէեան կը

³⁴ Նոյնը, տոմար 63, ԼՂ. կիստ, 20 Յուլիս 1956, էջ 121-123:

ստանձնե Բարեգործականին հետ կապուելու պարտականութիւնը, թելադրելու համար որ միանան, այլապէս Առաջնորդարանը պիտի փակէ Նպաստընկալ Վարդանեան վարժարանը՝ պահելով միայն Մեսրոպեան ծխական վարժարանը³⁵: Միացումը կ'ենթադրէր հովանաւորութեան ամբողջական անցում Առաջնորդարանի, բայց պիտճեական պատասխանատուութիւն՝ Բարեգործականին համար: Վարդանեանը կը փակուի: Յարաբերութիւնները կը սրին:

ՀԲԸՄ-ը այս քայլին վրայ շրջաններու մէջ գործող Նպաստընկալ վարժարանները կը վերածէ լրիւ սեփական վարժարաններու, ինչպէս՝ Գարատուրանի Ազգային Մեսրոպեանը՝ ՀԲԸՄ-ի Վահան Պետրոսեան վարժարանի (1962), Արաք Փունարի Աւետիս Սարաֆեան վարժարանը (1950-1975), Դամասկոսի Սահակեան վարժարանը՝ ՀԲԸՄ-ի Կիլլասպի Կիլպէնկեան վարժարանի (1960-մինչեւ օրս), Աճուրլուքի եւ Շէյխ Մագսուտի Արմէնեան վարժարանները՝ ՀԲԸՄ-ի Սեդրաք Մեսրոպեան վարժարանի (1954-1979):

3.- Երկրորդական վարժարաններու ցանցը. 1958-ին պետութիւնը կը ջնջէ նախակրթարանի վերջին կարգի (Ե.) պետական քննութիւնը: Ազգային եւ անտարանական վարժարանները 1952-էն ետք վերածուած էին հնգամեայ վարժարանի ու պետական քննութիւններուն մէջ հազիւ 50 տոկոս յաջողութիւն կ'արձանագրէին մեծ դժուարութեամբ: Ֆրանսական թերմով սերթիֆիքան արդէն շարքէ դուրս էր: Նոր կարգադրութեամբ՝ երկրին բոլոր նախակրթարանները կը վերածուին վեցամեայի:

Այս կարգադրութեամբ՝ նախակրթարանի սերթիֆիքան ընդունելի պիտի չըլլար ուսուցչական ասպարեզին մէջ: Տնօրէնները

³⁵ Նոյնը, ԼՁ. կիստ, 16 Փետրուար 1958:

րեն կը պահանջուէր պետական պաքալորիա (երկրորդական ուսման վկայական՝ ֆր. – 3. 2.), իսկ ուսուցիչներէն՝ նուազագոյնը՝ պրովէ (միջնակարգ ուսման վկայական՝ ֆր. – 3. 2.): Հայկական վարժարանները պատրաստ չէին այդպիսի պաշտօնէութիւն հայթայթելու համար: Այս ալ պատճառ եղաւ, որ շատեր հրաժարին ու անցնին Լիբանան: Ազգային իշխանութիւնները նախարարութենէն օրէնքի իրագործման համար ժամանակ կը խնդրէին:

Միակ լուծումը երկրորդական վարժարաններու ցանցով օժտուիլը պիտի ըլլար: Քարէն Եփփէ սզգային ճեմարանը 1953-էն անցած էր արաբական ծրագիրին ու սկսած էր պրովէի (միջնակարգ՝ 9-րդ կարգ) եւ պաքալորիայի (երկրորդական՝ 12-րդ կարգ) պետական վկայականներու արժանացած շրջանաւարտներ ունենալ: ՀԲԸՄ-ի Լազար Նաճարեան վարժարանը 1956-ին կը բանայ միջնակարգ-երկրորդական բաժինը, որ առաջին շրջանաւարտութիւնը կու տայ 1962-ին: Կիլիկեան վարժարանն ալ կը հետեւի ու 1961-ին կը բանայ միջնակարգ-երկրորդական բաժնի առաջին դասարանը: Այս երեք ճեմարանները պիտի բաւարարէին թէ՛ պետական, թէ՛ ազգային իշխանութիւններու պահանջները: Աւետարանական համայնքներու միացեալ Ալեփփո Քոլէճը, թէեւ անցած էր արաբական ծրագիրին, բայց չէր բաւարարեր հայ աւետարանական համայնքին պահանջները: Անկէ դժգոհ Էմմանուէլ եւ Բեթէլ վարժարաններն ալ բարձրագոյն վարժարաններ ըլլալու փորձ կ'ընեն, բայց չեն յաջողիր: Քաղաքին մէջ կը գործեն հայ կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսատրիչ, Անարատ յղութեան քոյրերու եւ Մխիթարեան մանչերու երկրորդական դպրոցները: Հալէպի մէջ առաջին անգամ ըլլալով հայ աշակերտութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կը մտնէ այս երեք՝

Քարեն Եփփե, Լազար-Նաճարեան եւ Կիլիկեան ճեմարաններու յարկին տակ:

1962-ին հայերէնի դասերը կը դադրին Ալեփփո Քոլէճին մէջ: Հայ աշակերտութեան հոսքը դէպի հայկական երեք ճեմարանները այդ տասնամեակի զլխաւոր երեսոյթն է: Այս երեք ճեմարաններու շրջանաւարտներուն առջեւ կը բացուէին Սուրիոյ բոլոր համալսարաններուն դռները:

Շրջաններն ալ ունին այս մտահոգութիւնը, մանաւանդ Դամասկոսի Թարգմանչաց եւ Գամիշլիի Եփրատ վարժարանները, որոնք կեդրոնական վարժարաններու դեր կը կատարէին փոքր դպրոցներուն համար: Այս երկուքը, հակառակ իրենց կամքին, կը բաւարարուին նախակրթարանի վրայ միջնակարգ բաժին մը աւելցնելով միայն եւ իրենց շրջանաւարտները պատրաստելով պրոֆէսորական քննութեան. Թարգմանչաց վարժարանը միջնակարգի կը վերածուի 1963-ին, իսկ Գամիշլիի Եփրատ վարժարանը՝ 1970-ին, իբրեւ անկախ վարժարան, Ազգային միացեալ վարժարան անունով:

Յատուկ պարագայ մըն էր Քեսապի վիճակը, ուր կը գործէին չորս հայկական վարժարաններ ու անոնցմէ ոչ մէկը միջնակագի կամ միջնակարգ-երկրորդականի վերածուելու կարողութիւնը ունէր: Անոնք իբրեւ նախակրթարան ալ չէին գոհացներ Լաթաքիոյ նահանգի Կրթութեան տնօրէնութիւնը: Վերջինս հարցին լուծումը կը գտներ նախ նախակրթարաններու միացումին եւ միացեալ վարժարանին պետական վարժարանի իրաւովիճակ տալու հնարաւորութեան մէջ: Ատոր մէջ կար նաեւ Քեսապ հաստատուած արաբ տարրի մը պարագան, որուն դպրոցականները կը յաճախէին հայոց վարժարանները: 1959-ին Լաթաքիոյ նահանգի կրթական տնօրէնը իր քով հրաւիրելով Քեսապի չորս դպրոցներուն տնօրէնները՝ Ուսումնասիրաց-Միացեալէն

տորթ. Աւետիս Ինճեճիքեան, Կաթողիկէ վարժարանէն՝ հայր Ստեփան Թելլալեան, Աւետարանական վարժարանէն՝ պատ. Արտաշէս Գերպապեան եւ ՀԲԸՄ-ի վարժարանէն՝ Ստեփան Եազուպեան, կ'առաջարկէ միացնել չորս դպրոցները՝ միացեալ վարժարանին պետական վարժարանի հանգամանք տալու առաջարկով: Նման պարագայի մը՝ հաւաստիացուցած է. «Դուք կ'ունենաք ձեր մանկապարտեզը, որուն համար պետութիւնը ոչ մէկ առարկութիւն կամ արգելք ունի: Իսկ նախակրթարանի բաժնին մէջ դուք կրնաք աւանդել Ձեր 10 պահ հայերէնի եւ կրօնի դասերը, իսկ մնացեալ ամբողջ հոգերը Մէարիֆը կը ըստանձնէ»: Ներկայացուցիչները համամտութեան խօսք չեն տուած: Կրթական տնօրէնը յայտնած է, որ «Կրթութեան տնօրէնութիւնը մասնաւոր վարժարաններէն պիտի օգնէ անոնց, որոնք բացի մանկապարտեզէն, նախակրթարանի բաժնին մէջ ունին 100-է աւելի աշակերտ եւ աշակերտուհիներ. այլապէս Մէարիֆը ոչ մէկ ուսուցիչ պիտի տրամադրէ եւ ոչ ալ դրամական նպաստ: Յետոյ յայտնած է, որ ուսուցիչները սյարտաւոր են լրացնել, որոջ պայմաններ՝ պրովէ, պաքալորիա եւ այլն:

Քաղաքական ժողովը այս մասին տեղեկագրող Քեսապի հոգեւոր հովիւ Վրթանէս քին. Թոնթեանին կը պատասխանէ. «Մենք հակառակ ենք խնդրոյ առարկայ չորս վարժարաններու միացման գաղափարին»³⁶: Առաջնորդը այս հարցը կը ներկայացնէ նաեւ Հալեպի հայ կաթողիկէ եւ ավետարանական հոգեւոր պետեր Գեորգ արք. Լայիքեանին եւ վեր. Ներսէս Խաչատուրեանին: Վերապատուելին կը փափաքի, որ «երկրորդական վարժարանի մը շուրջ միացում ըլլայ»: Քեսապի Հայ առաքելական հովիւը եւ հօտը կը խնդրեն, որ ի հարկին երկրորդական

³⁶ Նոյնը, Խ. Ախտ, 18 Նոյեմբեր 1959:

վարժարան մը ունենալու համար կարգադրութիւն մը ըլլայ Կեդրոնին կողմէ³⁷: Խնդիրը այն էր, որ Քեսապի բոլոր համայնքներն ալ կ'ուզէին պահել իրենց համայնքային վարժարանները, բայց միանալ երկրորդական վարժարան մը ունենալու գաղափարին շուրջ: Իրենց համար յոյժ կարելու կը նկատուէր միջնակարգ-երկրորդական վարժարան ունենալու խնդիրը, որովհետեւ ամեն տարի քանի մը տասնեակ տղաք ու աղջիկներ ուսման համար ստիպուած կ'ըլլային մեկնիլ Լաթաքիա, Հալէպ, Պէրոս, Այնճար, Կիպրոս. ասիկա կը նպաստէր շրջանի հսկայաթափման:

1965-ին Քեսապի քաղաքապետ ղնեմիէցի Եուսէֆ Պաղսուտի եւ Ազգային Ուսումնասիրաց միացեալ վարժարանի տնօրէն Ժոզէֆ Պասմաճեանի ջանքերով նախակրթարանին կրկին միջնակարգ բաժին մը ապահովելու համար դիմում կը կատարուի Լաթաքիոյ Կրթական տնօրէնութեան: Սուրիոյ Ժողովրդային պաշտպանութեան կազմակերպութիւնը կ'առաջարկէ ինք բանալ միջնակարգը: Տեղացիք գոհ կը մնան: 1965-ին 9 աշակերտ-աշակերտուհիներով եւ 2 ուսուցիչով կը բացուի Ժողովրդային պաշտպանութեան միջնակարգը (Հարաս Գաումի): Կրթութեան նախարարութիւնը կը շարունակէ աշխատանք տանիլ իր ծրագիրը իրագործելու համար: 1966-ին Լաթաքիոյ Կրթական տնօրէնը Հալէպի Առաջնորդարանին կը հաղորդէ, որ Քեսապի երեք համայնքներու մասնաւոր դպրոցներուն միջեւ համաձայնութիւն գոյացած է, որ երեք վարժարանները միացնեն պետական վարժարանին հետ ու կազմեն մէկ վարժարան: Կաթողիկէ համայնքի առաջնորդ Գեորգ արք. Լայէքեան եւ ւսեւտարանական համայնքի համայնքապետ վեր. Յովհաննէս Գար-

³⁷ Նոյնը, տոմար 64, ԺԲ. նիստ, 8 Փետրուար 1965:

ճեանը առաջնորդ Ղեւոնդ արք. Չեպէեանին կը յայտնեն, որ «ոչ մէկ տեղեկութիւն ունին նման կարգադրութենէ մը»: Ոչ մէկ համաձայնութիւն գոյացուցած են նաեւ Քեսապի պատասխանատու մարմինները: Հոգեւոր պետերը յարմար նկատած են իրենց կողմէ ստորագրուած բողոք-բացատրական նամակ մը դրկել Կրթական տնօրէնին եւ համապատասխան գրասենեակներուն³⁸:

Քեսապի միջնակարգ-երկրորդականը կը փոխանցուի Կրթութեան նախարարութեան, կը դառնայ պետական վարժարան: Ատիկա չափով մը կը գոհացնէ հայ համայնքները: Կրթութեան նախարարութիւնը համաձայն է, որ հոն հայ աշակերտութեան դասաւանդուի հայերէն, պայմանով որ հայ համայնքները հոգան ուսուցիչ գտնելու ու զայն վարձատրելու գործը: Հայ համայնքները ատիկա չեն կրնար իրականացնել: Քեսապի մէջ հայկական միջնակարգ-երկրորդական վարժարան մը ունենալը կը շարունակէ երազ մնալ:

4.- Հայերէնի շարքական 4 ու կրօնագիտութեան 2 դասապսիներով սահմանափակումը.- Արաբական Միացեալ Հանրապետութեան օրերէն կը սկսին հայկական դպրոցներու վրայ պարբերաբար կրկնուող նոր սեղմումներն ու հետապնդումները, որոնք, բնականաբար, կը նեղեն հայ ազգաբնակչութիւնը: Այսպէս Կրթութեան նախարարութիւնը 11 Յուլիս 1959 թուակիր եւ թիւ 993/7 շրջաբերականով մասնաւոր վարժարաններու տնօրէնութեանց բացատրական հրահանգներ կու տայ, որ մասնաւոր վարժարանները պարտաւոր են գործադրել պետական վարժարաններու ծրագիրը եւ հետեւիլ դպրոցներու աստիճանաւորումին, պետական կարգադրութեանց համաձայն: Կը

³⁸ Եւրիք, տոմար 64; 47-րդ նիստ, 7 Մարտ 1966:

յայտնուէր, որ մասնաւոր վարժարաններուն թոյլատրուած է մասնաւոր ծրագիր մը կազմել 25 առ հարիւր փոփոխութիւն մը մտցնելով միայն որոշուած դասապահներուն մէջ: Շրջաբերակաւնը կը շէշտէ, որ արաբերէնով եւ պարտաւորիչ կերպով դասաւանդելի են կրօն, արաբական աշխարհի պատմութիւն, աշխարհագրութիւն եւ քաղաքացիական կրթութիւն: 25 Յուլիս 1959-էն ետք որեւէ փոփոխութիւն արտօնելի չէ:

Յայտնենք, որ վերջին երեք նիւթերը հայ վարժարաններուն մէջ կը տրուէին պետական ծրագիրով, սակայն անոնց կողքին կը տրուէին նաեւ հայոց պատմութիւն եւ Հայաստանի աշխարհագրութիւն եւ այլն:

Բերիոյ թեմի Քաղաքական ժողովը Գաւառական ժողովի եւ Ուսումնական խորհուրդի հետ իր խառն նիստին կ'որոշէ, որ շրջաբերականին պատասխանէ սրբազան հայրը (Ղեւոնդ արք. Չեպէեան) իբրեւ արտօնատերը. առաքելական համայնքի դպրոցներուն: Սրբազան հայրը իր նամակին մէջ կը շէշտէ, որ «հայ վարժարանները հետեւած են ու պիտի հետեւին պետական ծրագրին» եւ թէ՛ «հայերէն լեզուն օտար լեզու չի նկատուիր. մենք պիտի շարունակենք հայերէնով դասաւանդել, ըստ առաջնոյն, բոլոր նիւթերը, զորս հայերէնով կը դասաւանդենք համաձայն 29-7-1952 թուակիր եւ թիւ 2451/7 նախարարական հրահանգներուն եւ վերջապէս՝ Հայ եկեղեցւոյ կրօնագիտութիւնը, մեր ծէսերուն համաձայն, կը դասաւանդենք հայերէն լեզուով: Կը նկատենք, որ Ձեր Հաղբրդագրութեան մէջ կրօնը արաբերէնով դասաւանդելու յիշատակութիւնը Հայ եկեղեցւոյ կրօնի ուսուցումին հետ կապ չունի»³⁹: Միութենական եւ յարանուանական դպրոցներու պատասխանատու տնօրէններն ալ պիտի

³⁹ Նոյնը, տոմար 63, ՃԵ. խառն նիստ, 18 եւ 19 Յուլիս 1959:

պարասխանեն «միեւնոյն ոգիով եւ տրամադրութեամբ, յայտնելով որ պետական ծրագիրը լրիւ գործադրելով մեկտեղ, հայ տղոց, հայ վարժարաններուն մէջ պիտի աւանդուի հայերէն լեզուն, եւ կրօնն ու պատմութիւնը, ըստ առաջնոյն»⁴⁰:

Մրբագան հայրը 14 Հոկտեմբեր 1959-ին կը մեկնի Դամասկոս ու Բերիոյ թեմի դիւանապետ Ներսէս Պարսումեանի եւ իրաւաբան Ֆրէտ Արսլանեանի ընկերակցութեամբ կը ներկայանայ կրթութեան նախարար Էմճէտ Թրապըլսիի, որուն հետ՝ մէկ ժամ խորհրդակցութիւններ կ'ունենայ դասացոյցին մէջ հայերէնով դասաւանդուող նիւթերու տեսականիին ու քանակին մասին: Հայոց պատմութիւնը եւ Հայաստանի աշխարհագրութիւնը կ'արտօնուին «հայ մշակոյթի դասեր» անունին տակ: 15 Հոկտեմբեր 1959-ին հայկական պատուիրակութիւնը կ'ընդունուի խառն ժողովի մը, որուն ներկայ կ'ըլլան նախարարը, Կրթութեան նախարարութեան մասնաւոր վարժարաններու բաժանմունքի ընդհանուր տնօրէն Մուհամմետ Ռիշտի Պերեքէթ եւ կրթական քննիչներու մեծաւոր Հաշէմ Ֆասիհ: Հոն կը պատրաստուի հայ դպրոցներու դասացոյց մը, ուր նախակրթարանի առաջին երեք կարգերու շաբաթական 38, իսկ վերջին երեք կարգերու շաբաթական 40 պահերուն մէջ հայերէնով աւանդուող նիւթերը ունին հետեւեալ պատկերը.

Ա. կարգ

2 պահ կրօն

8 պահ հայերէն եւ մշակոյթի դասեր

3 պահ թուաբանութիւն

1 պահ գիտութիւն

Բ. եւ Գ. կարգեր

⁴⁰ Նոյնը, ՃՁ. նիստ, 24 Յուլիս 1959:

2 պահ կրօն

9 պահ հայերէն եւ մշակոյթի դասեր

3 պահ թուաբանութիւն

1 պահ գիտութիւն

Դ. կարգ

3 պահ կրօն

8 պահ հայերէն եւ մշակոյթի դասեր

Ե. եւ Զ. կարգեր

3 պահ կրօն

7 պահ հայերէն եւ մշակոյթի դասեր⁴¹:

1958-1959 տարեշրջանին Քարէն Եփփէ ազգ. ճեմարանը արդէն վերջնականապէս փակած է ֆրանսական ծրագիրը, որով աշակերտները 9-րդ կարգին կը ստանային ֆրանսական սլոն-վէի, իսկ 12-րդ կարգին՝ պաքալորիայի վկայականները: Երկրորդականի մէջ ֆրանսականի զուգահեռ կար հայագիտական բաժին, որ նոր իրադրութեան մէջ իրաւականօրէն արդէն անիրագործելի կը դառնար: Հայագիտական ճիւղը իր վերջին շրջանաւարտները կու տայ 1957-1958 տարեշրջանին: Միջնակարգերկրորդական վարժարաններու մէջ հայերէնով դասաւանդուող նիւթերը կը սահմանափակուին իւրաքանչիւր դասարանի համար շաբաթական ութը ժամով⁴²:

1963-1964 տարեշրջանին հայերէնի եւ հայերէնաւանդ նիւթերու ուսուցումը կրկին նոր դժուարութիւններու կը հանդիպի: Բերիոյ թեմի առաջնորդ Ղեւոնդ արք. Չեպէեան 2 Դեկտեմբեր 1963-ին, Երկուշաբթի, Առաջնորդարան կը հրաւիրէ Ազգային եւ Միութենական դպրոցներու տնօրէնները, որոնք կու գան՝

⁴¹ Նոյնը, ՄԴ. նիստ, 16 Հոկտեմբեր 1959:

⁴² Չուլաքեան Յ., Յիսնամեակ Քարէն Եփփէ Ազգային ճեմարանի, 1947-1997, Հալեպ, 1997, էջ 174-175:

բերելով «Կրթութեան նախարարութեան հրահանգները դադրեցնելու համար հայերէն լեզուի դասերը»: Նոյն օրը Առաջնորդը ընկերակցութեամբ հայ աւետարանական համայնքի պետ վեր. Ներսէս Խաչատուրեանի, մերթ Գրիգոր Էպլիզաբեանի եւ դիւանապետ Ներսէս Պարսումեանի, կը մեկնի Դամասկոս ու կը տեսակցի ասորի օրթոտոքս պատրիարքին, Դամասկոսի թեմի աթոռակալ Շաւարշ եպս. Գոյումճեանին եւ հայ կաթողիկէ համայնքի առաջնորդին հետ: Ասորի համայնքներն ալ ասորերէնի ուսուցման իրաւական հիմքը հաստատել կ'ուզէին: Հոգեւոր պետերը կը հանդիպին Ներքին գործոց նախարարին, ապա Կրթութեան նախարարին: Կը պարզուի, որ խօսքը ոչ թէ հայերէնի պահերը դադրեցնելու, այլ նուազեցնելու եւ հայերէնաւանդ միւս նիւթերը՝ գիտութիւն, թուաբանութիւն, հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն, դադրեցնելու մասին է⁴³: Կը պահանջուի հայերէնի ուսուցման դասապահերը իջեցնել չորսի: 27 Դեկտեմբեր 1963-ին առաջնորդը Քաղաքական ժողովին կը զեկուցէ. «Կրթութեան նախարարութիւնը մասնաւոր շրջաբերականով մը ինքզինք արդարացուցած էր, թէ հայերէն լեզուն չէ արգիլած, հայ մշակոյթի անուան տակ ուսուցիչներ այլ նպատակներ կը հետապնդեն, արաբերէն ծրագիրը չեն գործադրեր, հայերէն ճիւղերը խճողուած են»: Առաջնորդը յետագային տեսակցութիւն կ'ունենայ փոխ-վարչապետ տոքթ. Նուրէտտին ալ-Աթասիի եւ կրթութեան նախարարին հետ՝ հայերէնի նիւթերը շարաթական 10 պահերու բարձրացնելու պահանջով: «Կրթական նախարարը անդրդուելի մնաց: Սրբազանը ըսած է, թէ

⁴³ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարան, Քաղաքական ժողովի ատենագրութիւն, տոմար 64, ԾԳ. նիստ, 5 Դեկտեմբեր 1963:

փորձ մը միայն պիտի կատարէ ընելով չորս պահիր»⁴⁴: Հետեւաբար, այս նոր կարգադրութեամբ հայկական վարժարանները կրնային դասաւանդել միայն հայերէն լեզու՝ շարքաթական չորս պահու դրութեամբ:

Հարցը մինչեւ Մայիս 1964 անլոյծ կը մնայ, մինչ միւս կողմէ նորանոր հրամաններ կը հասնին դպրոցներուն հայերէնի դասերը դադրեցնելու մասին, ինչպէս Գամիշլիի հայոց դպրոցին, մինչ Կրթութեան նախարարը զարմանք կը յայտնէ⁴⁵:

Սրբազանը 13 Հոկտեմբեր 1964-ին դիւանապետ Ներսէս Պարսումեանի հետ Դամասկոս կը մեկնի եւ իրաւաբան Ֆրէտ Արսլանեանի ընկերակցութեամբ կ'այցելէ փոխ-վարչապետ տոքթ. Նուրէտտին ալ-Աթասիին եւ կրթութեան նախարարին: Սրբազանը կ'առարկէ հայերէնի համար սահմանուած չորս պահերուն համար եւ կը յայտնէ, որ անոնք բաւարար չեն: Հայերէնը դրուած է կրօնական կրթութեան հետ՝ իբրեւ ծիսական լեզու⁴⁶:

Այդպէս ալ կը մնայ. հայոց պատմութիւնը եւ Հայաստանի աշխարհագրութիւնը դուրս կը մնան դասացոյցէն: Դպրոցներէն կը հաւաքուին այդ դասագիրքերը: Վերջնականապէս կ'արգիլուի նաեւ թուաբանութեան եւ իրագիտութեան հայերէնով ուսուցումը: Հայերէնը կը սահմանափակուի շարքաթական չորս պահով եւ երկու պահ կրօնագիտութեամբ: Հայերէնը կ'ուսուցնուի միայն իբրեւ ծիսական լեզու, չի մտնէր աշակերտական վիճակացոյցին մէջ, այսինքն հայերէնի նիշը աշակերտի կարգափոխութեան վրայ չ'ազդէր:

Ասիկա, յատկապէս հայոց պատմութեան դասանիւթի եւ դասագիրքերու արգիլումը, մեծ ընդվզում կ'առաջացնէ զաղու-

⁴⁴ Նոյնը, ԾԵ. նիստ, 27 Դեկտեմբեր 1963, նաեւ ԾԶ. նիստի ատենագրութիւնը:

⁴⁵ Նոյնը, ԿԷ. նիստ, 15 Մայիս 1964:

⁴⁶ Նոյնը, ՀԱ. նիստ, 19 Յունիս 1964. նաեւ՝ ԶԴ. նիստ, 16 Դեկտեմբեր 1964:

թին մէջ: Բազմաթիւ ուսուցիչներ պատասխանատուութեան կը կանչուին: Հայերէնի եւ հայերէնաւանդ ուսուցիչներու հոսք՝ մը կը սկսի դէպի Լիբանան: ...

5.- Պետական տնօրէնի նշանակումը.- Կրթութեան տնօրէնութիւնը 1967-ի ամռան յաջորդաբար յանձնարարագիրներ կը դրկէ: ղպրոցներու տնօրէններուն՝ պահանջելով Կրթութեան նախարարութեան նախօրօք հրատարակած հրահանգներուն անյապաղ իրագործումը: Ասոնք կը միտէին միօրինակութիւն հաստատել մասնաւոր եւ պետական ղպրոցներու միջեւ ուսումնական ծրագիրի, ժամանակացոյցի, պաշտօնէութեան որակի, մակարդակի, վարձատրութեան, ղպրոցական ատենագրութեանց եւ այլ կրթական երեւոյթներու մէջ: Իրավիճակը քննելու համար Բերիոյ թեմի առաջնորդարանին մէջ կը ստեղծուի Տնօրէն խորհուրդ մը երեք ճեմարաններու (Քարէն Եփփէ ազգ. ճեմարան, ՀԲԸՄ-ի Լազար Նաճարեան - Գալուստ Կիւլպէնկեան ճեմարան, Կիլիկեան ճեմարան) եւ երկու նախակրթարաններու (Կրթասիրաց եւ Ազգային Զուարեան վարժարաններ) տնօրէններուն կողմէ: Տնօրէն խորհուրդը առաջնորդ հօր նախագահութեամբ կը յաջողի կրթական տնօրէնութեան ընդունելի համարել հետեւեալ պարագաները.

ա.- Անթիլիասի եւ Երուսաղէմի Ընծայարաններէն ու Մելգոնեան կրթական հաստատութենէն շրջանաւարտներ կամ թերաւարտներ առաջնորդ հօր վկայութեամբ եւ յանձնարարականով կրնան ազգային վարժարաններու մէջ հայերէն եւ կրօն դասաւանդել: Այս կարգադրութենէն յետագային կ'օգտուին սուրիական պաքալորիա չունեցող ու Երեւանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններէն (Պետական համալսարան, Խ. Աբովեանի անուան Մանկավարժական հիմնարկ եւ այլն) շրջանաւարտները եւս:

բ.- Առանց բարձրագոյն վկայականի, սակայն երկար տարիներու փորձառութիւն ունեցող հայերէնի եւ կրօնի ուսուցիչները նոյն ձեւով պիտի հաստատուիրուին⁴⁷:

1967-ի Սեպտեմբերին կը հրատարակուի թիւ 127 օրէնք-հրամանագիրը, որ «Կը նախատեսէր Սուրիոյ բոլոր մասնաւոր վարժարաններուն տնօրէնութեանց իրաւասութիւններուն փոխանցումը կառավարութեան կողմէ տրամադրուած ուսուցիչներէն մէկուն, իրաւասութիւններ, որոնք ճշդուած էին նախապէս թիւ 167 օրէնք-հրամանագիրով: Բացի աստիկ, կրթութեան նախարարի վարչական որոշումով, հայկական նախակրթարաններու մէջ, հայերէն լեզուի դասաւանդութեան պահերը կ'իջեցուին շաբաթական 12 պահի, իւրաքանչիւր դասարանի համար երկու պահ»⁴⁸:

Մասնաւոր դպրոցներու շրջանակներուն մէջ մեծ աղմուկ կը հանէ պետական տնօրէններու նշանակումը՝ ատիկա անուղղակի կերպով դպրոցներու պետականացում համարելով: Երկրի բոլոր մասնաւոր դպրոցները չեն վերաբանար իրենց դոները, որոնք պետութեան կողմէ կալանքի տակ կը դրուին: Աշակերտութիւնը դպրոց չի յաճախէր: Կարելի է ընել, որ թիւ 127 հրամանագիրը համաժողովրդական ըմբոստութեան դուռ կը բանայ: Այս օրէնք-հրամանագիրը չընդունելու պարագային պետութիւնը կը սպառնայ դպրոցները պետականացնելու քայլով: Պահ մը բոլոր քրիստոնեայ փոքրամասնութիւններուն կապերը կը կտրուին պետութեան հետ:

Հայկական վարժարաններու համար հայերէնի եւ կրօնագիտութեան ուսուցումը առաջնակարգ կարեւորութիւն կը ներկա-

⁴⁷ Նոյնը, 17րդ նիստ, 30 Օգոստոս 1967:

⁴⁸ Հարցազրոյց մէթր Գրիգոր Էպիլոպեանի հետ, «Ազդակ» օրաթերթ, 12 Յունուար 1968:

յացնէր: Միւս քրիստոնէայ համայնքները չունէին նման մտահոգութիւն: Մեծամասնութեամբ արաբախօս զանգուածին պատկանող հայ կաթողիկէ վարժարաններուն համար վարչական անկախութիւնը եւ երկրի այլ կաթողիկէ համայնքներու շրջագիծէն դուրս չելլելը ակելի լուրջ հարց էր, քան հայերէնի ուսուցումը: Հետեւաբար, գլխաւորաբար հայ ազգային եւ միութենական շրջանակներ պարտաւորուած կը զգան, իրարու հետ խորհրդակցելով, հարցին լուծում բերել: Հայկական Սփիւռքն ալ անտարբեր չի մնար կացութեան առջեւ. յատկապէս Լիբանանի հայկական քաղաքական եւ կրօնական ուժերը պետութեան քով այս հարցը լուծելու լծակներ կը փնտռեն: Սուրիահայ Յառաջդիմական ճակատը (Հնչակեան, Ռամկավար, Համայնավար կուսակցութիւնները, Թեքէեան եւ Նոր Սերունդ մշակութային միութիւնները, ՀԲԸՄ-ը) գաղափարական-քաղաքական մերձաւորութիւն ունէր Պասա կուսակցութեան եւ կառավարութեան հետ: Ճակատի ներկայացուցիչները Դամասկոսի թեմի առաջնորդարանին մէջ «որոշեցին սուրիական իշխանութեանց ներկայացնել գործնական առաջարկներ՝ թիրիմացութիւնը փարաւելու եւ տազնապը լուծելու նպատակով»: Պատուիրակութիւնը հանդիպումներ կ'ունենայ նախագահ Նուրէտտին ալ-Աթասիի, ներքին գործոց նախարար Մուհամմետ Իյտ Աշաուիի, կրթութեան նախարար Սամիի Աթիէի, Պասա կուսակցութեան ղեկավարութեան հետ՝ համոզում ստեղծելով հայերէնի եւ կրօնագիտութեան ուսուցման կարելորդութեան եւ պետական ու հայ տնօրէններու միջեւ գործերու տրամաբանական բաժանումի մը մասին: Սուրիահայ Յառաջդիմական ճակատի պատուիրակութիւնը նաեւ նիստեր կ'ունենայ Բերիոյ թեմի առաջնորդարանի Ազգային քաղաքական ժողովին հետ ու կը տրուի այն եզրակացութիւնը, որ հայկական համայնքները պէտք չունին ոչ-հայ հա-

մայնքներու հետ մինչեւ վերջ երթալու, որովհետեւ անոնք շատ քան կորսնցնելիք չունին, ու բաւարարուին բանակցութեանց հետեւանքով ձեռք բերուած արտօնութիւններով, որովհետեւ հայկական դպրոցներուն համար ամենէն կարեւորը հայերէնի եւ կրօնագիտութեան ուսուցման տրամաբանական պայմաններու ապահովումն է:

Բերիոյ թեմի առաջնորդին նախագահութեամբ աշխատող տնօրէն խորհուրդը լուրջ կերպով կը սերտէ կացութիւնը, կյաթական մարզին մէջ պետութեան քաղաքականութիւնը եւ կ'ողջունէ պետական տնօրէնին նշանակումը: Անով հայ դպրոցները պիտի ազատէին պետական քննիչներու տաղտուկ ստեղծող անսպասելի այցելութիւններէն:՝՝՝

Պարտականութիւն կը տրուի առաջնորդ Ղեւոնդ արք. Չեպէեանին պատուիրակութեան մը ընկերակցութեամբ բանակցութիւններ վարելու Կրթութեան նախարարութեան հետ՝ Դամասկոս: Յետ բանակցութեան՝ կը զեկուցուի «թէ կատարութիւնը ընթացք տուած է հայերէն լեզուի եւ հայերէն լեզունով կրօնի դասաւանդութեանց, սահմաններ ճշդած պետական տնօրէններու եւ վարժարաններու իրաւատէրերուն միջեւ, ուստի՝ որոշուած է վերաբանալ Հալէպի եւ շրջաններու բոլոր հայկական դպրոցները»: Հայերէնի պահերը նախակրթարանի բոլոր կարգերուն համար կը մնան 24, իւրաքանչիւր կարգի համար շաբաթական չորս պահով: Հայերէնը նոյնքան դասաժամերով պիտի տրուի նաեւ միջնակարգի եւ երկրորդականի կարգերուն մէջ: Կրօնը նախակրթարանի, միջնակարգի եւ երկրորդականի բոլոր կարգերուն մէջ շաբաթը երկու պահով պիտի դասաւանդուի հայերէնով, բացի 9-րդ (պրովէ) եւ 12-րդ (պաքալորիա) կարգերէն, որոնք կրօնը պիտի անցնին արաբերէնով՝ քրիստոնեաներու համար պատրաստուած պետական միացեալ ծրագի-

րով՝ պետական քննութեան ներկայանալու համար: Կրօնը կը մտնէ պետական քննութեանց մեջ:

Բերիոյ թեմի Քաղաքական ժողովը իր Ի. նիստին, 23 Հոկտեմբեր 1967, կը լսէ սրբազան հօր զեկուցումը. կ'արձանագրուի, որ Բերիոյ թեմի առաջնորդարանի շանքերով «ձեռք բերուեցաւ աւելին. 1953-էն ի վեր մասնաւոր վարժարաններու մասին հրատարակուած բոլոր օրէնքները անտեսած էին հայկական վարժարաններու ինքնուրոյն հանգամանքը եւ զանոնք դասած էին մասնաւոր վարժարաններու պիտակին տակ, շահադիտական նպատակով հիմնուած եւ օտար միսիոնարական առաքելութիւններու կողմէ դեկավարուող վարժարաններու շարքին: Ազգային իշխանութիւններու դիմումին վրայ հայկական վարժարանները ճանչցուեցան իբրեւ առանձին, ինքնուրոյն հանգամանք ունեցող կրթական հաստատութիւն»:

Ապա խօսելով ձեռք բերուած արդիւնքներուն մասին՝ կ'ըսուի.

ա) Հայկական վարժարանները իրենց դիմագիծը պահեցին:

բ) Կառավարութեան հետ փոխյարաբերութիւնները այսուհետեւ տեղի պիտի ունենան նշանակուած տնօրէնին միջոցաւ, պետական կրթական ծրագիրին գործադրութեան գծով: Այլ խօսքով, պետական ծրագիրին գործադրութեան հսկողութիւնը յանձնուած է այդ տնօրէնին, որ այս ուղղութեամբ կապ պիտի պահէ Կրթութեան տնօրէնութեան հսկիչներուն հետ:

գ) Հայերէնը կը դասաւանդուի գրեթէ նախկին չափով⁴⁹:

⁴⁹ Շարաքը 4 պահ հայերէն. երկու պահ կրօն. պրովէի եւ պաքալորիայի դասարաններուն կրօնը կ'ուսուցուի արաբերէնով՝ բոլոր քրիստոնեայ համայնքներու կողմէ ընդունուած դասագիրքով:

դ) Հայկական վարժարաններուն եւ Կրթութեան նախարարութեան փոխարարբերութեանց ընթացքին մէջ յառաջացած դժուարութիւնները հարթուեցան:

ե) Ազգային վարժարաններու հայ տնօրէնները ձեռքագատուած են վարչական ընթացիկ մտահոգութիւններէ եւ նուիրուած են դաստիարակչական իրենց առաքելութեան⁵⁰:

Ուրեմն դպրոցներու ուսումնական ծրագիրին ամբողջ հսկողութիւնը կ'անցնէր Կրթութեան նախարարութեան: Համայնքապետը, այսինքն թեմի առաջնորդը, կոչուեցաւ «արտօնատեր» կամ «սեփականատեր», իսկ համայնքին կողմէ նշանակուած հայ տնօրէնը դպրոցի «արտօնատիրոջ կամ սեփականատիրոջ ներկայացուցիչ»:

Քաղաքական ժողովի ԻԱ. նիստին, 18 Դեկտեմբեր 1967, սրբազան հայրը իր զեկուցումին մէջ կ'ըսէ. «Հոկտեմբեր ամիսը մեզի համար փոթորկոտ ամիս մըն էր, ուրախ եմ, որ մեր դպրոցական հարցերու շուրջ փոխադարձ հասկացողութիւն մը եղաւ Վարչապետին եւ Կրթական նախարարին հետ, եւ այսօր բաց են մեր դպրոցները եւ կանոնաւոր կերպով կը դասաւանդուին Հայերէն լեզու եւ Հայերէն կրօն ու նաեւ եղած են վարչական գետնի վրայ կարգադրութիւններ մեր տնօրէններու նկատմամբ»⁵¹:

Միւս կողմէ Պէյրութի «Զարթօնք» օրաթերթի մէկ խմբագրականը, արտայայտելով Յառաջդիմական ճակատի գնահա-

⁵⁰ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարան, Քաղաքական ժողովի ատենակցութիւն, տոմար 64, Ի. նիստ, 25 Հոկտեմբեր 1967: Տե՛ս նաեւ պետական երեսփոխան, Բերիոյ թեմի Ազգ. քաղաքական ժողովի ատենակցետ եւ դպրոցներու վերաբացման բանակցութիւններուն մէջ կարեւոր դեր ունեցած Գրիգոր Էպիփոպեանի հարցազրոյցը, «Ազդակ» օրաթերթ, 12 Յունուար 1968:

⁵¹ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարան, Քաղաքական ժողովի ատենակցութիւն, տոմար 64, ԻԱ. նիստ, 18 Դեկտ. 1967:

տանքը, կը գրէ: «Մեր կարծիքով, տուեալ պայմաններուն մէջ գոհացուցիչ են այս կարգադրութիւնները: Եւ մենք կը խորհինք, թէ սուրիահայ մեր եղբայրներն ու քոյրերը լիովին պէտք է օգտագործեն ստեղծուած բարենպաստ մթնոլորտը: Շնորհակալ պիտի ըլլանք բոլորս սուրիական բարեխնամ կառավարութեան, որ գոհացում տալով սուրիահայ ժողովուրդի ցանկութեանց, հնարատր դարձուց սուրիահայ վարժարաններու վերաբացումը, հայ մշակոյթին ծաղկումը եւ արաբահայ բարեկամութեան սերտացումը: Ապահովաբար, սուրիահայ վարժարանները կրնան լրիւ գործադրելով պետութեան կրթական ծրագիրը՝ ձեռք բերել պատուաբեր արդիւնքներ եւ նոյն ատեն կրնան հայ մանուկներուն սորվեցնել իրենց մայրենի լեզուն ու կրօնական դասանանքը: Հայերէնի դասաւանդութիւնը ոչ միայն չի վնասեր սուրիահայ նոր սերունդի դաստիարակութեան իբրեւ սուրիական հայրենիքի հարազատ քաղաքացիի, այլեւ որոշապէս կը նպաստէ այդ դաստիարակութեան, քանի որ հայ նոր սերունդը կը սնանի երախտագիտական զգացումներով եւ իր քաղաքացիական պարտաւորութեանց լրիւ ճանաչումով»⁵²:

Դամասկոսի հայոց թեմը եւ Մուրիոյ հայ աւետարանական համայնքը կը հետեւին Բերիոյ թեմի առած որոշումին:

Հայ կաթողիկէ համայնքը երկրի կաթողիկէ համայնքներուն (յոյն կաթողիկ, լատին) հետ չի վերաբանար իր դպրոցները (Ժողովրդապետական, Անարատ յղութեան, Մխիթարեան): Պետական նոր որոշումով՝ այդ դպրոցները փակուած կը

⁵² Խմբագրական, «Սուրիահայ դպրոցներու վերաբացումը», «Զարթօնք» օրաթերթ, Պէյրութ, 22 Հոկտեմբեր 1967, էջ 2: Յառաջդիմական ճակատի նախաձեռնութեանց եւ՝ դպրոցներու վերաբացման մասին լուրեր նաեւ տոքթ. Ճեյեճեան Ռ., Նախաձեռնութիւն՝ հայկական դպրոցներու գործունեական օգտին, «Գեղարդ սուրիահայ տարեգիրք», Ե. գիրք, Հալէպ, 1996, էջ 404:

համարուին կամ կը բռնագրաւուին «կէս պետական դպրոց» վիճակով⁵³:

4 Յունուար 1968-ին առաջնորդական տեղապահ Ատոմ աւագ քին. Քեհեայեան կը շնորհաւորէ Հալեպի նոր նշանակուած կրթութեան տնօրէնը եւ նոր տրուած հրահանգներուն լոյսին տակ՝ կը ստանայ հետեւեալ բերանացի արտօնութիւնները.

ա) Հայկական վարժարանները արաբերէն վիճակացոյցներու կողքին կրնան տալ նաեւ հայերէն վիճակացոյցներ (այս դրութիւնը կը շարունակուի առ այսօր):

բ) Ծնողական ժողովներու լրիւ ազատութիւն, նկատի ունենալով որ այդ ժողովները ծնողներուն եւ դպրոցներուն համար «շատ կարեւոր էին»:

գ) Դպրոցներու պաշտօնեաներու նշանակումին մէջ «ազատութիւն մեր նախընտրածը բերելու»:

Կրթութեան նախարարութեան վերջին հրահանգները ամբողջ խորութեամբ սերտելու եւ որոշ իրաւունքներ վերապահելու նպատակով Բերիոյ թեմը առաջացուց մասնաւոր յանձնախումբ մը: 1968-ի Մարտի սկիզբը, Յանձնախումբը՝ յանձինս Առաջնորդարանի իրաւաբան մեթր Գրիգոր Էպլիղաթեանի, Ազգային Առաջնորդարանի դիւանապետ Ժոզէֆ Պայրամեանի, Կիլիկեան ճեմարանի տնօրէն Ռուբէն Տիրաբեանի, ՀԲԸՄ-ի Լազար Նաճարեան-Գալուստ Կիլիկէնկեան վարժարանի տնօրէն Երուանդ Ակիշեանի, Դամասկոսի Ազգային Թարգմանչաց վարժարանի տնօրէն Տիրան Ակիսեանի, սիրով կ'ընդունուի նախարարին կողմէ: Երկուստեք կը պատրաստեն նոր պաշտօնա-

⁵³ 1973-ին հայ կաթողիկէ վարժարանները, սերտեալ նաեւ Հալեպի Մխիթարեան վարժարանը, հայ միւս համայնքներուն տրուած իրաւատութիւններով վերաբացուելու արտօնութիւն ձեռք կը բերեն:

գիր մը «Ի նպաստ մեզի եւ որ մօտ օրէն պիտի դրկուի բոլոր դպրոցներուն եւ մեզի՝ առ ի գործադրութիւն»⁵⁴:

7 Մայիս 1968-ին Կրթութեան տնօրէնութիւնը տեղեակ կը պահէ, որ

- Մեր դպրոցները իրենց քննութիւնները կրնան ընել ըստ իրենց կողմէ որոշուած դասացոյցի՝ ոչ անպայման պետական դպրոցներուն հետ:

- Մանկապարտեզները կը գործեն, բայց կը փակուին կէսօրէ ետք⁵⁵:

- Մեր դպրոցները կրնան տալ հայերէն վկայական՝ արաբերէնէ կողքին:

- Դպրոցական հանդէսներուն միայն բացումը եւ փակումը պիտի կատարուին արաբերէնով⁵⁶:

Ստորեւ կարելոր կը նկատենք տալ 1967-1968 տարեշրջանի սկիզբը հրատարակուած հայկական դպրոցներու ընդհանուր ցանկ մը, որ ընդգրկուած են նաեւ հայ կաթողիկէ վարժարանները, որ Հոկտեմբերին չեն վերաբացուիր: Հայկական վարժարաններու թիւը 1952 թուականի 77-ի դիմաց արդէն 59-ի իջած է, գլխաւորաբար Ճեզիրէի գիւղերէն Հայրենիք ներգաղթած հայոց դպրոցներու փակումով: 17 կաթողիկէ վարժարաններու փակու-

⁵⁴ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարան, Քաղաքական ժողովի ատենագրութիւն, տոմար 64, ԻԷ. նիստ, 6 Մայիս 1968:

⁵⁵ Պետական օրէկրով՝ մանկապարտեզը դպրոցական աստիճանատրումին մէջ չի մտնէր, մինչ հայկական դպրոցներուն համար տարրական կրթութեան մակարդակ է՝ զբաճանաչութեան յատուկ ծրագիրով: Մեր բոլոր դպրոցներուն կ'արտօնուի ազատ ծրագիրով մանկապարտեզ ունենալ, պայմանաւ որ կէսօրէ ետք մանկապարտեզը փակ մնար: Հայ կաթողիկէ մէկ-երկու վարժարաններ այս տրամադրութենէն օգտուելով կը պահէն մանկապարտեզի իրենց բաժինները:

⁵⁶ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարան, Քաղաքական ժողովի ատենագրութիւն, տոմար 64, ԼԲ. նիստ, 17 Մայիս 1968:

մով այդ տարեշրջանին հայկական վարժարաններու թիւը կ'իջնէ 42-ի: Ցանկին տուած թիւերուն մէջ ուշագրաւ կը դառնայ արաբ պաշտօնեաներու թիւը՝ 568 հայ պաշտօնեայի դիմաց 356 արաբ պաշտօնեայ, մեծ մասով ուսուցիչ-ուսուցչուհի:

Ցանկը կու տայ դպրոցի անունը, յարանուանութիւնը (յրնւթ.), աշակերտներու թիւը, պաշտօնեութիւնը՝ հայ եւ ոչ հայ, վայրը:

Վարժարան	յրնւթ.	աշ.	հայ	ոչ հայ	թաղ	քղք.
1. Լազար Նաճարեան-Գ. Կիւպէնկեան վ.	առաք.	990	30	27	Ազիզիէ	Հալէպ
2. Հոփսիսմեանց վ.	կթղ.	75	4	1	Ազիզիէ	--
3. Կիւպէնկեան վ.	առաք.	216	9	-	Ազիզիէ	--
4. Էմմանուէլ վ.	աւետ.	80	3	2	Աշրեֆիէ	--
5. Թէր Սէնթ-Պալեան վ.	կթղ.	1920	31	44	Սուլէյմանիէ	--
6. Մեսրոպեան վ.	առաք.	372	9	4	Նոր-Գիւղ	--
7. Ս. Գր. Լուսաւորիչ վ.	կթղ.	630	20	24	Թիլէ	--
8. Չուարթնոց վ.	կթղ.	164	8	-	Նոր-Գիւղ	--
9. Ան. յղթ. քերց վ.	կթղ.	374	9	19	Թիլէ	--
10. Էմմանուէլ վ.	աւետ.	243	9	2	Ազիզիէ	--
11. Վարդանեան վ.	առաք.	190	8	3	Աշրեֆիէ	--
12. Կիլիկեան ճե-	առաք.	630	16	34	Հարթ	--

մարան					է-Միս	
13. Գերմանի-կեան վ.	առաք.	146	8	2	Հեյլիկ	.-
14. Բեթել վ.	աւետ.	433	14	5	Ճապ-րիէ	.-
15. Ազգ. Հայկա-զեան վ.	առաք.	799	46	4	Սալիպէ	.-
16. Սրբուհի Թե-րեզա վ.	կթղ.	170	6	4	Ազիզիէ	.-
17. Յովսէփեան վ.	կթղ.	120	5	1	Հեյլիկ	.-
18. Կիլիկեան վ.	առաք.	368	8	5	Նոր - Գիւղ	.-
19. Բ. Ե. ազգ. ճե-մարան	առաք.	553	18	19	Նոր - Գիւղ	.-
20. Սրբ. Վարդա-նանց վ.	կթղ.	531	18	5	Նոր - Գիւղ	.-
21. Կենաց վ.	աւետ.	178	8	3	Նայիալ	.-
22. Մխիթարեան վ.	կթղ.	612	14	10	Սուլէյ-մանիէ	.-
23. Արամեան վ.	առաք.	42	2	1	Ասոր-լոց քեմբ	.-
24. Կրթասիրաց վ.	առաք.	492	16	6	Սոքաք Արային	.-
25. Սեդրաք Մես-րոպեան-Արմէնեան վ.	առաք.	170	7	4	Ճեպէլ - Սէյտէ	.-
26. Սահակեան վ.	առաք.	663	25	5	Նոր - Գիւղ	.-
27. Զաւարեան վ.	առաք.	601	26	2	Նոր - Գիւղ	.-
28. Սահակեան վ.	առաք.	175	13	2	Սազրա	Դամաս-կոս
29. Զաւարեան վ.	առաք.	170	8	4	Պապ - Թումա	.-

30. Հայ աւետ. վ.	աւետ.	186	7	4	Միտ- հաթ - Փաշա	--
31. Կարթ. աղջ- կանց վ.	կթղ.	268	8	4	Պապ - Թումա	--
32. Ալիշան վ.	կթղ.	175	12	2	Պապ - Թումա	--
33. Թարգմանչաց վ.	առաք.	353	10	11	Պապ - Շարքի	--
34. Ազգ. Միա- ցեայ վ.	առաք.	137	8	3	Հարթ է-Շարֆ	--
35. Ազգ. Եփրատ վ.	առաք.	1099	26	14		Գամիշլի
36. Ս. Յովսէփ վ.	կթղ.	289	3	7		Գամիշլի
37. Միացեայ վ.	առաք.	785	10	14		Հասիչէ
38. Վերածնունդ վ.	առաք.	78	3	1		Եագու- սիէ
39. Ազգ. նահա- տակաց	առաք.	107	6	1		Ռաս- ուլ-Այն
40. Ազգ. վ.	առաք.	139	4	4		Հասիչէ
41. Հայ ազգ. երկ- սեռ վ.	առաք.	30	2	-		Տէր Զօր
42. Ազգ. Սահա- կեան վ.	առաք.	68	6	2	Ֆախու- րա	Հումս
43. Ազգ. վ.	առաք.	81	8	1		Ամուտա
44. Հայ աւետ. վ.	աւետ.	30	3	-		Գարա- տուրան
45. Ազգ. վ.	առաք.	70	1	1		Տէրիք
46. Աւ. Սարա- ֆեան վ.	առաք.	83	5	3		Այնուլ Աբաս
47. Սրբուհի Թերեզա վ.	կթղ.	240	3	5		Տրլպե- սիէ
48. Հայ կթղ. - Միաց. վ.	կթղ.	110	3	2		Ճարաս- յուս
49. Ուսումն. -	առաք.	159	10	-		Քեսապ

Միացեալ					
50. Մ. Գր. Լուսա- ւորիչ վ.	կթղ.	50	4	2	Քեսապ
51. Մ. Յովսէփ աղջի վ.	կթղ.	600	9	21	Գամիշլի
52. Մ. Յակոբեան վ.	առաք.	220	6	6	Լաթա- քիա
53. Նահատակաց վ.	աւետ.	87	7	2	Քեսապ
54. Ազգ. Խորե- նեան վ.	առաք.	97	5	1	Թէլ Ա- պիատ
55. Ազգ. Միա- ցեալ վ.	առաք.	26	2	1	Գարա- տուրան
56. Նահատակաց վ.	աւետ.	11	1	-	Պաղճա- ղազ
57. Նուպրեան վ.	առաք.	209	6	2	Ռազգա
58. Նահատակաց վ.	աւետ.	25	2	-	Քէօրքի- նէ
59. Նահատակաց վ.	աւետ.	21	2	-	Էքիգօ- լուք

Վարժարաններ	առ.	հայ	ոչ հայ
32 առաքելական վարժարաններ	9533	345	173
17 կաթողիկէ վարժարաններ	7113	167	165
10 աւետարանական վարժարաններ	1294	56	18
Գումար 59 վրժ.	17940	568	356 ⁵⁷

Կրթութեան նախարարութեան մասնաւոր վարժարաններու բաժանմունքի ընդհանուր տնօրէն Ֆաուզի Քէյիալ, Հալէպ գալով, 30 Յունիս 1968-ին մասնաւոր վարժարաններու պատաս-

⁵⁷ Խմբագրական, Սուրիահայ դպրոցներու վերաբացումը, «Չարթօնք» օրաթերթ, 22 Հոկտեմբեր 1967, էջ 2:

խանատուներուն լուսաբանութիւններ կու տայ կրթական վերջին հրահանգներուն վերաբերեալ: Հայ պատուիրակութեան հետ իրեն ներկայացուած հարցերուն կու տայ հետեւեալ պատասխանները.

- Պետական տնօրէններու կուսակցութեամբ կ'ըսէ. «Նկատուած էր, որ պետական հրամանները չէին գործադրուեր դպրոցներէն ներս, եւ քննիչներու տեղեկագիրները անբաւարար էին զանոնք գործադրելու համար: Պետական տնօրէններ տեղաւորեցինք դպրոցներէն ներս տեւական քննիչութեան պաշտօնով: Մեր փափաքն է, որ դպրոցներու մէջ ուսումնական միօրինակութիւն տիրէ: Պետական տնօրէնները երբեք դպրոցի տէրերը անհանգստացնելու համար չեն դրուած դպրոցներէն ներս, այլ պետական հրամանները գործադրելով իրենց պարտականութիւնը լաւապէս կատարած կ'ըլլան գոհացնելով թէ՛ պետութիւնը եւ թէ՛ տէրերը»:

- Դպրոցական ներքին կանոնագիրքին համար կ'ըսէ. «Կանոնագիրքը ճիշդ է որ Դամասկոս պատրաստուած է, բայց հոն նկատի առնուած են դպրոցի տէրերու դիտողութիւնները, կարելի է Ձեզի եւս դրկել ուսումնասիրութեան համար՝ պայմանաւ որ փութով վերադարձուի՝ դպրոցական վերամուտին հասցնելու համար»:

- Հայերէնի ուսուցման համար ըսուած է. «Հայերէն լեզուն կարգափոխութեան մէջ կարելի չէ նկատի առնել, երբ մեր նպատակն է միօրինակութիւն ստեղծել դպրոցներէ ներս: Չենք կրնար բացառութիւն կազմել հայերէնի համար: Հայերէն լեզուն արտօնած ենք, ձեզի կը մնայ հետաքրքրութիւն ստեղծել, յաջողակներուն նուէրներ տալ եւ այլն»:

- «Հայերէն լեզուի պահերը եւս աւելցնել անկարելի է, միջազգային օրէնքը արդէն իսախտած ենք շաբաթապահերը 38-ի

բարձրացնելով: Ասկէ աւելի ուսանողը ծանրաբեռնել հակամանկավարժական է»:

- Ուսուցիչներու նշանակման հարցով կ'ըսէ. «Հայերէնի ուսուցիչներու վկայականի հարց չունինք: Այդ կը պատկանի Ձեզի: Լաւ կ'ըլլայ, որ Առաջնորդարանէն վկայագիր մը ունենայ, որ կրնայ դասաւանդել հայերէն կամ հայերէնով կրօն»⁵⁸:

17 Սեպտեմբեր 1969-ին Բերիոյ թեմի առաջնորդի գլխաւորութեամբ պատուիրակութիւն մը կը ներկայանայ Դամասկոս կրթութեան նախարարին, կրթական որոշ խնդիրներու լուծումը աւարտին հասցնելու համար: Հոն կ'որոշուի.

Ա. Մանկապարտեզի գոյավիճակը մնայ նոյնը եւ ոչ մէկ հրամանագիրով արգիլուի հայերէնի դասագիրքերու գործածութիւնը:

Բ.- Բոլոր հայ վարժարաններուն մէջ երգի դասապահերուն կատարուի հայերէն եւ արաբերէն երգի ուսուցում:

Գ. Նախակրթարաններու մէջ կրօնի դասաւանդութիւնը ըլլայ հայերէնով: Հաւանականութիւն կայ, որ նոյնը ըլլայ երկրորդական բաժնին մէջ:⁵⁹

Այսպիսով, 1967-1969 տարեշրջաններուն իրենց լուծումը կը գտնեն հայկական վարժարաններուն հետ կապուած պետական բոլոր իրաւական, կրթական, ծրագրային հարցերը:

6.- Հայկական վարժարաններու անուանափոխութիւնը. վերջին հրահանգներուն մէջ կը մտնէր նաեւ հայկական դպրոցները արաբական անուններով վերանունանելու պահանջը: Առաջնորդական նենդապահ Ատոմը անագ քին. Քեհեայեան այս պարագան եւս Քաղաքական ժողովի յանձնարարութեամբ կը յղէ

⁵⁸ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարան, Քաղաքական ժողովի ատենագրութիւն, տոմար 64, Խ. նիստ, 31 Յուլիս 1968:

⁵⁹ Նոյնը, ԺԶ. նիստ, 19 Սեպտեմբեր 1969:

Մասնաւոր յանձնախումբի սերտողութեան. «Այս պարագան եւս Յանձնախումբին ուշադրութեան յանձնել եւ պահանջել, որ նոյն անունները մնան: Քանի որ արտօնուած էինք հայերէն ուսուցանել, կարելի էր նաեւ հայկական անունները պահել, պահելու համար դպրոցին հայկական դիմագիծը, որ օգտակար էր նաեւ պետութեան ժողովուրդին մէջ աւելի վստահութիւն ստեղծելու համար պետութեան հանդէպ»⁶⁰: Կը պատճառաբանուէր, որ հայկական անունները արտասանելն ու գրելը դժուար պիտի ըլլայ պաշտօնէաներուն համար: Ուստի համաձայնութիւն կը գրանայ, որ անոնք ունենան հայերէնին համարժէք անուններ կամ դպրոցներու կողմէ ընտրուին յարմար անուններ, ինչպէս Ֆուրաթ՝ Եփրատ, Տիճլէ՝ Տիգրիս, Քիլիքիա՝ Կիլիկիա, Մարքագիէ՝ Կեդրոնական, Սանաուիէ՝ Երկրորդական, Ամալ՝ Յոյս, Շուհատա՝ Նահատակաց, Իթթիհատ՝ Միացեալ, Հուրրիէ՝ Ազատութիւն եւ այլն: Հայերէն անունները մնացին հայկական շրջանակներուն մէջ կամ նորերը գործածուեցան թարգմանաբար: Ստորեւ կը ներկայացնենք 1968-1969 տարեշրջանի հայկական դպրոցներու ցանկը՝ արաբերէն անուններով.

Դպրոց	արբ. անունը	վայր	հայ աշ.	ոչ հայ
Թէր Սէնթ Ռամ	Արտ Էլ-Մուքատտէ	Հալէպ	1000	1200
Հ. աւետ. Էմմանուէլ	ալ-Ռիսալէ	Հալէպ	332	16
Հ. աւետ. Բեթէլ	ալ-Հայաթ	Հալէպ	625	-
Հ. աւետ.	ալ-Պիշարա	Հալէպ, Աշրեֆիէ	77	2
Հ. աւետ.	ալ-Հայաթ	Դամասկոս	185	35

⁶⁰ Նոյնը, Ի.Չ. նիստ, 28 Փետրուար 1968:

Հ. աւետ. Նահատակաց	ալ-Շուհատա	Գարատուրան	25	-
Հ. աւետ. Նահատակաց	ալ-Շուհատա	Քէօրքիւնէ	23	-
Հ. աւետ. Նահատակաց	ալ-Շուհատա	Քեսապ	114	8
Ք.Ե. Ազգ. Ճեմարան	ալ-Սանաուիէ ալ-Սուրիէ	Հալէպ	631	1
Արամեան	Արամեան	Հալէպ	35	-
Զաւարեան	ալ-Տիճլէ	Հալէպ	820	-
Կիւլպէնկեան	ալ-Շարք	Հալէպ	247	-
Հայկազեան	ալ-Էմճետ	Հալէպ	1063	-
Սահակեան	Տար եւ-Սալամ	Հալէպ	842	-
Լ. Նաճարեան-Գ. Կիւլպէնկեան	ալ-Մերքեզիէ	Հալէպ	1284	6
Մեսրոպեան	Պէյթ Լահրմ	Հալէպ	469	-
Կիլիկեան Ճեմարան	Սանաուիէ Քիլիքիա	Հալէպ	972	2
Կիլիկեան (Մէլտան)	Քիլիքիա	Հալէպ	404	-
Կրթասիրաց	Տար էթ-Թարպիէ	Հալէպ	596	-
Վարդանեան	ալ-Ֆուրաթ	Աշրէֆիէ	226	9
Գերմանիկեան	ալ-Միւսթաքպէլ	Հալէպ	152	-
Սեղրաք Մեսրոպեան	ալ-Հիւրրիէ	Ճեպէլ Սլետ	198	34
Սահակեան	ալ-Թալիա	Դամասկոս	194	33
Թարգմանչաց	ալ-Ռիսալէ	Դամասկոս	343	3
Միացեալ	ալ-Լիզամ	Դամասկոս	161	15
Զաւարեան	ալ-Իրատէ	Դամասկոս	207	27
Միացեալ	ալ-Միւսթահիտէ	Գարատուրան	26	-
Ս. Յակոբեանց	ալ-Շուհատա	Լաթաքիա	256	7

Ուսումն. միացեալ	ալ-Իթթիհատ	Քեսապ	149	-
Ազգ. վարժարան	ալ-Լիվա	Հասիչէ	112	59
Ազգ. նահատակաց	ալ-Շուհատա	Ռաս-ուլ Այն	98	41
Նուպարեան	ալ-Հիւրբիէ	Ռազգա	88	37
Եփրատ վրժ.	ալ-Ֆուրաթ	Գամիշլի	1300	35
Աւետիս Սարաֆեան	Ուսամա Պրն Զէթ	Այն Արապ	70	10
Ազգ. վրժ.	Ապու Ալա - Մաարրի	Ամուտա	20	12
Խորենեան	ալ-Իսթիքլալ	Թէ Ապ- իատ	95	6
Մերոպեան	ալ-Ֆուրաթ	Ճարապլուս	32	15
Ազգ. վրժ.	ալ-Հիւրբիէ	Տերիք	65	25
Սահակեան	Սահակեան	Հոմս	92	-
Վերածնունդ	ալ-Եագագա	Եագուպիէ	62	-
Միացեալ	ալ-Միլթթահի- տէ	Ճարապլուս	30	27
Հ. աւետ. նահատակաց	ալ-Շուհատա	Էքիգօլուք	33	-
Հ. կթղ. մնկ. պարտէզ ⁶¹	Ռաուտաթ - Ֆաթէհ	Գամիշլի	60	40
44 դպրոց			13813	505

⁶¹ Կաթողիկէ համայնքէն կը գործէին միայն լատինաց հայր Պալեանի դպրոցի հայկական բաժինը «կէս պետական» դպրոցի կարգավիճակով եւ Գամիշլիի ու Ռազգայի մանկապարտէզները: Մանկապարտէզը պետական կրթական համակարգին մէջ չի մտնէր:

Սկստելի է, որ վերջին երկու տարիներուն աշակերտութեան թիւը եռուա-
գամ է 5127 հոգիով. առաջին պատճառը կաթողիկէ վարժարաններու փակու-
մին հետեւանքով անոնց 7113 աշակերտներէն շատերը սկսան յաճախել օտար
վարժարաններ: Երկրորդ պատճառն ալ արտագաղթն էր. յիշենք, որ սուրիա-
հայերու հաշտոյն աշակերտութեան թիւի մեծ մագլցում ունէին 1960-ին բաց-
ուած Քուէթի ազգային, Կիպրոսի Մելգոնեան եւ Այնճարի աւետարանական
գիշերօթիկ եւ առհասարակ Լիբանանի բոլոր դպրոցները:

ИЗМЕНЕНИЯ СТАТУСА АРМЯНСКИХ ШКОЛ И АРМЯНСКОГО ЯЗЫКА В СИРИИ В 1950-1970-ых гг.

Резюме

АКОП ЧОЛАКЯН

д. и. н.

Ведущий научный сотрудник
Института археологии и этнографии НАН РА

Численность армянского населения Сирии значительно уменьшилась из-за разделения в 1950-1970 годах, а затем из-за эмиграции, которая произошла в результате недавних политических событий в новой независимой стране. Преобладающей проблемой армян, оставшихся в Сирии, стало сохранение их учебных заведений для обучения армянскому языку, а также армянского воспитания нового поколения.

В течение 1946-1968 гг. законы об образовании сирийского министерства образования определенно ограничили юрисдикцию негосударственных школ. Политическая ассамблея епархии Армянской апостольской церкви попыталась предоставить армянским школам законный статус в качестве специализированных колледжей. Согласно этому законному соглашению преподавание армянского языка и религиозных наук на армянском языке осуществляется еженедельно по шесть уроков.

Большинство использованных материалов в данном исследовании представляют собой либо неопубликованные архивные документы, либо опубликованные источники.

THE STATUS CHANGES OF THE ARMENIAN SCHOOLS AND THE ARMENIAN LANGUAGE IN SYRIA IN 1950-1970

Summary

Hakob Cholakian

Doctor of Historical Sciences

Leading Researcher at the

Institute of Archaeology & Ethnography, NAS RA

The number of Syrian Armenian population has significantly decreased, due to the dipartriation, during the years 1950s-1970s, and then because of the emigration, which took place as a result of the recent political developments of the newly independent country. The overwhelming problem of the Armenians, who remained in Syria, has become preserving their educational institutions to implement the teaching of Armenian language, as well as the Armenian upbringing of the new generation.

During the years of 1946-1968, the educational laws of the Syrian Ministry of Education has definitely restricted the jurisdictions of the non-governmental schools. The Political Assembly of the Prelacy of the Armenian Apostolic Church attempted to grant the legitimate condition to the Armenian schools, as specialized colleges. By this lawful agreement the teachig of Armenian language and religious sience in Armenian has been executed weekly by six classes.

The majority of the used subjects in this study are either unpublished archives or published sources.

ՄԻՐԻԱՀԱՅ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԹԻՒՆԻՑ.
ԳԱԼԷՍՔԵԱՐԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

ՀՐԱԶԴԱՆ ԹՈՔՄԱՃԵԱՆ

ՀՀ ԳԱՍ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտաշխատող

Առաջին Համաշխարհային պատերազմից յետոյ ցեղասպանության ենթարկուած հայերի մի զգալի մասը ապաստան գտաւ Սիրիայում (ըստ Հալէպում ամերիկեան հիւպատոս Ճէքսոնի 1916 թ. Փետրուար 3-ին տեղեկագիրի, Սիրիայի տարածք է տեղահանուել 486.000 հայ): Տարբեր բնակավայրերում յայտնուած մեր հայրենակիցները աստիճանաբար կենտրոնացան մի քանի քաղաքներում. մասնաւորաբար Հալէպում: Յատկապէս արհեստների տիրապետող վարպետները աստիճանաբար իրենց կարերը տեղը գրաւեցին շուկաներում: Արհեստի մի շարք ոլորտներում հայ վարպետները առանձնակի դիրք գրաւեցին թէ՛ քանակի, եւ թէ՛ որակի, հեղինակութեան իմաստով:

Մի շարք արհեստաւորներ եւ արհեստաւորական ընտանիքներ նոր միջավայրում շարունակեցին իրենց ծննդավայրում ձեւաւորուած արհեստները: Նրանք ոչ միայն մեծ ներդրում ունեցան սիրիական արհեստագործութեան մէջ, այլեւ շարունակեցին հայերին բնորոշ արհեստները: Այդպիսի վարպետներ էին Գալւնքեարեանները: Նրանց մասին տեղեկութիւնները քաղել ենք ստորեւ ներկայացուած հետեւեալ աշխատութիւններից⁶²:

⁶² Սարաֆեան Գ., Պատմութիւն Անթէպի Հայոց, Լոս Անճելըս, 1953: Կիւլսէրեան Վ., Յուշարձան Աւետիս Գալւնքեարեանի, Պէրուք, 1965: Պողարեան Գր., Այնթապականք, Մահարձան, Պէրուք, 1975:

ՅԱԿՈՒՐ, ՏԻՐԱՑՈՒ ՄԵԼՔՈՆ, ԿԱՐԱՊԵՏ ԽԱԼՖԷ (1812-1885)

Աւանդութեան համաձայն, Գալլմքեարեանների նախահայրը՝ դերձակ Յակոբը, եկել է Արեւելեան Հայաստանից՝ պարսկական տիրապետութեան տակ գտնուող Ջուղա քաղաքից:

Տիրացու Մելքոն խալֆեն⁶³ Յակոբի որդին, արհեստով կլայագործ է եղել: Այդ պատճառով նրան կոչել են նաեւ Գալլայճը⁶⁴ Մելքոն խալֆեն, եղել է գրագետ մարդ, տիրացու եւ դպիր, հմուտ շարականագետ եւ երգիչ:

Մելքոնի որդիներից հօր արհեստը շարունակողը Կարապետն է եղել: Նա զարգացրել է արհեստը՝ զբաղուելով միաժամանակ թէ՛ կլայագործութեամբ եւ թէ՛ պղնձագործութեամբ:

Ինչպէս վկայում է Գեորգ Պարսումեանը, Այնթապի առաջին պղնձագործները կլայագործներն էին, որոնք անագապատելուց առաջ, նախնական գործիքներով շտկում էին պնակների եւ կաթսաների ծոմուած մասերը: 19-րդ դարի կեսերին Այնթապում մի շարք կլայագործներ հմտացան պղնձագործութեան մէջ եւ սկսեցին արտադրանք տալ: Նախապէս Այնթապի պղնձեղէնը եկել է Թոքաթից⁶⁵: «1915-ի ատենները, շատ տուներ դեռ կը գործածէին Թոքաթի գործ պղնձեղէններ»⁶⁶:

⁶³ Խալֆե – արաբերէն բառացի նշանակում է փոխարինող, օգնական: Գործնականում խալֆե են կոչուել այն գրագետ արհեստատրները, որոնք միաժամանակ ուսուցիչ էին, եկեղեցում շարական երգող տիրացուներ: Նախքան կազմակերպուած դպրոցների գոյութիւնը, խալֆէները իրենց արհեստանոցում, արհեստից բացի աշակերտներին գրել-կարդալ էին սովորեցնում:

⁶⁴ Գալլայճը – կլայագործ, պղնձէ ամանները անագապատող:

⁶⁵ Թոքաթ (Եդոկիա) – քաղաք Փոքր Հայքում: Այժմ Թուրքիայի Թոքաթ վիլայեթի վարչական կեդրոնն է: Քաղաքը բնակեցուած է եղել դեռեւս չորրորդ հազարամեակից: Թոքաթի հնագոյն բնակիչներն են եղել նախախեթական, խեթական եւ հայկական ցեղերը: 1398-ին քաղաքը գրաւել են օսմանցի թուրքերը: 19-րդ դարի վերջին քաղաքի 50.000 բնակիչներից 30.000-ը հայեր էին:

Կարապետ Խալֆէն եւս վերոյիշեալ արհեստաւորներից է:

Միաժամանակ Կարապետը համբաւի է տիրացել որպէս փորագրիչ, պղնձի վրայ բազմատեսակ զարդեր փորագրող: Ըստ աւանդութեան վարպետը ուխտի է գնացել Կեսարիոյ Ս. Կարապետ վանք: Ճանապարհին այցելել է Կեսարիա, ուր ամենայն հաւանականութեամբ հանդիպել է հրաշալի պղնձագործների եւ փորագրիչների: Ժամանակակիցների վկայութեամբ, վերադառնալով Այնթապ՝ նա աշխատել է բազմապատկուած եռանդով եւ մեծ յաջողութիւնների հասել: Արդիւնքում փոխուել է ազգանունը՝ նախկին Գալայճըն վերածուել է Գալէմբեարեանի⁶⁷:

Կարապետից որեւէ գործ յայտնաբերելը հաւանական չէ յատկապէս այն պատճառով, որ նա անձնական դրոշմակնիք չի օգտագործել:

Յիշում է Կարապետի բացառիկ երաժշտական ընդունակութիւնների մասին: Նա էլ հօր պէս հմուտ շարականագետ էր, հրաշալի ձայն ուներ: Բարգէն Կաթողիկոսը գրել է. «Քէֆարգեան»⁶⁸ ժամասէր էր եւ տօնասէր, իբրեւ վարժ Ս. Յակոբի ժամասացութեան ճոխութեան, շատ ազդեց Կիլիկիոյ եկեղեցիներու ժամասացութեան եւ կանոնաւորութեան: Ինքը լաւ գիտեր

Թորաթը նշանաւոր է եղել արհեստագործութեամբ: Այստեղից մեծ քանակութեամբ գորգ եւ պղնձեղէն է արտահանուել: 1830-ականներին Թորաթը ունեցել է պղնձածուլարան:

⁶⁶ Մարաֆեան Գ., նշում աշխ., էջ 278:

⁶⁷ Ղալամ, chisel – Ստ. Մալխասեանցը իր բացատրական բառարանում արաբերէնից եկող ղալամ բառի երկու բացատրութիւն է տուել. 1- գրիչ, 2- սրածայր մետաղէ գործիք՝ փորագրութեան համար: Գալէմբեարեան նշանակում է ղալամով աշխատող, շահող կամ ուղղակի փորագրիչ: Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. III, Պէյրուք, 1956, էջ 183:

⁶⁸ Այնթապ ծնած Բարգէն Եպս. Կիլիկեդեանը 1931-1936 թթ. եղել է Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոս:

շարականը եւ կ'երգէր հաճելի եղանակով, երբ իրեն պէս վարժ երգող մը գտնէր միւս դասին մէջ: Դիտած էի պատանեկան հետաքրքրութեամբ, որ Այնթապի եկեղեցուն մէջ կ'երգէր, երբ Գալայճը Մելքոնեան Կարապետ Խալֆէ՝ Այնթապի Գալեմբարեան եղբարց մեծ հայրը, երգէր միւս դասէն, ընդհանրապէս «Հարց» շարականները»⁶⁹: Մկրտիչ Քէֆսըզեանի վկայութեամբ՝ իր այցելած 43 քաղաքներում Կարապետ Խալֆէի նման ոչ երգիչ է եղել, ոչ էլ շարական իմացող:

ՄԵԼՔՈՆ ՌԻՍՏԱ ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ (1859-1918)

Կարապետի տղաներից Մելքոնն է, որ փոքր տարիքից սէր է ցուցաբերել հանդէպ հօր գործը: Նա ոչ միայն Կարապետի սպասելիքները արդարացնող զուակ եղաւ, այլեւ արհեստը հասցրեց իր բարձրագոյն մակարդակին:

Հայ պղնձագործութեան մեծագոյն վարպետներից Մելքոն Ռոստա Գալեմբարեանը ծնուել է Այնթապում 1859-ին: Հայրական տան եւ արհեստանոցի մօտիկութիւնը թերեւս առիթներից գլխատրն է եղել, որ տղան շատ ժամանակ անցկացնի արհեստաւորների միջավայրում: Նրա առաջին խաղալիքները հօր գործիքներն էին: Մելքոնի բացառիկ ընդունակութիւնները դրսևտրուել են վաղ հասակում: Դեռեւս պատանի՝ տիրանում է նրբագեղ փորագրութիւններ անողի համբաւին (ժամանակին Այնթապում նորահարսի ցուցամատին սուտակ քարով խոշոր մատանի դնելու սովորութիւն է եղել. այդ մատանիների երկու կողքերին Մելքոնի փորագրած վարդի ծաղիկներն ու այլ զարդաձևեր մեծ ընդունելութիւն են գտել):

⁶⁹ Մկրտիչ Քէֆսըզեան Մարաշցի՝ 1878-1894 թթ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս:

Կարապետի բարեկամ, նշանաւոր ուսուցչապետ Ալեքսան Պեգճեանը, անդրադառնալով Մելքոնի ընդունակութիւններին, խորհուրդ է տուել տղային հիմնաւոր կրթութիւն տալ: Չնայած ծնողների բռն փափաքին, Մելքոնը գիշերօթիկ դպրոցում միայն տարրական կրթութիւն է ստացել:

Որպէս արհեստաւոր հօր ձեռքի տակ ձեւաւորուած՝ Մելքոնը կատարելապէս տիրապետել է ե՛ւ մուրճի գործին ե՛ւ փորագրութեան ու դրուագումի գաղտնիքներին: Նոյն յաջողութեամբ նա աշխատել է պղնձի, արծաթի եւ ռսկու վրայ:

Երբ 1885-ին մահացաւ հայրը, Գալեմբեարեանների համբար դուրս էր եկել քաղաքի սահմաններից: Վաճառականների միջոցով նրանց գործերը հասնում էին Պոլիս եւ այլ քաղաքներ: Պալատներում, շքեղաշուք առանձնատներում նրանց գործերը իրենց պատուաւոր տեղն ունէին (ինչպէս գրում է Գ. Պարսումեանը⁷⁰, 1880-ականներից այնթապցի պղնձագործների աշխատանքը վաճառականների միջոցով արտահանւում էր Ատանա, Զէյթուն, Մալաթիա, Սեւերէկ, Ուրֆա, Հալէպ, Անտիոք, մինչեւ իսկ՝ Դամասկոս):

Մելքոն Ուստան Այնթապում կիսաառասպելական մարդ է եղել: Ինչպէս իր աւագ բարեկամ Ալեքսան Խոճայի մասին, այնթապցիները ասացուածքներ, ստոյթներ, բազմաթիւ տարօրինակ պատմութիւններ են հիւսել նաեւ իր մասին: Տաւօք, այդ

⁷⁰ Գեորգ Պարսումեանը ծնուել է 1899-ին Այնթապ, ձուլագործի ընտանիքում: Նրա վկայութիւնները արժեքաւոր են ոչ միայն այն պատճառով, որ նա լիովին ծանօթ էր Այնթապի արհեստագործութեանը: Նա ժամանակակիցն էր եւ անձամբ էր ճանաչում մեծանուն վարպետներից շատերին: Հեղինակն է «Այնթապի Հայ Տեղափոխական Դաշնակցութեան Պատմութիւն» (Հալէպ, 1957) գրքի եւ մի շարք արժեքաւոր յօդուածների: Կատարել է բազմաթիւ թարգմանութիւններ ֆրանսերէնից: Բազմավաստակ կրթական եւ հասարակական գործիչ մահացել է Հալէպ 1970-ին:

պատմութիւններում արհեստին վերաբերող աննշան յիշատակութիւններ կան: Այս պատճառով էլ նրա մեծ ու անզուգական անհատականութիւնը բացայայտելու համար ստիպուած ենք դիմել իր ձեռակերտների օգնութեանը: Շատ յաճախ իրերն ու առարկաները աւելին են պատմում իրենց ստեղծողի մասին, քան մանրամասն կենսագրականները:

Շուկաներում արհեստագործութիւնը ունեցել է զարգացման որոշակի ընթացք: Նրա հիմնական, բնորոշ կողմը պահպանողականութիւնն է: Արհեստատրները իրենց վարպետներից ոչ միայն գիտելիքներ եւ հմտութիւններ էին սովորում, այլեւ ձեռք էին բերում որոշ գեղագիտական ըմբռնումներ, ճաշակ: Հին, ձեռքի տակ եղած օրինակների կրկնութեամբ է յարատեւել արհեստը: Նորաձեւութիւնները, փոփոխութիւնները դանդաղօրէն, որոշ դժկամութեամբ են տեղի ունեցել: Այս դժկամութիւնը բացատրելի է: Նախ շուկայում վաճառուող, յաջողութիւն ունեցող որեւէ ապրանքատեսակ անհիմաստ է ձեւափոխութեան ենթարկելը: Որեւէ ձեւափոխութիւն հիմնական, էական պատճառ պէտք է ունենայ: Միւս կողմից, եթէ կայ այդ պատճառը (Արեւելքից կամ Եւրոպայից ներմուծուած ապրանքները ստուերի մէջ են թողել տեղական արտադրութիւնը), անհրաժեշտ է տիրապետել արհեստին վերաբերող նոր հնարքների ու գիտելիքների:

Արհեստատրների հիմնական մասը կրկնողներ են եւ խուսափում են չտրորուած արահետներով գնալ: Այս որակը պէտք է դիտել ոչ թէ որպէս թերութիւն, այլ՝ յատկութիւն: Մեր ժողովրդական արուեստում պահպանուած բազմաթիւ հնագոյն ձեւերի համար մենք պարտական ենք հէնց այդ «պահնպանողականութեանը»: Երբեմն արուեստի ամենաբացառիկ, ուշագրաւ գործեր

կրկնութեան արդիւնք են, մեզ են հասել տաղանդաւոր «կրկնողների» միջոցով:

Միաժամանակ շնորհալի կամ պակաս շնորհալի վարպետների կողքին ի յայտ են գալիս անսպասելի, մարդկային այլ խառնուածքի, ստեղծագործական ոգով օժտուած վարպետներ: Նրանց յաջողում է նոր որակի բարձրացնել գործը, շեշտակի շրջադարձներով նոր ուղիներ բանալ արհեստի համար: Մելքոնը արհեստաւորի վերջին տեսակից է. խելացի ու լայնամիտ, տաղանդաւոր մարդ: Այս մասին են խօսում մեզ հասած նրա բազմաթիւ գործերը:

19-րդ դարում Այնթապ էին հասնում պարսկական դրուագազարդ պնակներ եւ ռուսական, արեւմտաեւրոպական ինքնաւեճեր, եւ այլն: Շուկայում յայտնուած մեքենայական արտադրութեան պղնձեղէնը աչք էր շոյում իր ձեւերով եւ մշակման կատարելութեամբ: Գաւառական քաղաքներում գործող վարպետները իսկական քննութեան առջեւ էին յայտնուում: Այն որակը, որ իր նախնական միջոցներով կարողացել է ապահովել Վարպետ Մելքոնը, «վարպետութեան» բացառիկ յաղթանակ է:

Ինչպէս յիշում են ժամանակակիցները, Մելքոն Ուստան որեւէ գործ սկսելիս, նախ շինել է անհրաժեշտ գործիքները, սալերը, մուրճերը: Երբեմն գործի նախապատրաստական աշխատանքները երկարել են շատ ամէլի, քան բուն գործը: (Պատահական չէ, որ Մելքոնից մեզ են հասել ոչ միայն պղնձեւ առարկաներ, այլեւ հազուագիւտ ձեւեր ունեցող մուրճեր եւ սալեր): Փոքր տարիքից կատարելապէս հասկանալով մետաղի «բնաւորութիւն»-ը, շատ լաւ է պատկերացրել նրա մշակման հնարաւորութիւններն ու սահմանները:

Մելքոնի անուան հետ է կապուած նաեւ պղնձագործութեան այնօրէն օգտագործուող զօդանիւթի (լէհիմ) պատրաստու-

թիւնը: Ըստ վկայութիւնների, այնթապցի վարպետները մետաղեայ առանձին մասերը իրար զօդելիս դժուարութիւնների էին հանդիպում, քանի որ զօդման համար օգտագործուող պղինձը դիրահալ չէր: Պարսկաստանից եկած մի վաճառական Մելքոնին առաջարկում է գնել իր բերած պարսկական լէհիմը: Վարպետը փորձում է զօդանիւթը եւ հիանում նրա որակով: Վաճառականին հարցնում է նրա բաղադրութեան մասին, սակայն պարսիկը քաղաքավարութեամբ նկատում է, որ ինքը եկել է լէհիմը վաճառելու, ոչ թէ նրա բաղադրութիւնը փոխանցելու:

Այս միջադէպը առիթ է դառնում, որ վարպետ Մելքոնը լծուի գործի: Մետաղների համադրութեան բազմաթիւ տարբերակներ փորձելով, ի վերջոյ գտնում է լաւագոյնը՝ պարսկականին չզիջող յատկութիւններով: Մելքոնը նաեւ չի զլանում զօդանիւթի բաղադրութիւնը փոխանցել քաղաքի միւս արհեստատրներին: Տասնամեակներ շարունակ, Հալէպում հաստատուելուց յետոյ իսկ, այնթապցի պղնձագործները լէհիմը պատրաստել են վարպետ Մելքոնի գտած համաչափութիւններով:

Առաջադրուած խնդիրները, երեւոյթները, նրանց կառուցուածքը վերլուծելու, իրագործման յարմարագոյն ուղիները գտնելու յատկութիւնը Մելքոնի մօտ դրսեւորուել է ոչ միայն իր արհեստի մէջ:

Վարպետի մասին Գ. Պարսումեանը գրել է. «Վերջապէս եղած է ուղեցոյց-խորհրդատու ոսկերիչներու, երկաթագործներու, հիւսներու եւ այլ արհեստներու»⁷¹:

Հրաշքով մեզ հասած մի հսկայ փքոց (քէօրիւկ) է պահում Յովհաննէս Գալէմբեարեանի մօտ: Ձեռքէ՛-ձեռք անցած այս տարօրինակ գործիքը Այնթապից է հասել Հալէպ եւ վերջին անգամ

⁷¹ Մարաֆեան Գ., նշուած աշխ., էջ 280:

գործածուել Եփրատի ափին գտնուող Ճարապլուս գիւղում: Այն Վարպետ Մելքոնի շինած բազմաթիւ փքոցներից մէկն է: Ինչպէս պարզուում է, վաճառքի համար նա պատրաստել է տարբեր չափի փքոցներ, որոնք օգտագործուել են թէ կլայագործների կողմից եւ թէ պղնձագործների ու երկաթագործների:

Հին սերնդի այնթապցիները յիշում են, որ քաղաքի մզկիթներից մէկը կոչուել է «Գալէմբէր Ճամիաի»: Պահպանուած գրոյցի համաձայն մզկիթի շինարարները դժուարութիւնների են հանդիպել գմբէթի կառուցման հարցում եւ դիմել են Մելքոնի օգնութեանը: Վարպետը չի զլացել հաշուարկելու ոչ միայն կիսագունդ շինուածքի պարամէթրերը, այլեւ քարերի չափերն ու տաշուածքի կորութիւնները: «Մելքոնաշէն» գմբէթը բարեբախտաբար կանգուն է առայսօր:

Մելքոն Ուստայի կարեւոր աշխատանքներից է Այնթապի Ս. Աստուածածին եկեղեցու ջահը: Ջահի ստեղծման մասին պահպանուած արանդութիւն կայ: Չնայած այն բանին, որ այս պատմութիւնը արհեստի իմաստով մանրամասնութիւններ չի պարունակում, այնուամենայնիւ, այն քիչ դէպքերից է, երբ անցեալից մեզ հասած առարկայից բացի պահպանուել է եւ իր պատմութիւնը:

Մելքոնի հայրական տունը գտնուել է քաղաքի միջնաբերդին մօտիկ Ղալա-Ալթը վայրում: Այս հայաբնակ շրջանից հայերը աստիճանաբար հեռացել են եւ 1890-ականներին Մելքոնը այն քչերից էր, որ դեռ ապրում էր այդտեղ: Համիտեան ջարդերը Այնթապում սկսուել են 1895-ի Նոյեմբերի 4-ին: Այդ օրը Մելքոնի ընտանիքի բոլոր անդամները տանն էին, բացի Աւետիս որդոց, որ առաւօտ կանուխ դպրոց էր գնացել:

Քաղաքի փողոցներով անցնող զազանացած ամբոխը մօտեւում է Գալէմբէրեանների տանը եւ փորձում դուռը կոտրելով

ներս խուժել: Բարեբախտաբար դրացի թուրքն է օգնութեան հասնում եւ զէնքով սպառնում ամբոխին: Պատճառաբանում է, որ այս հայի տունը իր բաժինն է: Սպառնալիքին տեղի տալով՝ խուժանը ձեռնունայն հեռանում է: Աւետիսը մի քանի օր հօրաքրոջ տանը պատասպարուելուց յետոյ, անվնաս վերադառնում է տուն:

Այս մեծ փորձանքից առանց կորուստների ազատուելու առիթով Մելքոնը ուխտ է անում նորակառոյց Ս. Աստուածածին եկեղեցուն ինչ-որ բան նուիրել:

Մի գիշեր վարպետն արթնանալով՝ կնոջից սաւան ու սծուխ է պահանջում եւ արագօրէն սաւանի վրայ ուրուագծում երազում տեսած ջահը: Կարճ ժամանակ անց երագ-տեսիլը մարմին է ստանում եւ 1897-ին նուիրում եկեղեցուն: Ջահը, մեծ վարպետութեամբ եւ զեղեցիկ համաչափութիւններով, կոփածոյ մարմին ունի: Այն կրում է 12 ոճաւորուած ճիւղեր, որոնց վրայ տեղադրուած են լամբերը: Իսկ ճիւղերի միջեւ ընկած մասերում տեղաւորուած են դէպի վար նայող 12 համաչափ, թեւատարած հրեշտակներ:

Տեղահանութիւնից առաջ Այնթապում պնտրաստած կրակարանը եւս բացառիկ վարպետութեամբ է շինուած: Այն իւրօրինակ հաւաքածոյ է արհեստին վերաբերող հնարքների ու իմացութիւնների:

Մելքոնին բնութագրող մի պատմութիւն էլ վերաբերում է նրա աստուածավախութեանը: Ինչպէս յիշում են ժամանակակիցները, նա իր հօր՝ Կարապետի նման դպիր չէր: Չունէր եկեղեցոյ հետ ամենօրեայ կապուածութիւն: Միւս կողմից, վարքով պարկեշտ եւ քրիստոնէային վայել կեանքով էր ապրում: Իր գրպանը բաց էր եւ աղքատների համար, եւ ազգային, եկեղեցական ու կրթական ծրագրերի համար:

Գարնան մի օր, Մելքոնը աւագ որդու՝ Յարութիւնի հետ ճամբայ է ընկնում դէպի Այնթապի մօտակայ գիւղերը: Գարնանը օգտագործուած պղնձեղէնը վերստին կլայակելու անհրաժեշտութիւն կար: Ճանապարհին քաղաքից բաւական հեռանալուց յետոյ հայր եւ որդի հեռուում տեսնում են մի քանի ձիաւորների: Հետզհետէ իրենց մօտեցող խմբի երեւոյթից ենթադրում են, որ աւագակներ են: Թաքնուելու համար մօտակայ ոչ մի յարմար տեղ չկար: Կանխագգալով վտանգը՝ Մելքոնը պատանի որդուն պատուիրում է ծունկի գալ եւ աղօթել: Ինքն էլ Մեծն Շնորհալու «Հաւատով Խոստովանիմ»-ն է սկսում աղօթել, վստահութեամբ, որ Աստուած իրենց փորձանքի մէջ մենակ չի թողնի: Խումբը իրենց է հասնում, սակայն տեղի է ունենում անսպասելին. աւագակները կուրացածի պէս չեն տեսնում ոչ հօրը, ոչ որդուն: Ողջ տարածքը տնտղելով՝ զարմանում են ու տարակուսում, թէ ու՞ր կորան սրանք:

Այս հրաշապատումը ծիծաղաշարժ մանրամասնութիւններ ունի. ըստ Յարութիւնի, ջերմեռանդաբար «Հաւատով Խոստովանիմ»-ը արտասանող հայրը անակնկալ մոռանում է վերջին հատուածը (արդեօք չար սատանան էր որոշել նրան խանգարել, պարզ չէ): Երբ արդէն ձիաւորները շատ մօտ էին, պայծառանում է Մելքոնի միտքը, արտաբերում է վերջին 24-րդ համարը եւ, հանգիստ շունչ քաշելով, խաչակնքում:

Յարութիւնը շրջակայ գիւղեր այցելութիւնների մասին պատմել է նաեւ հետեւեալը: Որպէս կլայագործ (անագապատող) Այնթապի մօտակայ գիւղեր գնալը ամենամեայ սովորութիւն է եղել: Ըստ Յարութիւնի, Այնթապ վերադարձին, իրենց ունեցած անագը ոչ թէ պակասում էր, այլ աւելանում: Բազմաթիւ կլայագործներ, չկարողանալով համաչափ եւ հարթ շերտով ծածկել պղնձի մակերեսը, աւելորդ անագ էին վատնում: Մելքո-

նը, պղինձները յղկելուց, շտկելուց բացի, մեծ վարպետութեամբ հեռացնում էր անագի կոպիտ ու աւելորդ կուտակումները: Կաթսաները նոր շունչ էին ստանում: Հենց այս պատճառով էր, որ իրենց անագը ոչ թէ պակասում, այլ աւելանում էր:

1915-ին Այնթապի հայերի առաջին խմբերը քշուում էին դէպի Հալէպ, ապա աւելի հարաւ, մինչեւ Պաղեստին: Մելքոնի ընտանիքը առաջին տեղահանուողների մէջ է եղել: Անուանի վարպետի ծանօթութիւնները, թուրք մեծաւորների հետ սերտ յարաբերութիւնները չօգնեցին շրջանցելու գաղթականի ճակատագիրը:

Հալէպում, աքսորի յաջորդ հրամանին սպասելիս, Մելքոնը տեղեկանում է, որ հարաւային ճակատում կոռուղ թուրքական Չորրորդ Բանակի ընդհանուր հրամանատարը՝ Ճեմալ Փաշան, իջեւանել է «Պարոն» հիւրանոցում: Օգտուելով առիթից, վարպետը փորձում է տեսնել զօրավարին: Հալէպաբնակ Սահակ Պաղտասարեանին պատկանող, իր աշխատած լաւագոյն կրակարաններից մէկը փոխ առնելով եւ մի խնդրագիր պատրաստելով՝ գնում է հիւրանոց: Հիւրանոցի տէրերը՝ Արմէն եւ Գրիգոր Մազլումեանները, իրենց հնարաւորութեան սահմաններում օգնում են, որ բախտորոշ հանդիպումը կայանայ:

Ճեմալը, իրեն նուէր ուղարկուած կրակարանի վրայ տեսնելով Գալէմքեարեանների կնիքը եւ իմանալով, որ Մելքոնը տեսակցութիւն է խնդրում, ներս է հրաւիրում վարպետին: Զօրավարի ջերմ եւ անմիջական մօտեցումը իր նախապատմութիւնը ունէր (տարիներ առաջ Գալէմքեարեանների պատրաստած կլոր ու օվալաձէւ պնակների, մատուցարանների, տարբեր տեսակի սպասքների մի ամբողջ հաւաքածոյ էր նուէր ստացել, իսկ աւելի ուշ, կուսակալ նշանակուելու առիթով, իր այնթապցի դասընկերներից մի գեղեցիկ ինքնատէր էր նուէր ստացել, որը վարպետ Մելքոնի գործն էր):

Աւանդական սուրճի հիւրասիրութիւնից յետոյ Ճեմալը մեծ համակրանքով լսում է վարպետին: Մելքոնը մտածում էր զօրավարի միջնորդութեամբ տեղաւորուել Հալէպում: Քաղաքը մեծ արհեստաւորական կեդրոն էր, եւ ինքն ու որդիները այստեղ կը կարողանային իրենց ապրուստը վաստակել: Սուրիոյ ու Պաղեստինի անծայրածիր տափաստաններում, պետեհիսների մօտ իրենց արհեստը ինչ հեռանկար կարող էր ունենալ:

Ճեմալը շնորհակալութեամբ հրաժարուում է կրակարանից, իսկ յետագայ փորձութիւններից զերծ մնալու համար առաջարկում է հաստատուել Դամասկոսում իր նստավայրում: Այս առաջարկի ու միջնորդութեան արդիւնքում Գալէմքեարեանները տեղափոխուում են Դամասկոս:

1905-ից Դամասկոսում հաստատուած այնթապցի Պազարպաշեանները օգնում են Մելքոնին տուն գտնելու, տեղաւորուելու հարցում: Սուր Սարուճա շուկայում խանութ են վարձում եւ կարողանում են իրենց աշխատանքով բազմանդամ ընտանիքին կերակրել (ինչպէս յետագայում պատմել է Յարութիւնը, երկար ժամանակ խարկած սիսեռից բացի ուտելու ուրիշ որեւէ բան չեն ունեցել):

Դամասկոսում աշխատած գործերի մասին միայն մի քանի յիշողութիւն կայ: Իրենց հովանաւորին Ճեմալին մի առիթով նուիրել են արծաթեայ քանդակազարդ սպասք, խմիչք հիւրասիրելու համար. «...ափսէ մը վեց արքադադաճեւ բաժակներով, որոնք պիտի լցուէին ափսէին կեդրոնը դրուած աղաւնակերպ սրուակի ընդունարանէն, կտուցէն հոսեցնելով խմիչքը, կափարիչին վրայէն մատի սեղմումով մը»⁷²:

⁷² Կիլիկեան Վ., նշում աշխ., էջ 62:

Մելքոնը մահացել է Դամասկոսում 1918 թուին, դաշնակից զորքերի քաղաք մտնելուց երկու ամիս առաջ:

Մի օր, Յարութիւնն ու Աւետիսը զինուորական ծառայութիւնից խանութ վերադառնալով՝ հօրը գտնում են տարօրինակ վիճակում: Նա տազնասպած ու խուճապահար կրկնում է. «Մելքոն ուստա էօլտի» (Վարպետ Մելքոնը մեռաւ): Պարզում է, որ վարպետը իր կամքից անկախ մուրճով հարուածելիս սխալւում է. աներեւակայելի մի բան: Եւ իսկապէս, Մելքոնը գաղթական հայրենակիցներից տիֆով էր վարակուել եւ կորցրել ինքնատիրապետումը: Չնայած Մելքոն Ուստա Գալէմքեարեանի վայելած բարձր հովանաւորութեանը, նա եւս ցեղասպանութեան զոհերից է անկասկած:

Մելքոնը անվիճելի հեղինակութիւն է եղել ե՛ւ հայերի, ե՛ւ թուրքերի համար: Բոլորին յարգանք պարտադրող բազմամուտ վարպետը սակայն յտրապէս դառնացած էր թուրքերից: 1895-ին նրանք ամբողջութեամբ թալանել էին իր խանութարհեստանոցը: Որոշ ժամանակ անց միջնորդի միջոցով թալանչիները տեղեկացնում են Մելքոնին, որ իր սալերն ու մուրճերը, որոշակի գումարի դիմաց պատրաստ են վերադարձնելու: Վարպետը, բազմասպատիկ զին վճարելով, փրկագնել է իր գործիքները, սակայն եղելութիւնը երբեք չի մոռացել: Իր կեանքի դառն փորձառութիւնը սովորեցրել է չվստահել:

Վարպետ Մելքոնը ևս Եղսան (Եղիաաբէթ Պապոյեան, մահացել է 1949-ին, Հալէպում) ունեցել են եօթ զուակ՝ Աննա, Յարութիւն, Աւետիս, Տուտու, Լուսընթագ, Հոփիսիմէ, Արուսեակ, բոլորն էլ ծնուած Այնթապում:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԼԵՍՔԵԱՐԵԱՆ (1886-1967)

Յարութիւնը Մելքոնի աւագ որդին, հօր ձեռքի տակ է մեծացել: Արհեստը սովորել է նրանից: Ուղղամիտ, պարզ ու համեստ, աշխատասէր, մինչեւ ուղն ու ծուծը արհեստին նուիրուած Յարութիւնի նկարագիրը հօր խանութում է ձեւաւորուել: Փոքր տարիքից ունեցել է որոշ պարտականութիւններ, գործի իր բաժինը: «Նա պատմել է, որ ամէն օր նախքան արեւի մայր մտնելը, փակել են խանութը եւ գնացել տուն: Կարճ ընդմիջումից յետոյ տանն են սկսել աշխատել: Ընդհանրապէս արծաթագործների ու ոսկերիչների պատուէրներն են կատարել: Կապարի շերտի վրայ ամրացնելով արծաթեայ թիթեղի համապատասխան կտորը, Մելքոնը կանացի թասակներ է դրուագել: Իսկ Յարութիւնը գօտիների համար է դրուագազարդ մասեր պատրաստել»⁷³:

Յարութիւնը իր հօրից հաւասարապէս սովորել է եւ կլայագործութիւն, եւ փորագրութիւն, դրուագման ու մուրճի գործի զաղտնիքները: Սակայն համատեղ աշխատանքներում ինքը դրուագումներն է արել:

Յարութիւնը եւ Աւետիսը որոշակի վարպետութեան հասնելուց յետոյ է, որ ունեցել են իրենց կնիքը: Մելքոնն ինքն է տղաների համար կնիք շինել տուել, որպէս «վարպետութեան վկայական»: Իրենց համատեղ աշխատանքով ստեղծուած պղնձեղէնի վրայ Մելքոնը իր կնիքի կողքին դրոշմել է նաեւ որդիներինը:

Հալէպում ապրած տարիներին, վարպետի հիմնական մտահոգութիւնն է եղել իրենց ընտանեկան արհեստի ճակատագիրը: Եղբայրը Աւետիսը, ամուսնացած չէր, զաւակներ չուներ: Իսկ իր երկու որդիները՝ Մելքոնն ու Յովհաննէսը, չնայած փոքր տարի-

⁷³ Յարութիւն Գալեմբարեանի յուշերից: Այն մեզ է փոխանցել Յովհաննէս Գալեմբարեանը 2014 թ. Հալէպում:

քից խանութում էին, Այնթապից տարբեր, բոլորովին ուրիշ մթնոլորտում էին մեծանում: Նոր սերունդը եկամտի նոր եւ անելի հեշտ միջոցներ էր փնտռում: Յովհաննէսը, որ արհեստի մեջ անելի ընդունակ էր, պատրաստում էր վաճառական դառնալ: Յարութիւնը շարունակ կրկնել է որդիներին. «...Սովորեք արհեստը, չէք ուզում մի աշխատեք, քայց սովորեք»⁷⁴:

Աշխատանքից դուրս կեանքը որեւէ իմաստ ու նշանակութիւն չի ունեցել Յարութիւնի համար: Մի առիթով արհեստանոցում տեղադրուած նոր կոճղին (քիւթիւկ) նայելով երանութեամբ ասել է. «Մարդ աշխատի, աշխատի, աշխատի, վերջն էլ կատուի պէս փաթաթուի (ղվրմիշ) քիւթիւկին ու քնի»⁷⁵:

Յարութիւնը ծով համբերութեան եւ աշխատասիրութեան մարմնացում էր: Օլիմպիական հանդարտութեամբ ապրող այս մարդուն ոչ ոք չի տեսել կռուելիս կամ վիճելիս, մինչդեռ առիթները քիչ չէին: Նրա մարդկային նկարագիրը քացայայտող մի հետաքրքրական պատմութիւն է յիշում:

Պատահում է, որ մի հարցով Աւետիսը անելորդ խստութեամբ է խօսում եղբօր հետ: Լռելեայն աշխատանքը շարունակող Յարութիւնը չի հակադարձում, սակայն խորապէս վիրատուրում է: Արծաթէ թէյամանի վրայ գարդարանքներ դրուագող վարպետը շարունակում է իր գործը (թէյամաններին, մատուցարանների եզրերին վարպետը մեծ ճարտարութեամբ բուսական եւ կենդանական կերպարներով համադրութիւններ է դրուագել. թէյամանների մակերեսները ընդհանրապէս ծածկուած են ծաղիկների ու կենաց ծառերի քազմազան տեսակներով, իսկ սրանց միջեւ՝ ընկած յարմար մասերում դրախտային հաւքեր են,

⁷⁴ Յովհաննէս Գալեմբեարեանի յուշերից, գրի առնուած՝ 2014 թ., Հւնլէպ:

⁷⁵ Յովհաննէս Գալեմբեարեանի յուշերից, գրի առնուած՝ 2014 թ., Հւնլէպ:

նապաստակներ, եղնիկներ,՝ առիւծներ եւայլն): Երբ դրուագ-
ուած, վերջացած գործը Աւետիսը ձեռքն է վերցնում, զնրման-
քով նկատում է, որ ոչ մի թռչուն եւ կենդանի չկայ փորագրութի-
նում: Միայն բուսական պատկերներ են, դրախտը «դատարկ» է:
Աւետիսը հասկանում է, որ ինքն է իր կոշտ խօսուածքով մղել Յար-
ութիւնին չորուագել կենդանիներին: Դառնացած սրտով ո՞վ
կարող է եղեմ ու եղեմական հաւքեր պատկերել: Այս թէյամանը,
չնայած իր գեղեցիկ տեսքին, երկար ժամանակ մնում է խանութ-
ում, չի վաճառում, քանի որ գնորդները հիմնականում փո-
րագրութիւնների կենդանապատկերներն էին սիրում:

Տեղին է յիշել այն մասին, որ Յարութիւնի փորագրութիւննե-
րը մեծ բաւականութիւն էին պատճառում գնորդներին, նրանք
զարմանքով հարցնում էին վարպետին, թէ որտեղից է վերցնում
իւր թեմաները, արդեօ՞ք «Տարզան» ֆիլմից են նրանք քաղուած:
Մինչդեռ վարպետը աշխատում էր երեսակայութեամբ, առանց
նախապէս գծելու կամ ինչ որ տեղ նայելու:

Պէտք չէ մոռանալ, որ մեծ պահանջարկ ունէին ոչ միայն եղ-
բայրների աշխատած դրուագագարոյ սպասքները, այլեւ բժշկու-
թեան մէջ օգտագործուող յատուկ թասեր: Պահանջում էին
նաեւ օղի թորելու կաթսաներ: Դեռեւս Այնթապում Մելքոնը
պատրաստում էր սրանց կատարելագործուած ձեւը: Զամաշ-
խարհային Ա. պատերազմից առաջ թորելու կաթսաների հա-
մար Այնթապ են գնացել Սիրիայում նշանաւոր Ճուայէտները:
Խաչակիրներից սերող այս հին՝ ընտանիքը՝ իր նշանաւոր «Ճու-
այէտ» օղին պատրաստել է Մելքոն Ուստայի շինած կաթսանե-
րով: 1985-ին իրենց արդիականացուած գործարանում Ռիմոն
Ճուայէտը Յովհաննէս Գալէմբեարեանին ցոյց է տնուել Մելքոնի
պատրաստած կաթսաներից մնացած մի գեղեցիկ, զմբէթաձեւ
կափարիչ:

Հավելյում Աւետիսի ու Յարութիւնի պատրաստած հսկայ կաթսաներով օղի էին թորում ժամանակի նշանաւոր գործարաններում:

Աւետիսի մահուանից յետոյ, երբ խանութը վաճառուէց, Յարութիւնը անգործ մնաց: Այդ տարիներին Քուէյթում աշխատող որդին՝ Յովհաննէսը անընդհատ յորդորում էր, որ հայրն իր հանգստին նայի: Մինչդէռ ծերացած վարպետը անդադար խնդրել է որդուց, որ մի փոքրիկ խանութ գնի եւ ինքը աշխատելու հնարաւորութիւն ունենայ:

Մահուան մահճում պատկած Յարութիւնի վերջին փափաքն իսկ գործին է վերաբերուել: Հոգեվարքի մէջ, խօսելու անկարող, աջ ձեռքի համաչափ շարժումներով խնդրել է, որ մուրճ տան իրեն:

ԱԻԵՏԻՍ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ (1888-1961)

Աւետիսի՝ Մելքոն Ուստայի կրտսեր որդու մասին բոլորից շատ է գրուել: Այդ գրութիւնների բացարձակ մեծամասնութիւնը նրան ներկայացնում է որպէս հերոս, որպէս Այնթապի ինքնապաշտպանութեան գլխաւոր կազմակերպիչներից մէկը:

Ըստ մեզ հասած տուեալների, Աւետիսն իր նախնական ուսումը ստացել է Այնթապի Ներսէսեան վարժարանում: 13 տարեկանում մտնում է խաւութ, հօր մօտ աշխատելու: Չնայած ուսման ընթացքում ցուցաբերած ընդունակութիւններին եւ ծնողների քաջալերանքին, չի շարունակում ուսումը: Մելքոնի մի շարք արժանիքներ փոխանցուել էին Աւետիսին: Հանրածանօթ վարպետի որդին ուշիմ էր, հնարամիտ ու համարձակ: Ամբողջակամ ու քաջ երիտասարդին թուրքերն իսկ չէին համարձակում նեղութիւն տալ: Փռլոցային բազմաթիւ ընդհարումների

ժամանակ պետք եղած դասը տուել էր նրանց՝ վաստակելով որոշակի վարկ ու համբավ:

Արհեստի մէջ Աւետիսի առաջին փորձերը ներկայացնող գործեր չեն պահպանուել: Տարիներ շարունակ Մելքոնը որդիների հետ է աշխատել եւ դժուար է յստակօրէն գատորոշել Աւետիսի դերը ամբողջի մէջ: Սակայն դատելով Հալէպում պատրաստուած գործերից՝ վստահութեամբ կարող ենք ասել, որ նա մուրճի գործի բացառիկ վարպետ է եղել: Կողմնակի պատմութիւնները վկայում են այն մասին, որ Մելքոնի մահից յետոյ եւ տանը, եւ արհեստանոցում Աւետիսի խօսքն ու կարծիքը վճռորոշ են եղել:

Իր երիտասարդութեան տարիներին եւ ապա տարագրութեան շրջանում, նրան շարունակ հետապնդել են թուրքական իշխանութիւնները: Դամասկոսում այդ հալածանքներից խուսափելու յարմարագոյն ձերը Աւետիսն ու Յարութիւնը գտել են թուրքական բանակում ծառայութեան մտնելով (նրանք ծառայութիւնը անց են կացրել զինուորական մի արհեստանոցում բազմաթիւ այլ վարպետների հետ եւ շատ արագ վերակացուի պաշտօն ստանձնել): Անշուշտ այս հալածանքները խանգարել են նրան որպէս արհեստաւորի:

Հալէպում հաստատուելուց յետոյ, հալածանքներ չկային, սակայն նրա համբաւն ու հեղինակութիւնն էին «խանգարում» աշխատանքին: Բազմաթիւ հարցերով էին դիմում Աւետիսին: Անլուծելի, խրթին հարցերն իրենց լուծումն էին գտնում՝ տեղի տալով նրա հեղինակութեանը: Պատմում են, որ Հալէպի առաջնորդ Տ. Զարեհ Փայալէան Սրբազանն ինքը կնճռոտ ու անլուծելի խնդիրներին վերջ դնելու համար յաճախ հայցուորներին ուղարկում էր Աւետիսի մօտ: Խանութի սենեակներից մէկը ժո-

ղովասենեակի էր վերածուել: Աւետիսի վճռական ու խելացի միջամտութիւնը վերջակէտ է դարձել բազմաթիւ դէպքերում:

Վարպետը բժիշկի խնամքով էր վերաբերում իր գործիքներին եւ չափազանց զայրանում, երբ փորձում էին անհարկի ձեռք տալ: Մուրճերը, սալերը, կոճղը, որի վրայ աշխատում էր, սքրութիւն էին իր համար: Սի անգամ պատանի Յովհաննէսը սխալուել էւ, ոտքը դնելով կոճղին, փորձել էր կօշիկի կապերը կապել: Աւետիսը այնպիսի խստութեամբ է ոտքը վար իջեցնել տուել, որ 75-ամեայ վարպետը առայսօր չի մոռացել զլիսին եկածը:

Աւետիսի բարդ եւ հակասական անհատականութեան մասին է վկայում այն փաստը, որ նա չի ցանկացել արհեստը զարգացնել: Տարիներ առաջ նա Այնթապում, հօր հետ մեծ եռանդով ու խանդավառութեամբ էր դրել իրենց արդիական արտադրամասի հիմքերը: Գերմանիայում պատուիրուած հաստոցների մի մասը նոյնիսկ ստացել էւ գործարկել էր: Սակայն պատերազմից ու Սիրիայում հաստատուելուց յետոյ, նրա սպասկերացումներում կտրուկ փոփոխութիւն է տեղի ունեցել: Ինքը ամուսնացած չէր: Եղբօր որդիներին խորհուրդ էր տալիս ուրիշ գործ գտնել: Ըստ Աւետիսի, իր եւ եղբօր հետ հայրական արհեստը պէտք է «գերեզման մտնէր»:

Աւետիսի կեցուածքի մեջ կարելի է վերծանել այն խոր հիասթափութիւնը, որ ապրում էր ոչ միայն այս քաջակորով մարդը, այլէւ ողջ կիլիկիահայութիւնը: Այն ինչ բնական էր թուում իրենց հարազատ քաղաքում, անիմաստ ու կասկածելի էր Սիրիայում: Հայրենի հողից պոկուած ու դուրս նետուած, նոր եւ օտար միջավայրում ի՞նչ իմաստ ունէր հաստատուելը: Անզլիացիների եւ ֆրանսացիների կողմից զլխովին խաբուած հայութիւնը մի՞թէ այս էր երազում: Նրանք ոչ միայն իրանահաւասարութիւն ու արդարութիւն չբերեցին, այլէւ քանդեցին համակեցութեան այն

եզրերը, որոնք լաւ կամ վատ մշակել էին հայերն ու թուրքերը: Իսկ ոճրագործութիւնների համար ո՛չ Համիտը պատասխան տուեց, ո՛չ երիտթուրքերը, եւ ո՛չ էլ Քեմալը:

Պետք է նշել, որ Աւետիսը մտածել է Հայաստան հայրենադարձուելու մասին: Նա Ներգաղթի Կոմիտէից հայրենիք գնալու եւ տեղում իրավիճակին ծանօթանալու հնարաւորութիւն է խնդրել: Մտածել է մի խումբ արհեստաւորների՝ ձուլագործների, կաղապարագործների, պղնձագործների հետ տեղափոխուել Խորհրդային Հայաստան: Իր ծրագրի մասին նա գրել է Ամերիկաբնակ Այնթապցիների Միութեան (ԱԱՄ) կեդրոնական վարչութեանն ուղղուած նամակում. «Պաշտօնական շրջանակներու իմացուցինք թէ արհեստաւոր մը, արուեստագէտ մը իր շրջապատի արհեստաւորներով տանելով միայն օգտակար կրնայ ըլլայ Հայաստանի Հանրապետութեան: Մինչդեռ իրենց տարած եղանակով՝ 10% տոկոս օգտակարութիւն մը չ'ունենար տարած անձը»⁷⁶: Այցելութեան առաջարկը բնականաբար մերժուել է, եւ Աւետիսը նախընտրել է մնալ Հայկալում:

Զմոռանանք, որ Աւետիսի քրոջ որդին՝ Լեւոն Պէրերեանը, 1949-ին հայրենադարձուեց: Իր քեռիներից սովորած արհեստը մեծ նշանակութիւն ունեցաւ նրա ապագայի համար: Լեւոնը երկար տարիներ ղեկավարել է Երեւանի գեղարուեստական արտադրութիւնների կոմբինատի պղնձագործութեան բաժինը:

1958-ին պարզուում է, որ Աւետիսը անբուժելի հիւանդ է: Բժիշկները, Լիբանանում կատարուած գործողութիւնից յետոյ ընդամենը մի քանի ամսուայ կեանք կանխատեսեցին: Մահուան ստուերը Աւետիսին ծանօթ էր վաղուց: Այն իր բարդ կեանքի

⁷⁶ Հատուածը վերցուած է Ամերիկաբնակ Այնթապցիների Միութեանն ուղղուած նամակի անտիպ սեւագրից: Բազմաթիւ փաստեր պարունակող այս նամակը գրուել է 1947 թ. Սեպտեմբերի 14-ին Հայկալում:

մշտական ուղեկիցն էր եղել տարիներ շարունակ: Թե՛ հերոսամարտի տարիներին և թե՛ յետագայում բազմաթիւ մահալիրոճեր են կատարուել նրա դէմ: Կերակուրի միջոցով թունաւորելու մի քանի անյաջող փորձ է եղել Հալէպում հաստատուելուց յետոյ իսկ:

Հալէպահայութիւնը ազգային, փառաշուք յուղարկաւորութեամբ է հրաժեշտ տուել իր հերոսին: Նրա գերեզմանի վրայ յետագայում կառուցուել է Այնթապի հերոսամարտի յուշարձանը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ (1939-2015)

ՄԵԼՔՈՆ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ (1935-1995)

Հայրական խանութ-արհեստանոցի հետ կապուած Յովհաննէսի ամենավաղ յիշողութիւնները մանկական տարիքից են: Երբ դեռ 10 տարեկան էր, չունէր խանութից դուրս գալու իրատունք: Հօր և հօրեղբօր մօտ նստած, ցուցափեղկի ետեւից հետեւում էր փողոցի եռուզեռին, այլատարազ մարդկանց, բեռնաւորուած ջորիներին ու աղմկոտ տրամվայներին: Ջոյգ մուրճերը միալար հարուածում էին և հնչող մետաղաձայն երաժշտութիւնը այնքան հարազատ էր, որ Յովհաննէսը քնում էր աթոռին նստած, անհոգ և մանկական քնով:

Հօրեղբայրը, որը քայլող լեկենտ էր, իրեն երբեմն տանում էր կազոզ խմելու: Խանութակի վերջաւորութեան՝ Թիլէլի սկզբին (այնտեղ ուր գմբէթաւոր մի յուշարձան է կանգնած այսօր) մի խանութ կար, որտեղ լիմոնատ, կազոզ, թամբ հընտի⁷⁷ էին պատրաստում: Խանութպանը յոյն էր, հօրեղբօր բարեկամը (նա էր պատրաստել կազոզ լցնելու մեքենան): Յովհաննէսը խմում

⁷⁷ Թամբ Հընտի – Արեւելքում ընդհանրացած գովացուցիչ ըմպելիք՝ պատրաստուած հնդկական արմաւից:

էր համով զովացուցիչն ու զմայլում աւագանում լողացող ձկնիկներով:

Խանտակի խանութը իրականում, ոչ թէ խանութ էր, այլ մի ամբողջ տուն, միջանցքով, սենեակներով, բակով, ջրհորով, եւայլն: Հայրն ու հորեղբայրը այս տունը վարձել էին 1924-ին, երբ թողնելով Դամասկոսը՝ հաստատուել էին Հալէպում: Ամբողջ շէնքը, որ կանգուն է առայսօր, պատկանում էր Սումմաքիյէներին: Յովհաննէսը շատ լաւ գիտէր, թէ խանութում ով ինչով էր զբաղուում: Երկու մեծ կոճղ էր դրուած, մէկը՝ հօր, միւսը՝ հորեղբոր համար: Սրանցից բացի կար եւս մի փոքր կոճղ, որի վրայ հայրը նախշագարդերն էր դրուագում: Իրեն աշխատանք չէր վերապահուած: Երբեմն ուղարկում էին Պարսումեանների մօտակայքում գտնուող խանութ՝ ձուլածոյ մասերի յետեւից:

Յովհաննէսը մանկութեան տարիներին մօր հետ երբեմն եկելդեցի էր գնում: Կիրակնօրեայ այդ ուղեւորութիւնները տնից դուրս գալու առիթ էին: Մակայն պատարագն անվերջանալի ու ձանձրալի մի բան էր թւում նրան: Ամէն վայրկեան պատրաստ էր մօր կողքից պոկուելու եւ բակում իր հասակակիցների հետ վազվզելու: Բայց մայրը գտել էր որդու ուշադրութիւնը զբաղեցնելու ձեւը: Օրինակատարութիւնը դեռ չսկսած, տիկին Սանդուխտը թեքում էր որդու ականջին ու փսփսում. «Տե՛ս, ջրի սափորն ու կոնքը տատայիդ գործերն են»⁷⁸: Յովհաննէսը մի որոշ ժամանակ հետեւում էր կոնքի ու սափորի հետ կապուած անցուղարձին, ապա կամաց-կամաց ընկնում ձանձրոյթի գիրկը:

Մէկ էլ սարկաւագներն էին սկսում բշտնները շխշխկացնելով տեղաշարժուել: Մայրը նորից շշուկով փսփսում էր ական-

⁷⁸ Յովհաննէս Գալեմբարեանի յուշերից, գրի առնուած՝ 2014 թ., Հալէպ:

ջին. «Քշոցները կը տեսնի՞ս, Մելքոն տատայիդ գործն են»⁷⁹: Այսպես, ժամանակ առ ժամանակ, եկեղեցուց դուրս պրծնելուն պատրաստ Յովհաննէսի համար սրբազան պատարագը իմաստ էր ստանում: Պատարագի սկիզբը, բուրվառները, մոմակալները, խնկամանները, գրեթէ ծիսական բոլոր առարկաները Մելքոն Ուստայի գործերն էին եւ բերուած էին Այնթապից:

Յովհաննէսը «տատայի» գործերը տեսնելու սիրոյն զիջում էր նստել եւ վերջում ցնծութեամբ դուրս պրծնում կամարակապ սրահից:

Յովհաննէսին մօտ չէին թողնում գործին: Տղան բազմաթիւ անգամներ մերժուել էր: Հերթական անգամ, խանդավառուելով արծաթի վրայ հօր վարպետ փորագրութեամբ, խնդրեց հօրեղբօրը, որ գործ տան իրեն: Երկար հակաճառութիւններից յետոյ Յարութիւնը, գործը փճացնելու վտանգը աչքի առաջ ունենալով, թողեց, որ Յովհաննէսը դրուագումների միջեւ ընկած մասերը վերանայի եւ եթէ մոռացուած տեղեր կան, ամբողջացնի համապատասխան դալամով: Առաջին փորձը յաջող անցաւ: Յարութիւնը սկսեց նախշերի միջնամասերում դիտատրեալ «մոռանալ» անփայլ մակերեսները (այս հնարքը, որ «դում» են անուանում, աւելի ցցուն է դարձնում զարդաձեւերի փայլուն մասերը):

Տանը մօր եւ քոյրերի մօտ Յովհաննէսը հպարտանում էր, որ հօր բացթողումներն ինքն է լրացնում: Աստիճանաբար դումի գործը լիովին վստահեցին Յովհաննէսին: Երբ սկսեցին նաեւ վճարել աշխատանքի համար, ուրախութեանը չափ չկար: 25 դուրուշ էր առաջին աշխատավարձը: Խանութ մտնող-ելնողները հիանում ու քաջալերում էին նորաթուխ արհեստատրին: Այդ տարիներին թուրքերէնն էր բոլորի շուրթերին եւ թուրքերէն

⁷⁹ Յովհաննէս Գալեմբարեանի յուշերից, գրի առնուած՝ 2014 թ., Հալկալ:

ասացուածքն էլ տեղին էր գալիս՝ ժպտալով ասում էին. «Չայիր-
դակղէն էթմէ» (Իսկական սերմից ծնուած):

Մուրճով աշխատանքը աւելի դժուարութեամբ սովորեց: Ան-
փորձ երեխայի համար ամենադժուարը մետաղի թերթը, սալի
վրայ ճիշդ թերութեամբ դնելն էր: Աննշան անճշդութիւնը թր-
թոացում էր առաջացնում եւ ցաւեցնում ձեռքը, փուչիկներ էին
յայտնուում ափին: Մուրճի գործը սովորելու համար եղել է մի
պահ, որ մտածել են Յովհաննէսին աշակերտութեան տալ իրենց
վաղեմի բարեկամ Յովհաննէս Պօշկէզէնեանի մօտ (ընդհանրա-
պէս պատուերներով ծանրաբեռնուած, մեծաքանակ գործերով
աշխատող արհեստանոցներում աւելի արագ են սովորում ար-
հեստը): Սակայն այս ծրագրից հրաժարուում են, քանի որ հօր
կարծիքով նման արհեստանոցում Յովհաննէսը արհեստից աւե-
լի հայիոյախօսութիւն էր սովորելու:

Այնուամենայնիւ Յովհաննէսը յիշում է, որ 12 տարեկանում
թիթեղը «հաւաքել» գիտէր (դէշիբմա, rasing): Արհեստի մէջ հմ-
տանալու ցանկութիւնը մեծ էր, հայրը ուրախանում էր որդու յա-
ջողութիւններով: 10-11 տարեկան պատանին յաճախ էր հար-
ցնում հօրը, թէ ե՞րբ է ինքը վարպետ դառնալու: Հայրն ասում էր,
որ մի օր ինքդ կը նկատես, որ արդէն վարպետ ես. ճիգով արած
գործերդ ինքնաբերաբար ստացում են: Նա ասում էր, որ եթէ
արածդ սխալները ինքնուրոյն կարողացար շտկել, ուրեմն վար-
պետ ես: Եւ իսկապէս, թերութիւնները նկատելը, նրանց առա-
ջացման պատճառները կոռահելը փորձառութեան ուրեմն նաեւ
վարպետութեան նշաններ են:

Սակայն կեանքը արագ փոխուում էր, արհեստով ընտանիք
պահելը դժուարանում: Յովհաննէսի մայրը ցանկանում էր, որ
որդին իր հօր՝ նշանաւոր Յովհաննէս Պիւլպիւլեանի պէս վաճա-
ռական դառնայ:

Իսկ հորեղբայրը, որի կեցուածքը թերեւս ամենաորոշիչն էր, համոզուած էր, որ տոհմական արհեստը, շարունակութիւն չպէտք է ունենայ: Ապագայի նկատմամբ այս անորոշութիւնը պատճառ դարձաւ, որ պատանի Յովհաննէսը մի շարք արհեստներ փորձի: Մի կարճ ժամանակ (1949-1950) Հալէպում նշանաւոր Կիւլպէնկի լուսնակարչատանը՝ տիկին Ռամելայի մօտ աշխատեց: Որոշ ժամանակ դեղարաններին դեղ էր բաժանում: Ծանօթները զարմանում էին: Մի անգամ «Նազարեան» դեղարանի աշխատող Տիգրանը հարցրեց. «Տղաս, ինչո՞ւ հօրդ գործը չես շարունակում»⁸⁰:

Հօրեղբօր հիւանդութիւնը պատճառ դարձաւ, որ 1957-ի ամբարնը Յովհաննէսը վերադառնայ խանութ: Հայրը օգնող ձեռքի կարիք ունէր: Յովհաննէսը հասկանում էր, որ գործը պէտք է մեքենայացնել, այլապէս շուկայում մրցակցութեանը չէին դիմանայ: Իրենք շատ էին ուշացել: Հալէպում դեռեւս 1930-ին սկսել էին հաստոցի վրայ պղնձեղէն պատրաստել:

Յաւօր, Եգիպտոսի եւ Սիրիայի միատրումը գլխիվայր շրջեց երկրի տնտեսական կեանքը: Անգործ, պարտքերի տակ կքած խանութում նստելը անիմաստ էր թւում: 1959-ին Յովհաննէսը, թողնելով սիրելի քաղաքն ու արհեստը, փոխադրուում է Քուէլթ, արտագնայ աշխատանքի:

Շուրջ 15 տարի ճաքոնական եւ ամերիկեան ընկերութիւններում աշխատելով՝ Յովհաննէսը որոշ բարեկեցիկ վիճակի էր հասել, ամուսնացել, ընտանիք կազմել, կարողանում էր օգնել հարազատներին: Այդ տարիներին, գործի բերումով նա այցելել է մի շարք երկրներ: Առիթից օգտուելով՝ ընկերութեան գործերի

⁸⁰ Յովհաննէս Գալէսքեարեանի յուշերից, գրի առնուած՝ 2014 թ., Հալէպ:

կողքին, հետաքրքրուել է տեղացի արհեստատրներով: Հաւաքել է արհեստին վերաբերող արժէքաւոր գրադարան:

Մի շարք բարեկամներ, հարազատներ արհեստի մասին խօսակցութիւններով, ժամանակ առ ժամանակ ալեկոծում էին Յովհաննէսի սիրտը: Կրտսեր հորաքոյր Արուսեակի խօսքը եւս ծանր բարոյական բեռ էր դարձել նրա ուսերին: Ըստ Արուսեակի՝ Գալէմբեարեան ընտանիքի ժառանգ կարելի էր լինել միայն արհեստը շարունակելու պայմանով:

Յովհաննէսը կայացնում է սպասուող որոշումը: Նախ փորձում է Քուվէյթում արհեստանոց հիմնել: Այս ծրագիրը անյաջողութեան է մատնւում եւ ամէն բան նորից սկսելու վճռականութեամբ նա ընտանեօք վերադառնում է Սիրիա:

1973-ին չկային ո՛չ հայրը, ո՛չ հորեղբայրը: Վաճառուած էր Խսնտակ փողոցի նշանաւոր խանութը: Վերադարձից յետոյ առաջին ամիսներին Յովհաննէսը աշխատել է Պարսումեանների խանութում: Պարսումեանների հետ բարեկամութիւնը գալիս էր Այնթապից: Սերնդէ սերունդ Պարսումեաններն էին պատրաստում անհրաժեշտ ձուլածոյ մասերը: Այս աւանդոյթը պահպանուել էր նաեւ: Հալէպում: Սակայն Ռուբէնի հետ փոխյարաբերութիւնները աւելին էին, քան արհեստատրական գործընկերութիւնը: Ռուբէն Պարսումեանի հետաքրքրութիւնների լայն շրջանակը, արհեստի նկատմամբ նախանձախնայի վերաբերմունքը, հայ արհեստագործութեան առանձնայատկութիւնների, նրա գեղարուեստական արժանիքների իմացութիւնը մեծ ազդեցութիւն է թողել Յովհաննէսի վրայ: Արհեստին վերաբերող հարցերի քննարկումները հենց Ռուբէնի հետ էին տեղի ունենում:

Չանցած մէկ տարի, իր հորաքրոջ օժանդակութեամբ աշխատանոց է հիմնում Ազգային Առաջնորդարանի գետնայարկի խանութներից մէկում: Երկարամեայ ընդմիջումից յետոյ գործը

վերսկսելը մեծ համարձակութիւն էր պահանջում: Ամէն քայլափոխի զգացում էր փորձառու հօր եւ հօրեղբօր պակասը: Վարպետ Յովհաննէսը այդ օրերը բնութագրում է իր նախահօր՝ Կարապետի սիրած ասացուածքով. «Առանց վարպետի գործը մեղք է»:

Հալէպում անմիջապէս իմանում են, որ Յովհաննէսը վերադարձել է եւ հօր գործն է շարունակում: Վարպետը իր առաջին գնորդներից Եուսուֆ Քեօշկերեանին է յիշում, որի համար մեծաքանակ պատուէրներ էր աշխատում: Յատկապէս լաւ էին վաճառում խմորեղէնի ու՝ պաղպաղակի արծաթեայ ամանները, օվալաձեւ մատուցարանները: Աստիճանաբար մօտենում էր յաջողութիւնը: Պատուէրների պակաս չկար: Նա աշխատում էր ոչ միայն Հալէպի նշանաւոր ընտանիքների, այլեւ Սուրիոյ նախագահական պալատի, Յորդանանի եւ Յունաստանի թագաւորների համար:

Աշխարհատարած հայոց եկեղեցու բոլոր թեմերում առայսօր փնտրուած են վարպետ Յովհաննէսի պատրաստած արծաթեայ եւ պղնձէ սպասքներն ու զոււազանները, քշոցներն ու սկիհները, եւայլն: Շուրջ երեք տասնամեակ տեւած նրա բեղմնաւոր աշխատանքը անկասկած մեծ ներդրում է հայ արծաթագործութեան մէջ:

Այս շրջանում է, որ գործի մէջ ներգրաւուեցին աւագ եղբայրը՝ Մելքոնը եւ ապա որդին՝ Արթունը: Մելքոնը եւս, մի որոշ ժամանակ հայրական խանութում աշխատելուց յետոյ հեռացել էր, փորձել բազմաթիւ արհեստներ: 1962-1985 ինքը եւս աշխատել է Քուվէթում որպէս երկաթագործ: Վերադառնալով Հալէպ, 1987 թուականից մինչեւ իր կեանքի վերջը Մելքոնը աշխատել է եղբօր՝ Յովհաննէսի վերաբացած արհեստանոցում: Հիմնականում դրուագման գործեր է կատարել:

1995-ին, երբ մեռաւ Մելքոնը, գործը վերելքի մէջ էր: Յովհաննէսի հետ էր աշխատում ոչ միայն Արթունը, այլև քրոջ որդին՝ Աւետիք Պայրամեանը: Շեշտուած համակրանքով է յիշում վարպետը իր գործընկերներից ուրֆացի Յարութին Ղարիպեանին: Յարութինը շուրջ 10 տարի աշխատել է Գալէմբեարեանի մօտ, մեծ հմտութեամբ մասնակցել է դրուագման աշխատանքներին:

Ամէն ինչ զլխիվայր շուտ եկաւ, երբ ծանր, երկարատեւ հիւանդութիւնից յետոյ երիտասարդ հասակում մահացաւ Յովհաննէսի որդին՝ Արթունը:

ԱՐԹՈՒՆ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ (1971-2008)

Յովհաննէսի որդին՝ Արթունը ծնուել էր Քուվէթում: Երբ ընտանիքը վերահաստատուեց Հալէպում, նա շատ փոքր էր: Դպրոց գնաց, հասակ առաւ Հալէպի հայաշունչ մթնոլորտում: Փոքր տարիքից սիրում էր հօր խանութ գնալ, յատկապէս հետաքրքրուում էր դրուագումներով: Դեռ 5-6 տարեկան էր, երբ օգտուելով հօր զբաղուածութիւնից, պողպատէ սալի վրայ կապարի մի կտոր սկսեց մուրճով ծեծել: Յետոյ պարզուեց, որ ձուլման համար պատրաստուած զարդաձեւի մայր օրինակն էր փճացրել: Աւետիս հօրեղբօր աշխատանքը փճացած տեսնելով՝ վարպետ Յովհաննէսը խիստ զայրացաւ, սակայն նաեւ հասկացաւ, որ Արթունը աշխատանքի նկատմամբ հետաքրքրութիւն ունի: Պղնձի փոքրիկ կտորների վրայ փորագրութեան փորձերը լաւ արդիւնք տուեցին: Կարճ ժամանակ անց, Արթունը գործի մէջ իր տեղն ու դերը ապահովեց: Ինչպէս յիշում է Յովհաննէսը, տղան ուշադրութեամբ ու հաճոյքով էր հետեւում իր մուրճով աշխատանքին, սակայն երբեւէ սովորելու ցանկութիւն չի ցուցաբերել: Իսկ դրուագումները անում էր մեծ սիրով ու բծախնդրութեամբ:

Դպրոցը դեռ չաւարտած՝ հօր կարեւոր գործընկերն էր: Արթունի դրուագազարդումները մեծ յաջողութեամբ էին ընդունում:

Ինչպէս արդէն նշուեց, Արթունը վաղածամ՝ 2008 թուին կնքեց իր մահկանացուն:

Վերջացնելով մեր խօսքը Գալէմբեարեան ընտանիքի մասին, նշենք որ Յովհաննէսի կտակի համաձայն ընտանիքին պատկանող առարկաներ՝ պղնձեղէն, գործիքներ, լուսանկարներ, փաստաթղթեր, գրքեր, փոխադրուեցին Հայաստան: Այս օրերին (խօսքը՝ 2017թ. -ի մասին է) շուրջ 700 անուն առարկայ ցուցադրում է Սարդարապատում, Հայոց Ազգագրութեան Թանգարանում:

Միաժամանակ պէտք է նշենք, որ յիշեալ ցուցադրութեան մի հատուածը ներկայացնում է նաև Գալէմբերեաններին ժամանակակից այլ սիրիահայ վարպետների գործեր:

Արհեստագործութեան գիտակ եւ մեծ երախտաւոր Ռուբէն Պարսումեանը տարածաշրջանում աշխատած հայ արհեստաւորների մի պատկառելի անուանացանկ է կազմել (986 անուն)⁸¹:

Այս ցանկը մեզ իրաւունք է տալիս տուեալ ժամանակահատուածում եւ տարածաշրջանում պղնձագործութեան մասին խոսել որպէս «հայկական արհեստի» կամ մի բնագաւառի մասին, որտեղ հայ արհեստաւորների ներդրումը ծանրակշի է:

Մետաղը կոփելու միջոցով մշակելը հնագոյն ժամանակներից եկող ձև է: Մեզանում այն աստիճանաբար մոռացւում է՝ վերածուելով հագուազիտ երեւոյթի: Յավալի կլինի, եթէ մի օր պարզուի, որ այլևս հայ վարպետներ չունենք: Մեր կարծիքով մետաղամշակութեան այս հինատուրց ձևը պէտք է ծրագրուած

⁸¹ Թորմաճեան Հր., Գալէմբեարեաններ. Այնթապ-Դամասկոս-Հալէպ, Հալէպ, Հրատարակութիւն Բերիոյ Հայոց Թեմի, 2016, էջ 277:

սովորեցնել երիտասարդներին: Թե՛ կիրառական եւ թե՛ տեքնո-
րաբիւ կոփածոյ առարկաները անսպախան իրենց տեղը կը
գտնեն ժամանակակից կեանքում:

ИЗ ИСТОРИИ СИРИЙСКО-АРМЯНСКОГО РЕМЕСЛА. СЕМЬЯ ГАЛАМКЕРЯНЫ (Резюме)

РАЗДАН ТОКМАДЖЯН

Научный сотрудник

Института археологии и этнографии НАН РА

История семьи Галамкерян насчитывает около 200 лет. Их предки в конце 18-го века пришли из Восточной Армении, из Джульфи и обосновались в Айнтапе. Первым мастером этой семьи был лудильщик Тирацу (дьякон) Мелкон. Его сын Карапет Халфе (1812-1885 гг.) был лудильщиком и чеканщиком одновременно. Из его сыновей Уста (мастер) Мелкон Галамкерян (1859-1918 гг.) был величайшим мастером армянского медного ремесла.

Он блестяще владел мастерствомковки и чеканки. В семье он первым применял печать.

Мастерами следующего поколения были сыновья Мелкона – Арутион (1886-1967 гг.) и Аветис (1888-1961 гг.). Ремесло продолжил сын Арутиона Ованес (1939-2015 гг.). Рядом с ним работали брат Мелкон младший (1935-1995 гг.) и сын Артун (1971-2008 гг.).

Они развернули деятельность в трех городах: до депортации армян 1915 г. – в Айнтапе, в Дамаске – до 1924 г., и после в Алеппо – до 1961 г. Сохранились многочисленные работы, в частности, работы Мелкона, Арутиона, Аветиса, а также работы Ованеса.

На протяжении десятилетий они работали на Армянскую апостольскую церковь. Истории и свидетельства дают нам богатый материал об их жизни и деятельности.

Методы и формы применяемые ими в ремесле в дальнейшем стали примером для других мастеров.

Выставка работ этой семьи и ряда других мастеров сирийских армян открылось в Сардарпате, в Музее Армянской этнографии, 26 мая, 2017 г.

**FROM THE HISTORY OF THE SYRIAN-ARMENIAN CRAFT.
KALEMKIARIAN EXTENDED FAMILY
(Summary)**

HRAZDAN TOKMAJIAN

Researcher at the
Institute of Archaeology & Ethnography, NAS RA

The story of Kalemkiarian family, which stretches for about 200 years, is the story of several generations of talented coppersmiths. From one generation to another, they developed their skills, mastered new techniques and created new models. As a clear sign of mastery, they have received orders and delivered many skillfully crafted handiworks for the Armenian Church, some of which are still preserved. Their contribution to the field has been vital for the education of new generations of artisans.

In late 18th century, the forefathers of Kalemkiarians migrated from Nakhjjevan, in Eastern Armenia, to Ayntab, in the Ottoman Empire. The first artisan of the family was Deacon Melkon. He was a tinsmith or Kalayji, in Ottoman Turkish. His son Garabed Khalfe (1812-1885) (khalfe means successor in Arabic) succeeded his father and became tinsmith, as well as coppersmith. The tradition continued through

Melkon Usta (1859-1918), Garabed's son, who became one of the most respected Armenian coppersmiths. He was known as "Usta," which in Ottoman Turkish means master. He developed new techniques and designed new models. Also, for the first time in their family history, he used a punch mark.

The political upheavals in the Middle East, especially the mass deportation of Ottoman Armenians to the Syrian deserts, forced the next generation of masters to relocate. In 1915, Melkon Usta with his two sons, Harutyun (1886-1967) and Avedis (1888-1961), moved from Ayntab to Damascus and continued their work. Eventually, the family settled in Aleppo. In 1924, Harutyun and Avedis opened their workshop on the famous Al-Khandaq street, that hosted many craftsmen. The last of Kalemkiarians, who was specialized in this profession, was Hovhannes (1939-2015), who passed away in Aleppo, and his son, Artun, who passed away in 2008, because of illness.


The works of Kalemkiarian and other Syrian-Armenian artisans were being exhibited at Sartarabat National Ethnographic Museum, in 2017.



Նկար 1. Աւետիս Գալեմքեարեան



Նկար 2. Կրակարան,
գործ՝ Մելքոն Ուստայի



Նկար 3. Մեքոն Ուստայի կնիքը



Նկար 4. Յովհաննես Գալեմբարեան

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳԱՂՏՆԻ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆՑ
ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐՈՒՆ ՄԷՋ (1945-1991)

ԳԷՈՐԳ ԵՍԶՐՃԵԱՆ

պ.գ.թ.

<gevorgyazichyan@gmail.com>

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություններու Միութիւնը 20-րդ դարու գերտերութիւններէն մէկն էր: Ի շարս աշխարհի զանազան ազգերու, հանրոյթներու ու պետութեանց, ան մօտէն կը հետեւէր նաեւ սփիւոքահայութեան մէջ տեղի ունեցող իրադարձութեանց, երբեմն՝ ուղղակիօրէն, իսկ աւելի յաճախ՝ անուղղակիօրէն կ'ազդէր այդ իրադարձութեանց եւ անոնց զարգացումներուն վրայ: Այս հետաքրքրութիւնն ունէր իր տրամաբանական բացատրութիւնը. նախ՝ Խորհրդային Հայաստանը մաս կը կազմէր այդ մեծ պետութեան, երկրորդ՝ սփիւոքահայ զաղութները, սփռուած ըլլալով Խ. Ս. Մ.-ի համար կենսական շահերու տարածք նկատուող երկիրներու մէջ (յատկապէս՝ Մերձաւոր եւ Միջին Արեւելքի ու Եւրոպայի երկիրներ), կրնային ծառայել խորհրդային ծաւալապաշտական ծրագիրներուն եւ /կամ արեւմտեան հակախորհրդային պետութեանց ձեռքին գործիք դառնալ: Կար նաեւ սփիւոքի ազգայնական նկատուող կազմակերպութեանց, մասնաւորապէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ու – 1975-էն սկսեալ – Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի գործունէութեան միջոցով ազգային զգացումներու ու յատկապէս Հայ Դատի ուղղութեամբ հայրենաբնակ հայութեան «զրգոումէն» խորհրդային կեդրոնական իշխանութեանց յոյժ զգուշաւորութիւնը: Մոսկուան քաջ կը

գիտակցեր, թե Խ. Ս. Շ. Մ.-ի մէջ անլոյծ մնացած ազգային հարցին հրահրումը կրնայ քայքայել հօգր պետութիւնը, ինչպէս որ եղաւ 1980-ականներու վերջին եւ 1990-ականներու սկիզբին:

Խորհրդային պետութիւնը արտասահմանէն տեղեկութիւններ կը քաղէր զանազան միջոցներով: Անոնցմէ կը կարելորուէր սեփական հետախուզութիւնը, որ կը գործէր, ի շարս ուրիշ ծածկոյթներու, դիւանագիտական քօղի տակ: Աշխարհով մէկ սփռուած խորհրդային դեսպանատուներուն մէջ կցորդի, խորհրդականի, առաջին, երկրորդ, երրորդ քարտուղարի, հիւպատոսի եւ ուրիշ դիւանագիտական կոչումներով գործող Պետական Անվտանգութեան Կոմիտէի, Խորհրդային Բանակի շէտախուզութեան Գլխաւոր Վարչութեան եւ խորհրդային հետախուզական ուրիշ կառոյցներու աշխատակիցները պարբերաբար զեկուցագիրներ, տեղեկանքներ ու հաշուետուութիւններ կը ներկայացնէին Մոսկուայի իրենց վերադասին: Հայկական զգալի ներկայութիւն ունեցող երկիրներու խորհրդային դեսպանատուներուն մէջ կը գործէին հայազգի դիւանագետներ, որոնց մեծագոյն մասը խորհրդային գաղտնի սպասարկութեանց աշխատակիցներ էին: Բաւարարուինք նշելով միայն Սուրիոյ եւ Լիբանանի առնչուած մէկական անուն.

Մարտիրոս Մարգիսի Մելքումեան (1 Ապրիլ 1916, Զունապատ /Ոսկանապատ գիւղ, Ելիզավէթպոլի նահանգ, յետագային՝ Խակարի շրջան, գրաւեալ Արցախ – 11 Նոյեմբեր 1983, Երեւան) – Պ. Ա. Կ.-ի գնդապետ: 1945-ի Յունուարին կը յիշատակուի իբրեւ Խ. Ս. Շ. Մ.-ի Թեհրանի դեսպանատան կցորդ: 1947-էն 1973 ծառայած է Հ. Խ. Ս. Շ.-ի պետական անվտանգութեան համակարգին մէջ: Եղած է Գարեգին Նժդեհի հարցաքննիչներէն՝ Հ. Խ. Ս. Շ.-ի Պետական անվտանգութեան ժողովրդական կոմիսարիատի Երեւանի բանտին մէջ: 1950-1952-ին աշխատած

է հետախուզութեան բաժինի պետի տեղակալ, «իսկ 1957-1962 թթ. որպէս նոյն բաժնի պետ: Դիւանագիտական ծածկապաշտպանութեամբ 1952-1954 թթ. աշխատել է Վիեննայում: Մեկնել է կարճաժամկետ գործուղումների Կիպրոս (1957 թ.), Լիբանան եւ Սիրիա (1959 թ.), Գահիրէ (1961 թ.): 1962-1967 թթ. աշխատել է Դամասկոսում՝ Սիրիայում Խ. Ս. Չ. Մ. դեսպանութեան առաջին քարտուղարի պաշտօնի ծածկապաշտպանութեամբ»⁸²: Դիւանագիտական աշխատանքի արարտէն անմիջապէս ետք՝ 1967-էն 1973 աշխատած է Սփիւրքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի նախագահի տեղակալ, 1980-էն մինչեւ մահը՝ Չ. Խ. Ս. Չ.-ի Արտաքին գործոց նախարարութեան Արարողակարգային-հիւպատոսական բաժնի վարիչ: Որոշ տարիներ եղած է նաեւ Հալէպի մէջ Խ. Ս. Չ. Մ.-ի գլխաւոր հիւպատոսը:

Համանման է պարագան Լիբանանի մէջ գործած Պետրոս Պետրոսեանին, որ 1974-ին Մելքումեանին յաջորդած է Սփիւրքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի նախագահի տեղակալի պաշտօնին մէջ: Ան իր յուշերուն մէջ, «Գործուղում Լիբանան: Մենամարտն Արեւմուտքը տանուլ էր տուել» վերնագրուած բաժնին սկիզբը կը գրէ. «1959 թուականին Լիբանան գործուղուելուց առաջ, կենտրոնն⁸³ իմ առջեւ խնդիր դրեց ստեղծել գործակալական աշխատունակ ցանց, որն ի վիճակի կը լինի արթիւ (եռանդուն – Գ. Ե.) կերպով զբաղուել քաղաքական, ռազմական, տնտեսական եւ այլ տեղեկութիւնների հայթայթմամբ ու տարածաշրջանի հիմնախնդիրների լուսաբանմանն համար կարելոր նշանակութիւն կ'ունենայ:

⁸² Մարգսեան Ա. Ե., Հետախուզութիւն եւ հսկահետախուզութիւն. Հայկական հետք, «Ամարաս» հրատ., Երեւան, 2005, էջ 166:

⁸³ Ակատի ունի Պետական անվտանգութեան կոմիտէի մոսկովեան կեդրոնը:

Բաւական է ասել, որ Պէյրութում աշխատած տարիներին⁸⁴ ինձ յաջողուեց հաւաքագրել մեծ թուով գործունեայ եւ պիտանի գործակալների, որոնք տեղեկութիւն էին հաղորդում ոչ միայն տարածաշրջանի, այլեւ խորհրդային հետախուզութեանը հետաքրքրող այն ժամանակուայ գլխաւոր երկրների (Ա. Մ. Ն., Անգլիա, Ֆրանսիա) վերաբերեալ»⁸⁵:

Խորհրդային դեսպանատուներէն, դիւանագիտական միւս ներկայացուցչութիւններէն, խորհրդային անվտանգութեան աշխատակիցներէն Մոսկուա առաքուող փաստաթուղթերէն անոնք, որոնք կը վերաբերէին հայկական մեծաթիւ ներկայութիւն ունեցող երկիրներուն, պատճէնուած կամ կրկնօրինակուած, կը դրկուէին նաեւ Հ. Խ. Ս. Հ.-ի արտաքին գործոց նախարարութիւն: Վերջինս, զանոնք իր կարգին պատճէնելով, կը դրկէր Հայաստանի կոմունիստական կուսակցութեան Կեդրոնական կոմիտէ, յաճախ նաեւ Հ. Խ. Ս. Հ.-ի Գերագոյն խորհուրդի նախագահութիւն եւ Նախարարներու խորհուրդ, որպէսզի վերջիններուս ղեկավարներն ալ տեղեկացուին հայկական զաղութներ ունեցող այդ երկիրներու ներքին խմորումներուն: Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավար մարմիններու եւ Հ. Ա. Հ. Գ. Բանակի գործունեութեան վերաբերող փաստաթուղթերու պատճէնները, որպէս կանոն, կը դրկուէին նաեւ Հ. Խ. Ս. Հ.-ի Պետական անվտանգութեան կոմիտէին: Այս տեսակէտէն, Հայաստանի ազգային արխիւը կը նկատուի բազմաթիւ երկիրներու 20-րդ դարու պատմութեան փաստաթղթերու կարեւոր շտեմարաններէն:

Բնական եւ տրամաբանական է, որ խորհրդային հետախուզութիւնը եւ հակահետախուզութիւնը առանձնայատուկ ուշադ-

⁸⁴ 1959-ի սկիզբէն 18 Դեկտեմբեր 1963:

⁸⁵ Պետրոսեան Պ. Ա., Էջեր հետախոյզի կեանքից, Հեղինակային հրատ., Երեւան, 2009, էջ 117:

րութիւն դարձնէին հայկական ասանդական կուսակցութիւններու, նաեւ՝ 1975-ին հրապարակ իջած Ն. Ա. Ն. Գ. Բ.-ի գործունէութեան: Այս մասին առկայ է մեծաքանակ դիւան մը՝ ցրուած այսօրուան Հայաստանի Հանրապետութեան, Ռուսաստանի Դաշնութեան, հաւանական է՝ նաեւ նախկին խորհրդային ուրիշ հանրապետութեանց պետական եւ այլ դիւաններու մէջ: Այդուհանդերձ, սփիւտքահայութեան ուղղակիօրէն առնչուող խորհրդային գաղտնի փաստաթուղթերու պատճէններուն զգալի մէկ մասն այսօր կը պահպանուի Հայաստանի Ազգային Արխիւի պահոցներուն մէջ: Անոնցմէ մեծ հետաքրքրութիւն կը ներկայացնեն «գաղտնի» (секретно), «գաղտնազրուած» (засекречено), «յոյժ գաղտնի» (совершенно секретно), «յատուկ թղթապանակ» (особая папка), «յատուկ կարեւորութեան» (особой важности), «խորհրդապահական» (конфиденциально), «անձնական» (лично) ու նմանաբնոյթ նշումներ կրող փաստաթուղթերը, որոնք ընթերցելու հնարաւորութիւն եւ իրաւունք ունէին միայն շատ սահմանափակ թիւով մարդիկ Խորհրդային Հայաստանի ղեկավարութեան մէջ:

* * *

Երկրորդ համաշխարհային պատերազմէն յաղթական դուրս եկած Խորհրդային Միութեան գաղտնի սպասարկութեանց համար գործունէութեան կարեւոր դաշտ էր Սուրիան: Այս յատուկ ուշադրութիւնը պայմանաւորուած էր քանի մը գործօններով.

– Սուրիոյ աշխարհագրական մօտիկութիւնը Խ. Ս. Ն. Մ.-ի հարաւային սահմաններուն:

– Քառորդ դար տեւած ազատագրական պայքարէ ետք Սուրիոյ պետութեան նոր նուաճած անկախութիւնը ֆրանսացի գաղութարարներէն եւ գաղութացուած երկիրները իր թեւարկու-

թեան տակ առնելու Մոսկուայի անթաքոյց քաղաքականութիւնը:

– Սուրիոյ սահմանակցումը անոր նկատմամբ տարածքային յաւակնութիւններ սնուցող Թուրքիոյ, որ 1952 թուականին անդամակցեցաւ հակախորհրդային Հիւսիս-Ատլանտեան Դաշինքի Կազմակերպութեան (ՆԱԹՕ):

– Խորհրդային ժողովուրդներու, յատկապէս՝ հայոց, հիւսիսկովկասցիներու եւ թիրքմէններու սփիւռքացումը հարիւր հազարաւոր հոգի հաշուող զանգուածներու առկայութիւնը Սուրիոյ մէջ:՝՝

– Սուրիոյ մէջ, մասնաւորաբար անոր ծովափին, յենակայաններ ունենալու Խորհրդային Միութեան ղեկավարութեան հեռահար ծրագիրները:

– Հայոց զանգուածային հայրենադարձութիւնը Սուրիայէն 1940-ականներու երկրորդ կէսին եւ 1960-ականներու սկիզբին:

Այս եւ այլ գործօններ եթէ մէկ կողմէ խորհրդային յատուկ ծառայութեանց ուշադրութիւնը կը հրաւիրէին Սուրիոյ վրայ, միւս կողմէ, սուրիահայութեան (մանաւանդ հալեպահայութեան) սփիւռքի մայր գաղութն ըլլալը, յարաբերական մեծաթիւութիւնը, համախումբ կենցաղը, ազգային ինքնութեան պահպանումը, սուրիահայութեան զգալի մասին քով հայրենասիրական ուժեղ զգացումներն ու Խորհրդային Միութեան նկատմամբ բարեացակամ դիրքորոշումները յաւելեալ ազդակներ էին, որպէսզի խորհրդային գաղտնի սպասարկութիւնները մասնաշատուկ զբաղէին գաղութի մասին հնարաւորինս մանրամասն տեղեկութիւններու հաւաքումով եւ անոնց վերլուծումով: Այս բոլորի՝ շնորհիւ՝, այսօր առկայ է զանազան դիւանագիտական քօղածածկոյթներու տակ գործած խորհրդային հետախոյզներու հեղինակած մեծաքանակ փաստաթուղթերու արխիւ մը:

Առկայ եւ մեր տեսած նմանատիպ փաստաթուղթերը կարելի է դասակարգել քանի մը խումբերու մէջ.

- Զուտ սուրիահայ գաղթօճախին կամ անոր առանձին հատուածներուն, մասնաւորաբար Դամասկոսի կամ Հալէպի հայութեան, կամ՝ արանդական կուսակցութեանց վերաբերողներ: Ասոնք կը կազմեն փաստաթուղթերուն մեծագոյն մասը:

- Ընդհանուր առմամբ Սուրիոյ վերաբերողներ, որոնց մէջ կը հանդիպին տեղի հայութեան առնչուող տեղեկութիւններ եւ/կամ վերլուծումներ:

- Սուրիոյ մէջ բնակող խորհրդային ժողովուրդներու (թիւրքմէններ, հիւսիսկովկասցիներ՝ չեչէններ, տաղստանցիներ եւ այլք, սուրիացի արաբներու հետ ամուսնացած ռուս, ուքրաինացի ու այլ ազգութեանց կանայք, եւ հայեր) սփիւռքներու վերաբերողներ: Ասոնք կը կազմեն նուազագոյն քանակը, եւ առաւելաբար կը վերաբերին սուրիահայութեան: Խորհրդային դիւանագետները այսպիսի փաստաթուղթերու պարագային միշտ կը նշեն, որ խորհրդային ժողովուրդներու սփիւռքի իսլամական կրօնին հետեւորդ հատուածները գրեթէ ամբողջովին ձուլուած են սուրիական հասարակութեան մէջ եւ թոյլ յիշողութիւն ունին իրենց ազգային ծագման մասին: Ասոնք իբրեւ հաւաքականութիւն իրենց հաղորդումներուն մէջ կը կեդրոնանան սուրիահայութեան, մասամբ նաեւ՝ սուրիացիներու հետ ամուսնացած խորհրդային սլաւոնական ժողովուրդներու կանանց հարցերուն վրայ:

Նշենք, որ Սուրիոյ հայութեան, մասնաւորաբար հոն տարբեր անուններու տակ գործող երեք կուսակցութեանց մասին տուեալներ կը հանդիպին նաեւ Լիբանանի գաղութին եւ ընդհանրապէս այս կուսակցութեանց մասին մատրաստուած խորհրդային դիւանագետներու տեղեկանքներուն մէջ եւս, անշուշտ՝

նուազ քանակութեամբ ու սուրիահայութեան մասին նուազ շեշտադրումով:

Փաստաթուղթերուն մէջ ընդհանրապէս կը բացակային տեղեկատուներուն անունները: Այդուհանդերձ, նաեւ այսպիսի ք կը հանդիպին: Ոչ քիչ սյարագաներու, ամբողջ տեղեկանքի մը միակ աղբիւրը եղած է սուրիահայ անհատ մը: Օրինակ, Սուրիոյ Համայնավար կուսակցութեան Հալէպի հայկական փաստական բաժանմունքն եղող Ազգային Մշակութային Միութեան վարչութեան գանձապահ Ճորճ Սալիպեանը Հալէպի մէջ Խ. Ս. Հ. Մ.-ի գլխաւոր հիւպատոս Ա. Ահմէտովի հետ 9 Սեպտեմբեր 1982-ին գլխաւոր հիւպատոսութեան մէջ հանդիպման ժամանակ անոր կը փոխանցէ տեղեկութիւններ քաղաքի հայկական շրջանակներուն մէջ Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի անդամներու կամ համակիրներու ծաւալած գործունէութեան, մասնաւորաբար՝ «նուիրատուութիւն» պիտակի տակ դրամաշորթութեան մասին: Ի դէպ, Սալիպեանը ոչ առանց վրդովումի կը տեղեկացնէ, որ սուրիական անվտանգութեան մարմինները տեղեկ են այս աշխուժութենէն, սակայն անոր «առայժմ մատներու արանքով կը նային»: Ան խորհրդային դիւանագետին կը յանձնէ իր ձեռքը ինկած՝ Հ. Ա. Հ. Գ. Բ.-ի ընդդատակեայ թերթի վերջին երկու թիւերը⁸⁶: Սուրիահայ ուրիշ համայնավար յայտնի դէմք մը՝ լիբանանահայ համայնավարներու «Ազգային մշակոյթ» շաբաթաթերթի Սուրիոյ ներկայացուցիչ Յովհաննէս Մկրտիչեանն է Հ. Յ. Դ.-ի Սուրիոյ ղեկավար գործիչներու մասին երկրին մէջ Խ. Ս. Հ. Մ.-ի դեսպանութեան 1984-

⁸⁶ Հայաստանի Ազգային Արխիւ, ֆոնտ 326, ցուցակ 3, գործ 117, թերթ 118-119 (այսուհետ՝ Հ. Ա. Ա., ֆ., ց., գ., թ.):

ի յունիսին պատրաստած տեղեկանքին⁸⁷ աղբիւրը: Փաստաթուղթին հեղինակը՝ Հալեպի գլխաւոր հիւպատոս նոյն Ա. Ահմետովը 20 Յունիս 1984 թուականակիր կից մէկ ուրիշ փաստաթուղթի մէջ կը յայտնէ, թէ Յովհաննէս Մկրտիչեանը ի նք նախաձեռնած է իրեն հետ հանդիպումը գլխաւոր հիւպատոսութեան մէջ 31 Մայիս 1984-ին, որու ընթացքին ան իրեն տեղեկութիւններ փոխանցած է նոյն տարուան սկիզբը կայացած Հ. Յ. Դ.-ի Սուրիոյ կառոյցի ընդհանուր ժողովին ընտրուած ղեկավար կազմի անդամներուն մասին՝ տալով անոնցմէ իւրաքանչիւրին հակիրճ բնութագիրը⁸⁸: Ահմետովի համար վստահելի աղբիւր է նաեւ Տամասկոսի թեմի 1980-ականներու փաստական առաջնորդ Ոսկան եպիսկոպոս Գալփաքեանը: Վերջինս, որուն հետ Սուրիոյ մէջ խորհրդային դեսպանութիւնը ու անձնապէս դեսպան Ալեքսանդր Ձզասխտովը «երկար ժամանակէ ի վեր սերտ, վստահելի շփումներ կը պահպանէր»⁸⁹, երկրի նախագահ Հաֆեզ Ասատը երկրի ղեկին բերած «Բարենորոգչական Շարժում»-ի հերթական տարեդարձին առթիւ Հալեպի մէջ Հնչակեաններու կազմակերպած հանդիսութեան իր ներկայութիւնը առիթ կը նկատէ հանդիպելու Ահմետովին հետ՝ անոր փոխանցելու համար տեղեկութիւններ նաեւ իր վերլուծումները Դաշնակցութեան եւ հակադաշնակցական ճակատի կազմակերպու-

⁸⁷ Փաստաթուղթը տե՛ս Հ. Ա. Ա., ֆ. 326, ց. 1, գ. 52, թ. 2-3: Բնագիրի լեզուով՝ ուսէրէնով առաջին անգամ հրատարակած է պ. գ. թ. Արմէն Բաղալեանը. տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիւների», Երեւան, թիւ 1 (111), 2008, էջ 173-174: Հայերէն թարգմանութիւնը, ծանօթագրութիւններով, լոյս տեսած է մեր կազմած ու հրատարակած «Մփիւոքահայ քաղաքական հոսանքներն ու գաղթօճախները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի)» ժողովածուին մէջ, Երեւան, 2016, էջ 80-82:

⁸⁸ Փաստաթուղթը տե՛ս Հ. Ա. Ա., ֆ. 326, ց. 1, գ. 52, թ. 1:

⁸⁹ Տե՛ս Հ. Ա. Ա., ֆ. 326, ց. 1, գ. 52, թ. 1:

թեանց նկատմամբ երկրի իշխանութեանց վարած քաղաքակա-
նութեան, ինչպէս նաեւ երկրի հայ կաթողիկէ համայնքի գործու-
նէութեան մասին⁹⁰:

Մակայն, սուրիահայ գաղութի վերաբերեալ գաղտնի փաս-
տաթուղթերուն մեծագոյն, մասը կը վերաբերի ընդհանրապէս
գաղութին կամ անոր. Դամասկոսի ու Հալէպի հաստուածներու
ընդհանուր վիճակի ներկայացման: Կարելի մանրամասնու-
թեամբ կը տրուին գաղութին թուաքանակը, արտագաղթի եւ
հայրենադարձութեան թիւերն ու միտումները, գաղութին մէջ
գործող զանազան կառոյցները՝ կուսակցութիւններ, յարանուա-
նութիւններ, հայրենակցական, մշակութային, մարզական եւ
ուրիշ միութիւններ, եկեղեցիներ, դպրոցներ եւ այլն, քանի մը
բառով կամ տողով կը բնութագրուին այդ կառոյցներուն փաս-
տական կարողականութիւնը կամ հնարաւոր ներուժը, կը
ներկայացուին անոնց ղեկավար անձերը՝ անունը, տարիքը,
կուսակցական պատկանելութիւնը եւ/կամ վերաբերմունքը
Խորհրդային Միութեան, յատկապէս՝ Խորհրդային Հայաստանի
նկատմամբ, նկարագիրին թոյլ եւ ուժեղ կողմերը եւ այլն եւ այլն:
Յատուկ շեշտադրում կը կատարուի կուսակցութիւններուն եւ
Մայր Աթոռին հետ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յարաբերու-
թիւններու շրջագիծին մէջ Դամասկոսի ու Հալէպի թեմերու ներ-
քին հարցերուն վրայ: Օրինակ, Խ. Ս. Հ. Մ.-ի դեսպանութեան
հիւպատոսական բաժնի վարիչ Ա. Գոյումճեանը 1970-ին առ-
նուագն երկու անգամ (24 ապրիլին եւ 21 օգոստոսին) տեղեկագ-
րած է Տամասկոսի թեմին մէջ Մայր Աթոռի միաբան Տարօն վրդ.
Ճերեճեանի անկայուն գործունէութեան մասին՝ վերջինս մեղադ-

⁹⁰ Հ. Ա. Ա., ֆ. 326, գ. 8, գ. 15, թ. 7-8:

րելով վախկոտութեան, ձեւական հայրենասիրութեան ու անձնական շահեր հետնապնդելու համար⁹¹:

Ամփոփելով վերը ըստւածները, կրնանք հաստատել, որ սուրիահայ գաղութի մասին խորհրդային դիւանագետներու կազմած եւ «գաղտնի» ու նմանօրինակ նշում կրող փաստաթուղթերը, իրենց պարունակած հարուստ եւ հսկայաքանակ տեղեկութիւններուն շնորհիւ, յոյժ կարեւոր սկզբնաղբիւրներ են գաղութի 20-րդ դարի յետպատերազմեան շրջանի ուսումնասիրութեան համար: Այդուհանդերձ, այդ տեղեկութիւններուն պէտք է մօտենալ որոշակի վերապահութեամբ եւ գիտական կասկածանքով՝ այդ տեղեկութիւններուն ճշդութիւնը ստուգելով, ըստ հնարաւորին, ուրիշ աղբիւրներով, արդարեւ, խորհրդային, մասնաւորաբար խորհրդահայ դիւանագետները յաճախ աշխատած են թերագնահատել գաղութին մեջ Շ. Յ. Նաշնակցութեան ազդեցութեան տարողութիւնը, եւ, համապատասխանաբար, գերագնահատել ոչ-դաշնակցականներու, մասնաւորաբար շատ թոյլ կշիռ ունեցած սուրիահայ համայնավարներու ազդեցութեան շրջանակը:

⁹¹ Շ. Ա. Ա., ֆ. 326, ց. 1, գ. 469, թ. 1-4 եւ թ. 5-7:

ДОКУМЕНТЫ СОВЕТСКИХ СЕКРЕТНЫХ СЛУЖБ ОБ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ В СИРИИ (1945-1991 гг.)

Резюме

КЕВОРК ЯЗЕДЖЯН

К. И. Н.

Советский Союз получил секретную информацию из зарубежья с разных источников, среди которых особая важность представляла собственная разведка, работающая за рубежом под разными прикрытиями. Под видом дипломатов в советских посольствах работали многие сотрудники Комитета Государственной Безопасности при Совете Министров СССР, Главного Разведывательного Управления Генерального Штаба Советской Армии и других советских спецслужб. В своих донесениях, справках и отчетах они периодически посылали в Центр важную информацию. В советских посольствах стран с заметным армянским населением работали дипломаты армянской национальности, большинство которых были сотрудники советских спецслужб.

Особая заинтересованность КГБ армянской общины Сирии была обоснована на нескольких важных фактах: армянская община Алеппо была Матерью-общин армянской диаспоры, наличие сплоченности сирийских армян, умение сохранить национальную идентичность, сильная тоска к Родине у значительной части сирийских армян и лояльное отношение большинство сирийских армян к Советскому Союзу. Эти были дополнительные факторы, чтобы советские спецслужбы выделяли особое внимание к накоплению и анализу разной информации о видных деятелях, организаций и учреждений общины.

Можно классифицировать советские секретные документы об армянской общины Сирии в трех категориях:

1. Документы о самой общины или о ее отдельные части, особенно относящих армян г. Дамаска и г. Алеппо и армянских традиционных партии. Эти документа составляют лвиную часть документов касающихся армянской общины Сирии.

2. Документы о Сирии в целом, в которых иногда встречаются информации или рассуждений об армян Сирии.

3. Документы о группе граждан Сирии, родина которых находится на территории СССР (чеченцы, черкесы, кабардинцы, дагестанцы, туркмены, и т. д.). Все авторы документов этой категории отмечают, что из этих групп только армяне сохраняли свое почти полное национальное самосознание и имеют сильную духовную тягу к их исторической родине.

THE SOVIET SECRET DOCUMENTS ABOUT THE ARMENIAN COMMUNITY IN SYRIA (1945-1991)

Summary

KEVORK YAZEDJIAN

Candidate of Historical Sciences

The Soviet Union got secret information from outside by different means, the most important of which was the Soviet intelligence working in foreign countries under different covers. The agents of the State Security Committee (KGB), attached to the Soviet Ministers of the USSR, the General Intelligence Department of the General Staff of the Soviet Army (GRU) and other Soviet secret services, worked mainly in the embassies of USSR, as diplomats. In their messages, reports and accounts these agents sent to the Center (Moscow) serious information. In countries with significant Armenian population, one diplomat or more in the Soviet embassies was/were Armenian, mostly agent/s of Soviet secret services.

The special interest of the KGB in the Armenian community of Syria was based on some important facts: the Armenian community of Aleppo was the Mother-community in the Diaspora, the Syrian-Armenians were having a compact life, preserving their national identity, have nostalgia for the Homeland and the majority of Syrian-Armenians have loyal attitude towards the Soviet Union. These were supplementary factors for the Soviet secret services to pay special attention to the storage and analysis of different information about prominent personalities, organizations and institutions of the community.

Soviet secret documents about the Armenian community of Syria can be classified in three categories:

1. Documents about the community itself or a part of it, specially about the Armenians of Damascus and Aleppo or the Armenian traditional parties. These documents consist the overwhelming majority of documents about the Armenian community of Syria.

2. Documents about Syria as a whole, where sometimes information or reasoning were found about the Syrian Armenians.

3. Documents about groups of Syrian citizens, whose Homeland is in USSR (Chechens, Circassians, Kabardinians, Daghestanis, Turkmens, etc.). All authors of the documents in this category note, that the Armenians are the only group, who have kept their national consciousness and have a strong spiritual draft to their historical Homeland.

ԱՐԱՍ ԱՆՏՈՆԵԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՎԱԻԵՐԱԳՐՈՒՄԻ ԻՐ ՀԱԻԱԶՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՄԵԱՆ

Մ. Մաշտոցի անունան Մատենադարանի եւ Հայոց ցեղասպանութեան թանգարան ինստիտուտի զիտաշխատող
<mihran.min@gmail.com>

Հայոց ցեղասպանութիւնը փաստագրելու, մնոր վերաբերող վաւերաթուղթեր հաւաքելու եւ վերապրողներու վկայութիւնները գրի առնելու աշխատանքը սկսած է 1915 թուականին, խումբ մը նուիրեալ հայ մտաւորականներու եւ պատմաբաններու ջանքերով, որոնք մեզի աւանդ ձգած են վաւերագրական հարուստ ժառանգութիւն մը, որուն փոքր մէկ բաժինն է, որ ցարդ դրուած է զիտական շրջանաւորութեան մէջ:

Տարուած աշխատանքին որպէս արդիւնք, ստեղծուած են քանակով եւ որակով պատկառելի չորս մեծ հաւաքածոներ, որոնցմէ երկուքը անհատական, իսկ միւս երկուքը՝ խմբային աշխատանքի արդիւնք են:

Առաջինը՝ Հ. Յ. Դաշնակցութեան Բաքուի Կ. Կոմիտէի նախաձեռնութեամբ 1916-1917 թուականներուն ու աւելի ետք վերապրողներու յուշերու գրառումի աշխատանքն է, որուն տրուած է «Վշտապատում» ընդհանուր անուանումը, եւ որուն նպատակը ձեւակերպուած էր այսպէս. «Ճշդէլ վերջին պատերազմի պատճառով Թուրքիայում հայերի ունեցած զոհերի քանակը, նիւթական կորուստների ծաւալը, կուլտուրական վնասի չափը, այլեւ զծել հայերի կրած սարսափների ու տանջանքների իսկական մերկ պատկերը»: Փաստահաւաք աշխատանքը ղեկա-

վարած է Դաշնակցութեան զլիսաւոր հիմնադիրներէն Ռոստոմը (Ստեփան Զօրեան), իսկ աշխատանքին գործօն մասնակցութիւն բերած են Անդրանիկ, Վահան Թորոպէնց, Յովհաննէս Թումանեան, Զապէլ Եսայեան, Սեբաստացի Մուրատ, Յակոբ Քինյ. Խաչվանքեան եւ ուրիշներ:

Գրառումները կատարուած են Բաքուի, Թիֆլիսի, Երեւան նահանգի եւ Արեւմտեան Հայաստանի կարգ մը շրջաններուն մէջ²²:

12 հոգիները այս խումբով կարելի եղած է հաւաքել մօտ 600 վերապրողի վկայութիւն:

Վկայութիւններու այս ժողովածուն անելի ետք տեղափոխուած է Երեւան ու հանգրուանած՝ Հայաստանի Ազգային արխիւ:

2012-ին այս նիւթերուն մեծ մասը տպուեցաւ «Հայոց Տեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում» ընդհանուր խորագիրը կրող եռահատոր ստուար ժողովածուին մէջ²³:

Հաւաքչական երկրորդ մեծ աշխատանքը կատարուած է Կ. Պոլսոյ մէջ, զինադադարէն կարճ ժամանակ անց, Ազգային Պատրիարքարանի Քաղաքական ժողովի 17 Օգոստոս 1919 թուականի որոշումով ստեղծուած Տեղեկատու դիւանին կողմէ, որուն վերին հսկողութիւնը վարած է դիւանը, կազմելու գաղափարը յղացող Բժ. Գրիգոր Դաւիթեան:

Յիշեալ դիւանին պետը եղած է պատմաբան Արշակ Ալպոյաճեան, օժանդակ ունենալով Զօրա Զօրայեանը, Ասատուր Նա-

²² Հայոց Տեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում. Վերապրածների Վկայութիւններ. Փաստաթղթերի ժողովածու, հրատարակութիւն Հայաստանի Ազգային արխիւի, հեղինակ եւ կազմող՝ Ամատունի Վիրապեան եւ Գոհար Աւագեան, Երեւան, Ա. հատոր, 2012, էջ 4-7:

²³ Նոյն, Ա. հատոր, Վանի Նահանգ, 536 էջ: Բ. հատոր, Պիթլիսի Նահանգ, 432 էջ: Գ. հատոր, Էրզրումի, Խարբերդի, Տիարպէրիի, Սեբաստիայի, Տրապիզոնի Նահանգներ Պասկահայք, 496 էջ:

ւարեանն ու Կարապետ Նուրեանը: Տեղեկատու Դիւանի հաւաքած արխիւային հսկայածաւալ նիւթը Կ. Պոլսոյ մէջ տիրող վտանգաւոր կացութեան հետեւանքով, 1922-ին դրկուած է Մանչեսթր ու երկար դեգերումներէ ետք՝ հանգրուանած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի դիւանատունը, ուր եւ կը պահուի գայսօր⁹⁴:

Դիւանի ստեղծման նպատակն ու հաւաքչական առաքելութիւնը այսպէս ձեւակերպուած է իր կանոնագրին մէջ, ըստ որուն Դիւանը պիտի հաւաքէր «Հայաստանի եւ հայկական դատի վերաբերեալ հին թէ նոր ամէն կարգի վիճակագրութիւններն, ...հայ հալածանքներու, ջարդերու, տեղահանութեան վերաբերեալ բոլոր դրուագներ ու պատմութիւններ, կողոպտուած ազգային թէ անհատական շարժուն թէ անշարժ գոյքերու մասին վիճակագրական պատկերներ, մասնաւորապէս վերջին տեղահանութեան միջոցին գործուած չարագործութեանց մասնակցող զլխաւոր յանցապարտ թուրքերու մասին կարելիին չափ լիակատար տեղեկութիւններ, կենսագրական ծանօթութիւններ եւ անոնց յանցապարտութեան մասին քաղուած վաւերաթուղթեր եւ վկայութիւններ...»⁹⁵:

Ցեղասպանութեան փաստագրման կարեւոր հաւաքածոյ մըն ալ Կ. Պոլսոյ մէջ օրին կրցած է մէկտեղել պատմաբան Գէորգ Մեսրոպ, որ հաւաքած է զանազան վերապրողներու վկայութիւններ ու մանաւանդ յաջողած է ձեռք ձգել Կ. Պոլսոյ Ազգային Պատրիարքարանին յղուած բազմաթիւ փաստաթուղթերու ընդօրինակութիւններ եւ ջարդարարներու անուանացան-

⁹⁴ Զաւէն Արքեպս. [Տէր Եղիայեան], Պատրիարքական Յուշերս. Վաւերագիրներ եւ Վկայութիւններ, Գահիրէ, տպարան «Նոր Աստղ», հրատարակութիւն Մտաւորական Սպասարկութեանց գրասենեակի, 1947, էջ 301-303:

⁹⁵ Նոյն, էջ 302-303:

կեր: Յիշեալ հաւաքածոն եւս հանգրուանած է Հայաստանի Ազգային արխիւ⁹⁶:

Մեսրոպ օրին իր հաւաքած նիւթերուն մէկ մասը հրատարակած է Կ. Պոլսոյ «Հայկաշէն Տարեգիրք»-ին մէջ⁹⁷, մինչ մեծամասնութիւնը կը մնայ անտիպ:

Այս շարքին չորս մեծ հաւաքածոներէն մէկն է նաեւ պոլսահայ ծանօթ գրող, մտաւորական, խմբագիր, պատմաբան, կրթական-մշակութային գործիչ եւ երգիծանկարիչ Արամ Անտոնեանի հաւաքածոն:

Անտոնեան հայոց ցեղասպանութենէն փրկուելէ ետք, իր ամբողջ կեանքը նուիրած է ցեղասպանութեան վաւերագրման աշխատանքներուն, նախ աքսորավայրերուն, ապա՝ Հալէպի եւ հուսկ՝ Փարիզի մէջ: Իր այս աշխատանքին շնորհիւ ան կրցած է մէկտեղել եզակի հաւաքածոյ մը, որ մեծ մասամբ կը բաղկանայ վերապրողներու վկայութիւններէ եւ մասամբ՝ պետական պաշտօնական փաստաթուղթերէ:

1915-ին Անտոնեան հրաշքով զերծ մնացած է իր գրչակից եւ աքսորակից ընկերներուն վերապահուած ճակատագրէն: Չանկըրըի աքսորավայրէն կառքով Անկիւրիա մեկնած միջոցին, կառքէն իյնալով կտրուած է ոտքը եւ խումբէն անջատուելով՝ առանձինն հասած է Անկիւրիոյ «հիւանդանոց»-ը, ուր մնացած է շրջան մը, մինչ ընկերները շարունակած են իրենց ճանապարհը եւ բոլորն ալ կոտորուած:

⁹⁶ Հայաստանի Ազգային արխիւ, ֆոնտ 1388:

⁹⁷ «Թրքահայերն Ու թուրքերը (1914-1918). Անտիպ Եւ Պաշտօնական Փաստաթուղթեր» վերնագիրով, տես «Հայկաշէն Տարեգիրք», Կ. Պոլիս, Ա. տարի, 1922, էջ 102-164: Գիտական հրատարակութեամբ վերատպուած է հետեւեւէլ հարստրով. Քասաւնի Եր. Հ., Կանխորոշուած Ցեղասպանութիւն. Հետազօտութիւն Գեորգ Մեսրոպի «Թրքահայերն Ու թուրքերը» Փաստաթուղթերու Տուեալներով, Պէրյուք, 2015, 360 էջ:

Անտոնեան, ինք իր միջոցներով ինքզինք բուժել է ետք, հիւանդանոցէն հանուելով՝ կրկին արքորուած է եւ բազմաթիւ անգամներ փախչել է ու կրկին ձերբակալուել է ետք՝ հասած է Սուրիական անապատ՝ Մեսքէնէ, ուր, Արամ Պոյաճեան անունին տակ թաքնուելով, մնացած է շրջան մը եւ ականատես եղած է իր ժողովուրդի արքորական զանգուածներու ողբերգական վիճակին, ապա, փախչելով, հասած է Հալէպ ու վայելած տեղւոյն «Պարոն» պանդոկի սեփականատէր անջրդեցի Մազլումեան եղբայրներու ասպնջականութիւնն ու պաշտպանութիւնը, նախ Հալէպի, ապա՝ Զահլէի (Լիբանան) մէջ, ուր պիտի արքորուէին Մազլումեանները իրենց խումբ մը բարեկամներուն եւ «ծառաներուն» ընկերակցութեամբ:

Անտոնեան հայրենասէր մարդ էր եւ պատմական սկզբնաղբիւրները արժեւորող պատմաբան: Տակաւին 1915-ին, Յեղասպանութեան առաջին իսկ օրերուն, լծուած է փաստաթուղթերու եւ յուշագրութիւններու հաւաքման եւ մէկտեղման աշխատանքին: Իր հաւաքած վկայութիւններէն քանի մը հատը կը կրեն 1916 թուականը: Ծանօթ չէ, թէ անոնց տէրերը իրենց վկայութիւնները ինքնակա՞մ գրի առած են ու զինադադարէն ետք՝ յանձնած Անտոնեանին, թէ Անտոնեան ի՞նք խնդրած է անոնցմէ, որ գրի առնեն զանոնք տակաւին 1916-ին:

1915 Հոկտեմբերի սկիզբները, երբ ան որպէս փախստական կը գտնուէր Տարսոնի մէջ, պատահաբար կը ձերբակալուի. ու երբ կը բացայայտուի իր ինքնութիւնը, կը պարզուի, որ Ատանայէն յատուկ Տարսոն հասած ոստիկանութեան քոմիսէր Մուսա Քազիմ պէյ կը փնտռէ զինք: Անտոնեանի Կ. Պոլսէն արքորուելէն մինչեւ Տարսոն հասնելուն մասին քոմիսէրը «շատ աւելի բան զիտէր քան ես: Կարգ մը անցքեր, զորս մոռցեր էի, ինք յիշեցուց ինձի» կը գրէ Անտոնեան տարիներ ետք: Փախստական ըլլալու

կողքին, Անտոնեանի դեմ եղած գլխաւոր ամբաստանութիւնը եղած է այն, որ ինք գաւառներէ հասնող մարդոցմէ կոտորածներու մասին տեղեկութիւններ հաւաքելով՝ տեղոյն Ամերիկեան Գոլէճի տնօրէնին տիկնոջ՝ տիկին Քրիսթիի միջոցաւ կ'ուղարկէ եղեր արտասահման: Այս ամբաստանութեամբ ալ զինք ձերբակալելով՝ տեղափոխած են Ատանա⁹⁸, ուրկէ աւելի ետք կրկին յաջողած է փախչիլ:

Անտոնեան, 1918-ի զինադադարի յայտարարութենէն առաջ, Հալէպի Օթէլ Պարոն մնացած շրջանին արձանագրած է վկայութիւնը «թրքական անունի տակ ծածկուած» թուրք հազարապետի մը ծառայող հայ զինուորի մը, որ չէ ուզած յայտնել իր իսկական անունը: Հազարապետն ու անոր ծառայող զինուորը երկուքով իջեւանած են պանդոկ, եւ զինուորը, անշուշտ վախի ազդեցութեան տակ, դժկամած է պատմել ամէն ինչ, այնքան որ Անտոնեան յուշագրութեան կցուած ծանօթութեամբ նշած է, թէ «շատ դժուարութիւն քաշեցի իրեն պատմել տալու համար այսքանը»⁹⁹:

Անտոնեանի՝ Պարոն պանդոկի մէջ գտնուած օրերու գործունէութեան մասին կայ նաեւ պանդոկատիրոջ Արմէն Մազլումեանի որդւոյն՝ Գրիգորի վկայութիւնը, որ հաւաստած է, թէ «Հայրս՝ Արմէն Մազլումեան, կը պատմէր, թէ այդ օրերուն Արամ Անտոնեան խիստ զբաղած էր ջարդերու մասին իր ականատեսի վկայութիւնները նօթագրելով»¹⁰⁰:

⁹⁸ Անտոնեան Ա., Շահպազ Բ., «Վերածնունդ» տարեցոյց, Ա. տարի, Փարիզ, 1920, էջ 160-162:

⁹⁹ BNU/Fonds A. Andonian, Matériaux pour l'histoire du génocide, P. i. L/4-3, Amele Tabouri: Massacre des soldats arméniens / Տեղահանութիւնը Կոտորածներ. «Ամէլէ Թապուրի»-ները Եւ Հայ Զինուորներու Կոտորածներ», Բ. 50:

¹⁰⁰ Թորանեան Թ., Պատմութիւն Հալէպի «Օթէլ Պարոն»ի Եւ Արմէն Մազլումեանի (Պարոն) Նամականին, Պեյրութ, 1897, էջ 39:

Հալեպի իր գործունեութեան մասին վերջին վկայութիւն մըն ալ տուած է Երուանդ Օտեան, որ Ապրիլ 1918-ին Պարոն պանդոկին մէջ հանդիպելով Անտոնեանին, անկէ իմացած է՝ թէ վերջին երկու-երեք տարիները «պարապ չէ անցուցած» ու շատ բան գրած է իր տարագիրի կէտերէն¹⁰¹:

Հետաքրքրական է, որ Ատրպէճանի նախկին ներքին գործոց նախարար Պէհայուֆ Խան Ճիվանշիրի ահաբեկիչ Միսաք Թորլաքեանի դատավարութեան ընթացքին, պաշտպան փաստաբան Հմայեակ Խոսրովեան վկայ Երուանդ Օտեանին հարցուցած է, թէ պատերազմի տարիներուն ան երբեւէ հանդիպա՞ծ է Արամ Անտոնեանին, եւ թէ՝ «Լսա՞ծ էք թէ անիկա Թալեադի եւ Իթիհատի քանի մը պաշտօնաթուղթերը ձեռք անցուցած էր», Օտեան պատասխանած է, թէ՛ այո՛, Անտոնեան Հալեպի մէջ անձամբ իրեն յայտնած է այդ մասին ու ըսած՝ թէ՛ «կարենոր տօգիւմաններ ձեռք անցուցած է, գորս խիստ գաղտնի կը պահէ», ապա Օտեան յայտնած է թէ Անտոնեան փաստաթուղթերը իրեն ցոյց չէ տուած, այլ յայտնած է միայն, թէ՛ «ձեռքս փաստեր ունիմ որ կ'ապացուցանեն թէ Թալեադ պատասխանատու է հայկական ջարդերուն»¹⁰²:

Զինադադարի յայտարարութիւնը նոր հորիզոններ բացած է Անտոնեանի հաւաքչական գործունեութեան առջեւ, ու ան նոր թափով լծուած է աշխատանքի: Իր գործը անլի արդիւնաւետ դարձնելու համար, առաջին առիթով, 11 Դեկտեմբեր 1918-ին, տեղւոյն «Հայ Չայն» օրաթերթին մէջ «Կոչ՝ Հալեպ գտնուող հայ

¹⁰¹ Օտեան Եր., Վերապրողները. Ա. Արամ Անտոնեան, տես՝ «Շանթ», Կ. Պոլիս, նոր շրջան, Դ. տարի, թիւ 5, 14 Դեկտեմբեր 1918, էջ 55:

¹⁰² Պէհայուֆ Խանի Սպանիչին Դատավարութիւնը, «Պահակ», Պոսթոն, ԺԱ., թիւ 107-916, 1 Հոկտ. 1921, էջ 2-3:

գաղթականներուն»¹⁰³ խորագիրով յայտարարութեամբ դիմած է տեղոյն արքայականներուն, որպէսզի գրի առնեն ու իրեն յանձնեն ցեղասպանութեան օրերու իրենց յուշերն ու վկայութիւնները՝ զանոնք Փարիզի հաշտութեան վեհաժողովին հայոց ցեղասպանութեան մասին ներկայացուելիք տեղեկագրի մը պատրաստութեան ժամանակ օգտագործելու համար:

Ան, առանձին վեց կէտերով, ընթերցողներուն մատնանշած է զինք ամենէն շատ հետաքրքրող թեմաները. առաջին՝ տեղեկութիւններ գաւառական ջարդերու, զանոնք իրագործողներու եւ Եփրատ նետուած հազարաւոր հայերու մասին, երկրորդ՝ տարագրութեան ընթացքին պատահած առեւանգումներու եւ խոշտանգումներու պատմութիւններ, երրորդ՝ արքայազարներու մէջ տեղի ունեցած բռնութիւններ եւ սպաննութիւններ, չորրորդ՝ Ռաս Իւլ Այնի ու Տէր Ջօրի կոտորածներ իրագործողներու անուններ եւ տեղոյն հայ որբերու ոչնչացման պատմութիւն, հինգերորդ՝ ցուցակ օտարադաւաններու, որոնց մօտ կը գտնուին հայ կիներ ու մանուկներ եւ վերջապէս՝ մանրամասնութիւններ Ակնունիի ու արքայակից ընկերներուն նահատակութեան եւ թաղման ստոյգ վայրին մասին:

Նշուած վեց կէտերէն ետք, Անտոնեան առաջարկած է դրկել նաեւ անունները այն հայերուն, որոնք արքայի ճանապարհին համակեղրոնացման կայքերուն կամ Հալէպի մէջ խոշտանգած կամ անբարեխիղճ վերաբերմունք ցուցաբերած են իրենց սրգակիցներուն նկատմամբ:

Անտոնեան խնդրած է իր ընթերցողներէն, որ այս բոլորին մասին տեղեկութիւն ունեցողները հաճին գրի առնել իրենց գիտցածները եւ անմիջապէս դրկել Պարոն պանդոկի թիւ 5 սեն-

¹⁰³ «Հայ Ձայն», Հալէպ, Ա. տարի, թիւ 20, 11 Նեկտեմբեր 1918, էջ 1:

եակլը, ուր իջեւանած էր ինք, իսկ իրենց գիտցածները բերանացի յայտնել փափաքողները անձամբ ներկայանային նոյն հասցէին:

Նիւթական փոքրիկ հատուցումի փոխարէն, Անտոնեան ապահոված է նաեւ գործակցութիւնը այդ օրերուն Հալէպ գտնուող ծանօթ բանասէր Կարապետ Գաբիկեանին, որ իր կարգին գրի առած է անգրագետ վերապրողներու յուշեր կամ ընդօրինակած Անտոնեանի տրամադրուած վերապրողներու յուշագրութիւններ, որոնք ընդօրինակուելէ ետք՝ պիտի վերադարձուէին տէրերուն¹⁰⁴:

Գաբիկեան իր յուշերու մեծարժէք հատորին մէջ խօսելով Ջինսադադարի առաջին օրերուն Հալէպ իր կենցաղեան շրջանին մասին, եւ յայտնելէ ետք՝ թէ սկսած էր գրի առնել իր «Եղեռնապատում»-ը, ըսած է, թէ հոն ծանօթացած է Մազլումեան եղբայրներէն հովանաւորուած Անտոնեանին, որ «ամէն տեղի վերապրողներէն նօթեր կը հաւաքէ, կառավարական պաշտօնաթուղթեր, վաւերագրեր ձեռք կը բերէ... Իր տեղեկատուները վերապրող հայուհիներ են – գեղջուկ հարսներ, աղջիկներ. կը զարմանայ, թէ ինչպէս կնոջական զգայնիկ գրչով այնքան պարզ ու բնական ոճով մը, յստակօրէն ու մանրամասնեալ կը պատմեն իրենց տարագրութիւնը ծայրէն մինչեւ վերջ...»: Գաբիկեան ըսած է նաեւ, թէ ինք Անտոնեանի նօթերը դասաւորելու համար աշխատակցած է անոր, ան ալ ծանօթացուցած է զինք Պարոնիս (Մազլումեան) եւ 6-7 ոսկիի վճարում մը ընել տուած է իրեն, ապա իր գրածը եւս տուած է Անտոնեանին, որ հաւանած է զայն

¹⁰⁴ Ինչպէս, օրինակ, եղովկացի Օննիկ Գ. Պետրոսեանի վկայութիւնը, որ գրի առնուած է Գաբիկեանի ձեռագիրով եւ որ կը գտնուի Նուպարեանի Անտոնեանի յատուկ թղթածրարներուն մէջ. նաեւ նոյն թղթածրարներուն մէջ գտնուող բազմաթիւ այլ յուշագրութիւններ:

եւ ըսած է, թէ արժէ առանձինն հրատարակել. խոստացած է միջոցներ գտնել «եւ... դեռ պիտի գտնէ...»¹⁰⁵:

Գաբիկեանի նման, Անտոնեանի հաւաքչական «խումբ»-ին մաս կազմած է նաեւ այլ մտաւորական մը՝ Վեր. Խաչատուր Գոուզեան (ապա՝ քահանայ):

Անտոնեան աւելի ետք, իր «Մեծ Ոճիրը» հատորի յառաջաբանին մէջ անդրադառնալով Հալէպի մէջ իր ծաւալած հաւաքչական աշխատանքին, գրած է, թէ «Հազարաւոր կիներ, աղջիկներ, մարդիկ, այդպէս եկան մօտս, խօսեցան ու գրեցին: Բոլորն ալ իրենց պատմութիւնը ունէին, եւ ոչ մէկուն քաշած չարչարանքը ուրիշի մը կրածին կը նմանէր: Շատ անգամ կը խորհէի որ իւրաքանչիւրին համար առանձին հատոր մը գրել պէտք պիտի ըլլար, այդ ահաւոր զարհուրանքը գոնէ ընդհանուր գիծերու մէջ ամփոփելու համար: Եւ աւելի քան հարիւր հազար էին անոնք, որոնք հատոր մը բան ունէին պատմելիք: ...Տասնեակներով կու գային սենեակս՝ իրենց քաշած ցաւերուն ու սոսկումներուն վերյիշումը արձանագրել տալու...»¹⁰⁶:

Այսպիսով, լաւ կազմակերպուած աշխատանքի շնորհիւ, կարճ ժամանակի ընթացքին Անտոնեանի մօտ մէկտեղուած են յուշագրական հազարաւոր էջեր եւ բազմաթիւներու վկայութիւններ՝ Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ եւ Փոքր Ասիոյ տարբեր բնակավայրերու մէջ պատահած կոտորածներու, ինչ-

¹⁰⁵ Գուժկան Սեբաստիոյ (Գաբիկեան Կ.), Եղեռնապատում Փոքրն Հայոց Եւ Լորին Մեծի Մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, տպարան «Հայրենիք»-ի, հրատարակութիւն Ամերիկայի «Սեբաստիոյ Վերաշինութեան Միութեան», 1924, էջ 543-544:

¹⁰⁶ Անտոնեան Ա., Մեծ Ոճիրը. Հայկական Վերջին Կոտորածները Եւ Թալէադ Փաշա: Պաշտօնական Հեռագիրներ Բնագիրներու Ստորագրութեամբ Եւ Բազմաթիւ Պատկերներով, «Պահակ»-ի մատենաշար թիւ 1, Պոսթըն, տպարան «Պահակ»-ի, 1921, էջ 9:

պէս նաեւ Սուրիական անապատի տարածքին ստեղծուած հայ արտրականներու յատուկ համակեղրոնացման վայրերուն մէջ տեղի ունեցած ջարդերու մասին:

Հետաքրքրական է, որ Անտոնեան տակաւին այդ օրերուն, գինադադարի յայտարարութենէն անմիջապէս ետք, գրեթէ առանձին տարած է այս կենսական աշխատանքը, որուն շնորհիւ կրցած է հաւաքել փաստագրական եզակի ժառանգութիւն մը:

Իր հաւարչական աշխատանքին զարդը կը կազմեն այն աւելի քան հինգ տասնեակ օսմաներէն պետական պաշտօնաթուղթերը, որոնք Ներքին գործոց նախարար Թալէաթ փաշայի, Աշիրէթներու տեղաւորման եւ գաղթականներու ընդհանուր տեսուչի փոխանորդ Ապտուլ Ահատ Նուրի պէյի, Հալէպի նահանգապետ Մուսթաֆա Ապտուլ Խալիք պէյի, Տէր Ջօրի գաւառապետ ջարդարար Սալէհ Ջէքի պէյի, Պէհաէտտին Շաքիրի, Էնվէրի ու այլոց յղած ջարդերու ծածկագիր հրահանգ-հեռագիրներն են, զորս Անտոնեան մեծամասնութեամբ ձեռք բերած է Հալէպի Տարագիրներու փոխ տնօրէնութեան գրասենեակի զլխաւոր քարտուղար Նայիմ Սէֆա պէյէն 1918-ի վերջերուն, Պանդոկ պարոնի տէր Օննիկ Մազլումեանի օժանդակութեամբ:

Անտոնեանի հաւաքած օսմաներէն այդ փաստաթուղթերը Հայոց Ցեղասպանութեան կանխամտածուած ու ծրագրուած ըլլալը հաստատող լաւագոյն վկայութիւններն են, ու այդ է պատճառը, որ ցեղասպանութիւնը ուրացող թուրք եւ թրքամետ պատմաբաններն ու թրքական իշխանութիւնները յարատեւօրէն փորձած են կասկածի տակ դնել անոնց վաւերականութիւնը:

Յիշեալ հեռագիրներուն բովանդակութիւնը մէկ է հայ ժողովուրդը բնաջնջելու հրահանգներ, հայ արտրականներու դէպի Սուրիական անապատ արքորի փութացում, հայուհիներն ու

հայ երեխաները եւս այրելու նման կոտորելու անհրաժեշտութիւն, օտարերկրացիներուն՝ կոտորուած հայերը լուսանկարելու փորձերու խափանում եւ «գործնական» նման այլ հարցեր:

Առաւելաբար իր հաւաքած այդ նիւթերուն վրայ հիմնուելով, աւելի ետք, Անտոնեան լոյս ընծայած է Հայոց ցեղասպանութեան վաւերագրման կարեւորագոյն սկզբնաղբիւրներէն մէկը համարուող «Մեծ Ոճիրը» կշանաւոր հատորը, ուր կոտորածներուն մասին իր անձնական յիշողութիւններուն կողքին, թարգմանաբար տուած է թուրք պետական պաշտօնեայ, Հալեպի Տարագիրներու փոխ տնօրէնութեան գրասենեակի զլխաւոր քարտուղար Նայիմ Սէֆա պէյի յուշերը՝ անոնց կցելով կարեւոր դիտողութիւններ ու բացատրութիւններ:

Նոյն գիրքի հայերէն բնագրին եւ անգլերէն ու ֆրանսերէն տարբերակներուն մէջ տալուած են նաեւ իր հաւաքած պետական փաստաթուղթերն ու անոնց թարգմանութիւնները¹⁰⁷:

Յիշեալ հատորի կողքին, Անտոնեան լոյս ընծայած է նաեւ մեծ մասամբ Մէսքէնէի հայ արքայականներու առօրեայէն վերցուած «Այն Սեւ Օրերուն... (Պատկերներ)» հատորը¹⁰⁸ եւ պարբերական մամուլի էջերուն յուշագրական բնոյթի տասնեակ յօդուածներ, ինչպէս՝ «Աքսորի ճամբուն Վրայ (Յիշողութիւն-

¹⁰⁷ Անտոնեան Ա., կշ. աշխ., 305 էջ:

Անգլերէն թարգմանութիւնը՝ Andonian A. The Memoirs of Naim Bey. Turkish Official Documents Relating to the Deportation and Massacres of Armenians. With an introduction by Viscount Gladstone, London, Hodder and Stoughton Limited, 1920. XIV, 84 p.

Ֆրանսերէն թարգմանութիւնը՝ Andonian A. Documents officiels concernant les massacres Arméniens. Reproduction photographique d'un grand nombre de Documents. Traduit du manuscrit arménien, avec l'autorisation de l'auteur, par M. S. David-Beg. Paris, Imprimerie H. Turabian, 1920, 168 p.

¹⁰⁸ Տպուած՝ Պօսթըն, «Հայրենիք»-ի հրատարակութիւն, 1919, 207 էջ:

ներ)»¹⁰⁹, «Կոմիտաս Վարդապետ Աքսորի Մէջ. Ի՞նչ Պայմաններու Մէջ Յայտնուեցաւ Իր Մտքին Տաճնապը»¹¹⁰, «Քանի Մը Յիշողութիւններ»¹¹¹, «Երկրորդ Արարուածը»¹¹², «Համբարձում Համբարձումեան (Յիշողութիւններ)», «Բարսեղ Շահպազ (Յիշողութիւններ)»¹¹³, «Տօքթ. Ալթունեան»¹¹⁴, «Երուանդ Օտեանի «Թրքացումը». Նամակ Մը Եւ Յիշողութիւններ»¹¹⁵ եւ այլն:

Աւելցնենք, որ Անտոնեան չէ բաւարարուած միայն այլոց վկայութիւնները հաւաքելով, այլ ինք էս իր գրի առած ու կազմած թղթածրարներուն միացուցած է ցեղասպանութեան տարիներու իր յուշերը, որոնք առաւելաբար կը վերաբերին Այաշի ու Չանկըրըի քսոտրավայրերուն, Մեսքէնէին, Պապին, Ռաս Իւլ Այնին, Տէր Զօրին, անոր զաւառապետ Սալէի Զէքի պէյի հետ իր հանդիպումին եւ Սուրիական անապատային այլ շրջաններու մէջ պատահած դէպքերուն:

Անտոնեան 1 Մարտ 1919-ին, բժ. Ասատուր Ալթունեանի հետ, Հալէպէն մեկնած է Փարիզ ու իր հետ տարած հաւաքած վկայութիւններու հսկայ ժողովածուն: Տարիներ ետք, Փարիզի նորաստեղծ Նուպարեան մատենադարանի տնօրէնի պաշտօնը ստանձնելէն յետոյ, ամբողջութեամբ յանձնած է զանոնք յիշեալ մատենադարանին, ուր կը պահուին ցարդ աշխարհագրական

¹⁰⁹ «Վերածնունդ», Փարիզ, յաջորդական 26 թիւերու մէջ, Գ. տարի, թիւ 19-էն (31 Յուլիս 1919) - Դ. տարի, թիւ 15-16 (24 Ապրիլ 1920):

¹¹⁰ «Արեւմուտք», Փարիզ, յաջորդական 26 թիւերու մէջ, Նոր շրջան, Ա. տարի, թիւ 5 (թիւ 92, 15 Դեկտեմբեր 1946) - թիւ 30 (15 Յունիս 1947):

¹¹¹ «Երիտասարդ Հայաստան», Շիրակօ, ԺՁ տարի, թիւ 24, 23 Յուլիս 1919, էջ 2:

¹¹² «Վերածնունդ» շաբաթաթերթ, Փարիզ, Գ. տարի, թիւ 3, 19 Յունիս 1919, էջ 212-217:

¹¹³ «Վերածնունդ» տարեցոյց, Ա. տարի, Փարիզ, 1920, էջ 53-83 եւ 150-181:

¹¹⁴ «Վերածնունդ» շաբաթաթերթ, Գ. տարի, թիւ 12, Փարիզ, 12 Յունիս 1919, էջ 201-203:

¹¹⁵ «Ֆրանսահայ Տարեգիրք», Բ. տարի, Փարիզ, 1927, էջ 193-200:

հիմունքներով պատրաստուած 80 թղթածրարներու մէջ եւ միասնաբար կը բաղկանան մօտաւորապէս 8000 էջերէ¹¹⁶:

Յիշեալ թղթածրարները դասակարգուած են այբբենական կարգով եւ ինչպէս ըսուեցաւ, կը պարփակեն Արեւմտեան Հայաստանէն, Կիլիկիայէն, Փոքր Ասիայէն եւ Սուրիական անապատէն զանազան բնակավայրեր՝ Այնթապ, Ատանա, Երզնկա, Կարին, Հաճըն, Մարաշ, Ձէյթուն, Պուրսա, Սասուն, Տարսուն, Մուշ-Տարօն, Տէր Զօր, Մէսքէն, Ռազգա, Ռաս Իւլ Այն, Քղի, Պարտիզակ եւ բազմաթիւ այլ քաղաքներ ու շրջաններ: Անոնց մէջ կան քանի մը վտիտ թղթածրարներ, եւ փոխարէնը՝ կան այնպիսիներ, որոնք կը բաղկանան քանի մը հարիւր էջերէ:

Բացի այս թղթածրարներէն, Անտոնեան պատրաստած է նաեւ առանձին թղթածրարներ, նուիրուած՝ Զոհրապի, Վարդգէսի ու իրենց ընկերներու նահատակութեան, Մալթա արքայութեան իրթիհատականներուն, թուրք ջարդարարներու կենսագրութիւններուն, «սէւերես» հայերուն՝ մատնիչներուն ու դաւաճաններուն եւ յարակից այլ թեմաներու:

Անտոնեանի հաւաքչական աշխատանքը վերջ չէ գտած Հալէպով. ան Փարիզ մեկնելէ ետք, ընդհուպ մինչեւ իր կեանքին վերջին տարիները, նամակներով դիմած է վերապրողներու եւ անոնցմէ խնդրած՝ որ գրի առնեն ցեղասպանութեան օրերու իրենց յուշերը եւ ուղարկեն իրեն, երբեմն ալ այլեւայլ հարցերով դիմած է վերապրողներու եւ լուսաբանութիւններ խնդրած է արքայութիւնն ու կոտորածներու առնչուող եւ զինք հետաքրքրող անձանօթ դէպքերու եւ դէմքերու մասին. ապա այս բոլորը կցած է իր կազմած թղթածրարներուն:

¹¹⁶ Adjemian B. et Kévorkian R. Témoignages de rescapés et connaissance du génocide de 1915-1916. « Études arméniennes contemporaines ». Bibliothèque Nubar de l'UGAB, Paris, 5/2015, p. 79-110:

Յիշենք նաեւ, որ արխիւային փաստաթուղթերու եւ տպագիր գրականութեան մէջ յաճախ հանդիպած ենք Անտոնեանի հասցեին հնչեցուած բողոքներու, երբ ան վերադարձնելու խոստումով շատերէ փոխ առած է յուշագրութիւններ ու չէ յարգած իր խոստումը: Յիշեալ անձերը ճարահատ դիմած են Հալէպի Հայ Ազգային Միութեան ու խնդրած անոր միջամտութիւնը: Այս ուղութեամբ ունինք քանի մը փաստեր: Տանք օրինակ մը միայն.

Սուշեղ Ի. Դուրնեան, 31 Յունուար 1919 թուակիր նամակով յայտնած է, թէ ինք «վկայ ականատեսը Տարօնոյ հայկական ջարդին» անոր ընդարձակ պատմութիւնը պատրաստելով, յանձնած է Հալէպի Հայ Ազգային միութեան, որ իր կարգին զայն փոխանցած է Անտոնեանին, որմէ ետք Դուրնեան «տասէ աւելի անգամներ յիշեալ պարոնին դիմելով» խնդրած է իր տետրակը ու վերջ ի վերջոյ ճարահատ դիմած է Միութեան զայն ստանալու պահանջքով¹¹⁷:

Ինչպէս տեսանք, Անտոնեան առանձինն ըրած է աւելին, քան ինչ որ ըրած են նիւթական եւ բարոյական հսկայ ներուժ ունեցող կազմակերպութիւններ ու հաստատութիւններ, աւանդ ձգելով Հայոց Տեղասպանութիւնը ուսումնասիրողներուն հսկայածաւալ փաստագրական նիւթ: Ան, իր հաւաքած նիւթերուն ակնարկելով, առիթով մը գրած է, թէ օր մը ուրիշներ անոնցմով «պատմութիւն պիտի գրեն», որովհետեւ «չեմ կարծեր որ ես անձամբ գրելու ժամանակ ունենամ»¹¹⁸: Ան կրցաւ հաւաքել այդ նիւթերը, եւ ինչպէս կը նախատեսէր, ժամանակ չունեցաւ զանոնք հատորներու վերածելու, եւ միայն Նուպարեան Մատե-

¹¹⁷ Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանի դիւան, Հայ Ազգային Միութեան թղթածրարներ:

¹¹⁸ Անտոնեան Ա., «Լուսաբանութիւն մը», BNU/Fonds Andonian A. Matériaux pour l'histoire du génocide, P. J. 1/3, liasse 52; Der-Zor / Տէր-Զօր, f. 109:

նադարանի նախկին տնօրեն՝ ֆրանսահայ պատմաբան Յարութին-Ռայմոն Գեորգեանն էր, որ անոնց մեկ մասը, ֆրանսերենի թարգմանելով, դրաւ գիտական շրջանառութեան մէջ¹¹⁹, իսկ այլ մասեր քաղուածաբար ներկայացուց Հայոց Տեղասպանութեան ամբողջական պատմութեան նուիրուած իր կոթողային աշխատութեան զանազան գլուխներուն մէջ¹²⁰:

Անտոնեանի հաւաքած նիւթերէն փոքրաթիւ մասեր նախապէս հրապարակուած էին հայրենակցական միութիւններու լոյս ընծայած կարգ մը յուշամատեաններուն մէջ: Անոնցմէ եօթը վկայութիւն զանազան հանդէսներու մէջ վերջին տարիներուն լոյս տեսան մեր հրատարակութեամբ: Այժմ հրատարակութեան պատրաստած ենք եւ շուտով լոյս կը տեսնէ Մուրիոյ համակերրոնացման կայքերուն վերաբերող իր գրառումներուն եւ հաւաքած նիւթերուն ամբողջութիւնը:

¹¹⁹ Kévorkian R. Le génocide des arméniens. Paris. 2006:

¹²⁰ Անտոնեանի հաւաքած նիւթերէն Մուրիոյ համակերրոնացման կայքերուն վերաբերող վկայութիւնները ֆրանսերէն թարգմանութեամբ լոյս տեսած են հետեւեալ հատորին մէջ. Kévorkian R. L'Extermination des Déportés arméniens Ottomans dans les camps de concentration de Syric-Mésopotamie (1915-1916). Paris. 1998, p. 1-215:

**АРАМ АНТОНЯН И ЕГО РАБОТА В АЛЕППО
ПО СОБРАНИЮ ДОКУМЕНТАЦИИ О ГЕНОЦИДЕ АРМЯН
(Резюме)**

МИГРАН МИНАСЯН

Научный сотрудник Матенадарана им. М. Маштоца и
Музея-института геноцида армян

Статья посвящена документации Геноцида армян в Константинополе, Алеппо и Восточной Армении сразу после объявления Первой мировой войны. Одним из пионеров этого дела был известный армянский писатель и историк из Константинополя Арам Антонян, который чудом пережил геноцид и посвятил всю свою жизнь работе по документированию и анализу геноцида.

Антонян начал свою собирательскую работу в Алеппо, а затем продолжил свою ее в Париже и смог объединить уникальную коллекцию османских государственных секретных документов и свидетельств выживших, которые остались в основном неизданными.

Статья посвящена собирательской работе Антоняна, благодаря чего он смог объединить тысячи страниц свидетельств о массовых убийствах и посягательствах в Западной Армении, Киликии, Малой Азии и Сирийской пустыне.

**ARAM ANDONIAN AND HIS WORK ON COLLECTING
THE ARMENIAN GENOCIDE DOCUMENTATION
IN ALEPPO
(Summary)**

MIHRAN MINASSIAN

Researcher at the M. Mashtots Matenadaran and
the Museum-Institute of the Armenian Genocide

The article is devoted to the Armenian Genocide Documentation in Constantinople, Aleppo and Eastern Armenia, immediately after the declaration of the World War I. One of the pioneers of this work was Aram Andonian, a well-known Armenian writer and historian from Constantinople, who had miraculously survived the genocide and devoted his entire life to the work of documenting and analyzing the genocide.

Andonian began his collective work in Aleppo and continued in Paris and was able to unite a unique collection of Ottoman state secret documents and survivors' testimonies that remained largely unimplemented.

The article is dedicated to the Andonian's collecting work, with which he could unite thousands of pages of testimonies about the massacres and encroachments in Western Armenia, Cilicia, Asia Minor and the Syrian Desert.



Արամ Անտոնյան

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԵՒ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՑՈՒԱԾՔԸ
(Համայնքի պատասխանատուներու դիտանկիւնէն)

ՆԵՐՄԷՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ
<nersessarkissian@yahoo.com>

Նախապատերազմեան շրջանին յատկապէս 2000 թուականէն ետք Սուրիոյ մէջ փորձ մը կատարուեցաւ ժողովրդավարութիւնը ամրապնդելու միտումով: Ներքին եւ արտաքին ազդակներ թոյլ չտուին, որ այդ փորձը ունենայ հասունացման կենսափորձ: Ներքին իմաստով երկար տարիներու միակուսակցական դրոյթով ղեկավարուած երկիրը եւ այդ իշխանութիւններուն շունչով կազմաւորուած սերունդներու առկայութիւնը, իսկ արտաքին ճակատի վրայ շրջանային վերիվայրումները, Ամերիկայի Իրաք ներխուժումը, Լիբանանի մէջ տեղի ունեցած զարգացումները: Այս բոլոր ազդակները պատճառ դարձան, որ երկրին մէջ տեղի ունենայ երկու տարբեր արագութիւններով ընթացող գործընթացներ:

Ա.) Քաղաքական գործընթացներ, որոնք չհասան բիրտեղացած, զարգացած նոր վարչակարգի ստեղծումի:

Բ.) Տնտեսական զարգացումներ, որոնք ընթացան շատ արագ, երկրին մէջ ստեղծելով ազնա՞ շուկայական մթնոլորտ: Այս երկու ընթացքներու անհամաչափութիւնը վերահսկողութեան պայմաններու բացակայութեամբ, պատճառ դարձան, փտածութեան մթնոլորտի ու երեւոյթներու տարածման:

Սուրիական տազնապը սկսաւ Մարտ 2011 թուականին: Տարբեր սահմանումներ տրուեցաւ այս տազնապին՝ տազնապ, պատերազմ, քաղաքացիական պատերազմ, յեղափոխութիւն ...

Սուրիական տագնապը սկսաւ լայն շղթայի մը որպէս մէկ օղակ, որուն անունը «Արաբական Գարուն» կոչուեցաւ, որ սկսաւ Թունիսէն, անցաւ Եգիպտոս, Լիպիա, Եմէն ապա Սուրիա: Ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքներու լօգունքներով սկսած այս շարժումը արագ ձեռով բացայայտեց իր իսկական դիմագիծը: Անկախ որ տուեալ երկիրներու մէջ եւ յատկապէս Սուրիոյ, կային դժգոհութիւններու նախատարրեր, սակայն յատկապէս Սուրիոյ պարագային Յեղափոխութեան առարկայական եւ ենթակայական ամբողջական պատճառները կը բացակայէին: Շատ արագ յստակացաւ որ ծրագիրը շրջանի քաղաքական եւ ժողովրդագրական քարտեզը փոխելու ձգտող ծրագիր է. նպատակ ունենալով ազգային պետականութիւնները փոխարինել կրօնական՝ զաղափարախօսութիւններու վրայ յենած պետութիւններու եւ շրջաններու: Մրցակցութեան մէջ մտած (Արեւելք-Արեւմուտք Իսլամ-Շիի, Հիւսիս-Հարաւ Իսլամ-Սիւննի առանցքները ամրապնդելու) պայքարը երեք պետութիւններու վստահուած էր այս ծրագրի ֆինանսաւորումը եւ գործադրութիւնը՝ Թուրքիա, Քաթար եւ Սեուտական Արաբիա: Առաջինի եւ երկրորդի պարագային՝ մուսուլման եղբայրներու զաղափարներով, 3-րդի պարագային՝ Սեուտական Արաբիոյ Ուահապիութեան զաղափարներով: Այս շարժումին անմիջապէս հակադարձեց Իրանը, որպէս հակադիր բեւեռ, եւ Սուրիոյ մէջ դէպքերը վերածուեցան “PROXY WAR” – “GUERRE PAR PROCURATION” (Միջնորդուած պատերազմ – անգլ., ֆր.) հասկացողութեամբ: Այսինքն գետնի վրայ իւրաքանչիւր պատերազմող կողմ իր ետին կանգնած ունի պետութիւն մը. նոյնիսկ ծայրայեղ կրօնական ջոկատները (Իսլամական պետութիւն ISIS) ոչ այլ ինչ են, եթէ ոչ ժամանակաւոր միջոցներ, ռազմավարական նպատակներու հետապնդման:

Պատահական չէր ուրեմն այս տազնապին ծայր առնելը ոչ թէ մեծ քաղաքներէն, ինչպէս Դամասկոս եւ Հալէպ, այլ Տարաա- յի (Յորդանանի հետ սահմանամերձ), Հոմսի (Լիբանանի հետ սահմանամերձ) եւ Հալէպի հիւսիսի շրջանները (Թուրքիոյ հետ սահմանամերձ):

Յիշեալ ծրագրի գործադրութեան համար հայ համայնքը իրագրել չէր դէպքերու եւ ծրագիրներու ծաւալէն եւ վտանգատր հետեւանքներէն: Հայաստանի պետական եւ համահայկական հաստատութիւններուն համար ալ յստակ չէր այս մէկը: Բացա- կայ էր հայկական “THINK TANK”-ը (վերլուծական կենտրոն անգլ.), որպէսզի համայնքին տար անհրաժեշտ քաղաքական ուղղութիւնը: Հայկական կողմը միշտ մնաց “réactif” (հակազդող, հետազդող - ֆր.) եւ երբեք չեղաւ “proactif” (համազդող, կան- իազդող - ֆր.): Ուստի, համայնքը ինք իր անձնական ճիգերով եւ օրը օրին տեղի ունեցող զարգացումներու լոյսին տակ բանա- ձեւեց իր քաղաքական ուղղութիւնը, որ հետեւեալ կէտերուն մէջ կարելի է ամփոփել.-

* Սուրիահայութիւնը կառչած կը մնայ Սուրիոյ հողային եւ ժողովրդային ամբողջականութեան:

* Սուրիահայութիւնը դէմ է բռնարարքներու:

* Սուրիահայութիւնը դէմ է արտաքին ժխտական միջամ- տութիւններուն յատկապէս թրքականինը:

* Մենք դէմ ենք ահաբեկչութիւնը որպէս քաղաքական փոփոխութեան միջոց օգտագործելու երեւոյթին:

* Սուրիահայութիւնը երկխօսութեամբ կը յուսայ լուծել խնդիրը:

* Սուրիահայութիւնը անբաժան մասն է Սուրիոյ ժողովուր- դին եւ պէտք է ըսելիք ունենայ սահմանադրական փոփոխու- թիւններու հարցով, նոր սահմանադրութեան մէջ պէտք է յարգ-

ուին անհատ քաղաքացիներու, համայնքներու եւ փոքրամասնութիւններու իրաւունքները:

Խորքին մէջ հայութեան ֆիզիքական պաշտպանութիւնը մեր միակ նպատակն էր եւ մեր բոլոր քայլերը անոր կը միտէին:

Ընդդիմութեան մօտ կային 2 յստակ երեսներ, որոնք մեզ կը մղէին իրեն հանդէպ ըլլալ վերապահ եւ կասկածող՝

- Իսլամական դիմագիծը,
- Թրքական արեւելումը:

Այնուամենայնիւ համայնքը միշտ փորձեց ըլլալ չափաւոր:

Հոս տեղին է նշել ՀՅԴ Բիւրոյի, Եւրոպայի Հայ Դատի գրասենեակներուն եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան օգտակար դերը համայնքի ղեկավարութեան, պահելու համար վերոնշեալ հաւասարակշռութիւնը:

Հալէպի մէջ դէպքերը գահավեժ ընթացք ստացան 2012-ի Օգոստոս ամիսէն ետք, երբ ընդդիմադիր բազմապիսի զինուորական խմբաւորումներ ներխուժեցին քաղաքը եւ նուաճեցին անոր կէս տարածքը, որուն հետեւանքով հայահոծ շրջաններ՝ Նոր Գիւղ, Շէյխ Թահա, Ճալաա եւ Ճիտէյտէ շրջանները յայտնուեցան պատերազմական շփման գօտիներու վրայ, կրելով մեծ վնասներ: Այս կացութիւնը մնաց անփոփոխ մինչեւ 2016-ի Նոյեմբեր ամիսը, երբ պետական ուժեր վերանուաճեցին Հալէպը: Համայնքը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կուսակցութեան ղեկավարութեամբ ինքզինք վերադասաւորեց տազնապի պայմաններու տուեալներու լոյսին տակ:

* Կազմուեցաւ Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի մարմինը, որուն մէջ դերակատար էին Սուրիոյ մէջ գործող բոլոր կազմակերպութիւնները, միութիւններն ու հայկական կրօնական համայնքները:

* Հոս գինուելու անհրաժեշտութիւն զգացուեցաւ: Հայկական զինեալ երեսոյթները կարելի է բաժնել երեք տեսակներու.

ա. Սուրիական օրինական բանակին մէջ ծառայող հայորդիներ, որոնք կը կատարէին իրենց քաղաքացիական պարտաւորութիւնը (որոնց թիւը 150-էն աւելի է):

բ. Բրօ-պետական (պետականամետ), անկանոն կամ կիսականոն ջոկատներու մէջ զենք շալկող հայ զինուորներ, որոնց թիւը շատ սահմանափակ էր:

գ. Համայնքի ղեկավարութեան հովանաւորութեան տակ գործող զինեալ ուժեր. (Հալէպ, Գամիշլի, Քէսպապ), որոնց յստակ պարտաւորութիւններն էր.-

* Ըլլալ ուժական ներկայութիւն հայկական շրջաններու մէջ, յառաջքը առնելու ահաբեկչական ներխուժումներու:

* Վստահութիւն ներշնչել այդ շրջաններու հայութեան, որպէսզի կառչած մնան իրենց տուներուն եւ ունեցուածքներուն:

Հոս տեղին է յիշել, որ մեր՝ հայկական թաղերը պաշտպանող երիտասարդները, իրենց սահմանուած շրջագծէն դուրս եւ ամբողջ պատերազմի տեւողութեան ոչ մէկ մասնակցութիւն ունեցան երկրի մէջ ընթացող պատերազմական գործողութիւններուն, անկախ անոր որ մետիան (լրատուամիջոցները) շատ յաճախ խեղաթիւրեց մեր այս կեցուածքը՝ անոր տալով վտանգաւոր որակումներ:

Բնականաբար տիրող վտանգաւոր ծանր եւ անկախատեսելի այս պայմաններուն մէջ արտագաղթի առնչութեամբ համայնքի ղեկավարութիւնը չէր կրնար յստակ բանաձեւում մը բիրեղացնել:

Որդեգրուած բանաձեւը եղաւ հետեւեալը.

* Համայնքի այն զաւակները, որոնք կ'ուզեն մնալ եւ գոյատեւել երկրին մէջ, համայնքը իր առաւելագոյնը պիտի ընէ,

որ հասնի անոնց կենցաղային, կրթական եւ ապահովական կարիքներուն:

Անոնք, որոնք կ'ուզեն լքել երկիրը, քաջալերել, որ ուղղութիւնը ըլլայ դէպի Հայաստան եւ այս ուղղութեամբ Հայաստանի Իշխանութիւններուն հետ տեղի ունեցան շփումներ եւ մտքերու փոխանակումներ: Նոյնիսկ այն հայերը, որոնք կ'ուզեն հաստատուիլ հեռաւոր երկիրներ (Գանատա, Եւրոպա), ճիգ թափել, որպէսզի անոնք մնան այդ շրջաններու հայկական համայնքային օղակներուն մէջ եւ չցրուին:

Այսօր յետադարձ ակնարկով մը յստակ կարելի է յայտարարել, որ Սուրիահայ համայնքը արժանապատիւ կեցուածք ունեցաւ քառսային այս պայմաններուն մէջ: Կրցաւ ունենալ քաղաքական, ռազմավարական եւ կազմակերպական առողջ կեցուածքներ, որոնց արդիւնքով այսօր համայնքը կը շարունակէ ապրիլ եւ գոյատեւել անկախ իր կրած ծանր վնասներուն:

**СИРИЙСКИЙ КРИЗИС И
ПОЗИЦИЯ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ
(С точки зрения лидеров общины)
(Резюме)**

НЕРСЕС САРКИСЯН

На седьмом году сирийской гражданской войны национальное богатство, инфраструктура и институты Сирии были в значительной степени разрушены катастрофическими последствиями конфликта. На протяжении многолетнего вооруженного конфликта, который начался с антиправительственных протестов и перерос в полномасштабную гражданскую войну, многие сирийцы погибли, получили ранения и

были изгнаны из своих домов. Следовательно, гражданская война разрушила не только социально-экономическую структуру Сирии, но и ее мирное население. Однако, несмотря на все политические, финансовые, социальные трудности и угрозу для существования, сирийские армяне все еще сумели сохранить свою идентичность и боролись за отстаивание своих устоявшихся систем и общин, активно участвуют в восстановлении и реконструированию руин.

**THE SYRIAN CRISIS AND
THE POSITION OF THE ARMENIAN COMMUNITY**
(From the perspective of community leaders)
(Summary)

NERSES SARKISSIAN

As the Syrian Civil War enters its seventh year, Syria's national wealth, infrastructure and institutions have been greatly demolished by the catastrophic impact of the conflict. Many Syrians have lost their lives, got injured and been displaced from their homes throughout the years of armed conflict, which began with anti-government protests before growing into a full-scale civil war. Hence, the Syrian Civil War has devastated not only Syria's socio-economic structure, but also its civilians. However, in midst of all of the political, financial and social hardships and despite the threat of existence, Syrian-Armenians have still managed to keep their identity and fought to uphold their established systems and communities and are involved actively to rebuild and reconstruct the ruins.

ՄԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԳՆԱԺԱՍԸ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
(2011-2018 թթ.)

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

Կ.Գ.Թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար
գիտաշխատող
<lira777@yahoo.com>

Անցնող XX դ.-ից սկսված համաշխարհային ահաբեկչությունն իր դրսևորման տարբեր ձևերով (1908 թ. Օսմանյան կայսրությունում երիտթուրքական հեղաշրջում, 1914-1918 թթ. Առաջին աշխարհամարտ, 1915-1923 թթ., Հայոց ցեղասպանություն, 1917 թ. Ռուսական կայսրությունում Փետրվարյան հեղաշրջում և Հոկտեմբերյան հեղափոխություն, 1939-1945 թթ. Երկրորդ աշխարհամարտ և հետագա ռազմական իրադարձությունները Մերձավոր Արևելքում) ավերիչ հետևանքներ է ունեցել և շարունակում է ունենալ համամարդկային քաղաքակրթության վրա՝ պատճառ դառնալով բնիկ ժողովուրդների ժողովրդագրական վիճակի և բնօրրանային տարածքների փոփոխման ու վերաձևման:

Ավելին, Առաջին աշխարհամարտին Հայոց ցեղասպանությամբ և Օսմանյան ու Ռուսական կայսրությունների անկումով սկիզբ է դրվել Մերձավոր և Միջին Արևելքի նոր գրավման մեծ ծրագրին, որն առավել ծավալվել է հետագա տասնամյակների ընթացքում՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին ու հետո պարբերական ու տևական պատերազմների արդյունքում, և որն

իր գազաթնակետին է փորձում հասնել այսօր՝ չհայտարարված Երրորդ աշխարհամարտի ընթացքում:

Բոլոր աշխարհամարտերի բնւրոշ առանձնահատկությունն էր և շարունակում է մնալ բնիկ ժողովուրդների՝ տեղաբնիկների (հայեր, սլավոններ, արևելյան ու արևմտյան Եվրոպայի ժողովուրդներ, ինչպես նաև՝ արաբներ, եզդիներ, ասորիներ և այլթնիկ ու կրոնական այլ խմբեր) նկատմամբ գործադրված և պարբերաբար շարունակվող ցեղասպանություններն ու տեղահանությունները, որոնք որպես կանոն ուղեկցվում են համաճարդկային քաղաքակրթական ժառանգության, (հնագույն և նորագույն նյութական ու հոգևոր մշակութային արժեքներ¹²¹) հիմնովին ոչնչացմամբ, ինչպես նաև տարածքների քրիստոնեաթափմամբ (այդ թվում՝ հայաթափմամբ. մեկ դարի ընթացքում սկզբում Օսմանյան կայսրության հայաբնակ զավառներում, ապա՝ Հայոց ցեղասպանությունից հետո ստվարացած հայկական «մայր գաղութներում»):

Ժամանակին այդ աղետալի գործընթացն առաջիններից էր անդրադարձել հատկապես Արևելքի ու Արևմուտքի խաչմերուկում գտնվող հայության, մասնավորապես արևմտահայ հատվածի վրա՝ պատճառ դառնալով նրանց ցեղասպանման ու հայրենագրկման, ինչպես նաև մնացորդացի աշխարհով մեկ սփռվելուն՝ սկիզբ դնելով սփյուռքահայ սերունդների հետզհետե (արևմուտքի երկրներում՝ կտրուկ, արևելքի երկրներում՝ աստիճանական) ուժացմանն ու պահպանված բնօրրանի 1/10

¹²¹ UNESCO-ի Գլխավոր տնօրեն Իրինա Բոկովան «Իսլամական պետության» գործողությունները գնահատել է որպես «մշակութային զտման» (“cultural cleansing”) և [UNESCO seeks to save Jewish sites from Islamic State's claws. 2014. December 1, <<http://www.israelhayom.com/2017/07/20/unesco-seeks-to-save-jewish-sites-from-islamic-states-claws/>>]:

հատվածից՝ Հայաստանից, նրանց զգալի մասի հետզհետե անխուսափելի օտարմանն ու խորթացմանը:

Փաստորեն, Հայոց ցեղասպանությունից և արևմտահայության հայրենագրկումից 100 տարի անց, ինչպես նաև մասնավորապես Երկրորդ աշխարհամարտից հետո պարբերական ու տևական պատերազմների արդյունքում Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցող արմատական գործընթացներն այժմ արդեն հանգեցրել և նպատակ ունեն հանգեցնելու տարածաշրջանի բնիկ և այլթոնիկ ժողովուրդների բնաջնջմանն ու տեղահանությանը, ինչպես դա եղավ մեկ դար առաջ հայերի նկատմամբ:

2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչությամբ Մերձավոր Արևելքում սկզբնավորված ու իրարահաջորդ ահաբեկչական ավերիչ պատերազմները, քաղաքացիական բախումները, միանման սցենարով իրականացված հեղաշրջումներն իրենց անշրջելի հետևանքներն են ունեցել և շարունակելու են ունենալ նաև տեղի հայ համայնքների վրա [Իրաք (2003 թ., մարտի 20 – 2007 թ., մայիս; 2008 թ. մինչև օրս), Եգիպտոս (2011 թ., հունվարի 25 – 2013 թ., հուլիսի 3), Սիրիա (2011 թ., մարտի 15-ից մինչև օրս)]: Հայկական համայնքներ, որոնք մեծապես ստվարացել էին Առաջին աշխարհամարտի ընթացքում հայության նկատմամբ իրագործված ցեղասպանության հետևանքով փրկված հայերի այդ երկրներում ապաստան գտնելով:

Պատահական չէ, որ իր պատմական բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, ինչպես նաև Օսմանյան կայսրության հայաբնակ գավառներում համաշխարհային ռճրագործ ուժերի միևնույն հովանավորների կողմից ցեղասպանության և հայրենագրկումի ենթարկված հայության մագապուրծ բեկորներ:

րի ժառանգները շարունակում են ենթարկվել ցեղասպան ահաբեկիչների հարձակումներին, ավերումներին ու տեղահանումներին, այժմ արդեն երբեմնի հյուրընկալ արաբական հողում Մերձավոր և Միջին Արևելքում, որտեղ ժամանակին ապաստան էին գտել իրենց նախնիները:

Մինչև պատերազմը Սիրիայում առկա էր շուրջ 80.000-անոց բավական կազմակերպված հայ համայնք, որոնց մեծ մասը շուրջ 60.000-ը բնակվում էր Հալեպում¹²²: Ահաբեկչական ուժերի

¹²² Ֆիշենկճեան Ա., Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը (1946-1970 թթ.), Երևան, 2018, էջ 18: Փաշայան Արաքս, Անկայունությունը Սիրիայում և սիրիահայ համայնքը. «Գլոբուս. Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», թիվ 3, 2011, էջ 23: Գալստյան Հր., Սիրիահայեր. Վերադարձ, որ չէին նախատեսել, 2015, 3 հունիսի, <<http://hctq.am/arm/news/60582/syrian-armenians-are-never-they-never-predicted.html>>: Ջաքարեան Ֆ., Սիրիայի հայ համայնքի հետ տարբեր աշխատանքները (2008-2015), «Սուրիոյ Հայերը. Գիտաժողովի Նիսեր (24-27 Մայիս, 2015)», իւմբ. Ա. Տազեւեան, Պէրթոբ, “Haigazian University Press,” 2018, էջ 569:

Տարբեր աղբյուրներում նախապատերազմական Սիրիայում հայերի թվի վերաբերյալ այլ տվյալներ են ներկայացված 60.000 (Պետք է պահպանենք սիրիահայ համայնքը, այն մեր ներկայությունն է Մերձավոր Արևելքում. Արաբազետ, 2012, 21 հուլիսի, <<https://www.tert.am/am/news/2012/07/21/siria-haj/552047>>), 60.000-70.000 (Կայծ Մինասեան. «Հայերը Սուրիոյ մէջ ապագայ չունին», Զրուցեց Սազո Արեան, «Ժամանակ», Ստամբուլ, 2018, 4 Օգոստոս, <[http://arka.am/en/news/society/kuwait_to_release_100_000_in_emergency_assistance_to_syrian_armenians/](http://213.232.51.219/content/հարթակ/4-08-2018-կայծ-մինասեան-«հայերը-սուրիոյ-մէջ-ապագայ-չունին»>), <u>80.000-100.000</u> (Kuwait to release $100,000 in emergency assistance to Syrian Armenians. 2012, November 29, <, Grigoryan Marianna. Armenia: An Uncertain “Homecoming” for Syria’s Diaspora. 2012, July 31, <<https://eurasianet.org/armenia-an-uncertain-homecoming-for-syrias-diaspora>>), ավելի քան 120.000 (War Witness. War Torn Syria and the Armenian Redwood Project – Providing Safe Refuge Amongst the Wreckage. 2015, May 1, <<http://www.armenianredwoodproject.org/new-blog/2015/1/war-torn-syria-and-the-armenian-redwood-project-providing-safe-refuge-amongst-the-wreckage>>) և կամ Հայ առաքելական եկեղեցու 150.000 հետևորդ (Сирия, <<https://ru.wikipedia.org/wiki/Сирия>>), մինչդեռ այլ տվյալներով Հալեպում հայերի թիվը 40.000 էր (Սուրիահայ Գաղութը Տոկոն և Ջորաուր Արմատներու Վրայ Հիմնուած ու Կազմուած Գաղութ Է», Կր յայտնէ Սուրիոյ Հ.Յ.Դ.-ի

կողմից 2011 թ. երկրում սանձազերծված երկարատև ու կործանարար պատերազմի հետևանքով բազմահազար սիրիահայեր, ի շարքս այլ երկրների (Լիբանան, Հորդանան, Միացյալ Արաբական Էմիրություններ, ԱՄՆ, Կանադա, Շվեդիա և այլն), ապաստան են գտել նաև Հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) և Արցախի Հանրապետությունում (ԱՀ): Ընդհանուր առմամբ, ըստ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի նախագահ Լենա Հալաճյանի (2012-2017 թթ.), պատերազմի սկզբից մինչև 2017 թ. հունվարի վերջ Հայաստան է մուտք գործել 22.000 սիրիահայ¹²³: Ընդ որում, ըստ ՀՀ սփյուռքի նախարարության տվյալների, միայն 2012-2015 թթ. ՀՀ է եկել շուրջ 17.000 սիրիահայ¹²⁴:

Միաժամանակ, Արևմուտքի երկրների գաղթականական ծառայությունների կողմից առավելապես քրիստոնյա (ըստ էության հիմնականում՝ հայ) գաղթականների համար բացված արտագաղթելու մասնաբաժինային (Quota) արտոնությունների¹²⁵

Կեդրոնական Կոմիտեի Անդամ Ներսես Սարգիսեան, 2015, 2 Դեկտեմբեր. <<http://hairenikweekly.com/2015/12/02/24700>>:

¹²³ Սիրիահայերի մասին՝ վիճակագրության լեզվով. Մեր հյուրն է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի նախագահ Լենա Հալաճյանը, 2017, 27 հունվարի, <<http://nyut.am/?p=133813&l=am>>: Տե՛ս նաև՝ Lieberman A. Lessons learned as Syrian-Armenian refugees return to Armenia. 2017, July 25, <<https://www.devex.com/news/lessons-learned-as-syrian-armenian-refugees-return-to-armenia-90551>>. ՍիրԱրԲի-ի մասին, <<http://syarbi.am/hy/about-syarbi>>:

¹²⁴ **Ջաբրեան Ֆ.**, նշվ. աշխ., էջ 569:

¹²⁵ Այսպես՝ երբ սիրիական պատերազմի ընթացքում հարձակումների թիրախ սկսեցին դառնալ նաև հայերն ու հայկական կառույցները, ամերիկահայ առանձին գործիչներ դիմել են ԱՄՆ-ի համապատասխան կառույցներին երկրի գաղթականական ծրագրերում հայերին հատկացված մասնաբաժնի վերանայման առաջարկով: 2012 թ. նոյեմբերի 11-ին, ԱՄՆ-ի կառավարությունը, արձագանքելով չորս երևելի ամերիկահայ իրավաբանների դիմումին, վերանայել է նախկինում «Հայրենիքի անվտանգության» (“Homeland Security”) բաժանմունքի Միացյալ Նահանգների Քաղաքացիության և ներգաղթի ծառայ-

յության (ՄՆՔՆԾ) (US Citizenship and Immigration Services - USCIS) որոշումը սիրիահայերին սուկ «Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակ» ("Temporary Protected Status" - TPS) տրամադրելու մասին և արտոնել է սիրիահայերին «Իրավագրվության վիզա» ("Visa Waivers") շնորհել: Հիշյալ որոշման մեջ նշված էր. «[Սիրիայում] բռնի իշխանավորության և վատթարացող իրավիճակի պայմաններում ՄՆՔՆԾ-ն հայտարարել է, որ օրինական սիրիացի ազգայինները ... ԱՄՆ-ում կարող են դիմել Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակի» [US Government responds to Prominent Armenian-American lawyers call upon US Government to issue visa waivers for Syrian-Armenians. Center for Armenian Remembrance. Press Release. 2012, November 12, <<http://www.centerarnews.com/>>]: Վկայակոչելով Հալեպում հայկական Սբ. Գևորգ եկեղեցու ուրբահարումը, ինչպես նաև Բեյրութ-Հալեպ երթուղու ավտոբուսից թվով յոթ հայերի առևանգումը՝ Խաղաղության կորպուս /ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ծրագրի տնօրենի երբեմնի օգնական, հանրահայտ իրավաբան Վարդգես Եղիայանը և Փասադենայի նախկին քաղաքապետ Ուիլյամ Պապարյանը 2012 թ. հոկտեմբերի 12-ին դիմել էին ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Բլինթոնին և Հայրենիքի անվտանգության բաժանմունքի քարտուղար Ջանեթ Նափոլիտանոյին՝ իրենց մտահոգությունն արտահայտելով Սիրիայի պաշարված քրիստոնյա քաղաքացիների ճակատագրի վերաբերյալ. «Բախումներն այնտեղ [Սիրիայում] ընդգրկել են երկրի խոշոր շրջանները՝ քրիստոնյաների առանց այն էլ անհուսալի դրությունը դարձնելով անտանելի: Ահա թե ինչու, տեղյակ լինելով օրենսդրությանը, ներառյալ՝ «Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակը» սիրիահայ ազգայինների վրա տարածելու փաստին, գտնում ենք, որ այն բավարար չէ դիմակայելու վատթարացող մարդասիրական իրադրությանը, որի համար մենք դիմում ենք Միացյալ Նահանգների կառավարությանը»: Շատ չանցած սիրիահայերի անհաշիվ բարեկամներն ու հարազատները ԱՄՆ-ից և այլ վայրերից իրենց աջակցությունն են հայտնել Միացյալ Նահանգների կառավարությանը սիրիահայերին ԱՄՆ մուտք գործելու դյուրություն ապահովելու համար: Ուիլյամ Պապարյանի հավաստմամբ, իրենք պիտի շարունակեն «ճնշում գործադրել ԱՄՆ-ի կառավարության վրա՝ անհապաղ միջոցներ ձեռնարկել քրիստոնյաների տառապանքը Սիրիայում թեթևացնելու», և պիտի տեղեկացնեն սիրիահայ համայնքին և նրանց ընտանիքներին ու բարեկամներին հետագա զարգացումների մասին [US Government responds to Prominent Armenian-American lawyers call upon US Government to issue visa waivers for Syrian-Armenians. Center for Armenian Remembrance. Press Release. 2012, November 12, <<http://www.centerarnews.com/>>]: Մինչդեռ հարկ էր, որ սոյնտրահայությունը միասնականություն դրսևորեր, որպեսզի տևական պատերազմի հետևանքով ավերվող Սիրիայից մեր այդ հայրենակիցները

(ղեպի ԱՄՆ, Կանադա, Եվրոպական երկրներ, Ավստրալիա և այլն) արդյունքում Արևելքի երկրների առավելապես «հայապահպանված» հայության նորանոր սերունդներ են զոհաբերվում Արևմուտքի «հալեցնող կաթսայի» ձուլարանին:

Պատմաքաղաքական և գաղափարաքաղաքական օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների տեսակետից վերլուծելով ճգնաժամի մեջ հայտնված առանձին վերցրած Միրիայի հայության վերաբերյալ համայնքային, ինչպես նաև Հայաստանի (ՀՀ և ԱՀ) համապատասխան կառույցների տրամադրությունների ու գործողությունների տրամաբանությունը՝ կարելի է հանգել համապատասխան ընդհանրացնող եզրակացությունների, որոնք, ցանկության դեպքում, համասփյուռքյան առաջնահերթությունների հետագա վերաբժնորման առիթ կարող են դառնալ:

Այսպես, պատմաքաղաքական օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների բերումով հայությունը թե՛ սփյուռքում (համայնքային կառույցները) և թե՛ Հայաստանում (իշխանությունները), ընդհանուր առմամբ, անպատրաստ էր պատերազմի հետևանքով սփյուռքի, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքի, հայագաղութի՝ Միրիայի հայ համայնքի արմատական ճգնաժամին և տասնյակ հազարավոր տեղահանված հայրենակիցներ ունենալու խնդրին:

Մասնավորապես, Սիրիայի հայ համայնքի ազգային կառույցները՝ հայ առաքելական եկեղեցին (Մեծի Տանն Կիլիկիո

տեղափոխումն ու բնակեցումն իրականանալը ՀՀ-ում և ԱՀ (ԱՀՀ)-ում՝ տեղական իշխանությունների գործունեությանը զուգընթաց, այլ ոչ թե՛ ԱՄՆ-ում, ինչպես նաև նյութական աջակցություն ցուցաբերվեք Հայաստանի կառավարության ջանքերին արտերկրի մեր հայրենակիցներին Հայրենիք տեղափոխելու, տեղավորելու և նրանց զբաղվածությունն ապահովելու ուղղությամբ, այլ ոչ թե՛ ԱՄՆ իշխանություններին և ԱՄՆ-ում հաստատվելուն:

կաթողիկոսության երկրորդ խոշոր Բերիոն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կաթողիկոսությանը ենթակա Դամասկոսի զույգ թեմերով), նույնպես և քաղաքական-կուսակցական ու ազգային-համայնքային կառույցների ղեկավար մարմինները պատրաստ չէին պատերազմական իրավիճակի, թեպետ, հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո Մերձավոր և Միջին Արևելքում (Պաղեստին, Եգիպտոս, Լիբանան, Սիրիա, Իրաք, Իրան և այլն) ընթացող ռազմաքաղաքական զարգացումներին ակնատես և քաջատեղյակ լինելով, համայնքային կառույցներն օբյեկտիվորեն պետք է, որ կարողանային առավելագույնս կանխատեսել հասունացող ռազմական էլքի անխուսափելիությունը և դրա կործանարար հետևանքները հայ համայնքի համար: Հետևաբար, որպես «Մայր գաղութի» համայնքային կառույցներ, հարկ էր, որ մինչև օրս կարողանային վերանայել համասփյուռքյան և, մասնավորապես, համայնքային առաջնահերթությունները (պասիվ հայապահպանություն, համայնքն ամեն գնով պահպանել՝ նույնիսկ մարդկային կյանքերի գնով, օտար երկրներում «հայրենիքներ» վերականգնել՝ նույնիսկ կրակահերթերի տակ):

Միրիայի հայության կենսագործունեության համար պատասխանատու համայնքային և ընդհանրապես համահամայնքային կառույցները, ունենալով երբեմնի պետականագուրկ հայության ստեղծած դասական հայ գաղթավայրերի (Հնդկաստան, Լեհաստան, Հոլանդիա և այլն) սոսկ որպես ժամանակավոր և անհեռանկար հանգրվան ծառայած լինելու պատմական փորձառությունը, ինչպես նաև ԽՍՀՄ փլուզումից և «Սառը պատերազմի» փաստացի ավարտից հետո արդեն իսկ պետական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական բազմակողմանի հարաբերություններ մշակելով Հայաստանի Հանրապետության հետ [որը 1991 թ. ազատ, անկախ և ԼՂՀ (ԱՀ) հռչակումով նաև միաց-

յալ դառնալու գործընթացում է], այնուամենայնիվ, սուբյեկտիվ դրդապատճառներից էլնելով, շահագրգռված էին և տակավին շահագրգռված են սփյուռքն ընդհանրապես և, մասնավորապես, Հայոց ցեղասպանության հետևանքով ստվարացած Մերձավոր Արևելքի «Մայր գաղութը» պահպանել նույնիսկ ավերակների ու փլատակների պայմաններում (անգամ Սիրիայում պատերազմի ներկրից արտագաղթի ամենաթեժ ժամանակ ու հետո¹²⁶):

Մինչդեռ, Արևելյան Հայաստանը, հատկապես Ռուսաստանին միավորվելուց հետո (Հայկական մարզ՝ 1828-1840 թթ., Երևանի գավառ՝ 1840-1849 թթ., Երևանի նահանգ՝ 1849-1918 թթ.) և առավել ևս XX դ. ողջ ընթացքում (Հայաստանի առաջին Հանրապետություն՝ 1918-1920 թթ., Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն՝ 1920-1991 թթ. և Հայաստանի Հանրապետություն՝ 1991 թ. մինչև օրս), եղել և շարունակում է մնալ գաղթի, ներգաղթի և հայրենադարձության (անհատ, կազմակերպված, զանգվածային) օբյեկտիվ հանգրվան, որքան էլ դժվարին պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական պայմաններում դրանք իրականացված լինեն:

Սուբյեկտիվ դրդապատճառների հետևանքով սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական դժվարություններ դիմակայող Հայաստանը բնական է, որ անպատրաստ էր նման ահռելի աղետի հետևանքով տեղահանված իր մեծաթիվ հայրենակիցների ընդունմանը: Այդուհանդերձ, ի տարբերություն 2000-ական թվականներին իրաքյան պատերազմի հետևանքով տեղահան-

¹²⁶ Սիրիայի հայությունը կմևա սիրիական հայրենիքի ու իր ժողովրդի կողքին. Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Կաթողիկոս, 2012, 21 հուլիսի, <<https://www.tert.am/am/news/2012/07/21/aram.a-syria/552009>>, <<http://www.slaq.am/arm/news/66853/>>: Դեպի Վերականգնում. Արամ Ա.ի Կոչը Հայ Ժողովուրդին՝ Տազնապահար Հավեպէն, 2017, 9 Յունուար, <<http://asbarez.com/arm/272583/>>:

ված և Հայաստան փոխադրված մեր հայրենակիցների նոր միջավայրին ընտելանալու հետ կապված դժվարությունները դիմագրավելու փորձառության, սիրիահայերի կարգավիճակը Հայրենիքում համեմատաբար բարենպաստներից էր: Սիրիայից հայրենադարձներին ցուցաբերված աջակցությունն առավել կազմակերպված և համակարգված ընթացք է ստացել, շնորհիվ 2008 թ. ստեղծված ՀՀ սփյուռքի նախարարության (2008-2018 թթ. նախարար՝ Հրանուշ Հակոբյան):

ՀՀ Նախագահի որոշմամբ, Սփյուռքի նախարարությունը համակարգել է Հայաստան տեղափոխված սիրիահայերի աջակցության ծրագրերը¹²⁷՝ գործակցելով ՀՀ կառավարության համապատասխան տարբեր գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային ու համահայկական հասարակական ու բարեգործական մի քանի տասնյակ կառույցների ու կազմակերպությունների (այդ թվում՝ սիրիահայ) հետ¹²⁸ հնարավոր բոլոր միջոց-

¹²⁷ Զաքարեան Ֆ., նշվ. աշխ., էջ 570:

¹²⁸ Հայաստանում սիրիահայերին աջակցություն ցուցաբերած հաստատությունների ոչ լրիվ ցանկը՝ ՀՀ սփյուռքի նախարարություն (համակարգող), ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայություն, ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամ (ՀՀ ՓՄԶ ԶԱԿ – SME DNC RA), Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակ (ՄԱՓԳՀ – UNHCR), Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA ROLI) հայաստանյան ներկայացուցչություն, Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն հասարակական կազմակերպություն (ՍՀՀԿ ՀԿ – CCSA NGO), «ՀԱԼԷՊ» Հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպություն (ՀՀԲ ՀԿ – ACC NGO), «Սիրիահայ միություն» հասարակական կազմակերպություն (ՍՄ ՀԿ – SAU NGO), «Վերադարձ Հայաստան» հիմնադրամ (“Repatriation Armenia” Foundation), «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (“World Vision” Armenia), «Առաքելություն Հայաստան» բարև-

գործական ՀԿ (“Mission Armenia” Benevolent NGO), «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ (“KASA” Fondation Humanitaire Suisse), «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն (“Armenian Caritas” Benevolent NGO), Հայկական կարմիր խաչի ընկերություն (Armenian Red Cross Society) (Միբիահայերի աջակցության բաժին, Երիտասարդության աջակցության բաժին [Միբիահայերին օժանդակություն տրամադրող կազմակերպությունների և ծառայությունների ցանկ. Միբիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում. List of Organisations and Services Provided to Syrian Armenians. Increased Resilience of Syrian Armenians and Host Population (IRIS), Երևան, 2018, 24 էջ]) (Armenian Red Cross Society), Ամերիկայի «Հայ օգնության ֆոնդի» Հայաստանի մասնաճյուղ (ՀՕՖ – FAR, American “Fund for Armenian Relief.” Armenia Chapter), Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ – AGBU, Armenian General Benevolent Union), Ջինիշյան հիշատակի հիմնադրամ (ՋՀՀ – JMF, Jinishian Memorial Foundation), ինչպես նաև «ՍՕՍ մանկական գյուղեր» Հայաստան հայկական բարեգործական հիմնադրամ, «Կսնանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն (“Women Support Center” NGO), Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ (ԵՀԽՀՄԲ ԿՍՀ – WCC AICRTF, World Council of Churches, Armenia Inter-Church Charitable Round Table Foundation) [Հայաստանում տեղահանված անձանց աջակցման ծառայությունների տեղեկատվական թերթիկ, Երևան, 2018, օգոստոս, 54 էջ], ինչպես նաև Սայր Աթոռ Սբ. Էջմիածին, Հայ կաթողիկե եկեղեցի, Հայաստանում Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն (ԱՀԱԸ – AMAA, Armenian Missionary Association of America, Armenia), Հայաստանում Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե (ՄՍՕԿ – UMCOR, United Methodist Committee of Relief, Armenia), «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկություն (Fundação Calouste Gulbenkian), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (ԳՄՀԸ – GIZ, Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit), «Իզմիրլիյան» հիմնադրամի հայաստանյան գրասենյակ (Izmirlian Foundation), Հայաստանում գերմանական կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղ, «Հուսո Տուն» բարեգործական կենտրոն հիմնադրամ (Haus der Hoffnung – House of Hope), Հայ օգնության միություն, Հայաստան (ՀՕՍ – ARS, Armenian Relief Society, Armenia), «Երիտասարդները հանուն զարգացման» հիմնադրամ (KASA), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության Աշխատանքային միգրացիայի բաժին, Փոքր և միջին ձեռնարկատերերի համագործակցության ասոցիացիա հասարակական կազմակերպություն (ՓՄՀՀԱ. ՀԿ) [Միբիահայերին օժանդակություն տրամադրող կազմակերպու-

ներով (քաղաքական, սոցիալական, տնտեսական, իրավաբանական, առողջապահական, կրթական, մշակութային, մարդասիրական և այլն) դյուրացնելու համար սիրիահայերի Հայրենիքում տեղավորվելու, հաստատվելու և համակողմանի ինտեգրվելու գործընթացը¹²⁹:

Այնպես որ, Սիրիայի հայ համայնքի ճգնաժամը ՀՀ Սփյուռքի նախարարության հիմնադրումից ի վեր առաջին լուրջ փորձությունն էր սփյուռքի (տվյալ դեպքում՝ սիրիահայ հատվածի) ինտրոլ Հայրենիքի ներգրավման և Հայաստան-սփյուռք գործակցության արդյունավետության գնահատման առումներով:

Սիրիայի հայ համայնքի ճգնաժամը փորձություն էր նաև խորհրդային տարիներին իրականացված պարբերական հայրենադարձություններից ի վեր հայության երկու հատվածների միջև համատեղ փոխըմբռնման, փոխգործակցության և գոյակցության պատրաստակամության զաղափարահոգեբանական ու գործնական կողմը քննության ենթարկելու առումով:

Գաղափարաքաղաքական օբյեկտիվ և սուբյեկտիվ դրդապատճառներից էլնելով՝ հայությունը թե՛ սփյուռքում և թե՛ Հայաստանում հայրենադարձվելու և կամ հայրենադարձ ընդու-

թյունների և ծառայությունների ցանկ. Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում. List of Organisations and Services Provided to Syrian Armenians. Increased Resilience of Syrian Armenians and Host Population (IRIS), Երևան, 2018, 24 էջ, ինչպես նաև՝ Սովի հաղթահարման Օքսֆորդի կոմիտե (ՕԲԽՖԱՄ Հայաստան – OXFAM Armenia, Oxford Committee for Famine Relief), Հայաստանի զարգացման նախաձեռնություններ բարեգործական հիմնադրամ (ՀԶԼԲՀ – IDeA, Initiatives for Development of Armenia Foundation), “Armenian Redwood Project” (ARP) և տասնյակ այլ կազմակերպություններ:

¹²⁹ Ավելի մակրամասն տե՛ս Զաքարեան Ֆ., նշվ. աշխ., էջ 569-576:

նելու առումով ազգային պատրաստվածության տարբեր հարթություններում է:

Այսպես, Սիրիայից ժամանակին Հայաստան այցելած, Հայաստանում ուսանած, Հայաստանում տարբեր գործակցություն (անձնական, գիտական, գործարար և այլն) իրականացրած ու իրականացնող և դրանով իսկ Հայաստանի լեզվամտածողության առանձնահատկություններին (նաև՝ ռուսերենի գործածություն), նիստուկացին, բարքերին, սովորույթներին և կենցաղավարման այլ առանձնահատկություններին ծանոթ սիրիահայերի համար օբյեկտիվորեն դյուրին է եղել Հայաստան հայրենադարձվելու որոշում կայացնելն իրենց բնակված երկրում հակամարտությունը սկսելուց դեռ շատ առաջ կամ տակավին նոր սկսված տարիներին:

Այնինչ, Սիրիայում հակամարտության խորացման պատճառով արդեն հետագա տարիներին Հայրենիքում ապաստանածների («ակամա հայրենադարձ») մի որոշ մասի համար, Հայաստանը դիտվել և տակավին կարող է դիտվել որպես ժամանակավոր հանգրվան տարանցման (տրանզիտ) վայր, ինչպես այլ երկրներ (Եվրոպա, ԱՄՆ, Ավստրալիա, Արևելքի երկրներ) փոխադրվելու, նույնպես և ետ՝ Սիրիա վերադառնալու համար, ինչը հիմնականում սուրբեկտիվ դրդապատճառներ ունի (հայաստանյան միջավայրին ընտելանալու ցանկության պակաս, Հայաստանի սոցիալ-տնտեսական դժվարություններին, տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակին, արևելահայ լեզվամտածողության առանձնահատկություններին, նաև՝ ռուսերեն լեզվին, նիստուկացին, բարքերին, սովորույթներին, մշակութային ու կենցաղավարման այլ առանձնահատկություններին անծանոթ լինելը կամ խորթ ընդունելը և այլն):

Մինչդեռ, անկախ Հայաստանի քաղաքացիները, ընդհանուր առմամբ (առանձին աննշան բացառություններով), հանդուրժող վերաբերմունք են դրսևորել և դրսևորում Միրիայի մեր հայրենակիցների նկատմամբ, ինչը օբյեկտիվ գործոնների հետևանք է (խորհրդային և հետխորհրդային տարիներին պարբերական ու անհատ հայրենադարձության արդյունքում արևմտահայ լեզվամտածողությանը, նրանց որոշ մասի կողմից նաև՝ թուրքերենի, արաբերենի և այլ լեզուների գործածությանը, նիստուկացին, քարքերին, սովորույթներին, մշակութային և կենցաղավարման այլ առանձնահատկություններին ծանոթ, ընտելացած, առանձին ղեպքերում՝ նաև վարժված ու յուրացրած լինելը):

Ուստի, ՀՀ և ԱՀ բնակչության զգալի մասի սուբյեկտիվ ընկալումներում անհասկանալի է՝ տակավին 1991 թվականից ազատ, անկախ դարձած և ԼՂՀ/ԱՀ հռչակումով նաև միացյալ դառնալու ճանապարհին գտնվող Հայաստանը Հայոց ցեղասպանության հետևանքով աշխարհով մեկ սփռված հայության և նրանց ժառանգների զանգվածային հավաքման (Հայրենադարձություն, «Արի տուն» կոչ, Տունդարձ, Հայահավաք), համակողմանի բնակեցման և մինչև օրս Հայրենիքը լայնամասշտաբ ներդրումների վայր դիտարկելու առաջնահերթությունների սակարկումը սփյուռքի՝ իր հայրենակիցների որոշակի հատվածի կողմից, ինչպես նաև սփյուռքի և, մասնավորապես՝ Միրիայի, որպես «Մայր գաղութի» առավելագույնս «հայապահպանված» հայության հայրենադարձվելու նկատմամբ նախընտրության և նախանձախնդրության պակասը¹³⁰:

¹³⁰ Տե՛ս Գալստյան Հր., Միրիահայեր. վերադարձ, որ չէին նախատեսել, 2015, 3 հունիսի, <<http://hetq.am/arm/news/60582/syrian-armenians-a-return-they-never-predicted.html>>:

Նախկինում սփյուռքի որոշակի հատվածի համար Հայաստանի հետ հարաբերություններում գլխավոր խոչընդոտ հանդիսացող ԽՍՀՄ-ի փլուզումից քառորդ դար անց, այժմ արդեն որպես նոր խոչընդոտներ են դիտարկվում (ընդ որում, հիմնականում նույն այդ ուժերի իսկ կողմից) Հայաստանի սոցիալ-տնտեսական դժվարությունները, քաղաքական դրությունը Արցախում, արևելահայ լեզվամտածողության, ինչպես նաև ռուսերենի գործածության առանձնահատկությունները և այլն:

Ավելին, խնդրահարույց տարածաշրջանում պատերազմի հետևանքով ավերակված որդեգրած երկրի («սիրիական հայրենիք») ազգային կառույցները վերականգնելու, վերաշինելու կոչեր են հնչում և միջոցներ ձեռնարկվում¹³¹, որոնք մնացյալ հայության սերունդները հերթական անորոշության մատնելու միտում ունեն, ինչպես նաև խոչընդոտել և խոչընդոտելու են իրական Հայրենիքի վերակառուցման համասփյուռքյան ջանքերին, ինչպես նաև բոլոր ժամանակների համար առաջնահերթ ու օրախնդիր հայահավաքի գաղափարագործնական ծրագրին:

Ցավոք, քաղաքական-կուսակցական հատվածական գաղափարախոսությունը, առանձին բացառություններով, սփյուռքի որոշ շրջաններին հեռու է սլահել և սլահում ամբողջովին միանալու և զորացնելու Միրիայից հայրենադարձ մեր հայրենակիցներին աջակցելու՝ Հայաստանի ջանքերին՝ դրանով իսկ խոչընդոտելով սփյուռքը միանշանակ դեպի Հայրենիք կողմնորոշելու հնարավորությունից, առանձին դեպքերում նախապատվություն-

¹³¹ Դեպի Վերականգնում. Արամ Ա.ի Կոչը Հայ Ժողովուրդին՝ Տազնապահար Հալեպեն, 2017, 9 Յունուար, <<http://asbarez.com/arm/272583/>>: Գզիբյան Ա., Միրիայի հայ համայնքի ջանքերով 2019-ին լայն թափով կվերականգնվեն ազգային կառույցները, 2019, 9 հունվարի, <<https://armenpress.am/arm/news/960028.html>>:

նը տալով սատարել փախստական հայերի արտերկրում հաստատվելուն, հայության նորանոր իրարահաջորդ սերունդներ մատնելով օտարության մեջ հերթական «հայրենիքներ» «(վերա)կառուցելու» անհեռանկար և իմաստագուրկ գործընթացով զբաղվելու, մինչդեռ Հայրենիքը՝ ՀՀ-ն ու ԱՀ-ն, իր զավակների անսակարկ ու բոլորեքյան աջակցության կարիքն ունի:

Վիճակը նույնն է նաև սփյուռքահայ այլ համայնքներում ևս, որտեղ, ժամանակի ընթացքում նմանատիպ (սիրիական) կամ այլ սցենարի չբացատվող իրադարձությունների զարգացման ու ծավալման պայմաններում անգամ Հայրենիք վերադարձը և հայրենադարձների տեղավորմանն աջակցելը մնում է սակարկելի, համասփյուռքյան առաջնահերթություններից դուրս (աչքի առաջ է Իրաքից, Եգիպտոսից, Սիրիայից հեռացած և հեռացող հայության պարագան) նախապատվությունը տալով օտար եզերքներում հանգրվանելուն, և կամ ազատ, անկախ, իսկ Արցախի ազատագրումով նաև միացյալ դառնալու ճանապարհին գտնվող Հայրենիքն¹³² առանձին դեպքերում որպես ցատկահարթակ (տրամպլին), տարանցման (տրանզիտ) վայր է դիտարկվում¹³³:

Աշխարհաքաղաքական արդի մարտահրավերներն առավել քան առիթ պետք է դառնան համասփյուռքյան առաջնահերթությունների վերարժևորման, համայնքային կյանքը սփյուռքում բարոյահոգեբանական, գաղափարագործնական առումով

¹³² «Ազատ, անկախ և միացյալ Հայաստան» 1919 թ. ՀՅԴ հռչակած քաղաքական հավատալիքը [Անկախ և միացյալ Հայաստան, <https://hy.wikipedia.org/wiki/Անկախ_և_Միացյալ_Հայաստան>]:

¹³³ 2012-2015 թթ. ՀՀ եկած շուրջ 17.000 սիրիահայերից մոտավորապես 4.000-ը մեկնել է այլ երկրներ, ինչպես նաև վերադարձել է Սիրիա: Տե՛ս Ջաքարեան Ֆ., նշվ. աշխ., էջ 569:

արմատապես վերանայելու և վերակազմակերպելու համար: Այդ դարակազմիկ առաքելությունն առանց երկմտելու և հապաղելու միասնականորեն իրենց ձեռքը պետք է վերցնեն ինչպես սփյուռքն իր համայնքային բոլոր կառույցներով՝ Հայ եկեղեցին (Առաքելական, Ավետարանական, Կաթողիկե), ազգային կուսակցությունները (ՄԴՀԿ, ՀՅԴ, ՌԱԿ), համահայկական բարեգործական կազմակերպությունները, սփյուռքյան բոլոր միություններն ու ակումբները, հայ և օտարալեզու հայկական զանգվածային լրատվությունը (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, համացանց), ուսումնակրթական հաստատությունները, այնպես և Մայր Հայրենիքը՝ Հայաստանը (ՀՀ և ԱՀ), իր պետական, եկեղեցական, հասարակական և այլ լծակներով ուղղորդելու և համակարգելու միացյալ ջանքերը:

Հարկ է, որ Հայաստանի և սփյուռքի կառույցներն իրենց հայրենասեր ու ազգասեր կարող ուժերի միջոցով, նախ և առաջ, գաղափարական առումով վերանայեն օրեցօր առավել անսուպահով դարձող աշխարհում հայության համազգային առաջնահերթությունները, գոյատևման հեռանկարները և ուղենշեն հետագա անելիքները: Համահայկական, համասփյուռքյան ամենօրյա հետևողական բացատրական ակտիվ գործունեությամբ, հրապարակումներով, ելույթներով, քարոզներով, տեսացուցարություններով հարկ է լուսավորական աշխատանք տանել հայկական համայնքներում՝ ներկայացնելով աշխարհաքաղաքական բուն՝ իրավիճակը, համաաշխարհային զարգացումներն ու մարտահրավերները, ձուլման և սերնդափոխությունների արդյունքում այլասերման և հայ ինքնության ձևափոխման ու ձևախեղման վտանգները:

Մերձավոր ու՝ Միջին Արևելքի, ինչպես նաև Արևմուտքի երկրների անապահով ու անհեռանկար ապագայի և օրեցօր

սպառնացող վտանգների, մարդկության ու քաղաքակրթության նկատմամբ ահազնացող աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում՝ Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց, այժմ արդեն օտար ափերում նորից ու նորից ֆիզիկական գոյության պահպանման խնդրի առաջ կանգնած, ինչպես նաև ուժացման ու այլասերման դատապարտված հայությանը հնարավոր կարող է լինել գաղափարապես ու բարոյաժողովրդական առումով նախապատրաստել անցում կատարելու մեկդարյա պասիվ ու անարդյունավետ, թափառական, «անհայրենիք» ու անհեռանկար հայապահպանությունից դեպի գործնական հողապահպանություն՝ «Դեպի Երկիր» Հայրենադարձության և Հայրենաշինության: Հայրենադարձություն, որը ենթադրում է սփյուռքը գաղափարապես, ֆիզիկապես և նյութապես նախապատրաստել և ուղղորդել բացառապես Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաև՝ հերոսների արյան գնով ազատագրված Լեռնային Ղարաբաղի՝ Արցախի Հանրապետություն, անսակարկ (առանց կուսակցա-գաղափարա-քաղաքական նկրտումների) զանգվածային և համակողմանի Տունդարձի, հանուն հայկական զենոֆոնդի պահպանման ու փրկության և համազգային նպատակների իրականացման շարունակականության պահպանման:

Հակառակ դեպքում, սփյուռքը, որպես ազգային կարևորություն ներկայացնող հավաքականություն, աննպատակ ու ապարդյուն «հայապահպանությամբ», հաքափոփոխ, արագ զլոբալացվող և անընդհատ նորանոր մարտահրավերների հետ առերեսվող աշխարհաքաղաքական պայմաններում դատապարտված է ձուլման ու անհետացման:

**КРИЗИС АРМЯНСКОЙ ОБЩИНЫ СИРИИ
В КОНТЕКСТЕ ГЕОПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССОВ
(2011-2018 гг.)**

Резюме

КНАРИК АВАКЯН

к. и. н.

Ведущий научный сотрудник Института Истории НАН РА

В условиях бесперспективного будущего и изо дня в день нарастающей опасности на Ближнем и Среднем Востоке и в странах Запада, а также мощных геополитических процессов, касающихся человечества и цивилизации в целом, спустя 100 лет после геноцида у армян зарубежья (перед которыми вновь встал вопрос физического существования, равно как и угрозы отчуждения и извращения) появилась возможность идеологически и морально-психологически подготовиться к переходу от векового пассивного, неэффективного и бесперспективного сохранения национальной идентичности на чужбине к практическому сохранению Родины – к массовой и всесторонней Репатриации. Репатриация, которая предполагает как идеологическую, так и физическую и материальную подготовку и ориентацию (без партийно-идеологических и политических притязаний) армянской диаспоры на Республику Армения, а также на ценою пролитой крови героев освобожденную Нагорный Карабах – на Республику Арцах, во имя сохранения и спасения армянского генофонда и реализации национальных целей и их последовательного претворения в жизнь.

В противном случае диаспора как важная национальная общность, ратуя за бесцельное и неэффективное «сохранение армянства», в условиях стремительной глобализации и новых геополитических вызовов обречена на ассимиляцию и исчезновение.

**THE CRISIS OF THE ARMENIAN COMMUNITY OF SYRIA IN
THE CONTEXT OF GEOPOLITICAL PROCESSES**

(2011-2018)

Summary

KNARIK AVAKIAN

Candidate of Historical Sciences

Leading Researcher at the Institute of History, NAS RA

Under the conditions of a precarious and unpromising future and the gradually threatening dangers in the Near and Middle East and the Western countries, in addition to the dreadful geopolitical developments imperiling humanity and civilization, and a 100 years following the Armenian Genocide, it is advisable to ideologically and psychologically prepare those living in foreign lands and facing the danger of the maintenance of their physical existence and assimilation to make a transition from a century-old passive and inefficient, migratory and dubious Armenian-preserving policy into a practical land-preserving policy, into Repatriation to the Native Country. This idea implies that the Diaspora should be ideologically, physically and materially prepared and aimed (without party, ideological and political pretensions) exclusively at the Republic of Armenia and the Republic of Mountainous Karabakh – the Republic of Artsakh, liberated at the price of the blood of heroes, aimed at an unbargainable massive and multilateral Home-Coming, for the sake of preservation and salvation of the Armenian genofund and for the maintenance and continuity of the realization of the pan-national objects.

Otherwise, the Diaspora, as a collective body of national importance, with its aimless and inefficient “Armenian-preservation,” is doomed to assimilation and disappearance under the constantly

changing, rapidly globalizing geopolitical conditions, ceaselessly facing new challenges.



Դեր Ջորի Սրբոց նահատակաց հայկական եկեղեցին պայթեցված իսլամիստ ահաբեկիչների կողմից (2014 թ., սեպտեմբերի 21-ին ամսաթիվը պատահական չէ ընտրված, Հայաստանի երրորդ Հանրապետության անկախության հռչակման օրը)

ՄԻՐԻԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ
ՄԻՋԱԿԱՅՔՈՒՄ

ԱՐՐԱՀԱՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

քաղ. գ. թ.

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
Քաղաքական գիտության տեսության և պատմության
ամբիոնի դոցենտ

Պատմաքաղաքական ակնարկ

Սիրիայի արտաքին քաղաքականության պոպուլիստիկա-կոնյունկտուրալ միջտ էլ պայմանավորված են եղել աշխարհաքաղաքական դիրքով, պատմամշակութային ներկայությամբ ու քաղաքական կշռով, անկախ քաղաքական վարչակարգից ու իշխող վարչակազմից:

Սառը պատերազմի տարիներին Սիրիայի արտաքին քաղաքական արևելումը տարածաշրջանում դարձավ աշխարհաքաղաքական հստակ շահերի բաժանման պատճառ, իսկ հետսառըպատերազմյան իրադարձություններն այդ երկիրը կանգնեցրին միջազգային նոր փոփոխություններին համակերպվելու հրամայականի առջև: Մասնավորապես Օոցի 2-րդ պատերազմից հետո իշխող վարչակարգը խնդիր ուներ պահպանելու տարածաշրջանային կշիռն ու ազդեցությունը, չեզոքացնելու արտաքին քաղաքականության մեջ արտացոլված «սոցիալիստական ու հեղափոխական» գաղափարախոսությանն սպառնացող վտանգները, որոնք գալիս էին զլոբալացվող աշխարհի դիֆուզիոն (տարածվող, փոխկապակցված) օրինաչափություններից: Այդ իսկ պատճառով Սիրիայի արտաքին քաղաքակա-

նությունը կանգնեց լուրջ մարտահրավերի առջև՝ համակերպվել միջազգային հարաբերությունների նոր ձևաչափին, որոշումների ընդունման համաշխարհային կենտրոնների նոր պահանջներին, պատրաստվել ժողովրդավարացման ալիքի հետխորհրդային «հարվածներին», տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ու ինտեգրացիոն գործընթացներում միջազգային դերակատարների ներկայությանն ու առավել ակտիվ ներգրավման փառտին, ակտիվ ջանքեր գործադրել արաբա-խարայելական բանակցային գործընթացում բազմակողմ հաջողության հասնելու, Լիբանանի քաղաքացիական պատերազմի ավարտն ազդարարող՝ սաուդարաբական Թայեֆում կնքված համաձայնագրի կետերն իրագործելու հանձնառության գործում և այլն:

Նոր պայմաններում արտաքին քաղաքականության շեշտադրումները պետք է կրեին որոշակի փոխակերպումներ՝ ենթարկվելով արտաքին ճնշման ու ներքին բարեփոխումների անհրաժեշտության հրամայականին: Այս և տարածաշրջանային ու միջազգային այլ իրողություններն էլ, մեկ ամբողջությամբ, սահմանում են Սիրիայի արտաքին քաղաքականության ընդհանուր շրջագիծը:

«Թշնամի» Իսրայելին սահմանակից լինելու, նրա նկատմամբ զլխավորապես տարածքային պահանջատիրական «թղթածրար» ունենալու հանգամանքն էլ տասնամյակներ շարունակ մոբիլիզացրել են երկրի ներքին, բնական, դիվանագիտական, տնտեսական, կրթամշակութային ու հասարակական ամբողջական ներուժը, պետբյուջեի միջոցները ծառայեցրել պաշտպանական ծախսերի ու անվտանգային միջավայրի ամրապնդմանը՝ այդպիսով փակելով ներքին բարեփոխումների և սոցիալական բարեկեցության մակարդակի աճին միտված ֆինանսական հոսքերի ծորակները: Իսրայելական գործոնով էլ

պայմանավորված՝ վերջին չորս տասնամյակում Սիրիայում հիմնարար փոփոխության ենթարկվեցին ներքին դեմոգրաֆիական (ժողովրդագրական) շարժը, ազգային փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականությունը, քաղաքական ինստիտուտների գործառնության արդյունավետության բարձրացման ինդեքսը, իշխող՝ Արաբական վերածնունդ՝ «Բաաս» սոցիալիստական կուսակցության գործունեության ակտիվացումն ու «թափանցիկությունը», ուսումնակրթական քաղաքականության «արմատական ազգայնացումը», էտատիզմի (գաղափարաքաղաքական ուղղություն, որը հասարակության գոյության բարձրագույն նպատակն ու արդյունքը համարում է պետությունը ֆր.) հայեցակարգային ու կիրառական դրսևորումների շարունակականության հարցը, բանակի արդիականացումը, քաղաքական իշխանության օղակներում՝ ռազմական ինստիտուտի դերի աճը, «դրական չեզոքությունից» անցումը առավել նախաձեռնողական դիվանագիտության, սոցիալական քաղաքականության և տնտեսության սոցիալիստականացումը, ինքնաբավ քաղաքականության փոխակերպումն ու համակերպումը ազատ շուկայի գաղափարախոսական և սյրակտիկ հրամայականին:

Մակայն երկրում վարչակարգի փոփոխությամբ, ավելի ճիշտ՝ իշխանության ժառանգական փոխանցումից հետո ազատականացման ու բարեփոխումների հասարակական՝ ակնկալիքները չարդարացան: Գլխավոր մարտահրավերն այստեղ «Բաասից» ժառանգություն մնացած «ինստիտուցիոնալ շնչահեղձության» հաղթահարումն էր, ինստիտուցիոնալ կենսունակության նոր ռազմավարության մշակումը: Այդ «ժառանգությունը» գլխավորապես արդյունք էր ինստիտուցիոնալ գործընթացներում ոչ ֆորմալ կապերի գերակայության, օրենքի տարրի ու խախտման, քաղաքական և տնտեսական իշխանություն-

ների կոռումպացվածության, օլիգոպոլի ու մենաշնորհային տնտեսության, սոցիալական և բնեռացման չհաղթահարման, աղքատության և գործազրկության բարձր մակարդակի, «ներքևից» եկող ազդանշաններին արձագանքելու՝ «վերսների» անկարողության, արդարության դեֆիցիտի, դատարանների կախալության, գաղափարական ու քաղաքական բազմակարծության բացակայության, քաղաքական աննախադեպ հետապնդումների ու «բաց դատավարությունների» պրակտիկայի, միակուսակցական իշխանության, ընտրական ինստիտուտի գրեթե բացակայության, ազգային փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման, պետական քաղաքականության «ճշմարտությունների» այլընտրանքի բացակայության, արտաքին «թշնամու» կերպարի վախի սերմանման և այդ «վտանգի կանխման նպատակով» թշնամու՝ «ներքին գործակալների» որսի քաղաքականության, մարդու իրավունքների անբարենպաստ իրավիճակի, քաղաքական «ժառանգության» հիմնադրի կերպարի ֆետիշացման ու նրա գործունեության անքննելիության, ընդդիմության բացակայության, քաղաքական և տնտեսական ինստիտուտների՝ հասարակության զարգացման ու տեխնոլոգիական պահանջների բավարարման անկարողության, մարտնչող տղիտության և անգրագիտության, բյուրոկրատիայի ուռճացման, տնտեսական հարստության անարդար բաշխման և այլն:

Միաժամանակ, պետք է արձանագրել, որ «Բաասի» սոցիալիստական տնտեսական համակարգը, այնուամենայնիվ, գրանցեց որոշ տնտեսական ու կրթական ցուցանիշներ: Տասնամյակներ շարունակ պետությունը կարողացավ ապահովել գների կայունացում, նվազագույն սպառողական զամբյուղի բովանդակության սուբսիդավորում, խուսափել արտարժույթի տատանումներից, կանխել գնաճը, զրոյացնել արտաքին ու ներքին

պարտքը, երկնիշ աճ գրանցել ՀՆԱ-ում, զարգացնել տեղական արդյունաբերությունը, ներմուծումների հաշվին ավելացնել արտահանումը, տնտեսական և գյուղվարկերի տրամադրման ոչ ընթացակարգային դյուրացումներ կատարել, հարկային ճկուն քաղաքականություն կիրառել, անվճար կրթություն ու առողջապահություն ապահովել և այլն: Գործողությունների այս համալիրը, սակայն, չէր տալիս ակնկալվող արդյունքը քաղաքական թափանցիկության, օրինականության, պատասխանատվության ու վերահսկողության ինստիտուտի բացակայության, ուրբանիզացիոն քաղաքականության չվերահսկման,՝ ռազմական ծախսերի և սոցիալական քաղաքականության հավասարակշռության անհամաչափության, միջազգային ու տարածաշրջանային իրողություններով և պատժամիջոցներով պայմանավորված՝ տնտեսական ինքնաբավության քաղաքականության ժամանակավրեպության, կրթական համակարգի՝ միջազգային պահանջներին համաքայլ չընթանալու, ֆինանսական հատկացումների ոչ նպատակային ծախսման և վերջապես՝ իրողությունների այս համալիրը պետության գլխին՝ «տարածքային ամբողջականության, ազգային ինքնիշխանության ու անկախության ոտնահարման վտանգի»՝ դամոկլյան թրի պես կախված լինելու և արաբական էթնոսի գոյությունն արմատապես մերժող Միոնիզմի վտանգի «պատճառով»:

Բաշար Ասադի՝ Արևմուտքում կրթություն ստացած ու երիտասարդ քաղաքական գործչի հետ Միրիայում մեծ հույսեր էին կապում: Նրա կառավարման առաջին տասնամյակում (2000-2010 թթ.) փորձ արվեց համակարգային արդիականացման՝ պետական բյուրոկրատական համակարգն ու դայրոնները համակարգիչներով ապահովելուց մինչև քաղաքական նվազագույն ազատությունների և մամուլի հանդեպ գործող սահմանա-

փակումների մեղմացում ու տնտեսության սոցիալիստական «անցյալի» համակերպում համաշխարհային լիբերալ իրողություններին: Հարկ է ընդգծել, որ գորբաչովյան անզուշտությամբ (զուցեն՝ միտումնավոր), արդիականացման գործընթացն Ասադն սկսեց տնտեսական համակարգի շերտից՝ նաև մտավախությունն ունենալով, որ քաղաքական մշակույթի պակասորդով ապրող, էթնիկ, կրոնական ու համայնքային բարդ և խճանկարային բնույթի հասարակությունում չհաշվարկված ու հանպատրաստից քաղաքական փոփոխությունները ոչ միայն կհանգեցնեն ավելիական փոքրամասնության՝ իշխող քաղաքական էլիտայի իշխանության կորստին և հալածանքներին, այլ նաև երկիրը կներքաշեն տարածաշրջանային անկանխատեսելի քաոսի մեջ՝ հետսադամյան Իրաքի հնարավոր սցենարով: Ներքին այս իրողությունների, ինչպես նաև Միրիայի աշխարհաքաղաքական դերակատարման նվազման հարցում միջազգային ու տարածաշրջանային ուժերի՝ տասնամյակների հետևողական քաղաքականության համալուծում էլ պետք է դիտարկել «Արաբական գարնան»՝ սիրիական պողոթկման պատճառները:

Իսկ որո՞նք են սիրիական արտաքին քաղաքական առաջնահերթությունների փոխակերպման տարածաշրջանային հիմքերը: Եթե Սաոը պատերազմի տարիներին ԽՍՀՄ միջերկրածովյան քաղաքականությունն ու ներկայությունը հնարավորություն էր տալիս Միրիային ամրապնդել դիրքերը տարածաշրջանում, աջակցել պաղեստինյան ազատագրության կազմակերպություններին և դիմակայել Արևմուտքի կողմից ֆինանսական, լոգիստիկ (նյութական, տեղեկատվական և մարդկային հոսքերի կառավարում) ու ռազմական աջակցություն վայելող Իսրայելի տարածաշրջանային քաղաքականությանը, ապա հետսառուպատերազմյան ժամանակահատվածում Միրիան չունեք այլընտ-

րանք, բացի այնպիսի քաղաքականության որդեգրումից, որը տարածաշրջանային խաղաղությունը կդիտարկեր որպես կայունություն հաստատելու միակ ռազմավարական այլընտրանք: Ինքնին լավ հասկանալով, որ հետզհետե ռազմական առավել արդիական զինանոցներ զարգացնող Իսրայելի դեմ հերթական պատերազմը կունենա անկանխատեսելի հետևանքներ երկրի համար՝ Սիրիայի ղեկավարությունը, համակերպվելով միջազգային նոր իրադրությունների հետ, արտաքին քաղաքականության հարացույցն ուղղեց դեպի «գրավյալ տարածքներ՝ խաղաղության դիմաց» բանաձևի իրագործումը՝ նպատակ ունենալով վերադարձնել արաբական տարածքները, որոնք Թեյ-Ավիվը գրավել էր արաբախորայելական 3-րդ՝ 1967 թ. հուլիսի 6-օրյա պատերազմի ընթացքում: Արտաքին քաղաքականության այս սրանսֆորմացիայի պատճառով էր, որ Դամասկոսն ընդունեց Վաշինգտոնի հրավերը մասնակցելու 1991 թ. հոկտեմբերի 18-ին Իսսյանիայի մայրաքաղաքում անցկացվող «Խաղաղության մարտի» համաժողովին», որի հիմնական նպատակը մերձավորարևելյան կոնֆլիկտի կարգավորումն էր՝ համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած № 242 և 338 բանաձևերի դրույթների: Հարկ է ընդգծել, որ Իսրայելի հետ հայեցակարգային, գաղափարախոսական, դիվանագիտական ու անուղղակի ռազմական առճակատումը չէր խանգարում Դամասկոսին հաշվի նստել հետաառըպատերազմյան ժամանակահատվածում ձևավորված միաբևեռ աշխարհի գլխավոր դերակատարի տարածաշրջանային հետաքրքրությունների հետ: Սիրիան վերաձևակերպեց ԱՄՆ-ի հետ իր հարաբերությունների շեշտադրումները՝ հասկանալով, որ նման հզոր պետության հետ դիմակայությունը կթուլացնի իր դիրքերը տարածաշրջանում՝ մանավանդ, հաշվի առնելով, որ սահմանակից Հորդանանն ու

Թուրքիան, ինչպես նաև Եգիպտոսը սերտ հարաբերություններ ունեն ԱՄՆ-ի հետ, ինչն էլ ազդում է այդ երկրների աշխարհաքաղաքական կշռի ու շահերի պահպանության վրա:

Եթե մինչև Սառը պատերազմի ավարտը հատկապես Սիրիայի ներքաղաքական կայունության տարիներին, (նախագահ Չաֆեզ Ասադի կառավարման ժամանակահատվածում՝ 1970-2000 թթ.) երկրի արտաքին քաղաքականության մերձավորարևելյան վեկտորն անտերևոյթ ավելի շատ ուներ հակաամերիկյան ուղղվածություն, ապա Կրեմլի ազդեցության թուլացումն ստիպեց ղեկավարությանը վերանայել ամերիկյան գերակայություններին հակադրվելու ավանդական մոտեցումները և փորձել ստեղծել գործընկերային հարաբերություններ: Իսկ ամերիկյան քաղաքականության փոփոխությունը, որը, ի դեպ, կրում էր նաև ԱՄՆ-ում հրեական հզոր լոբբիի ազդեցությունը, գլխավորապես պայմանավորված էր իսրայելասիրիական բանակցային ճակատում զիջումների գնալու Դամասկոսի պատրաստակամությամբ ու հստակ գործողություններով: Այս առումով հատկանշական են 1995-2000 թթ. ամերիկյան միջնորդությամբ կայացած իսրայելասիրիական գաղտնի, ինչպես նաև ԱՄՆ և Սիրիայի նախագահների ժնեյան բազմափուլ ու երկարատև բանակցությունները, որոնք, սակայն, արդյունք չտվեցին:

Եվս մեկ ուշագրավ հանգամանք. բանակցային տարբեր փուլերում և ձևաչափերում սիրիական կողմի հետ համաձայնության չհասնելու միջնորդ կողմերի անհաջողությունը մասնագետները կապում են նաև հայր Ասադի կամային բարձր հատկանիշների հետ: Ասադը բանակցություններում ճկուն էր, բայց սկզբունքային. ծանր ու դժվարին իրադրություններում կարողանում էր կողմնորոշվել անկորուստ և այլն: Այս հանգամանքն էլ ձևավորեց մտածողություն, որ մերձավորարևելյան

բանակցային գործընթացում առաջընթաց գրանցելու համար անհրաժեշտ է նաև հաշվի նստել «համաարաբական շահերն առաջ մղող» ղեկավարի քաղաքական պահանջների հետ¹³⁴: Հայր Ասադի մահից հետո, ներպալատական և ներկուսակցական ծանր ու աղմկահարույց վեճերից հետո, իշխանությունը փոխանցվեց նրա կրտսեր որդուն՝ Բաշարին, որը երկրի Ժողովրդական ժողովի հատուկ նիստում՝ իր երդմնակալությամբ հաջորդած էլույթում, հայտարարեց, որ երկիրը շարունակելու է արտաքին քաղաքական միևնույն կուրսն ու պահպանելու է դիվանագիտական օրակարգի առաջնահերթությունները:

Միջազգային ու տարածաշրջանային նորահայտ իրողությունները, սակայն, «սրբագրումներ» մտցրին այդ օրակարգում: Այդ զարգացումները (տե՛ս ստորև) տարածաշրջանային էին, որոնք, սակայն, չէին կարող բացառել միջազգային դերակատարների մասնակցությունը, եթե չասենք վերջինների՝ հակամարտող տարբեր սուբյեկտների հովանավորումը.

1. 2001 թ.-ի սեպտեմբերի 11-ի ահաբեկչական ակտերը:

2. Դրանց արդյունքում՝ ամերիկյան ու կոալիցիոն զորքերի ներխուժումը Իրաք (2003 թ.):

3. «Ալ Քաիդայի» ահաբեկչական գործունեությունը անիշխանության մատնված Իրաքում:

4. Իրաքի հյուսիսում քրդական ինքնավարության «տեղափոխման» փորձերը Սիրիայի հյուսիսարևելյան շրջաններ (2003-2004 թթ.):

5. Լիբանանում վարչապետ Ռաֆիք Հարիրիի սպանությունն

¹³⁴ Ասադի բանակցային հմտությունների ու այդ գործընթացում նրա պահվածքի և կամային հատկությունների մասին խոսել են Դամասկոսում Վաշինգտոնի դեսպան Էդուարդ Ջերեջյանն ու ԱՄՆ նախկին Պետքարտուղար Հենրի Քլինթոնը: Տե՛ս <http://syrianleaders.com/presidents/130/135/>.

ու արդյունքում՝ սիրիական գորքերի դուրսբերումն այդ երկրից 30-ամյա ներկայությունից հետո (2005 թ.):

6. Հարիրիի սպանության գործով միջազգային տրիբունալի ստեղծումն (2006 թ.) ու մեղսակցության՝ ցայսօր չապացուցված հարցում սիրիական վարչակազմի՝ բարձրաստիճան այրերի նկատմամբ հետախուզումները, հաշիվների սառեցումն ու միջազգային տեղաշարժման սահմանափակումները:

7. Սիրիայի նկատմամբ տնտեսական պատժամիջոցների խստացումը (2005-2006 թթ.):

8. Սիրիայի փոխնախագահ Աբդուլ Հալիմ Խադամի, որը համարվում էր «լիբանանյան թղթապանակի» գլխավոր գիտակն ու պատասխանատուն դեռևս հայր Ասադի ժամանակաշրջանից, փախուստը Ֆրանսիա և հակաբաշարյան քաղաքականության ծավալումն ու ներպալատական գաղտնի փաստաթղթերի գաղտնագերծումը (2005 թ.):

9. Սիրիա-Լիբանան դիվանագիտական կապերի ժամանակավոր սառեցումը (2005-2006 թթ.):

10. «Հըզբոլլահի» պատերազմն Իսրայելի դեմ (2006 թ.) և այդ հարցում սիրիական ու իրանական ռազմաֆինանսական և քաղաքական ներգրավվածության վերաբերյալ միջազգային բացասական գնահատականներն ու արդյունքում՝ սահմանված պատժամիջոցների էլ ավելի խստացումը:

11. Հորդանանի ու Օոցի արաբական առաջատար պետությունների հետ հարաբերությունների վատթարացումը՝ պայմանավորված Սաուդյան Արաբիայի ու միաժամանակ Արևմուտքի աջակցությունը վայելող լիբանանյան քաղաքական ուժերի դաշինքի հակասիրիական՝ «Մարտի 14-ի» կոալիցիայի նկատմամբ Դամասկոսի որդեգրած «թշնամական» քաղաքականությամբ:

12. Պաղեստինյան Գազայի հատվածում «Համաս» շարժման (որն քաղաքական գործունեության համակարգման կենտրոնական գրասենյակը գտնվում էր Դամասկոսում) ընտրական հաղթանակի արդյունքում Իսրայելի սանձազերծած բռնություններն ու պատերազմը (2006-2009 թթ.):

13. Միջազգային ճնշումներն ու տնտեսական սանկցիաները:

Թեհրան-Բաղդադ-Դամասկոս. արտաքին քաղաքական օրակարգի այլընտրանքի ձևավորում

Դամասկոս-Բաղդադ հարաբերություններն սկսում են բարելավվել հետսադամյան ժամանակաշրջանում: Հակասությունները Սիրիայի ու Իրաքի միջև տևել են տասնամյակներ, հիմք է հանդիսացել Օոցի առաջին՝ Իրաք-Իրան պատերազմը, սոցիալիստական «Բասս» կուսակցության տարբեր՝ սիրիական և իրաքյան թևերի միջև գաղափարական լուրջ տարաձայնությունները, որոնք 1980-ական թթ. պատճառ դարձան Դամասկոս Բաղդադ դիվանագիտական հարաբերությունների, ընդհուպ, խզմանը: Մադամ Հուսեյնի տապալումից հետո հետպատերազմյան Իրաքը հակաամերիկյան գործողությունների պարայտ հող դարձավ տարածաշրջանային ու մարզինալ (Եգրային, լուսանցքային, հասարակական հարաբերություններից դուրս մնացած) ուժերի համար: Դրան, ի շարս այլ կարևոր իրողությունների (Դամասկոսի ոչ բարեկամական հարաբերությունները Արևմուտքի հետ, Սիրիայի անհանդուրժողական մոտեցումը՝ Իրաք ամերիկյան ներխուժման հարցում, ընդվզումները Լիբանանի ներքաղաքական կյանքում սիրիական ռազմական՝ օրատօրե մեծացող ազդեցության դեմ, սիրիական ներիշխանական դաշտում նորընտիր նախագահ Բաշար Ասադի ձա-

խողումները և այլն), գումարվեց շիական ու քրդական գործոնների ակտիվացումը, որոնք էլ պարտադրեցին սիրիական վարչակարգին՝ վերանայել երբեմնի խզված հարաբերությունները և ներթափանցել իրաքյան ճակատ: Հետսադամյան Իրաքում, մասնավորապես 2010-2015 թթ., ուրվագծվում էր «Շիական կիսալուսինը»¹³⁵:

¹³⁵ «Շիական կիսալուսին» արտահայտությունն առաջին անգամ դրվեց դիվանագիտական լեքսիկոնի ու շրջանառության մեջ 2005 թ. Հորդանանի թագավոր Աբդուլլահ Երկրորդի՝ Վաշինգտոնում ունեցած բարձրաստիճան հանդիպման ժամանակ: Թագավորն ակնարկում էր մերձավորարևելյան տարածաշրջանում ահազնացող իրանական ազդեցության մասին, որի նպատակը սուննիադավան իսլամական աշխարհում շիական Իրանի քաղաքալուսության ընդլայնումն է՝ տարածաշրջանային համակարգի փոփոխության ու առանձին երկրների ներքաղաքական շրջանակների, կուսակցությունների ու շարժումների հետ դաշինքներ ստեղծելու միջոցով: Թեև պետք է ընդգծել, որ «Շիական կիսալուսինի» վտանգն այնքան էլ իրատեսական չէ՝ հաշվի առնելով այն փաստը, որ տարածաշրջանում շիական գործոնի քաղաքականացումը հաջողվել է ընդամենը ոչ արաբական Իրանում, ինչպես նաև Իրաքում, մասամբ էլ՝ Սիրիայում և Լիբանանում: Բահրեյնում սուննիական իշխանություն է, թեև բնակչության 70 տոկոսը շիադավան է: Այս համատեքստում էլ պետք է ընկալել 2012-2013 թթ. այդ երկրում «Արաբական վերազարթոնքի» ալիքի բարձրացումը, Մանամայի կողմից ապստամբության՝ արյան մեջ թաղելը, սաուդարաբական ռազմական, լոգիստիկ ու բարոյական աջակցության տրամադրումը: Բահրեյնում, ի դեպ, իրանական գործոնի ակտիվացումը պայմանավորված է նաև հանգամանքով, որ Ալ Սալվիֆայի իշխող ընտանիքը տասնամյակներ շարունակ հալածել է շիաներին, օրենսդրորեն և պրակտիկայում արգելել նրանց զբաղեցնել քաղաքական պաշտոնների 20%-ից ավելին, բանակում պաշտոններ զբաղեցնել, վերահսկել ընտրական գործընթացները և այլն: Շիաների նկատմամբ նմանատիպ վերաբերմունք կա Սաուդյան Արաբիայում, որտեղ հակաշիական քաղաքականությունը քարոզվում է պետական մակարդակով, Շիիզմի՝ «Իսլամից շեղված լինելու և ազանդ հանդիսանալու» մասին մոտեցումներն էլ տեղ են զբաղեցնում դպրոցական, կրոնական հաստատությունների ու բուհական դասագրքերում: Թեև պետք է ընդգծել, որ «Հրգբուլլահ»-Իսրայել 2006 թ. հունիսյան պատերազմի տարածաշրջանային լարվածությունը մեղմելու նպատակով, սաուդարաբական կողմի նախաձեռնությամբ, Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հրավիրվեց Մեքքա՝ մուսուլմանների սրբազան տունին՝ Ռամադանին ուխտագնացության

Հայտնվելով տարածաշրջանային մեկուսացման պայմաններում՝ սիրիական դիվանագիտությունն իր «փրկօղակը» պիտի փնտրեր Հյուսիսում և Արևելքում: Խորհրդարանական կառավարւում ունեցող հարևան Իրաքում վարչապետի պաշտոնում շիադավան ներկայացուցչի ընտրությունն այս առումով հուսադրող էր. եթե բացառվում է դեպի Հարավ և Արևմուտք հարաբերությունների զարգացումն ու պատժամիջոցների պատճառով մահամերձ տնտեսության վերակենդանացումը, ապա հարաբերությունները պետք է զարգացնել «հորիզոնական» տրամաբանությամբ: Այսինքն՝ անհրաժեշտ է փոխել քաղաքական հոռտորաբանությունը և այլևս չծաղրել Իրաքում ամերիկյան «անփառունակ ու տապալված ներկայության» քաղաքական հետևանք-

պարտքը կատարելու համար: Ի պատասխան՝ Իրանի ԱԱՄ-ի նախագահ Ալի Լարիջանին էլ հանդիպեց սաուդարաբացի պաշտոնակից Բանդար բին Սուլթան բին Աբդուլ Ազիզի հետ՝ քննարկելու լիբանանյան ներքաղաքական դաշտում միջհամայնքային բախումներից խուսափելու տարբերակները: Իրանի: «ծավալապաշտական» զաղափարախոսության ու քաղաքականության նկատմամբ արաբական սուննիական աշխարհի ամենամեծ վերապահումն էլ վերաբերում էր Իրանի միջուկային ծրագրի հեռանկարին: Վերադառնալով Հորդանանի թագավորի հայտարարությանը՝ հարկ ենք համարում նկատել, որ հնչած մտահոգությունը զուգակցվեց այդ երկրին սահմանակից Իրաքում կառավարման խորհրդարանական ձևի որդեգրմամբ, ինչի արդյունքում՝ տոկոսային հարաբերակցությամբ, բնակչության կեսից ավելին հանդիսացող սուննիներին չհաջողվեց հաղթել ընտրություններում և ձևավորել կառավարություն՝ սուննի վարչապետի գլխավորությամբ: Քաղաքական այդ հնարավորությունն օգտագործեցին Իրանին ենթարկվող շիաները, ինչն էլ Օոցի արաբական երկրների սուննի ղեկավարության շրջանում առաջացրեց Թեհրանի «շիական հեղափոխական» հնարավոր ներխուժման մտավախությունը: Նշենք նաև, որ ի հակադրություն Իրաքում իրանական գործոնի ընդլայնման, Օոցի համագործակցության երկրների տարբեր զագաթնաժողովներում դատապարտող հայտարարություններ էին հնչում Թեհրանի հասցեին՝ պահանջելով «վերջ տալ Արաբական Միացյալ Էմիրություններին պատկանող երեք Փոքր, Մեծ Թունբերի և Մուսայի կղզիների գրավմանը»: Սուննիական այդ երկրները պարբերաբար նաև հետ էին կանչում իրենց դեսպաններին Թեհրանից:

ները, համարել, որ սիրիական սահման պատերազմի 2 միլիոն փախստական «արտահանած» Իրաքը թեև միջազգային ահաբեկչական ցանցի ուստայններում է հայտնվել, սակայն հնարավոր է գործակցել այդ երկրի նոր իշխանությունների հետ, մանավանդ որ, մերձեցման ամենակարևոր նախադրյալն առկա է՝ դավանաբանական գործոնը՝ ավավիները համարվում են Շիիզմի ճյուղավորումներից: Այդպիսով, մեկուսացված Ասադը հնարավորություն ստեղծեց «հորիզոնական» այդ գնացքի վերջին վագոնը հասցնել մինչև Իրաքին սահմանակից, Սիրիայի ռազմավարական դաշնակից, շիադավան Իրան: Լինելով սահմանակից Լիբանանին և տասնամյակներ շարունակ հովանավորելով ու ֆինանսավորելով լիբանանյան «Հրգբոլլա» խմբավորմանը (ավելի շուտ՝ նաև հանդիսանալով կամուրջ այդ խմբավորմանը իրանական բազմատեսակ, այդ թվում՝ ռազմական «մատակարարումների» համար)՝ սիրիական ղեկավարությունը միաժամանակ ճեղքեց Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Հորդանանի, Լիբանանի ֆորմալ կառավարության կողմից իրեն պարտադրված «սուննիական օղակը»¹³⁶:

¹³⁶ Ֆորմալ կառավարություն ասելով՝ նկատի ունենք մինչև 2010 թ. Լիբանանի վարչապետի պաշտոնն զբաղեցրած, սպանված վարչապետ Ռաֆիք Հարիրիի որդու՝ Մաադ Հարիրիի գլխավորած «Մարտի 14-ի» կոալիցիան, որն ակնհայտորեն հայտարարում էր իր արևմտամետ ու հակասիրիական դիրքորոշումը և չէր վարանում բացահայտել, որ ներքաղաքական կարևորագույն բոլոր որոշումների հարցում «հաշվի է առնում» Սաուդյան Արաբիայի ու Քաթարի դիրքորոշումը: Այդ երկրները, ի դեպ, մշտապես խանդես են եկել որպես հետպատերազմյան Լիբանանի (1990-ականներից) տնտեսական քանդված ենթակառուցվածքների հիմնական վերականգնողներ ու լիբանանյան տնտեսությունում ներդրումային ամենամեծ մասնաբաժինն ունեցող դերակատարներ: Այդ քայլով նրանք մշտապես փորձել են չեզոքացնել Իրանի հովանավորյալ «Հրգբոլլաի» նմանատիպ «կառուցողական» քաղաքակցությունը հետպատերազմյան իրավիճակներում՝ նվազեցնելու վերջինիս քաղաքական ու հասարակական լեգիտիմության մակարդակը:

*Թուրքական «գամբիտ». «Ռազմավարական գործընկերություն»
Անկարայի հետ 2005-2010 թթ.*

Միրիական դիվանագիտության «ճարտարապետի» կոչումն ստացած արտգործնախարար Ուալիդ Մուալեմի առաջարկով Ասադը նոր էջ սկսեց Թուրքիայի հետ հարաբերություններում: Ռազմավարական նոր հայեցակարգի կարևորագույն սլաքը դեպի Հյուսիս էր սուննիադավան Թուրքիա:

Փոքր ակնարկ թուրք-սիրիական հարաբերությունների վերջին մեկուկես տասնամյակի փորձից: Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում Միրիա-Թուրքիա հարաբերությունները հասել էին թշնամական մակարդակի: Անկարան Դամասկոսին մեղադրում էր, որ այդ երկիրը պարարտ հող է Քրդստանի բանվորական կուսակցության (ԲԲԿ) զինյալների համար, որոնք, այնտեղից թափանցելով թուրքական տարածքներ, պայթյուններ էին իրականացնում և զբաղվում «ահաբեկչական գործունեությամբ»: Իրականում էլ այդպես էր: Թուրգութ Օզալի նախագահության տարիներին Թուրքիայում փորձեցին իրականացնել մեծ մասշտաբի գյուղատնտեսական ծրագրեր¹³⁷, հատկապես հարավարևելյան շրջաններում. ամենամեծ խնդիրը հողատարածքների ոռոգման հարցն էր: Դեպի Միրիա ու Իրաք հոսող Եփրատ և Տիգրիս գետերի հունները կառավարում էր Թուրքիան, որը բազմիցս զգուշացրել է Միրիային ու սպառնացել քիչ քանակությամբ ջուր բաց թողնել այդ երկիր, եթե վերջինս շարունակի սատարել ԲԲԿ-ի զինյալներին: Հարաբերությունները սրվեցին, և 1999 թ. հունվարին Անկարան պաշտո-

¹³⁷ Խոսքը GAP - Güneydoğu Anadolu Projesi-ի մասին է, որի ֆինանսավորման համար Թուրքիան այդպես էլ չստացավ ակնկալվող մեծ գումարները եվր.պական բանկերից:

նապես զգուշացրեց Դամասկոսին, որ, եթե նրան չհանձնի ՔԲԿ առաջնորդ Աբդուլլահ Օջալանին, ապա կհարձակվի Սիրիայի վրա¹³⁸: Իրադարձություններն այնպես զարգացան, որ Սիրիան հրաժարվեց շուրջ 15 տարի իր տարածքում ապաստանած, մարտական ճամբարներ ստեղծած ու իր տարածքներից Թուրքիա գրոհայիններ ուղարկած Օջալանից: Վերջինս դուրս եկավ Սիրիայից և քիչ ժամանակ անց ձերբակալվեց Հունաստանի իշխանությունների և իսրայելական հատուկ ծառայությունների՝ «Մոսադի» կողմից: Սիրիան, իհարկե, Օջալանին «նվիրաբերելու» դիմաց ստացավ նաև այն, ինչ այդ ժամանակ թվում էր անհնարին. Թուրքիան ավելացրեց Եփրատ և Տիգրիս գետերի ջրերի հոսքը դեպի Սիրիա: Օջալանի Սիրիայից վտարումն ու ձերբակալումը դարձավ այն անկյունաքարը, ինչին խարսխվեցին մինչև ներսիրիական պատերազմը Սիրիա-Թուրքիա ռազմավարական հարաբերությունները:

Ինչպե՞ս բացատրել Թուրքիայի արտաքին քաղաքականությունում այս փոփոխությունը և գրանցած «հաղթանակը»: Տարածաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը փոփոխվեց 2003 թ., երբ ամերիկյան զինուժը ներխուժեց Իրաք: Այդ երկիրը պայմանականորեն բաժանվեց երեք մասի՝ հյուսիսային հատվածում քրդական դե ֆակտո ռեզիմնալ կառավարմամբ: Անկարայում ոչ պակաս էին անհանգստացած այս զարգացումով, որովհետև Թուրքիայի հարավ-արևելյան շրջանները, որոնք հիմնականում բնակեցված են քրդերով, սահմանակից են Հյուսիսային

¹³⁸ Հատկանշական է, որ նմանատիպ սպառնալիք հնչել էր 1998 թ., և թուրքական զորամիավորումները տարածվել էին Սիրիայի հետ ամբողջ սահմանով: Սրացումը հասավ զագաթնակետին, սակայն հնարավոր եղավ Ադանայում ձեռք բերել համաձայնություն՝ այդպիսով կանխելով իրական առճակատման վտանգը:

Իրաչին, այսինքն՝ դե ֆակտո ստեղծված քրդական պետության սահմանին: Թուրքիայի ամենամեծ մտավախությունն այն էր (և շարունակում է մնալ), որ քրդերի՝ Իրաքում պետություն ստեղծելու փորձը «վարակիչ» կլինի իր տարածքում ապրող քրդերի համար, և նրանք հետագայում կապստամբեն Կենտրոնի դեմ ու կմիանան իրաքցի քրդերի ստեղծած պետությանը: Օջալանի Միքիայից դուրս գալուց և Թուրքիայի Իմրալի կղզում բանտարկվելուց հետո պայմանները փոխվեցին: Դամասկոսը հրաժարվեց իր տարածքները տրամադրել ՔԲԿ-ականներին, փակեց նրանց ճամբարները և պարբերաբար Թուրքիային հանձնեց Անկարայի «սև ցուցակում» գտնվող և հետախուզվող ՔԲԿ-ականներին: 2002 թ. Թուրքիայում Արդարություն և զարգացում կուսակցության իշխանության գալուց հետո հարաբերություններն էլ ավելի ջերմացան, և իսլամիստական այդ կուսակցության պահվածքից, նախընտրական ծրագրերից ու գործելաոճից պարզ դարձավ, որ այն իբր գորավից է արաբական դատին և բնականաբար՝ դեմ Իսրայել պետության դիրքորոշմանն ու քաղաքականությանը: Դամասկոսը, իհարկե, բաց չթողեց այս «շրջադարձային» փոփոխությունը և փորձեց չեզոքացնել թուրք-իսրայելական ռազմավարական դաշինքը, որը գործում էր 1996 թվականից: Հատկանշական է, որ ՔԲԿ-ի պատճառով Թուրքիա-Միքիա սրված հարաբերությունների և թուրքական բանակի՝ Միքիայի վրա հարձակվելու սպառնալիքների ժամանակ Թել-Ավիվում չէին վարանում հայտարարել, որ այն «հարմար առիթ է» Միքիայի վրա հարձակվելու նաև հարավից՝ Իսրայելի կողմից: Փաստորեն, խաղաղություն հաստատելով հյուսիսային հարևանի հետ՝ Միքիան նաև խուսափեց զաղափարական ու մարտական «վաղեմի թշնամի» Իսրայելի հետ ամեն՝ րոպե հավանական պատերազմի դեպքում Անկարայի

մասնակցությունից և չեզոքացրեց թուրք-իսրայելական ռազմավարական հարաբերությունների բացասական անդրադարձը Դամասկոսի վրա: Միրիայի հետ հարաբերություններին «ռազմավարական» բնույթ հաղորդելու քայլերից էր նաև այն, որ 2010 թ. ԱԶԿ-ն Թուրքիայի խորհրդարանում անցկացրեց մի վիճահարույց օրինագիծ, որը թույլ էր տալիս արտասահմանյան ընկերություններին իրականացնել Թուրքիա-Միրիա ամբողջ՝ 850 կմ երկարության սահմանի ականազերծման գործընթացը: Դա ոչ միայն էական, այլև աննախադեպ իրադարձություն էր այդ երկու երկրների հարաբերություններում: Հենց այստեղ պետք է փնտրել ներսիրիական ճգնաժամում (2011 թ. մինչև մեր օրերը) Թուրքիայի ապակառուցողական մասնակցության ու քաղաքականության հեռահար նպատակները: Այդ ընթացքում երբեմնի «ռազմավարական գործընկերոջ» քաղաքական գործելաոճի և հոետորաբանության՝ շատերի ու առաջին հերթին՝ Դամասկոսի համար անսպասելի, բայցև կտրուկ փոփոխությունն ապացուցեց, որ սիրիական դիվանագիտության «հյուսիսային» վեկտորում «վստահության գործոնը» չափազանցված էր ու գերազնահատված:

Թուրքական հավակնությունները¹³⁹ միշտ էլ կենսունակ են եղել Միրիայի հյուսիսում, որովհետև.

1. Թուրքիան մշտապես փորձել է մոռացության մատնել պատմականորեն սիրիապատկան Ալեքսանդրետի սանջաքի հնարավոր վերադարձի հարցի մասին անգամ խոսակցությունները: Ի տարբերություն հոր կառավարման տարիների, երբ այդ հարցի սիրիանպաստ կարգավորումը Դամասկոսը նախապայ-

¹³⁹ Այդ մասին առավել հանգամանալից կարելի է հանդիպել նախկին արտգործնարար Սհմեդ Դավութօղլուի աշխատությունում, տե՛ս Davutoğlu A. Stratejik Derinlik. Kure Yayinlari, 2001.

ման էր համարում Անկարայի հետ հարաբերությունների բարելավման համար, տասնամյակներ շարունակ պատմության ու աշխարհագրության «բաասական» դասագրքերում Մանջաքի սիրիապատկան լինելու հիշատակումները Բաշար Ասադի կառավարման տարիներին «ռազմավարական գործընկերության» շրջանակում դուրս մղվեցին այդ դասագրքերից: Թուրքական կենսական «ժողովրդագրական» շահերն արտահայտվում են նաև Մանջաքին սահմանակից Սիրիայի հյուսիս-արևմտյան, նավահանգստային Լաթաքիայի նահանգի մի շարք քաղաքներում, որտեղ ապրում են թուրքումաններ¹⁴⁰: Այդպիսի ներգրավվածությունը հնարավորություն կտար Թուրքիային առավելություն ունենալ տարածաշրջանի ժողովրդագրական վերաբարտեզագրման հարցում:

2. «Ռազմավարական գործընկերության» տարիներին Թուրքիան տնտեսական էքսանսիայի (ընդլայնում) ենթարկեց Սիրիայի հյուսիսային մայրաքաղաքը: Հալեպում փակվեց ու լուծարվեց թեթև ու ծանր արդյունաբերական տեղական 750 ձեռնարկություն:

3. Սահմանի ականագերծումը, փաստորեն, ներսիրիական սլատերազմի ժամանակ պիտի ապահովեր Անկարայի կողմից վերահսկվող տարատեսակ ահաբեկչական խմբերի ազատ ելքն ու մուտքը Սիրիա:

4. Ակտիվ ներգրավվածությունը հնարավորություն էր Սիրիայի հյուսիսում և Թուրքիայի հետ սահմանադռները վերահսկող քրդերի՝ հակաթուրքական հնարավոր գործողություն-

¹⁴⁰ Ցեղակից թուրքումանների (թուրքուման, թուրքման, թուրքմեն) օգնությամբ Թուրքիան մշտապես հետախուզական գործունեություն է իրականացրել հայաբնակ Քեսաբում հենց այն ժամանակահատվածում, երբ հարաբերությունները Սիրիայի հետ ստացել էին «ռազմավարական» բնույթ:

ները կանխելու, Սիրիայի՝ Քոբանի, Ազազ ու Աֆրին քրդաբնակ շրջաններում թույլ չտալու ինքնավարության կամ գուցե (հեռանկարում) պետության ստեղծում: Այս համատեքստում էլ պետք է դիտարկել Դամասկոսի ու Թեհրանի հետ սերտ հարաբերություններ ստեղծելու Անկարայի քաղաքականությունը:

5. Սիրիան կենսական խողովակ էր թուրքական կապիտալը Լիբանան հասցնելու և այդ կապիտալն անխոչընդոտ «քաղաքականացնելու» համար: Թուրքական ընկերությունները 2007-2014 թթ. միլիոնավոր դոլարների ներդրումներ են կատարել լիբանանյան սուննիաբնակ Տրիպոլիում¹⁴¹, որտեղ նույնպես ցեղակից թուրքոմաններ են ապրում: Նման հեռահար քայլով Անկարայում հաշվարկել էին չեզոքացնել Տրիպոլիի «սուննիական անձնագրին» հակադրվող ու այն հակակշռող «շիական Հըզբոլլահին»: Հատկանշական ևս մեկ փաստ. Տրիպոլիում թուրքական ակտիվությունը հանդիպեց հայկական ակտիվ դիմադրության, որովհետև լիբանանահայությունն այդ քայլերում տեսնում էր Սփյուռքի ամենակենսունակ՝ լիբանանահայ ու սիրիահայ համայնքների՝ Թուրքիայից պահանջատիրական քաղաքականության խորտակման նպատակային աշխատանք¹⁴²: Ի դեպ, «ռազմավարական» այդ հարաբերությունների տարիներին սիրիահայերը երեք տարի անընդմեջ (2007-2010 թթ.) սիրիական պե-

¹⁴¹ Սիրիական պատերազմի ժամանակ, հատկապես 2011-2015 թթ. ապացուցվեց, որ Սիրիային սահմանակից լիբանանյան Տրիպոլին հակաատաղյան գործողությունների գլխավոր բնակավայրն է, որտեղ կենտրոնացված են սուննի ահաբեկչական ամենաարմատական խմբավորումները:

¹⁴² Տե՛ս Լիբանանահայ «Ազդակ» օրաթերթի խմբագրապետ Շահան Գանտա-հարյանի հետ հարցազրույցը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի Լիբանանի մարմնի գործունեության մասին պատմող «Երկաթե լոբբինգ» ֆիլմում, <https://www.youtube.com/watch?v=Kvyw8YGRiV0>:

տրության համապատասխան նախարարության գերատեսչությունից չկարողացան ստանալ թույլտվություն՝ Ապրիլի 24-ին ավանդական սգո երթը կազմակերպելու դեպի Հայոց ցեղասպանության վերջին հանգրվան՝ Դեյր էզ Ջոր:

6. Սիրիայի հետ հարաբերությունների սերտացումը կարժեգրվեք «Զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականության անարդյունավետության վերաբերյալ ընդդիմախոսների հայտարարությունները: Օգտվելով հանգամանքից, որ սիրիական հյուսիսում գրազիտության ցածր մակարդակ ունեցող, սուննիադավան, կրոնամոլ, զգացմունքային դատողությունների հակված, քաղաքականապես տհաս բնակչության գերակշիռ մասը սոցիալապես անապահով է՝ ասադյան իշխանությունների բարենորոգչական քաղաքականություն իրականացնելու հեռանկարի նկատմամբ անհավատ Անկարան նպատակ ունեք պահովագրել սեփական դիրքերը՝ «հարավային» հնարավոր հարվածից ստանալով այդ տարածքների բնակչության «անսակարկ համաձայնությունը» տարածաշրջանում քաղաքական սուննիզմի գլխավոր կենտրոն դառնալու ճանապարհին: Այդ նպատակը՝ սուննիզմի մերձավորարևելյան կենտրոնը Սաուդյան Արաբիայից տեղափոխել Անկարա, միշտ էլ նկատելի է եղել թուրքական պետական մեքենայի հատկապես վերջին մեկուկես տասնամյակի գործելաճում: Հասկանալի է, որ այդ առումով Թուրքիայի նախկին վարչապետ, ապա նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն օգտագործեց բոլոր հնարավոր միջոցները՝ արաբական աշխարհում «խալամից երես թեքած Թուրքիայի» օսմանյան երբեմնի հեղինակությունը վերականգնելու, նրանց պատկերացումներում իսլամն աշխարհիկությամբ փոխարինած տարածաշրջանային հսկա դերակատարի սասանված հեղինակությունը վերականգնելու համար: Տեսնելով համաարաբական

ցավի՝ պաղեստինյան դատի հանգուցալուծման, պաղեստինցի փախստականների ու Գազայում Իսրայելի սանձազերծած պատերազմի հարցում Օոցի իսլամական և արաբական մյուս երկրների անկարողությունն ու անտարբերությունը՝ Էրդոդանն Օսմանյան նոր կայսրության և իսլամական խալիֆայության վերականգնողի կերպարով «ապացուցեց», որ ի տարբերություն արաբական աշխարհի ղեկավարների, ինքն ավելի համարձակ է խոսում միջազգային ամբիոններից պաղեստինյան դատի մասին ու «անխնա» քննադատում Իսրայելին: Դա դրսևորվեց հատկապես 2011-2013 թթ. «Մավի Մարմարա» տորմիդի և շվեյցարական Դավոսում Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի բանավեճի, ինչպես նաև Գազայի անկլավում Իսրայելի դեմ պայքարող, «ահաբեկչական» խմբավորման համբավ ունեցող «Համաս» շարժմանը բացահայտ օգնություն ցուցաբերելու ժամանակ:

7. Զուգահեռաբար՝ Անկարան Հյուսիսային Իրաք էր «գործուղում» թուրքական կապիտալը, որպեսզի վերահսկողության տակ պահի քրդական ինքնավարության տնտեսական կապիտալի հնարավոր «քաղաքականացումը», ինչից կարող են օգտվել իր տարածքում ապրող քրդերը:

Ներքաշվելով քաղաքացիական պատերազմի մեջ՝ Սիրիան վերաբժնորեց տարածաշրջանի երկրների հետ հարաբերությունները: Թուրքիայի հետ հարաբերություններին «ռազմավարական» բնութագրում տալն ու այդ ուղղությամբ աշխատանքները, փաստորեն, ապացուցեցին արտաքին քաղաքական կուրսի փոփոխման հարցում գուցեն արդարացված ու հիմնավորված շտապողականություն: 2005 թ. նախագահ Բաշար Ասադի այցելությունը Թուրքիա 1946 թ. անկախությունից հետո առաջինն էր Սիրիայի ղեկավարների պաշտոնական ու պետական արտաքին այցերից: «Հյուսիսային փրկօղակն» իրավամբ օգնեց

Միրիային դուրս գալու Լիբանանի վարչապետ Հարիրիի սպանությանը հաջորդած Արևմուտքի հակաասադյան բոյկոտի ու հակասիրիական բազմոլորտ սանկցիաների շրջանակից, բայց հետագա ընթացքը ցույց տվեց, որ Թուրքիայի համար Միրիայում առաջնահերթ է Միրիայի տնտեսական ենթակայությունը, զբոսաշրջային բիզնեսի տարածաշրջանային մենաշնորհը, քրդական գործոնի չեզոքացումն ու էներգետիկ ռեսուրսների տնօրինումը¹⁴³:

Քաղաքացիական պատերազմի մեկնարկից Դամասկոսում հասկացան, որ տարածաշրջանում իրենց ավանդական դաշնակիցը բացառապես դավանակից Թեհրանն է:

СИРИЯ МЕЖДУ ГЕОПОЛИТИЧЕСКИМИ ВЫЗОВАМИ И ВНУТРИПОЛИТИЧЕСКИМИ ПРОБЛЕМАМИ

Резюме

АБРААМ ГАСПАРЯН

к. п. н.

Доцент кафедры теории и истории политологии
Факультета международных отношений ЕГУ

Особенности внешней политики Сирии всегда были обусловлены собственным геополитическим положением, историко-культурным присутствием и политической «весовой категорией», независимо от политического режима и правящей администрации. В основном односторонний и просоветский спектр

¹⁴³ Խոսքը սիրիական Դեյր էզ Ջարում թուրքական ընկերությունների կողմից նավթամշակման ընկերությունների ստեղծման մասին է: St'u Taspinar O. Turkey's Middle East Policies Between Neo-Ottomanism and Kemalism. "Carnegie Papers," Carnegie Middle East Center, No. 10, Sep. 2008, p. 30.

внешней политики государства во время «холодной войны» отчетливо разделил и спутал расчеты прозападных сил и государств в регионе. Региональные и международные процессы в это время побудили сирийский режим пересмотреть свои внешнеполитические приоритеты. В статье рассматриваются внутренние и региональные проблемы сирийского политического режима в эпоху «холодной войны» и взаимосвязь между этими двумя факторами.

SYRIA IN BETWEEN THE RANGE OF GEOPOLITICAL CHALLENGES AND INTERNAL POLITICAL PROBLEMS

Summary

ABRAHAM GASPARYAN

Doctor of Political Sciences,

Associate Professor of the Chair of the Theory and History of

Political Science,

YSU Faculty of International Relations

The peculiarities of foreign policy of Syria have always been conditioned by own geopolitical position, historical-cultural presence and political “weight category”, regardless of the political regime and the ruling administration. Mainly unilateral and pro-soviet spectrum of State’s foreign policy during the Cold War distinctly divided and miscalculated the interests of pro-western forces and states in the region. Regional and international processes in the post Cold-War era impelled the Syrian regime to reconsider its foreign priorities. The article discusses the internal and regional challenges of Syrian political regime during post Cold-War era and the correlation between these two factors.

ՍՈՒՐԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՍԸ. ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ
ԵՒ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ

ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ

պ. գ. թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող
<fishenkjianani@hotmail.com>

Սուրիոյ հայութիւնը կենսունակ մէկ բաղադրիչը կը հանդիսանայ Սուրիոյ ժողովուրդի խճանկարին:

2011 թ. Մարտ ամսուն Սուրիոյ մէջ սկիզբ առած էին յեղափոխական առաջին ցոյցերը, որոնց պիտի յաջորդէին մարտական գործողութիւնները հակակառավարական զօրքերու կողմէ: Ներքաղաքական անկայուն եւ անապահով վիճակի պատճառով Սուրիոյ ժողովուրդը, որոնց կարգին նաեւ տեղի հայ համայնքը, եւս մատնուած էր անել կացութեան:

Օգոստոս 2012-ին, մարտական գործողութիւններու ալիքը կը հասնի Հալէպ, ուր կը բնակէին տասնեակ հազարաւոր հայեր: Օրըստօրէ թեժացող զինուորական գործողութիւնները, ուղղակի կ'ամլացնեն հայկական համայնքային կարողականութիւնը, ետուն միութենական, ազգային եւ եկեղեցական կեանքը: Տիրող անապահով կացութեան պատճառաւ սկիզբ կ'առնէ ընկերային, տնտեսական, ապահովական անհամեմատելի անձուկ կացութիւն, որոնց ամբողջական դարմանը եւ լուծումը, անհասանելի է Սուրիոյ հայ համայնքի տեղական ուժերուն, ըլլա՛ն անոնք ազգային բարեգործական, եկեղեցական եւ կամ կուսակցական կառոյցներ: Պատերազմի առաջին օրերու իրավիճակը, անցողակի տագնապի թելադրողականութեամբ, պատ-

կեր մը կը պարզէ, որ կարճ ժամանակի թաւալումով, կը ստեղծէ արտահերթ կացութիւն, որ շատ արագ կը վերածուի աղէտի համագոր վիճակի:

2012 թ. Հալէպը եւս դարձաւ այդ բախումներու թատերաբեմ, իսկ հայ համայնքը՝ թիրախը այդ աղէտին:

Հայաթափուեցան Սուրիոյ քաղաքներէն՝ Ռազզան, Թէլ Ապ-իատը, Տէր Ջօրը, Ռաս Ուլ Այնը, Եագուպիէն, Ղընէմիէն եւ աւելի ուշ՝ Քեսապը:

Աղէտի պատճառով՝ զոհուածներ, վիրատրներ, առեւանգուածներ, քանդուած բնակարաններ, կործանուած եւ կողոպտուած խանութներ, գործատեղիներ, գործարաններ:

Հալէպահայութեան սիրտը հանդիսացող Նոր Գիւղ թաղամասը դարձաւ աղէտի գօտի:

Սուրիահայերու, մանաւանդ հալէպահայերու, մէկ հատուածը հանգրուանեց Լիբանան, մեծ թիւով սուրիահայեր նախընտրեցին Հայաստան հանգրուանել, ոմանք ալ տեղափոխուիլ արեւմտեան երկիրներ եւ այլուր:

Բայցեւայնպէս, հակառակ գործազրկութեան, պետական գործառոյթներու առկախումին, ջուրի, էլեկտրականութեան, ուժանիւթի տագնապին, համայնքի հայորդիներու մէկ մասը շարունակեց մնալ Հալէպ եւ կամ որոշեց անցնիլ Սուրիոյ այլ ապահով շրջաններ ու գոյատեւել ի զին զոհողութիւններու:

Համայնքի ներկայացուցիչներու առջեւ ծառայած էին այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին՝ արտագաղթը, տնտեսական ճգնաժամը, կրթական հարցերը եւ այլն, որոնց յաղթահարելը կը պահանջէր առաւել զգօն ու կազմակերպուած ըլլալ:

Եւ այսպիսի ծանր պայմաններու ներքոյ 2012 թ.-ին ՀՅԴ-ի Բիւրոյի որոշումով Սուրիոյ մէջ կը հիմնուի «Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Մարմին» (յետայսու՝

ՄՇՕՎՄ)¹⁴⁴, որուն մաս կը կազմեն հայ երեք համայնքապետեր (առաքելական, աւետարանական եւ հայ կաթողիկէ, ներառեալ Դամասկոսի Հայ Առաքելական եկեղեցոյ առաջնորդ), երեք ազգային կուսակցութիւններէն (ՀՅԴ, ՄԴՀԿ եւ ՌԱԿ), ինչպէս նաեւ Սուրիոյ Օգնութեան Խաչէն (ՍՕԽ) եւ ՀԲԸՄ-էն մեկական ներկայացուցիչ¹⁴⁵:

Այս մարմինի հիմնական նպատակն էր.

«1. Սուրիոյ տարածքին տիրող արտակարգ իրավիճակի պատճառով օգնութեան (կենցաղային, առողջապահական, բնակարանային եւ կրթական) կարօտ հայորդիներու շտապ օգնութիւն մատակարարել:

2. Սուրիոյ տագնապի աւարտին Մարմինը պիտի շարունակէ իր ծառայութիւնները մատուցել սուրիահայութեան վերականգնումի նպատակով»¹⁴⁶:

Առ այդ, ՄՇՕՎՄ-ը Սուրիոյ հայաշատ շրջաններու մէջ կը յառաջացնէ տեղական Շտապ Օգնութեան Գործադիր Մարմիններ. այսպէս՝

-2012 թ.Յուլիսին՝ Հալէպահայութեան Շտապ Օգնութեան (Հ. Շ. Օ.) Գործադիր Մարմինը¹⁴⁷,

-2012 թ. Օգոստոսին՝ Դամասկոսի հայութեան Շտապ Օգնութեան (ԴՇՕ) Գործադիր Մարմինը¹⁴⁸,

¹⁴⁴ «Միասնականութիւնը, Որ Նախքան Պատերազմը Մեր Համայնքի Յատկանիշներէն Մին Էր, Դարձաւ Աւելի Ամրակոտ Եւ Օրինակելի», <http://www.aztagdaily.com/archives/341243>:

¹⁴⁵ Տե՛ս <http://syriashdab.com/կազմութիւն>:

¹⁴⁶ [http://syriashdab.com/\(կամաւոր/սուրիահայութեան\)](http://syriashdab.com/(կամաւոր/սուրիահայութեան)):

¹⁴⁷ <http://syriashdab.com/կազմութիւն/հալէպահայութեան-շտապ-օգնութեան-գործ/>:

¹⁴⁸ <http://syriashdab.com/Դամասկոսի-հայութեան-շտապ-օգնութեան-գ/>:

-2012 թ. Նոյեմբերին՝ Ծովափի հայութեան (Քեսապի) Շտապ օգնութեան Գործադիր Սարմինը¹⁴⁹,

-2012-ին, Դեկտեմբերին՝ Ճեզիրէի հայութեան Շտապ օգնութեան (ՃՇՕ) Գործադիր Սարմինը¹⁵⁰,

-2013-ի Յունուարին՝ Ծովափի հայութեան (Լաթաքիոյ) Շտապ օգնութեան Գործադիր Սարմինը¹⁵¹:

Սուրիահայութեան Շտապ օգնութեան եւ Վերականգնումի Սարմինը յատուկ ուղեցոյցի մը մշակումով ու տարածաշրջաններու մէջ գործող իր Գործադիր Սարմիններու միջոցով իրեն փոխանցուած օժանդակութիւնները (կենցաղային, առողջապահական, բնակարանային եւ կրթական) կը բաշխէր մեր ժողովուրդի զաւակներուն:

Այդ ուղեցոյցին համաձայն, ՇՏԱՊԻ ՍԱՐՄԻՆԸ

«1. Սուրիահայութեան ուղղուած ամէն տեսակի համահայկական օգնութիւններ ստանձնող եւ յանձանձող մարմինն է:

2. Տրամադրուած օգնութիւնները (նիւթական, թէ՛ այլ) բաշխողը առաջնահերթութիւններու ճշդումով (մեկնած իրավիճակներու տարողութենէն) եւ առ այդ տնօրինողը Գործադիր Սարմիններու ճամբով:

3. Տրամադրուած օգնութիւններու փոխան կը հրապարակէ յատուկ ընկալագիր եւ կը փոխանցէ տրամադրող կողմերուն:

4. Գործադիր Սարմինները իրենց տրամադրուած օգնութեան փոխան կը հրապարակեն ստացագիր եւ տրամադրուած օգնութեան յանձանձման տեղեկագիր

¹⁴⁹ <http://syriashdab.com/ծովափի-հայութեան-շտապ-օգնութեան-գործ/>:

¹⁵⁰ <http://syriashdab.com/Ճեզիրէի-հայութեան-շտապ-օգնութեան-գործ/>:

¹⁵¹ <http://syriashdab.com/ծովափի-հայութեան-շտապ-օգնութեան-գործ/>:

(հերթական՝ ամսական կամ եռամսեայ պարբերականութեամբ) ՄՇՕՎՄ-ին:

5. ՄՇՕՎՄ-ին կը վերապահուի պաշտօնական հաղորդագրութիւն կամ յայտարարութիւն կատարելու իրատնօքը: (ՄՇՕՎՄ-ը ընդհանուր իրադրութեան մասին կը տեղեկացնէ համայն հայութիւնը, պարբերական վիճակագրական հրատարակումներով՝ հաղորդակցական կարելի բոլոր միջոցներով:

6. Գործադիր Մարմինը կը պահէ օրինական հաշուապահութիւն (մուտք-ելք ու անոնց անհրաժեշտ մանրամասնութիւնները), ըստ օրինի՝ կարգով:

7. Գործադիր Մարմինը իրեն վստահուած ծառայութեան շրջագիծին մէջ կրնայ հրատարակումներ կատարել ՄՇՕՎՄ-ի գիտակցութեամբ:

8. Յանձնախումբերը, որպէս օժանդակ մարմիններ, կը կազմուին Գործադիր Մարմինի կառոյցին համապատասխան եւ անոնց թիւերը՝ ըստ պահանջքի:

9. Գործադիր Մարմինի ղիւանը պարտի ունենալ իր փոխատենապետն ու փոխատենադպիրը»¹⁵²:

2012 թ. Հոկտեմբեր 29-ին, խորհրդակցական նիստի ընթացքին կը քննարկուին համայնքին դիմագրաւած հսկայական դժուարութիւնները, հաւաքաբար զանոնք յաղթահարելու միջոցներու որոնումը, ներքին եւ արտաքին բոլոր տեսակի օժանդակութիւնները համակարգուած կերպով տնօրինելը, Սուրիոյ տարբեր շրջաններու մեր ժողովուրդի կարիքներուն ուսումնասիրումը եւ իւրաքանչիւր շրջանի փորձառութեանց փոխանակումը:

¹⁵² <http://syriashdab.com>:

11 Նոյեմբեր 2012 թ. Հալեպի Արամ Սանուկեան Ժողովրդային Տան «Լ. Շանթ» սրահին ներս Սուրիոյ ճգնաժամային իրավիճակին շուրջ ընդհանուր վերնագրով խորհրդածողով մը կը զումարուի՝ մասնակցութեամբ սուրիահայ մտաւորականներու, արուեստագէտներու, մշակութային գործիչներու, մշակութային միութիւններու ներկայացուցիչներու, ուր ներկաներուն կ'իրագեկեն՝

«ա.- Սուրիահայութեան Շտապ Օգնութեան Մարմնի տարած աշխատանքը.

բ.- Մշակոյթի գործիչներու եւ միութիւններու դերակատարութիւնը.

գ.- Սուրիոյ հայ համայնքի Մշակութային Ժառանգութիւնն ու անոր պահպանման Հիմնախնդիրը.

դ.- Զանգուածային լրատուական միջոցներով ինչպէս ներկայացնել հալեպահայութեան իրավիճակը»¹⁵³.

Խորհրդածողովը կը հովանաւորէր Բերիոյ հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Շահան արք. Մարգիսեան: Սրբազանը, հիմնախնդիրներու անդրադառնալով, կը կարեւորէ (կը մեջբերեմ).

«ա- Նախ, համոզուիլ որ առկայ դժուարութիւնները միայն հալեպահայութեան չեն պատկանիր, այլ՝ բոլոր սուրիացիներուն:

բ- հարկ է այս տագնապին ընդմեջէն սուրիահայ կամ սուրիական նոր մշակոյթ մը յառաջացնել, այսինքն՝ գոյութեան նոր եղանակ մը, նոր ոճ մը, ապրելու նոր կերպ մը»¹⁵⁴.

¹⁵³ Յօդուածը լոյս տեսած է Պոլսոյ «Մարմարա» օրաթերթին մէջ 17 Նոյեմբեր 2012ին: Ազատ-Հայ կայքին մէջ լոյս կը տեսնէ հեղինակին հաւանութեամբ: <http://www.azad-hye.net/article/article.view.asp?re=630azja11>.

¹⁵⁴ Նոյն տեղը:

Մեպտեմբեր 2012 թ.: Դպրոցական նոր տարեշրջան (2012-2013): Սակայն Հալեպի հայկական, յատկապես Ազգային վարժարանները փակ էին¹⁵⁵, որովհետև ազգային վարժարաններու մեծ ցանցը կը գտնուէր աղէտի գօտի դարձած Նոր Գիւղ շրջանին մէջ: Նոյն վտանգին ենթարկուած էին Ազգային Հայկազեան վարժարանը, Քառասնից Մանկանց եկեղեցին, Բերիոյ առաջնորդանիստ կեդրոնը: Սիւնն Վրացեան Ազգային կեդրոնէն ներս սկսած էր աւագ դասարանի պետական ծրագիրի իրականացումը, որովհետև պետութիւնը, հակառակ տիրող պայմաններուն 2012-2013 ուսումնական տարին բացուած յայտարարած էր¹⁵⁶:

Համայնքի ղեկավարները կանգնած էին անել կացութեան առջեւ. բանալ դպրոցի դռները կը նշանակէ վտանգել սերունդին կեսնքը: Համախմբել մէկ վայրի մէջ անհնար էր: Միակ ազգային վարժարանը Ազգային Կիւլպէնկեան վարժարանն էր, որ մաւամբ ապահով էր: Հոկտեմբերին՝ սկիզբ կ'առնէ միջնակարգի աւարտական կարգի դասաւանդումը: Իսկ Նոյեմբերին՝ միւս կարգերու դասաւանդումը: Այս անգամ բախեցան այլ դժուարութեանց: Ուսուցիչներու մէկ մասը լքած էր Հալեպը կամ ընդհանրապէս Սուրիան: Իսկ ծնողներուն ուսերուն ծառացած էր ուսման վարձը:

¹⁵⁵ «Հալեպի մէջ բախումնալից գօտիներէ հեռու, համեմատաբար աւելի սպա- հով շրջաններու մէջ գտնուող հայկական վարժարաններ վերամուտը սովորա- կան ժամկետով սկսան»: Տե՛ս <http://www.arfd.am/syriahay/?p=1191>:

¹⁵⁶ «Բացի Հալեպէն, Բերիոյ Հայոց Թեմի Սուրիոյ մնացեալ շրջաններուն մէջ գործող Ազգային վարժարաններու ուսումնական տարեշրջանը սկսաւ պետա- կան կրթական նախարարութեան ճշդած ժամկետով: Հալեպի մէջ սակայն, Ազ- գային Հայկազեան, Սահակեան, Զաւարեան վարժարաններն ու Ազգ. Քարէն Եփփէ ճեմարանը յայտնուեցան բախումներու թե՛ զիծի վրայ: Սիւտր մար- տեր ընթացան այս վարժարաններուն յարող տարածքներուն մէջ»: Տե՛ս <http://www.arfd.am/syriahay/?p=1191>:

Արդ, սուրիական տազնապին հետեանքով Սուրիոյ տարածքին գործող հայկական 38 վարժարաններ, 7000 աշակերտներով, յայտնուած էին տնտեսական անյաղթահարելի դժուարութեանց առաջ: Բերիոյ հայոց թեմի «Ազգային Իշխանութիւնը ազգային վարժարաններու գոյերթը պահպանելու իր տարաբնոյթ աշխատանքներուն կողքին, Ազգ. երեսփոխանական ժողովին վաւերացումով եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառին օրհնութեամբ, հաստատեց «Դպրոց» կրթական հիմնադրամը, որուն նպատակն էր Բերիոյ հայոց թեմի Ազգ. վարժարաններու, յատկապէս 2012-2013 ուսումնական տարեշրջանի, նիւթական կարիքները բաւարարել համազգային հանգանակութիւն կազմակերպելով...»¹⁵⁷:

«ԴՊԸՅ» հիմնադրամը ղեկավարուեցաւ Թեմի Ազգ. Վարչութեան կողմէ յառաջացած հոգաբարձութեամբ, Հալէպ կեդրոնով: «Հիմնադրամը ունեցաւ իր հոգաբարձութիւնը Հալէպ քաղաքին մէջ, որուն մաս կազմեցին նաեւ Սփիւռքի զանազան գաղութներէ անդամներ»¹⁵⁸:

Նկատառելով կրթական մարզի անփոխարինելի կարեւորութիւնը սուրիահայ համայնքի գոյատեւման ի խնդիր, ՄՇՕՎՄ-ը յաջորդաբար ուսումնական հինգ տարեշրջաններ (2012-2013, 2013-2014, 2014-2015, 2015-2016, 2016-2017) Սուրիոյ մէջ գործող հայկական բոլոր դպրոցներուն նիւթական օժանդակութիւն տրամադրեց:

Կրթական օժանդակութիւններու շրջագիծէն ներս ՄՇՕՎՄ-ը օժանդակեց նաեւ Սուրիոյ Համազգայինի Հալէպի Հայագիտական հիմնարկին:

¹⁵⁷ <http://www.arfd.am/syriahay/?p=1191>:

¹⁵⁸ Նոյն տեղը:

ՄՇՕՎՄ-ը օժանդակութիւններու ծրագիրով նպաստեց նաեւ Հայ Ծերանոցին, մանաւանդ որ պատերազմի սկիզբէն Հայ Ծերանոցը յայտնուած էր բախումներու տարածքին:

Սուրիական տազնապին մէջ «ԴՊՐՈՑ» հիմնադրամին սատար հանդիսանալ կը նշանակէր նորահաս սերունդներու հայեցի դաստիարակութեան եւ կրթութեան մասնակից դառնալ:

21 Մարտ 2014 թ. Թուրքիոյ աջակցութեամբ սուրիական զինեալներու կողմէ դէպի Քեսապ մուտքը խուճապի կը մատնէ ոչ միայն քեսապցիք, այլեւ Հալէպէն, Ռազզայէն եւ այլ շրջաններէն այդտեղ ապաստան գտած հայութիւնը: «Պատմական Քեսապ հայւանը այսօր դատարկուած է իր դարաւոր բնակչութենէն: Աւելի քան 700 հայ ընտանիք դարձած է տեղահան: Թալանուած են բնակիչներու բնակարանները, վաճառատուները: Վնասներու ենթարկուած են ազգային կառոյցները»¹⁵⁹:

Քեսապահայութեան¹⁶⁰ մէկ հատուածը ապաստան կը գտնէ Լաթաքիա, ոմանք Լիբանան, որմէ ետք Հայաստան: Սակայն մեծ էր թիւը Լաթաքիոյ մէջ, ուստի Շտապի մարմինը կը փութայ անմխիթար ժողովուրդի բիւր կարիքներու օժանդակութեան:

Հալէպէն, Քեսապէն, Հոմսէն եւ այլ շրջաններէն դէպի Մուքիոյ ծովեզերեայ շրջանը հայերու հոսքը նոր առաջադրանքի առաջ պիտի դնէ Շտապ Օգնութեան եւ վերականգնումի մարմինը ու 2015 թ. սկիզբը, Դամակսոսի, Լաթաքիոյ, Քեսապի, եւ Ճեզիրէի շրջաններու Շտապ Օգնութեան Գործադիր Մարմիններուն կողքին, ՄՇՕՎՄ-ը կը կազմուի Թարթուսի Գործադիր Մարմինը, նկատի ունենալով, որ երկրի անապահով

¹⁵⁹ <http://www.aravot.am/2014/03/31/445715/>:

¹⁶⁰ <http://www.supportsyrianarmenians.ca/am>:

նահանգներեն, յատկապես Հալէպէն, մեծաթիւ ընտանիքներ ապաստանած էին այնտեղ:

ՄՇՕՎՄ-ը մինչեւ Հալէպ քաղաքի մասամբ ազատագրումը շարունակեց (կենցաղային, առողջապահական, բնակարանային եւ կրթական) կարօտ հայորդիներու շտապ օգնութիւն մատակարարելը:

Ներկայիս իր աշխատանքը տեղափոխած է այլ դաշտ՝ վերականգնումի աշխատանքներուն:

Եւ այսպէս, 201թ. սկսեալ սուրիահայութեան իրավիճակը դարձաւ կիզակէտը ողջ հայութեան ու առօրեայ հեռաքրքրութեան առարկան բոլոր համայնքներու պատասխանատու մարմիններուն, հայ կրօնական անձնաւորութեանց, հասարակական գործիչներու եւ մասնագէտներու:

Ի գործ դրուած համազգային բոլոր ճիգերը ուղղորդուեցան մեղմելու սուրիահայութիւնը մտահոգող կենցաղային առօրեան:

Այս առաջադրանքէն թելադրուած՝ Օգոստոս 2012-ին, Սուրիահայութեան զօրակցութեան միացեալ մարմին մը կը կազմուի Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի հայկական համայնքի երեք յարանուանութիւններու, կուսակցութիւններու եւ բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներով, որոնք համախմբուելով կը յառաջացնեն «Սուրիահայութեան Օժանդակութեան Գործադիր Մարմին» մը, որպէսզի կազմակերպչական եւ անմիջական դրամահաւաքի աշխատանքներով համայնքը լծուի գործի՝ շուտափոյթ կերպով տեղ հասցնելու համար հանգանակուած գումարները, որոնք պիտի ծառայէին կեանքեր փրկելու եւ բարոյական ու հոգեկան ապահովութիւն ներշնչելու Սուրիոյ տարածքին դժուարին պայմաններու մէջ ապրող հայութեան եւ ազգային

հաստատություններու. կեդրոնը Լոս Անճելըս (Syrian Armenian Relief Fund - SARF):

Նիւթական օժանդակութիւն ապահովելու նպատակով ՄՇՕՎՍը ընդառաջեց SARF-ի առաջարկին եւ երկու անդամով մասնակցեցաւ, 2015ի Փետրուարին անոր կողմէ կազմակերպուած հեռուստահանգանականութեան (teletone) ծրագիրին:

Սուրիահայութեան օժանդակութեան փութաց Հայ Օգնութեան Միութեան (ՀՕՄ) մեծ ընտանիքը իր վարչակազմերով:

Այսպէս, ՀՕՄի Կեդրոնական վարչութեան նախաձեռնութեամբ, ի գործ դրուեցան մարդասիրական ծրագիրներ: Այդ ծրագիրները իրականացուց Սուրիահայ Օգնութեան Իսաչի Մեծ ընտանիքը:

1-ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան նախաձեռնութեամբ «Պնակ մը Տաք Ճաշ» ծրագիրը, ծնունդ առաւ Սուրիոյ տազնապի սկզբնական օրերուն Հոկտեմբեր 2012-ին. կարիքաւոր, բազմազաւակ ընտանիքներու եւ անկարող տարեցներու ուղղուած այս ծրագիրը, շաբաթական 300 անձի տաք եւ լիարժէք սնունդով ճաշ կը մատակարարէր: Քաղաքի շրջափակման եւ սննդանիւթերու սակաւութեան ամենածանր օրերուն իսկ անընդհատ շարունակուեցաւ այս ծրագիրը, Նոր Գիւղ շրջանի եւ ՍՕԽ-ի Ընկերաբժշկական կեդրոնի կրած վնասներուն հետեւանքով կարճ ժամանակ ակամայ դադրեցաւ:

Յունիս 19, 2014-ին, ՍՕԽ-ի Շրջանային վարչութեան ճիգերով, կարելի եղաւ վերականգնել սոյն ծրագիրը «Միմոն Վրացեան» կեդրոնի «Գառնի» ճաշասրահին մէջ, ուր շաբաթական մէկի փոխարէն երկօրեայ դրութեամբ տաք ճաշ կը մատուցուէր կարիքաւորին:

2-ՀՕՄ-ի ԱՄՆ Արեւելեան շրջանի «Երաշխատրէ Սուրիահայ Ընտանիք մը» ծրագիրը. այս ծրագիրը իրականացանորածին երեխայ ունեցող ընտանիքներուն նիւթական յատուցմամբ (քառասուն ընտանիքներու տրամադրուեցաւ 4,000 ԱՄՆ, իւրաքանչիւր ընտանիքին յատկացնելով՝ \$100 ԱՄՆ):

Սուրիահայ օժանդակութեան աշխատանքներուն ծիրէն ներս, ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութիւնը նիւթական յատկացումով օժանդակեց ՍՕԻ-ի ինամատարական յանձնախումբի աշխատանքներուն, որուն համաձայն, 250 ընտանիքներ ամսական դրութեամբ կը ստանային սննդակողովներ կամ կենցաղային անհրաժեշտ նիւթեր:

3-Օժանդակեց Ազգային Պատսպարանի սաներուն սննդամթերքով եւ հագուստով:

4- 2013-ին հաստատուած «Տաքուկ Բնակարան» ծրագիրը ձմրան ընթացքին ջեռուցման անհրաժեշտ վառելանիւթով կ'ապահովէ լուրջ դժուարութիւններ դիմագրաւող հալէպահայ կարիքաւոր ընտանիքները:

5- Կարեւորելով հայ լեզուի եւ կրթութեան բնագաւառը՝ ՀՕՄ-ը նպաստեց հայկական վարժարաններուն «Դպրոց» ֆոնտին միջոցաւ¹⁶¹:

ՀՕՄ-ի «Սուրիահայ վարժարաններու օժանդակութեան ֆոնտ»-ին հանգանակուած գումարը ՍՕԻ-ի Շրջանային վարչութեան միջոցով յատկացուեցան Հալէպի, Դամասկոսի, Քեսապի, Լաթաքիոյ, Գամիշլիի եւ այլ շրջաններու մէջ գործող հայկական 27 հետեւեալ վարժարաններուն¹⁶².

¹⁶¹ <https://www.facebook.com/ars1910/posts/276822895760403>:

¹⁶² <http://www.aztagdaily.com/archives/94715>. նաեւ <http://asbarez.com/arm/14731-4/27>:

ՀԱԼԷՊ - Ազգային Քարեն Եփփե ճեմարան, Ազգային Հայկազեան վարժարան, Ազգային Սահակեան վարժարան, Ազգային Կիւլպէնկեան վարժարան, Ազգային Զաւարեան վարժարան, Հայ կաթողիկէ Մխիթարեան վարժարան, Հայ կաթողիկէ Զուարթնոց վարժարան, Հայ աւետարանական Բեթէլ վարժարան, Լ. Նաճարեան - Գալուստ Կիւլպէնկեան վարժարան, Կրթասիրաց - Չեմպերճեան երկրորդական վարժարան, Կիլիկեան վարժարան¹⁶³,

ԴԱՄԱՍԿՈՍ - Ազգային միացեալ վարժարան, Թարգմանչաց վարժարան, Սահակեան դպրոց, Հայ Կաթողիկէ Լոյս վարժարան, Հայ կաթողիկէ Փարոս վարժարան, Հայ կաթողիկէ միացեալ վարժարան, Հայ կաթողիկէ քոյրերու վարժարան¹⁶⁴,

ՔԵՍԱՊ - Ազգային ուսումնասիրաց միացեալ ճեմարան, Հայ կաթողիկէ Յոյս վարժարան, Հայ աւետարանական Նահատակաց վարժարան,

ԱՅԼ.- Գամիշլի՝ Ազգային Եփրատ վարժարան, Լաթաքիա՝ Ազգային Նահատակաց վարժարան, Եագուպիէ՝ Ազգային Վերսաձնունդ վարժարան, Ռազգա՝ Ազգային Նուպարեան վարժարան, Հասիչէ՝ /Հասաքէ/ Ազգային Մեսրոպեան վարժարան, Տերիք՝ Ազգային Ազատութիւն վարժարան, Ռաս Ուլ Այն՝ Ազգային Նահատակաց վարժարան¹⁶⁵:

6-Ինչպէս նաեւ՝ Ամանորի առիթով Ազգային վարժարաններու մանկապարտեզի երեխաներուն տաքուկ զգեստներ:

ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան նախաձեռնութիւններով եւ աշխարհասփիւռ միաւորներու անվերապահ աջակցութեամբ

¹⁶³ Նոյն տեղը:

¹⁶⁴ Նոյն տեղը:

¹⁶⁵ Նոյն տեղը:

Սուրիահայ Օգնութեան Խաչը շարունակեց նեցուկ կանգնիլ կարիքաւորին:

Օգնութեան Խաչը Զայրենիքը: ՀՅ Դաշնակցութեան նախաձեռնութեամբ ստեղծուեցաւ «Օգնիր եղբորդ» նախաձեռնող խումբ, որու նպատակն էր օժանդակել Սուրիոյ մէջ գտնուող կարիքաւոր սուրիահայ եւ սուրիացի ընտանիքներուն: Հաւաքուած զգալի քանակութեամբ բեռը եւ դրամական միջոցները Հայաստանէն Սուրիա ուղարկուած առաջին մարդասիրական օգնութիւնը ինքնաթիռով Հալէպ կը հասնի 2012-ի աշնան: Հոկտեմբերին կ'առաքուի օգնութեան երկրորդ խմբաքանակը, ուր սննդամթերքէն աւելի դեղորայք էր, որ տրամադրած էր «Արփիմեդ» ընկերութիւնը: «Հայ հեղափոխական դաշնակցության ջանքերով Հայաստանում ստեղծված «Օգնիր եղբորդ» նախաձեռնությունը այս շաբաթ երկրորդ օդանավն է Սիրիա ուղարկել: «Սիրիական ավիաուղիների» մարդատար օդանավով Հալէպ է ուղարկվել 2 թոնն բեռ կաթի փոշի և դեղորայք»¹⁶⁶:

Հասած օժանդակութիւն կը բաժնուի հետեւեալ ձեւով.- Սուրիոյ Կարմիր Մահիկ Միջազգային Կազմակերպութեան Հալէպի մասնաճիւղին, Ռազգայի թաղականութեան, Հասիչէի թաղականութեան, Հալէպի հայկական թաղամասի երկու մզկիթներուն եւ Հալէպահայութեան Շտապ Օգնութեան:

Ռազգայի եւ Հասիչէի թաղականութիւններուն տրամադրուած ծրարները կը յատկացուին տեղոյն հայ եւ արաբ կարիքաւոր ընտանիքներուն:

Մարդասիրական օգնութեան երրորդ խմբակը կը հասնի 2012 Նոյեմբերի 8-ին: Սուրիոյ Կարմիր մահիկի աջակցութեամբ

¹⁶⁶ <http://www.accc.org.uk>:

Նոյեմբերի 11-ին կը բաշխուի Հայաստանէն ուղարկուած երրորդ մարդասիրական օգնութիւնը: Սուրիացիներուն տրուող օգնութեան տրամադրումն կ'իրականացուէր Հալէպի կարմիր մահիկի, Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի, ինչպէս նաեւ Հալէպի շտապ օգնութեան մարմինի եւ Սուրիոյ մէջ Հայաստանի դեսպանութեան համագործակցութեամբ:

«Օգնիր եղբօրդ» մարդասիրական օժանդակութեան ծրագիրի շրջանակներուն իրենց ներդրումը ունեցան Հայաստանէն գործարարներ, մտաւորականներ, անհատներ, ՀՅԴ Հայ դատի Փարիզի գրասենեակը եւ այլն: «Օգնիր եղբօրդ» նախաձեռնութեամբ մարդասիրական օգնութեան երրորդ ինքնաթիռը հասնելէն ետք արաբական որոշ լրատումիջոցներ սկսան յայտարարել, որ Հայաստանէն օգնութիւնը ուղղարկուած է հալէպահայերուն: Այդ մասին փաստած էր արաբ այլ բարձրաստիճան պաշտօնէայ մը:

Այստեղ նշենք, որ նախաձեռնող անդամները առաջին օրէն իսկ յայտարարած էին, որ օգնութիւնը միայն այնտեղ ապրող հայերու համար չէ, բայց կրկին թեման շահարկուեցաւ:

Սակայն այլ կարելոր հանգամանք:

7 Դեկտեմբեր 1988 թ: Ոչ միայն սուրիահայութիւնը եւ ի մասնաւորի հալէպահայութիւնը, այլեւ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան նախագահն իմանալով Հայաստանի մէջ տեղի ունեցած պատուհասի մասին ցուակցագիր ուղարկելէ բացի, առաջարկեց եւ փութաց Հայաստանի աղէտեալներու օգնութեան:

Հալէպի մէջ կազմուած «Հայաստանի հայ աղէտեալներու կեդրոնական յանձնախումբ»-ի կողմէ դէպի Հայաստան առաքուած երկու օդանաւերու ուղեւորման աշխատանքներուն նոյն մասնակցութիւնը բերած էին «Պասա» կոնսակցութեան

բարտուղար, Հալէպի նահանգապետը եւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներ: Ուստի անհնար էր, որ սուրիահայութիւնը դիմէր միակողմանի աշխատանքներուն եւ օժանդակութիւնը յատկացնէր միայն ու միայն իր ժողովուրդին:

Այնուամենայնիւ, 7 Հոկտեմբեր, 2016-ին Հ Հանրապետութեան կողմէ Հայաստանի նախագահին հրամանագրով ստաքուած Սուրիոյ եղբայր ժողովուրդին խաղաղութեան մաղթանքներով խորագիրը կրող բարեգործական մարդասիրական նոր օժանդակութիւն կը հասնի Հալէպ: Օժանդակութեան մէկ մասը կը տրամադրուի Լաթաքիոյ, Քեսապի, Թարթուսի եւ Դամասկոսի ժողովուրդին, իսկ գերակշիռ մասը կը հասնի Հալէպ, տրամադրուելու կարիքաւոր հայ եւ արաբ սուրիացիներուն:

Մարդասիրական օժանդակութիւնը կը ստանձնէ ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոսը, ներկայութեամբ հայ երէք համայնքապետերուն, ինչպէս նաեւ Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Կեդրոնական Մարմինին մաս կազմող հայ երէք կազմակերպութիւններու, ՀԲԸՄ-ի եւ ՍՕԽ-ի ներկայացուցիչներուն:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինի օժանդակութիւնը Դամասկոսի հայութեան, յատկապէս նպաստելով Կրթական գործին, որմէ բաժին ստացած են Հալէպի վարժարանները մասամբ:

Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնը նոյնպէս օժանդակեց համայնքի դպրոցներուն¹⁶⁷:

Սուրիոյ հայութեան օժանդակեց Գանատայի մէջ կազմուած «Սուրիոյ հայութեան օժանդակութեան Գանատայի համադրիչ

¹⁶⁷ <https://horizonweekly.ca/en/34543-2/>:

մարմին»-ը (Canadian Coalition for the Support of the Arminians of Syria)¹⁶⁸:

Գանատայի Հայ Դատի յանձնախումբը, առաջին հերթին կապ հաստատեց Գանատական իշխանութիւններուն հետ, ցուցնուք եւ խորհրդատուութիւն ստանալու դէպի Սուրիա օժանդակութիւն ուղարկելու ձեւաչափի առնչութեամբ: Գանատայի բոլոր հայաշատ քաղաքներուն մէջ կազմակերպուեցաւ նուիրահաւաքի աշխատանք: Հանգանակուած գումարը Արամ Ա. Վեհափառի կարգադրութեամբ, յատուկ դրամատնային հաշիւով պիտի փոխանցուէին Սուրիա՝ յանձնուելով Սուրիահայութեան Միացեալ Շտապի տրամադրութեան:

Աւստրալիոյ հայութիւնը եւս օժանդակած է սուրիահայութեան¹⁶⁹:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը աջակցած է Սուրիոյ հայերուն. նպաստած է Հալէպի հայկական վարժարաններու ուսուցիչներու աշխատավարձի տրամադրմանը: «Հայաստանի մէջ հանգանակութիւնները՝ ուղղուած են բազմաբնոյթ ծրագիրներու իրականացման. սուրիահայերը Հայաստան տեղափոխելու նպատակով գործարկուած է չարթերային 2 չուերթ, փոխհատուցուած է 120 սուրիահայ ուսանողի ուսման վարձը, 39 սուրիահայի սրտի վիրահատութեան գումարը, 19 ընտանիքի բուժման ծախսերը: Սուրիոյ մէջ հանգանակութիւններու միջոցով՝ փոխհատուցուած է Հալէպի հայկական վարժարաններու ուսուցիչներու աշխատավարձը, որուն

¹⁶⁸ <http://asbarez.com/arm/146542>:

¹⁶⁹ <http://asbarez.com/arm/143391>:

շնորհի վարժարանները պատերազմական ծանրագոյն պայմաններուն մէջ կը շարունակեն մինչ օրս աշխատիլ»¹⁷⁰:

- Հոկտեմբեր 22, 2012թ. Հեռուստատեսային Մարաթոնին կը նախատեսուի աջակցութիւն Սուրիոյ Հայ Համայնքին յատկացնելով 10%: Սակայն այդ գումարը իր նպատակին չի ծառայեր:

- Մարդասիրական օժանդակութեան կառոյցներ ծնունդ առած էին նաեւ Հալէպի քրիստոնէայ միւս համայնքներու կողմէ, որոնց օժանդակութիւնը ուղղուած էր նաեւ տեղացի արաբ ժողովուրդին:

- Անհատական նախաձեռնութեամբ Ամերիկայէն, Գանատայէն եւ այլ շրջաններէն Հալէպ հասան որոշակի գումարներ:

Արդարեւ, կազմակերպուած, հայկականութեամբ տրուիող, համահայկական խնդիրներով ապրող, ցեղասպանութեան անմիջական ականատեսն ու շարունակութիւնը եղող Հալէպի հայ համայնքը ներկայիս շուրջ 25.000 հայութեամբ, որուն 12.000 Հալէպի մէջ, նորօրեայ քաղաքական, տարածաշրջանային վերիվայրումներուն, կենցաղային եւ այլ բարոյահոգեբանական հիմնախնդիրներու յորձանուտին մէջ յայտնուելով, այսօր եւս որպէս ազգային փոքրամասնութիւն, որպէս համայնք կը մաքառի գոյատեւման ի խնդիր:

Չունենալով համայնքի 2011 թ.-էն ետք ինկած ժամանակահատուածի արխիւային նիւթերը եւ տեղեկագիրերը, ուստի մեր աշխատասիրութիւնը կատարած ենք համացանցի եւ սփիւռքեան մամուլի մէջ տեղ գտած նիւթերու հիման վրայ, եւ հաւակնութիւն չունինք զայն ամբողջական համարել: Աշխա-

¹⁷⁰ <http://www.arevelk.am/am/content/3/1708/>:

տախրութիւնը ուրուագիծ մըն է Սուրիոյ հայ համայնքի, 2011 թ.-էն ետք, պատմութեան ուսումնասիրութեան համար:

ВОЙНА В СИРИИ: ПОМОЩЬ ГУМАНИТАРНЫХ И ДРУГИХ ОРГАНИЗАЦИЙ АРМЯНАМ СИРИИ

Резюме

АНИ ФИШЕНКЧЯН

к.и.н.

Научный сотрудник Института Истории НАН РА

Армянская община Сирии пополнилась в 1915-21 гг. за счет армян Киликии и Западной Армении, спасшихся от геноцида. Их взаимоотношения с местными жителями стали основой для развития в стране экономики, архитектуры, торговли, коммуникации, печатного дела и искусства.

Однако, волна вспыхнувшей в 2011 году войны в Сирии докатилась и до города Алеппо, которую было принято считать Главной армянской колонией Сирии. В сирийских городах Ракка, Тел Абяд, Дер эз Зор, Рас ул Айн, Яхубие, Генимия, а чуть позже – Кесаб не осталось армян.

Диаспора и Родина-Армения поспешили на помощь армянам Сирии. В самой Сирии была создана «Организация экстренной помощи и восстановления», что бы оказать помощь как сирийским армянам, так и сирийцам.

Перед членами общины во весь рост стали такие проблемы, как эмиграция, экономический кризис, образование и др., для решения которых требовалось от них быть более чуткими и организованными.

**WAR IN SYRIA: THE ASSISTANCE OF THE PHILANTROPIC,
BENEVOLENT AND OTHER ORGANIZATIONS
TO SYRIAN-ARMENIANS**

Summary

ANI FISHENKJIAN

Candidate of Historical Sciences

Researcher at the Institute of History, NAS RA

<fishenkjianani@hotmail.com>

The number of Syrian-Armenians swelled during the years 1915-1923 with the arrival of Armenians from Cilicia and Western Armenia, who sought refuge in Syria. Their inter-relations with the indigenous people was a steppingstone for the development of the country's economy, industry, tele-communications, culture and education.

However, in 2011, the currents of the war reached Diaspora's main community: the historical city of Aleppo. As a result, a number of Syrian cities, such as Raqqa, Tel-Abyadh, Der-el-Zor, Ras ul-Ayn, Yaqoubiya, Ghenemiya and a little later Kessab, were deprived of their Armenian citizens.

Various Diasporan communities and the Fatherland-Armenia came to the rescue of the Syrian Armenians. In Syria, an organization was formed by the name "First Aid and Rehabilitation Body," whose intention was to help the needy Syrian-Armenians and the Syrian citizens, simultaneously.

The leading representatives of the community needed to be prudential and very organized, so that they could solve various problems facing them, such as emigration, economic crises, educational problems, etc.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Վերծինե Սվազյան** – Հայոց ցեղասպանությունից վերապրած սիրիահայերի նպաստը պատմական հիշողության վերականգնման գործում.....5
- Вержине Свазлян** – Вклад переживших геноцид сирийских армян в восстановлении исторической памяти31
- Verjine Svazlian** – The contribution of the Syrian-Armenians, survived from the Armenian Genocide, in the restoration of the historical memory32
- Յակոբ Չոլաքեան** – Սուրիոյ մէջ հայկական դպրոցին եւ հայերէնի կարգավիճակին կրած փոփոխութիւնները 1950-1970 թուականներուն.....35
- Акоп Чолакян** – Изменения статуса армянских школ и армянского языка в Сирии в 1950-1970-ых гг.87
- Hakob Cholakian** – The status changes of the Armenian schools and the Armenian language in Syria in 1950-197088
- Հրազդան Թոքմաճեան**– Սիրիահայ արհեստագործութեան պատմութիւնից. Գալէմքերեան գերդաստանը.....89
- Раздан Токмаджян** – Из истории сирийско-армянского ремесла. семья Галамкеряны119
- Hrazdan Tokmajian** – From the history of the Syrian-Armenian craft. Kalemkiarian extended family120
- Գեորգ Եազըճեան** – Սուրիոյ հայկական գաղութը խորհրդային գաղտնի սպասարկութեանց փաստաթուղթերուն մէջ (1945-1991).....125

Кеворк Язеджян – Документы советских секретных служб об армянской общины в Сирии (1945-1991 гг.)	136
Kevork Yazedjian – The Soviet secret documents about the Armenian community in Syria (1945-1991)	137
Միհրան Մինասյան – Արամ Անտոնյան եւ Հայոց ցեղասպանութեան վաերազրումի իր հաւաքչական աշխատանքը Հալէպի մէջ	139
Мигран Минасян – Арам Антонян и его работа в Алеппо по собранию документации о геноциде армян	155
Mihran Minassian – Aram Andonian and his work on collecting the Armenian Genocide documentation in Aleppo	156
Ներսէս Սարգիսեան – Սուրիական տագնապը եւ հայ համայնքի կեցուածքը (Համայնքի պատասխանատուներու դիտանկիւնէն)	159
Нерсес Саркисян – Сирийский кризис и позиция армянской общины (С точки зрения лидеров общины)	164
Nerses Sarkissian – The Syrian crisis and the position of the Armenian community (From the perspective of community leaders) ..	165
Քնարիկ Ավագյան – Սիրիայի հայ համայնքի ճգնաժամը աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում (2011-2018 թթ.)	166
Кнарик Авакян – Кризис армянской общины Сирии в контексте геополитических процессов (2011-2018 гг.)	184
Knarik Avakian – The crisis of the Armenian community of Syria in the context of geopolitical processes (2011-2018)	185

Աբրահամ Գասպարյան – Սիրիան ներքաղաքական հիմնախնդիրների ու աշխարհաքաղաքական մարտահրավերների միջակայքում.....187

Абраам Гаспарян – Сирия между геополитическими вызовами и внутривполитическими проблемами209

Abraham Gasparyan – Syria in between the range of geopolitical challenges and internal political problems210

Անի Ֆիշենկճեան – Սուրիոյ պատերազմը. մարդասիրական, բարեսիրական եւ այլ կազմակերպութիւններու օժանդակութիւնը սուրիահայութեան.....211

Ани Фишенкчян – Война в Сирии: помощь гуманитарных и других организаций армянам Сирии229

Ani Fishenkjian – War in Syria: the assistance of the philanthropic, benevolent and other organizations to Syrian-Armenians230

ՄԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ.
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
(26 հունիսի, 2017 թ.) ՆՅՈՒԹԵՐ

Համակարգչային ձևավորումը՝ *Ա. Ղազարյանի*
Տպագրիչ՝ *Լ. Մուրադյան*

Ստորագրված է տպագրության՝ 19. 01. 2021
Տպաքանակ՝ 100

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>

[2000 թ.]

ՉԱՆ ՀԻՃՆԱՐԱՐ ՊԻՍ. ՊՐԱՊ.



FL067743

A π
109072